

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅԱԿԵԱՅ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵԼԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՆՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

ԱՆԱՆՈՒՆ ԵՂԵՍԱՅԻ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԴՅՈՒՆ




www.freebooks.do.am
www.freebooks.am

ՕՏԱՐ ԱՂԵՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

12

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ
ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ



«МАТЕНА ДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

СИРИЙСКИЕ ИСТОЧНИКИ
II
АНОНИМ ЭДЕССКИЙ
ХРОНИКА

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА.
ПРЕДИСЛОВИЕ И ПРИМЕЧАНИЯ
Л. А. ТЕР-ПЕТРОСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳԻԵՐԻ ԻՆՏԻՏՈՒՏ

ԱՍՈՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Բ

ԱՆԱՆՈՒՆ ԵՂԵՍԱԾԻ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱՐԿՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻՑ
ԱՌԱՋԱԲԱՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1982

Տպագրվում է Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Տ ԵՐԵՄՅԱՆ (գլխավոր խմբագիր), Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ, Հ. Գ ԻՆՃԻԿՅԱՆ,
Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Հ. Գ ՓԱՓԱԶՅԱՆ,
, Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ (գիտական ֆարատուգար)

Հատորի խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու
Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա575 Անանուն Եղեսացի

Ժամանակագրություն /Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Լ. Հ. Տեր-Պետրոսյանի; խմբ. Պ. Մ. Խաչատրյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982. 266 էջ.— (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին; 12. Ասորական աղբյուրներ, 2 /Մատենադարան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ին-տ):

Հայերեն թարգմանությամբ ներկայացվող XIII դ. ասորական այս ժամանակագրությունը կարևոր տեղեկություններ է հաղորդում սելջուկյան տիրապետության, խաչակրաց արշավանքների, Կիլիկիայի և Հյուսիսային Սսորիքի հայկական իշխանությունների և Հայաստանի պատմությանն առնչվող բազմաթիվ այլ խնդիրների մասին:

Նախատեսվում է միջնադարի պատմությամբ հետաքրքրվողների համար:

0504020000
Ա. 703(02)—82

ԳՄԴ 63. 2
902. 9

ԱՆՁՆՈՒՆ ԵՒԵՍԱՑԻՆ ԵՎ ԻՐ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՐ»

Ասորական պատմագրական հուշարձանները արժանահավատ սկզբնաղբյուրների համրավ են վայելում Մերձավոր արևելքի միջնադարյան պատմությամբ զբաղվող մասնագետների շրջանում: Իրանի, Բյուզանդիայի, Արաբական խալիֆաթի և սելջուկյան ամիրայությունների պատմության ուսումնասիրման հետ կապված շատ խնդիրներ իրենց լուսաբանությունն են գտնում շնորհիվ այդ աղբյուրների: Նրանք մեծ արժեք են բերել այնպիսին հատկապես այն տեսակետից, որ հայկական աղբյուրների կողքին հակակշռում են մահմեդականների ու խաչակիրների աչառու պատմագրությանը: Դժվար է գտնել Մերձավոր արևելքի երկրների միջնադարյան պատմությանը նվիրված որևէ լուրջ հետազոտություն, որտեղ օգտագործված չլինեն ասորական ժամանակագրություններն ու պատմությունները:

Սովետական պատմագիտության մեջ ասորական աղբյուրների գնահատման և արժեքավորման գործում մեծ վաստակ ունի Ն. Վ. Պիգուլսկայան, որն իր ուսումնասիրություններում հիմնավոր կերպով վեր է հանել բազմաթիվ հուշարձանների գիտական նշանակությունը: Հասագիտությունը նույնպես անմասն չի մնացել այդ գործին: Գեոևս 1934—1935 թթ. «Բազմավեպ» հանդեսում լույս տեսավ VI դ. ասորի պատմագիր Հովհան Եփեսացու «Եկեղեցական պատմության» III մասի հայերեն թարգմանությունը՝ կատարված գերմաներենից¹: 1969 թ. Ն. Տեր-Մինասյանը հրատարակեց «Եդեսիայի ժամանակագրության» ասորերենից թարգմանված հայերեն բնագիրը²: Իսկ 1976 թ. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 8-րդ գրքում Հ. Մելիքոյանի թարգմանությամբ լույս տեսան ևս չորս ասորական աղբյուրներ՝ Մշիխա Զեխայի «Ադիարենի պատմությունը», Կեղծ-Յեսու

¹ Հովհաննես Եփեսացի (եպս.), *Եկեղեցական պատմություն*, «Բազմավեպ», 1934, էջ 52—59, 211—215, 266—273. 1935, էջ 4—7:

² Ն. Տեր-Մինասյան, *Եդեսիայի ժամանակագրությունը*, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 175—188:

Սյունակյացի և Կեղծ-Ջաֆարիա Միսիլենացու «Ժամանակագրությունները», ինչպես նաև Հովհան Եփեսացու «Եկեղեցական պատմության» պահպանված մասերը³: Ներկա հրատարակությամբ հայ պատմաբանների տրամադրության տակ է դրվում մի ուրիշ ասորական աղբյուր, որը, հուսով ենք, իր նպատար կրերի հայ ժողովրդի պատմության զանազան հարցերի ուսումնասիրման գործին:

Անանուն Եդեսացու «Ժամանակագրության» միակ ձեռագիրը հայտնաբերվել է 1899 թ. Կոստանդնուպոլսի մասնավոր հավաքածուներից մեկում: Հետազոտողների կարծիքով, ասորական այդ ձեռագիրն ընդօրինակվել է XIV դարի վերջերին: «Ժամանակագրության» սուաջին հրատարակությունը, որը մնացել է անավարտ, իրականացվել է 1904—1911 թթ., կաթոլիկ ասորիների պատրիարք Իգնատիոս Եփրեմ II Ռամմանու կողմից⁴: Ամբողջական բնագիրը լույս է տեսել 1916—1920 թթ., երկու հատորով, նշանավոր ասորագետ Փ.—Բ. Շարոյի աշխատասիրությամբ⁵: 1937 թ. Փ.—Բ. Շարոն հրատարակել է «Ժամանակագրության» առաջին հատորի լատիներեն թարգմանությունը⁶, առաջաբանում խոստանալով իրականացնել նաև երկրորդ հատորի թարգմանությունը: Սակայն այդ գործն անկատար է մնացել:

1946 թ. Ն. Վ. Պիգուլևսկայան իր «Բուզանդիան և Իրանը VI—VII դդ. սահմանագլխին» աշխատության հավելվածում տվել է Անանուն

³ Ասորական աղբյուրներ, Ա. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ Մելրոնյանի, «Օտար աղբյուրները Հայաստանի և հալեբի մասին», Տ հրևան, 1976:

⁴ Chronicon civile et ecclesiasticum anonymi auctoris, quod ex unico codice edessenoprimo edidit Ignatius Ephraem II Rahmani, fasc I—II, Šarfet, 1904, 1911.

⁵ Chronicon ad annum Christi 1234 pertinens I. Edidit J—B Chabot, Praemissum est Chronicon Anonymum ad A D 819 pertinens Curante Aphram Barsaum „Corpus Scriptorum Christianorum Orientalium (=CSCO)“ 81, Syr 36, Louvain, 1920 (այսուհետև՝ Chabot—I). Anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens II. Edidit J—B Chabot „CSCO“ 82, Syr. 37, Louvain, 1916 (այսուհետև՝ Chabot—II).

⁶ Anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens. I Praemissum est Chronicon Anonymum ad A D 819 pertinens. Interpretatus est J—B. Chabot, „CSCO“ 109, Syr. 56, Louvain, 1937 (այսուհետև՝ Chabot—III) Ժամանակագրության առաջին մասի մի համառոտված ֆրանսերեն թարգմանություն էլ դեռևս 1907 թ. ձեռնարկել է ֆրանսիացի արևելագետ Ֆ. Նոն, բայց այդ գործը անավարտ է մնացել. տե՛ս F Nau, Traduction de la chronique syriaque anonyme, editee par Sa Beatitude Mgr Rahmani, patriarche des Syriens catholiques, „Revue de l' Orient chretien“, 2^e serie, t II (XII), Paris, 1907, p 429—440. t. III(XIII), 1908, p. 90—99, 436—443.

եղեսացու երկի առաջին հատորի 76—125 գլուխների ուսերեն թարգմանությունը, որոնք վերաբերում են Մավրիկիոս կայսեր գահակալումից (582 թ.) մինչև Հերակլիոսի մահն (641 թ.) ընկած ժամանակահատվածի իրադարձություններին: «Անսնուն ժամանակագրությանը» Ն. Վ. Պիգուլևսկայան որոշ տեղ է հատկացրել նաև նույն գրքի աղբյուրների տեսության բաժնում⁷:

Հայտնի են «ժամանակագրության» երկրորդ հատորից կատարված մի քանի մասնակի և հատվածական թարգմանություններ⁸: Գրանց շարժում կարևոր տեղ է զբաղեցնում Ա. Տրիտոնի իրագործած անգլերեն թարգմանությունը, որն ընդգրկում է առաջին և երկրորդ խաչակրությանը վերաբերող հատվածները: Այդ թարգմանությունը նշանակալից է նրանով, որ հիմք է ծառայել խաչակրաց պատմության համարյա բոլոր ժամանակակից հեռագրատողների (Ռ. Գրուսե, Ս. Ռանսիմեն, Ա. Լյուդերս և այլն) ուսումնասիրությունների համար: Օգտվելով Ա. Տրիտոնի թարգմանությունից, Ռ. Գրուսեն իր «խաչակրաց պատմության» երկրորդ հատորի հավելվածում ավել է նաև Եդեսիայի կոմսությանը վերաբերող ավյալների մանրամասն վերաբացատրությունը⁹: Ա. Տրիտոնի հրատարակումը մեզ համար նաև առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ Հ. Քյուրտյանի կողմից այն ամբողջությամբ թարգմանվել է հայերենի և լույս տեսել առանձին գրքույկով՝ «Առաջին և երկրորդ խաչակրությունները ըստ Սիրիացի անսնուն ժամանակագրի մը» խորագրի տակ (Բնատոն, 1936):

1974 թ. լույս տեսավ երկրորդ հատորի ամբողջական ֆրանսերեն թարգմանությունը, կատարված Բաղդադի համալսարանի պրոֆեսոր Ալբերտ Աբունայի կողմից¹⁰: Ներածության, ծանոթագրությունների և

⁷ *H. B. Pigulevskaya*, Византия и Иран на рубеже VI и VII веков, М.—Л., 1946, стр 252—289

⁸ *Նույն տեղում*, էջ 48—49

⁹ *Sk'a J—B Chabot*, Un episode de l'histoire des Croisades, „Melanges offerts a Gustave Schlumberger“, vol. I, Paris, 1924, pp. 169—179 [*Զանգրի կողմից Եդեսիայի առման գրվածի թարգմանությունն է*]. The First and Second Crusades from an Anonymous Syriac Chronicle, translated by A. S. Tritton, with Notes by H. A. R. Gibb „The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland“, 1933, p. 69—101, 273—305. A. Rucker, Aus der Geschichte der Jakobitischen Kirche von Edessa in der Zeit der Kreuzfahrer „Oriens Christianus“, Bd. 32. S. 124—139, Leipzig, 1935 (*Աղբյուրի մասնակի փոխադրությունն է*):

¹⁰ *R. Grousset*, Histoire des Croisades et du royaume franc de Jerusalem, t. II, Paris, 1935, p. 866—886.

¹¹ Anonymi auctoris chronicon ad A. C. 1234 pertinens II Traduit par

ցանկերի հեղինակն է ասորագետ ժ.—Մ. Ֆիեն: Ա. Աբունայի թարգմանությունն աչֆի է բնկնում նշգրտությամբ և լիովին կարող է բավարարել արդի պատմագիտության պահանջները: Հազվադեպ աննշտությունների և բացթողումների մասին խոսք կլինի սույն աշխատության համապատասխան ծանոթագրություններում:

Ինչ վերաբերում է ժ.—Մ. Ֆիեի ներածությանը, ծանոթագրություններին և ցանկերին, ապա դրանք իրենցից ներկայացնում են աղբյուրագիտական տվյալների այն ամբողջությունը, որն անհրաժեշտ է ցանկացած պատմական սկզբնաղբյուրի մատուցման համար: Ծանոթագրությունները, սակայն, շատ համառոտ են և շոշափում են երեք հիմնական խնդիրներ. պատմական անձանց անունների նշգրտում, «ժամանակագրության» և այլ սկզբնաղբյուրների (Մատթեոս Ուռնայեցիի, Միֆայել Ասորի) զուգահեռ դրվագների բացահայտում և, վերջապես, բնագրական աղբյուրումների վերլուծում, որը ժ.—Մ. Ֆիեն փաղել է ժ.—Բ. Շաբոյի հրատարակությունից: Ցանկերում արտահայտված են Անանուն Եղեսացու «ժամանակագրության» երկու հատորների պատմական, տեղագրական և աղբյուրագիտական տվյալները: Ինֆնուրույն պատմաբանասիրական արժեք է ներկայացնում ժ.—Մ. Ֆիեի ներածությունը, որտեղ թեև համառոտ, բայց հիմնավոր բնության են ենթարկված «ժամանակագրության» հեղինակին, ժամանակին և աղբյուրներին վերաբերող խնդիրները¹²: Դժվար է պատկերացնել որևէ հետազոտումնասիրություն, որտեղ այս կամ այն չափով չկրկնվեն այդ ներածության եզրահանգումները:

* * *

Հետևելով ասորական պատմագրության ավանդույթին. Անանուն Եղեսացին իր Իբիր կազմել է երկու ինֆնուրույն մասից՝ Եկեղեցական և ֆաղաֆական ժամանակագրություններից, որոնք բաժանված են բարձր մաթիվ փոքրածավալ գլուխների¹³: Մեզ հասած ձեռագրում Եկեղեցական ժամանակագրությունը հաջորդում է ֆաղաֆական ժամանակագրությանը, թեև սկզբնապես, ամենայն հավանականությամբ, նախորդել է նրան: Նման կարծիքի համար հիմք է տալիս այն հանգամանքը, որ ֆա-

Albert Abouna Introduction, notes et index de *J.-M. Fiey*, „CSCO“ 354, Ser. 154, Louvain, 1974 (*այսուհետև՝ Abouna-Fiey*)

¹² Անանուն Եղեսացու «ժամանակագրության» մասին տե՛ս նաև Ռ. Հուսեյնովի համառոտ ծանոթությունը. *P. A. Гусейнов*, Сирийские источники по истории Закавказья X—XIV веков, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 51—52:

¹³ Գլուխների համարակալումը կատարվել է հետազոտում մի անփուլթ գրչի կողմից:

դաժանական ժամանակագրության մեջ տեղ-տեղ վկայակոչված են եկեղեցականի գանազան դրվագները:

Անանուն Եղեսացու երկր, միջնադարյան այլ տիեզերական պատմությունների նման, ընդգրկում է պատմական մի անասման ժամանակաշրջան: Այն սկսվում է Ադամ ու Եվայից և հասնում մինչև մ. թ. 1230-ական թթ.: Ձեռագրի փայլավածության պատճառով փաղափայուն ժամանակագրությունն ընդհատվում է 1234 թ. դեպքերի նկարագրությամբ: Շատ ավելի մեծ կորուստ է կրել եկեղեցական ժամանակագրությունը, որը թերի է ե՛րևել, ե՛րևել, ե՛րևել: Մեզ հասած վիճակում այն սկսվում է VI դ. 40-ական թվականներով և ընդհատվում 1207 թ. իրադարձությունների նկարագրությամբ:

Եկեղեցական ժամանակագրության մեջ դեպքերը շարադրված են հակորիկյան եկեղեցու առաջնորդների՝ Անտիոքի պատրիարքների հարդականության համեմատ: Մանրամասն նկարագրված են յուրաքանչյուր պատրիարքի օրոք տեղի ունեցած բոլոր կարևոր իրադարձությունները: Զգալի տեղ է հատկացված եկեղեցու ներքին կյանքին, հերձվածողական շարժումներին, միջեկեղեցական հարաբերություններին և այլն: Հեղինակը հանգստանալից կերպով անդրադառնում է Հուսիս-սիանոսի եկեղեցական փաղափայլանությանը, որի նպատակն էր երկարակության և միաբնակության հակասությունների մեղմացումը և էթիկական կայսրության գաղափարական միասնության ապահովումը: Այս առիթով Անանունը մանրամասն տեղեկություններ է հարգորդում նաև Թեոդորա թագուհու գործունեության մասին, մի բան, որ վրովին հասկանալի է, քանի որ փաստորեն այդ թագուհու օժանդակությամբ էր, որ Հակոբ Բարսեղեոս Եպիսկոպոսը կարողացավ VI դ. կեսերին հիմնավորապես վերափոխել և ամրապնդել ասորական միաբնակ եկեղեցու կառուցվածքը:

Եկեղեցական ժամանակագրությունն աչքի է ընկնում ծայրահեղ հակափաղկեղոնական բնույթով: Այդ պատճառով հեղինակը Երբեմն անդրադառնում է նաև փաղկեղոնական եկեղեցու ներքին կյանքի իրադարձություններին: Հանախակի են նաև հայոց եկեղեցուն վերաբերող տեղեկությունները, որոնք, սկսած XII դ. երկրորդ կեսից, ստանում են կանոնավոր բնույթ, այսինքն՝ Անանունն արձագանքում է այդ շրջանի բոլոր կարևոր իրադարձություններին, մասնավորապես հայ կաթողիկոսների հաջորդականությանը: Անանուն Եղեսացու տեղեկությունները, այդպիսով, զգալի արժեք են ներկայացնում հայոց եկեղեցու և եսայ-ասորական եկեղեցական հարաբերությունների պատմության ուսումնասիրման համար:

Ինչպես ասվեց, ֆաղափական ժամանակագրությունը մեզ է հասել ավելի անադարտ և ամբողջական վիճակում և այդ պատճառով արժանի է ավելի մանրամասն քննության: Այն պայմանականորեն կարելի է բաժանել հինգ մասի. ա) մարդկության նախապատմությունից մինչև Ալեքսանդր Մակեդոնացի, բ) Ալեքսանդրից մինչև Քրիստոս, գ) Քրիստոսից մինչև արաբական նվաճումները, դ) արաբական նվաճումներից մինչև սելջուկյան արշավանքները, ե) սելջուկներից մինչև մոնղոլները.

Առաջին մասը¹⁴, շնայած իր զգալի ծավալին, որևէ հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ սուկական վերաբառությունն է աստվածաշնչական հայտնի դրվագների. Քարելոնին, Ասորեստանին և հին Պարսկաստանին վերաբերող պատմական տեղեկությունները նույնպես հիմնականում ֆաղված են Աստվածաշնչից:

Երկրորդ մասն¹⁵ ընդգրկում է Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների. սելևկյան աիրապետության և Հռոմեական կայսրության սկզբնավորման ժամանակաշրջանը: Պատմությունը շարադրված է շատ թույլ կերպով և նույնպես ամբողջովին զուրկ է որևէ պատմական արժեքից, եթե չհաշվենք Եղեսիա ֆաղափին վերաբերող առանձին հետաքրքիր տեղեկությունները: Տպավորությունը գուցե մի փոքր այլ լիներ, եթե այս մասից չպակասեին մի շարք թերթեր:

Ավելի հանգամանորեն են շարադրված մյուս երեք մասերը: Քրիստոսից մինչև արաբական նվաճումներն ընդգրկող ժամանակաշրջանի իրադարձությունները¹⁶ Անանուն Եղեսացին նկարագրում է հռոմեական և բյուզանդական կայսրերի ժամանակագրության հիման վրա՝ ներհյուսելով նաև սաեսանյան արքաների հաջորդականությանը վերաբերող տվյալները: Մեծ աեղ է հատկացված Եղեսիայի Աբգար Ուֆամա թագավորի և Քրիստոսի անվավեր թղթակցության պատմությանը, Կոստանդին I կայսեր (324—337 թթ.) եկեղեցական ֆաղափականությանը, Հուլիանոս կայսեր (361—363 թթ.) հակաքրիստոնեական միջոցառումներին, պարսկա-բյուզանդական պատերազմներին և այլն: Ինչպես Եկեղեցական ժամանակագրության մեջ, այնպես նաև այստեղ հանգամանորեն ներկայացված են Հուստինիանոս կայսեր (527—565 թթ.) և Թեոդորա թագուհու գործունեության հետ կապված իրադարձությունները: Ժամանակագրության մեջ լայն արձագանք են գտել նաև Մավրիկիոս (582—602 թթ.) ու Հերակլիոս (610—641 թթ.) կայսրերի և պարսից արքա Խոսրով Փարվեզի (590—628 թթ.) հարաբերությունները:

¹⁴ *Chabot* —I, p 26—104.

¹⁵ *Նույն տեղում*, 105—114:

¹⁶ *Նույն տեղում*, 115—238:

Զորբորդ մասում¹⁷ «Ժամանակագրության» ընթացքը փոփոխություն չի կրում. իրադարձությունները նորից շարադրվում են բյուզանդական կայսրերի հաջորդականության համեմատ, այժմ արդեն ներկայացված արաբական խալիֆների գահակալմանը վերաբերող տվյալներով: Հեղինակը հատկապես կանգ է առնում արաբական տիրապետության սկզբնավորման վրա, մանրամասն նկարագրում պարսից տերության աստիճանական անկումը և Հերակլիոս կայսեր մղած հուսանատ պատերազմներն արաբների դեմ, որոնց ընթացքում աչքի են ընկնում մի քանի հայազգի զորավարներ: Զգալի տեղ է հասկացված նաև խալիֆաթի ներքին կյանքին, ժողովրդական ապստամբություններին և աղանդավորական շարժումներին:

«Ժամանակագրության» հինգերորդ, ամենածավալուն մասը¹⁸ նվիրված է սելջուկյան նվաճումների և Մերձավոր արևելքում թուրքական ամիրայությունների հիմնադրման պատմությանը: Հավասարապես վերահանված նաև խաչակրաց արշավանքների և Ասորիքի խաչակրաց պատերազմների կազմավորման պատմությունը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Մերձավոր արևելքի ազգային, քաղաքական և հասարակական իրադրությունը նորից, արդեն քանիներորդ անգամ, ենթարկվեց արևմտական փոփոխությունների:

XI դարի կեսերին արևելքից դուրս հորդեցին սելջուկ-թուրքերի կիսավայրենի բռնակրակային ցեղերը և կարև ժամանակի ընթացքում ձեռնարկեցին Արաբական խալիֆաթն ու Բյուզանդական կայսրությունը: 1055 թ. սելջուկյան զորագլուխ Տողուկ-բեգը, խալիֆից ստանալով սուլթանի կոչում, վավերացրեց իր փաստական իշխանությունը և հիմնադրեց հանդիսացավ թուրքական աշխարհակալ պետության: Խալիֆաթի նեա իրենց հաշիվները մաքրելուց հետո, 1071 թ., թուրքերը Մանսուրի հակառակորդ շախախիշ պարտության մատնեցին Բյուզանդական կայսրությանը, և վերջինս փաստորեն դուրս մղվեց Մերձավոր արևելքի պատմության թատերաբեմից:

Սելջուկյան կայսրությունն իր հզորության գագաթնակետին հասավ Այդի-Արսլան (1063—1072 թթ.) և Մելիքշան (1072—1092 թթ.) սուլթանների օրոք՝ տարածվելով Զինաստանի սահմաններից մինչև Միջերկրական ծով և Անդրկովկասից մինչև Հնդկական օվկիանոս: Մելիքշանի և հատկապես նրա վեզիր Նիզամ ալ-Մուլքի եռանդուն միջոցառումների շնորհիվ սելջուկյան պետությունը, աստիճանաբար վերականգնելով մերձավորարևելյան քաղաքակրթության նախկին ավանդ-

¹⁷ Chabot—I, p. 239—Chabot—II, p. 45.

¹⁸ Chabot—II, p. 45—241.

ներք, սկսեց ամրապնդվել ու կայունանալ նաև ներքնապես՝ հասարակական-ֆաղափական հարաբերությունների բնագավառում:

XI դարի վերջում Մերձավոր արևելքում հայտնվեց նաև մի նոր ֆաղափական ուժ: Ընչազուրկ գյուղացիության գայրույթը և ասպետների ազմատենչ եռանդը զսպելու նպատակով, Հռոմի պապն ու եվրոպական խոշոր ֆեոդալները առաջ փաշեցին խաչակրության գաղափարը: Առաջին խաչակրաց արշավանքը կազմակերպվեց 1096—1099 թթ., որի անմիջական արդյունքը եղավ Երուսաղեմի խաչակրաց թագավորության (1099 թ.) և նրա ենթակա իշխանությունների՝ Եդեսիայի (1098 թ.), Անտիոքի (1098 թ.) ու Տրիպոլիի (1102 թ.) կոմսությունների հիմնադրումը:

Գրավելով Միջերկրական ծովի և Որոնտես գետի միջև ընկած նեղ շերտը, ֆրանկները թուրքերին զրկեցին ծովային հաղորդակցությունից և մեկուսացրին Եգիպտոսի Ֆաթիմյաններին: Դեպի արևելք ծավալվելու և Եգիպտոսի ներքին գործերին միջամտելու բոլոր հետագա փորձերը. սակայն, ապարդյուն անցան: Ասորիքի նշանավոր ֆաղափները՝ Հալեպը, Համան, Հոմար և Դամասկոսը, չնայած բազմիցս ենթարկվեցին խաչակիրների ննջմանը, բայց միշտ մնացին մահմեդականների ձեռքում: Այսպիսով, Եդեսիայից արևելք ֆրանկները ոչ մի հաջողություն չունեցան: Այնուամենայնիվ խաչակրաց արշավանքները, վրաց Բագրատունիների պատերազմական գործողությունների կողքին, որպես արտաֆին հանգամանք, որոշակի դեր խաղացին Սելջուկյան կայսրության թուլացման գործում, թեև որոշիչը ներքին պատճառներն էին:

Սելիֆշահից հետո սելջուկյան աշխարհակալ պետությունը ներքին երկպառակությունների պատճառով սկսեց փայփայվել: Նրա սահմաններում առաջացան բազմաթիվ կիսանկախ ամիրայություններ, թեև անվանապես պահպանվում էր սելջուկյան սուլթանների իշխանությունը: Անատոլիայում ստեղծվեց Ռումի սուլթանությունը, որը գոյատևեց 1077—1307 թթ.: Սերաստիայում և Մալաթիայում իշխում էին Դանիշմենդյան ամիրաները (1071—1178 թթ.): Հյուսիսային Միջագետքի ֆաղափներին՝ Հիսն-Քեֆային, Ամիդին, Մարդինին ու Նիրկերտին տիրում էին Արտուֆյանները (1102—1408 թթ.): Մեծ Հայքի կենտրոնական նահանգները, Խլաթ մայրաֆաղափով, գտնվում էին Շահարմենների ձեռքում (1110—1207 թթ.): XII դարի 20—30-ական թթ. Հյուսիսային Միջագետքում և Ասորիքում ստեղծվեց Զանգիդյան (1127—1222 թ.), իսկ հյուսիսարևմտյան Իրանում՝ Ելդեգիդյան արաբեզությունը (1137—1225 թթ.): Սելջուկյան աշխարհակալության արևելյան նահանգները՝ Իրանը և Միջին Ասիան, նույնպես մասնատված էին զանազան ամիրայությունների ու արաբեզությունների:

Թուրքական այս պետությունները մշտական պայքարի ու պատերազմի մեջ էին իրար հետ: Յուրաքանչյուր ամիրա ձգտում էր հաստատել իր գերիշխանությունը, սակայն նրանցից ոչ մեկին չհաջողվեց վերականգնել Սելջուկյան կայսրության նախկին միասնությունը: Այդ ուղղությամբ որոշ հաջողությունների հասան Ելդեգիզը (1137—1176 թթ.), Զանգին (1127—1146 թթ.) և հետագայում՝ Սալահեդդինը (1169—1193 թթ.): Ելդեգիզի դերը պատմության մեջ որոշվում է այն բանով, որ նա, միավորելով հյուսիսարևմտյան Իրանի, Ատրպատականի և Աղվանքի մահմեդականներին, կարողացավ կասեցնել վրաց Բագրատունիների հարանուն առաջխաղացումը¹⁹:

Ինչ վերաբերում է Իմադեդդին Զանգին, ապա նա, 1127 թ. նշանակվելով Մոսուլի կառավարիչ և հաջորդ տարի գրավելով Հալեպը, վաստորեն հիմն դրեց Ասորիքի միասնական մահմեդական պետությանը, որը մահացու սպառնալիք դարձավ խաչակրաց իշխանությունների գոյության համար: 1144 թ. Զանգին կործանիչ հարված հասցրեց ֆրանկներին՝ նրանցից խլելով Եդեսիա ֆաղաֆր և, այդպիսով, վերացնելով Եդեսիայի կոմսությունը: Երկու տարի անց, երբ Զանգին սպանվեց դավադիրների ձեռքով, ֆրանկները փորձեցին ետ խլել ֆաղաֆր, սակայն դա նրանց չհաջողվեց: Ապարդյուն անցավ նաև Եդեսիայի վրեժը լուծելու նպատակով 1147—1149 թթ. կազմակերպված երկրորդ խաչակրաց արշավանքը:

Զանգիի որդու՝ Նուրեդդինի օրոք թուրքերի և ֆրանկների միջև միառժամանակ հարաբերական խաղաղություն հաստատվեց: Սակայն այդ վիճակը շուտով փոխվեց Եգիպտոսի Այյուբյան սուլթանության հիմնադիր Սալահեդդինի ջանքերով: Վերացնելով Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆների իշխանությունը, Սալահեդդինը կարճ ժամանակի ընթացքում նվաճեց Ասորիքի բոլոր ֆաղաֆները, իսկ 1187 թ. գրավեց նաև Երուսաղեմը:

Իրանից հետո այլևս ֆրանկներն Արևելքում որևէ նշանակալից դեր չխաղացին: Երրորդ խաչակրաց արշավանքը (1189—1192 թթ.) մարեց՝ նստանելով Ասորիքի սահմաններին: Զուրբորդը (1202—1204 թթ.) կանգ առավ Կոստանդնուպոլսում և սվարավեց Բյուզանդական կայսրության պարտությամբ: 1217—1221 թթ. տեղի ունեցավ հինգերորդ, իսկ 1228—1229 թթ.՝ վեցերորդ խաչակրաց արշավանքը: Ճիշտ է, 1229 թ. ֆրանկներին հաջողվեց նորից տիրել Երուսաղեմին, սակայն 1244 թ. նրանք վերջնականապես կորցրին այն:

Սալահեդդինի հաջորդները, հատկապես Մելիք-ալ-Ադիլը (1200—

¹⁹ Հմմտ. *К Э. Босворт, Мусульманские династии, М., 1971, стр. 172.*

1218 թթ.) և Մելիֆ ալ-Քամիլը (1218—1238 թթ.) ոչ միայն կարողացան պահպանել Ասորիքի միասնությունը, այլև Այուբյան հարստության գերիշխանությունը տարածեցին Նփրկերտի, Ամիդի, Հիսն-Քեֆայի, Սինջարի ու Խլաթի վրա: 1230-ական թթ., սակայն, պատմության քառերաբեմ էլան նոր ուժեր՝ թաթար-մոնղոլական ժողովուրդները, որոնք մի անգամ ևս հիմնովին փոխեցին Մերձավոր արևելքի իրավիճակը:

Շուրջ երկուհարյուրամյա պատմության այսպիսի կարևոր մի ժամանակաշրջան է ընդգրկում, ահա, Անանուն Եդեսացու «Ժամանակագրության» վերջին մասը, որի հայերեն թարգմանությունը սույն հրատարակությամբ ներկայացվում է հայ ընթերցողին: Այստեղ համարյա առանց բացառության արտացոլված են վերը թվարկված բոլոր նշանակալից իրադարձությունները: Այդ հիմնական իրադարձությունների պատմագիտական իմաստավորման խնդրում հնարավոր է, որ «Ժամանակագրությունը» որևէ նորություն չբերի, սակայն անգնահատելի է նրա նշանակությունը բազմաթիվ մանրամասների, դեպքերի, ժամանակագրական ավյալների ու պատմական անձանց նշգրտման գործում:

* * *

Ասորական հետագա աղբյուրները որևէ տեղեկություն չեն հաղորդում ո՛չ Անանուն հեղինակի, ո՛չ էլ նրա երկասիրությունների մասին: Միայն խնդրո առարկա «Ժամանակագրությունն» է, որ պարունակում է հեղինակի կենսագրությանը վերաբերող մի քանի կցկտուր տվյալներ՝ 1187 թ. Անանունը ներկա է լինում Սալահեդդինի կողմից Երուսաղեմի առման ողբերգական դեպքին²⁰: 1189 թ. հակոբիկյան եկեղեցու արևելյան թեմերի առաջնորդի՝ մաֆրիանի հետ նա այցելում է Թագրիտ²¹: Այսպիսով պարզվում է, որ մոտավորապես վերջին հիսուն տարիների դեպքերը շարադրելիս Անանունը հանդես է գալիս որպես ականատես և ականջալուր ժամանակագիր:

Որոշ տեղեկություններ հնարավորություն են տալիս նշտելու «Ժամանակագրության» ստեղծման մոտավոր ժամանակը: Քաղաքական ժամանակագրության 500-րդ գլխում հեղինակը նշում է. «Մենք նկարագրեցինք մինչ այժմ, այսինքն՝ մինչև 1514 (1203) թվականը կատարված դեպքերը»²²: Նույն հիշատակագրությունը կրկնված է նաև եկեղեցական ժամանակագրության մեջ²³, միայն ոչ թե 1203, այլ 1204 թվականի համար: Այս տեղեկությունները ցույց են տալիս, որ «Անանուն

²⁰ Տե՛ս սույն թարգմանությունը, գլ 484:

²¹ Տե՛ս Chabot—II, p. 318. Նաև՝ Abouna-Fiey, p. 238.

²² Տե՛ս սույն թարգմանությունը, գլ 500:

²³ Տե՛ս Chabot—II, p. 340. Նաև՝ Abouna-Fiey, p. 253

ժամանակագրության» մեծ մասը ավարտվել է 1203—1204 թթ.: Ինչ-
ինչ հանգամանքների բերումով գործը հավանաբար ընդհատվել է և
շարունակվել երկարատև ընդմիջումից հետո:

«Ժամանակագրության» ստեղծման ժամանակի ստորին սահմանը
պարզվում է հեղինակի մի կարևոր ակնարկի շնորհիվ: Հիշատակելով
Գամասկոսի Այուբյան ամիրա Մելիֆ ալ-Աշրաֆին, Անանունն ավելաց-
նում է. «...որն արժանի է բարի հիշատակի»²⁴: Նշված խոսքերը տեղին
են միայն մեռած մարդու հասցեին, և քանի որ Մելիֆ ալ-Աշրաֆը մե-
ռել է 1237 թ., ուստի «Ժամանակագրությունն» ավարտվել է դրանից
հետո, շուրջ 1240 թ.²⁵:

Անանունի կենսագրությանը վերաբերող մյուս կարևոր հարցը, որ
արժանացել է հետազոտողների ուշադրությանը, նրա հայրենի բնակա-
վայրի պարզաբանումն է: Սուկական հետաքրքրությունից բացի այս
հարցն ունի նաև կարևոր աղբյուրագիտական նշանակություն, քանի որ
շատ հաճախ իրադարձությունների աշխարհագրական ընդգրկումը կախ-
ված է այն բանից, թե որտեղ է գործել պատմական երկասիրության հե-
ղինակը:

Թուրքիկ հայացքով անգամ նկատելի է, որ մեր «Ժամանակագրու-
թյան» համարյա բոլոր դրվագներում ուշադրության է ենտրոնում էն
գտնվում Եդեսիայի հետ կապված իրադարձությունները: Դրանից հե-
տազոտողների մեծ մասը բնականաբար հանգել է այն եզրակացու-
թյան, որ Անանուն ժամանակագիրը եդեսացի է: Ժ.—Բ. Շաբոն փոր-
ձում է հերքել այս տեսակետը, ուշադրություն հրավիրելով այն փաստի
վրա, որ Անանունը, եդեսացի շիինելով հանդերձ, կարող էր հարուստ
տեղեկություններ հաղորդել Եդեսիայի մասին, քանի որ, ինչպես հայտ-
նի է, նա օգտվել է Բարսեղ բար-Շումմանայի «Եդեսիայի պատմությու-
նից»²⁶: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ժ.—Մ. Ֆիեն, Բարսեղի
մահվան թվականին (1169 թ.) հաջորդող շարադրանքում ևս Եդեսիան
ուսյնման բացառիկ տեղ է զբաղեցնում²⁷:

Իր հիմնական մասով Անանուն Եդեսացու «Ժամանակագրությունը»
բառացի ֆաղագրություն է անցյալի ասարական աղբյուրներից, հատ-
կապես Հակոբ Եդեսացու (մահ. 708 թ.) «Եկեղեցական պատմությու-
նից», Դիոնիսիոս Թելլ-Մահրացու (մահ. 845 թ.) «Ժամանակագրությու-
նից» և Բարսեղ բար-Շումմանայի վերոհիշյալ «Եդեսիայի պատմությու-

²⁴ Տե՛ս սույն թարգմանությունը, գլ. 518:

²⁵ Հմմտ. S Runciman, A history of the Crusades, v II, Cambridge, 1952, p. 484, Abouna-Fiey, p. VII.

²⁶ Տե՛ս Chabot—II, p. I

²⁷ Տե՛ս Abouna-Fiey. p VIII

նից»։ Քաղաքական բնույթը, սակայն, ոչ միայն չի նսեմացնում, այլև, ընդհակառակն, բարձրացնում է Անանունի երկի արժեքը, որովհետև նշված աղբյուրներից վերջին երկուսը մեզ չեն հասել, իսկ առաջինից միայն ասանձին հատվածներ են պահպանվել։

Հետազոտողների մեծ մասի կարծիքով, Անանունը ինչ-ինչ հանգամանքների բերմամբ չի օգտվել ժամանակի մեծագույն ասորական պատմագրի՝ Միֆայել Մեծի (մահ. 1199 թ.) սովորածավալ «Ժամանակագրությունից»։ Հակառակ տեսակետի վրա է կանգնած Ն. Ելիսեևը. ըստ որի XII դ. դեպքերի նկարագրության համար Անանուն Եդեսացին օգտագործել է Միֆայել Ասորու երկասիրությունը²⁸։ Սակայն Ն. Ռահմանին, Ֆ. Նոն և Ժ.—Մ. Ֆիեն Միֆայելի և Անանունի «Ժամանակագրությունների» նմանությունները բացատրում են ընդհանուր աղբյուրների առկայությամբ²⁹։

Ժ.—Մ. Ֆիեի կարծիքով, Անանունն օգտագործել է նաև մեկ-երկու արաբական աղբյուրներ, որովհետև դեպքերը երբեմն թվագրում է Հիջրայի թվականով։ Ժ.—Մ. Ֆիեն ֆեկնում է նաև հայերեն, որևէ սկզբնաղբյուրի օգտագործման հնարավորության հարցը. «Կարելի՞ է արդյո՞ք ենթադրել նաև մի հայերեն աղբյուր,—գրում է նա։— Դա շատ բնական կլիներ, քանի որ Եդեսիայի շրջանում հայերը խառնված էին ասորիների հետ։ Երկու ժամանակագրություններն էլ (եկեղեցական և ֆալաֆական՝ Լ. Տ.—Պ.) բազմաթիվ տեղեկություններ են պարունակում հայ կաթողիկոսների, ինչպես նաև հայ իշխանների կոթիվների մասին։ Մի անդ անգամ Յաղոբ Արսլանի անունը գրված է Ազոբ Արսլան ձևով³⁰, որը մոտ է հայկականին։ Կարելի էր ուրեմն մտածել, որ Մաաթեոս Ուռհայեցու 962—1136 թթ. վերաբերող ժամանակագրությունն ու Գրիգոր Երևցի մինչև 1162 թ. ընդգրկող շարունակությունն է այդ աղբյուրը։ Սակայն երկու բնագրերի զուգահեռ ընթերցումը ցույց է տալիս, որ մանրամասների մեջ նրանք այնքան շատ են տարբերվում, որ անհնար է մտածել Մաաթեոս Ուռհայեցուց Անանունի կատարած ուղղակի փոխառությունների մասին»³¹։ Ինչպես տեսնում ենք, մերժելով անգամ Մաաթեոս Ուռհայեցու և Անանունի կապը, Ժ.—Մ. Ֆիեն չի բացառում հայերեն աղբյուրի օգտագործման հնարավորությունը։

Մեր կարծիքով, Անանուն Եդեսացու «Ժամանակագրությունը», Ժ.—

²⁸ *Nikita Elisséeff*, *Nūr Ad-Dīn. Un grand prince musulman de Syrie au temps des Croisades (1118—1174)*, t. 1 Damas, 1967, p. 32

²⁹ *Տե՛ս Abouna-Fiey*, p. IX—X.

³⁰ *Տե՛ս Chabot*—II, p. 159, *Abouna-Fiey*, p. 120, սույն թարգմանության 41. 442:

³¹ *Abouna-Fiey*, p. XI.

Մ. Ֆիեի նշածից բացի, պարունակում է մի ավելի ցայտուն փաստ, որը վկայում է հայերեն սկզբնաղբյուրի օգտագործման մասին: Քաղաքական ժամանակագրության 283-րդ գլխում Անանունը գրում է. «Նուսով, սակայն, նրա (Ղազիի՝ Լ. Տ.-Պ.) ու իբերների, այսինքն՝ վրացիների, բազավորի միջև, որը Դավիթ էր կոչվում, տարածայնություն ծագեց»³²: Ընդգծված բառի փոխարեն ասորական բնագրում դրված է brsty՝ բար, որը ֆրանսերեն բնագրի թարգմանիչը տառադարձել է Brestāyē անիմաստ ձևով³³: Brsty՝ բար բացատրելի է միայն հայերենի միջոցով. դա հայերեն վրացի բառի ասորական վերաբանությունն է āyē հոգնակի ցուցիչով, և պետք է տառադարձվի Vraçāyē (=վրացիներ): Ինչպես հայտնի է, հայերեն վ-ն միջնադարյան ասորական աղբյուրներում որպես կանոն վերաբանվել է h-ով³⁴, իսկ st (<ts*) = g(ç):

* * *

Մասնագետների կողմից արժարժվել է նաև Անանուն Եդեսացու ֆաղափական դիրքորոշման հարցը, որը տեղիք է տվել զանազան իրարամերձ կարծիքների: Այսպես, Երինակ, ըստ Ն. Ելիսեի՝ հեղինակը «չառ աշխույժ շարադրանկանակով մեզ մանրամասներ է հաղորդում ֆրանկների ու թուրքերի մասին՝ ոչ այնքան բարյացակամությամբ ցուցաբերելով բյուզանդացիների նկատմամբ»³⁵: Դժվար է շիմաձայնել այս տեսակետի հետ, որովհետև Անանունն իսկապես առիթը՝ բաց չի բողոքում բյուզանդացիներին դատապարտելու համար: Բնորոշ է հասկացվել այն փաստը, որ նա առանձին դիտավորությամբ է ընդգծում խաչակիրների հանդեպ հույների նյութած դավերը, որոնք իրագործվում էին թուրքերի համագործակցությամբ³⁶: Ասորիների հակաբյուզանդական զգացումները լիավիճակում հասկանալի են, որովհետև իր ողջ գոյության ընթացքում հակոբիկյան եկեղեցին ենթարկվել է ֆաղկեդոնականության մշակական ոտնձգություններին ու հալածանքներին³⁷:

Ավելի դժվար է բացատրել Անանուն Եդեսացու վերաբերմունքը հայերի և ֆրանկների նկատմամբ: Այդ առթիվ Ռ. Գրուսեն գրում է. «Այս աղբյուրը, ավելի քան Միֆայել Ասորին, դրսևորում է հակոբիկյան միջավայրի բնական հայատյացությունն ու ֆրանկատյացությունը՝ դրա կողմին ազգակցական ու մշակութային բացահայտ համակրանք ցուցաբերելով թուրք-արաբական տիրապետության նկատմամբ: Միֆայել

³² Հմմտ սույն թարգմանության զլ. 283:

³³ Abouna-Fiey, p. 62.

³⁴ Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, №3, էջ 139—154:

³⁵ N. Elisséeff, Nur Ad-Din..., t. 1, p. 32.

³⁶ Հմմտ. սույն թարգմանության զլ. 243, 407, 433 և այլն:

³⁷ Հմմտ. P. Kawerau, Die Jakobitische Kirche im Zeitalter der syrische Renaissance, Berlin, 1960, S. 82

պատրիարքը, որը նույնպէս չափազանց հայատյաց է և հազիվ թէ ավելի քան է հակակրօմ ֆրանկներին... , քաղաքական նկատառումներով, ինչպէս նաև նշմարիտ քրիստոնեական զգացումներով, ձգտում է համերաշխություն պահպանել ֆրանկ իշխանների հետ: Անանուն ասորին, ընդհակառակն, շունենալով հուշակալոր առաջնորդի խոհեմությունն ու հարուստ անհատականությունը, ամենեկին զլանում է փողարկել իր խլամասեր զգացումները: Դա մի քրիստոնյա արար է՝ եվրոպացիների ներկայության դեմ մահանդակաւ արարների ու թուրքերի հետ ունեցած համերաշխության բնագորով»³⁸:

Ռ. Գրուսեի տեսակետին փորձում է առարկել Ժ.—Մ. Ֆիեն, ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ «Ժամանակագրության» մեջ երկու անգամ ֆրանկները կոչված են «օրհնյալ»³⁹: Այսպէս. «Սակայն օրհնյալ ֆրանկները, որոնք բարի շէին տրամադրված հունաց կայսեր նկատմամբ և նրա հետ համագործակցում էին կեղծ սիրալիրությամբ, խորհուրդ չտվին տվյալ պահին պաշարել Հալեպը»⁴⁰, կամ՝ «...օրհնյալ ֆրանկները անսպասելիորեն հայտնվեցին և մինչև երկու քաղաքներ մի հովտում»⁴¹: Մեզ թվում է. սակայն, որ այս հատվածներում «օրհնյալ» (*orhikā*) բառը ոչ այնքան դրվատական, որքան հեղանակաւ բնույթ ունի, քանի որ նույն որակումը մի անգամ էլ հատկացված է հույներին, բայց այնպիսի նախադասության մեջ, որտեղ դժվար է բարյացակամություն ենթադրել: Նկարագրելով երկրորդ խաչակրօւթւան ձախողումը, Անանունը գրում է. «Այսպիսի դառը վախճան ունեցավ այդ թագավորների սուրբանքը օրհնյալ հույների նենգության պատճառով»⁴²:

Այնուամենայնիվ, չնայած Ժ.—Մ. Ֆիենի ոչ այնքան հիմնավորված առարկությանը, չի կարելի ընդունելի համարել նաև Ռ. Գրուսեի ծայրահեղորեն չափազանցված տեսակետը: Ճիշտ է, Անանունը որպէս կանոն դասապարտում է ֆրանկների վատ արարները, երբեմն ծաղրի է ենթարկում նրանց արկածախնդրական ձեռնարկումները և այլն, սակայն նույն կերպ է վարվում նաև թուրքերի, եգիպտացիների ու մյուսների նկատմամբ: Երեստ բացասական վերաբերմունք ցուցաբերելով եղեսիսի կոմս կրտսեր Ժոսլինի հանդեպ, միաժամանակ նա մեծ դրվատանքով է արտահայտվում ավագ Ժոսլինի և Մարաշի կոմս Բաղդուիների մասին: Այնպէս որ նիշտ չի լինի Անանունի մոտ անհաշտ հակակրօւթւան նկատել ֆրանկների նկատմամբ:

Ինչ վերաբերում է թուրք սուլթանների ու ամիրաների հասցեին

³⁸ R. Grousset, Histoire . t II, p 866—867

³⁹ Ahouna-Fiey, p XI—XII

⁴⁰ Տե՛ս սույն թարգմանության գլ. 403:

⁴¹ Նույն տեղում, գլ. 427:

⁴² Նույն տեղում, գլ. 407:

շուայլած գովեստներին, ապա դա էլ ունի իր պարզ բացատրությունը: Ոտարների բռնի տիրապետության պայմաններում հեղինակը ֆաղափարական նկատառումներով չէր կարող բացահայտել իր իսկական զգացումները իշխանությունների հանդեպ: Նույն երևույթը բնորոշ է նաև միջնադարյան հայկական մատենագրությանը, որը բազմաթիվ դրվատական վկայություններ է պարունակում Մելիֆշանի, Շահ-Աբասի և այլոց մասին: Հիմնվել նման վաստերի վրա և ենթադրել, թե միջնադարյան Երեստոնյա հեղինակները նախընտրել են մահմեդականների տիրապետությունը, նիշտ չի լինի:

Ի միջի այլոց, Անանուն եղեսացին որքան էլ ձգտում է ֆոդարկել իր զգացումները մահմեդականների հանդեպ, այնուամենայնիվ, տեղտեղ բացահայտում է իր իսկական վերաբերմունքը: Այսպես, օրինակ, նկարագրելով Անիի գրավումը վրացիների կողմից, նա նշում է, որ Գեորգի Գ թագավորը ֆաղափի «բնակիչներին փրկեց մահմեդականների դաժան լծից»⁴³:

* * *

Անդրադատնալով հայերի նկատմամբ Անանունի վերաբերմունքի հարցին, պետք է նշել, որ Ռ. Գրուսեն այստեղ էլ ընկել է ծայրահեղության մեջ: Անժխատելի է, իհարկե, որ հեղինակը բացասաբար է տրամադրված հայ եկեղեցու առանձին ներկայացուցիչների, մասնավորապես Գրիգոր Տղա կաթողիկոսի (1173—1193 թթ.) նկատմամբ: Բայց դա բացատրվում է մի որոշակի իրողությամբ. Գրիգոր Տղան, միջամտելով հակոբիկյան եկեղեցու ներքին գործերին, բռնել էր հակաթոռ պատրիարք Թեոդորոս բար-Վահրունի կողմը⁴⁴: Իսկ ընդհանուր առմամբ «ժամանակագրության» մեջ արտացոլված են հայերի և՛ լավ, և՛ վատ արարքները, որ հիմք է տալիս չկասկածել հեղինակի անաչառությանը:

Այսպես, Անանունը հանգամանալից կերպով շարադրում է, թե ինչույն 1112 թ. եղեսացի մի խումբ հայեր ֆաղափր թուրքերին հանձնելու նպատակով դավաճանական գործարք են կնքում Մոսուլի Մավրուդ ամիրայի հետ⁴⁵: Նույն դեպքը նկարագրված է նաև Միֆայել Ասուրու⁴⁶ և Մատթեոս Ոսեհայեցու⁴⁷ մոտ, միայն այն տարբերությամբ, որ վերջինս լուրջան է մատնում դավաճանների ազգային պատկանելությունը: Դա-

⁴³ Նույն տեղում, գլ. 456:

⁴⁴ Նույն տեղում, «Հավելված Ա»:

⁴⁵ Նույն տեղում, գլ. 270:

⁴⁶ Chronique de Michel le Syrien, éditée par J — B Chabot, texte, t. IV, Paris, 1910, p. 594, trad. fr., t. III, 1905, p. 196.

⁴⁷ Մատթեոս Ոսեհայեցի, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 322.

աելով այս փաստից, կարելի էր մտածել, ուրեմն, որ Անանուն Եղեսացին ուզում է վարկաբեկել հայերին: Սակայն «Ժամանակագրության» 290-րդ գլխում նա ոգևորված նկարագրում է հայերի գործած մի հերոսական սխրանք երկու տասնյակ հայ զինվորներ, խիզախորեն թափանցելով Արտուֆյան ամիրաների մայրաֆաղաֆ Հիսն-Ջիադի (Խարբերդ) միջնաբերդը, փորձում են ազատել գերված ֆրանկ իշխաններին: Ի դեպ, Մատթեոս Ռոհայեցին, մեծապես գովելով զինվորների ֆաջուրյունը, որոնք «խորհեցան խորհուրդս ֆաջաց և կատարեցին զգործ անմահից», այս անգամ էլ չի նշում, որ նրանք հայ էին⁴⁸:

Հայերին պատիվ չբերող մի դրվագ էլ նկարագրված է «Ժամանակագրության» 440-րդ գլխում, որը նվիրված է մի անպիտան ֆահանայի զագրելի արարքին: Սակայն ընդամենը մի ֆանի էջ հետո⁴⁹ հեղինակը սրտառույ կերպով պատմում է մի առափնի հայ կնոջ մասին, որը անպատվությունից խուսափելու համար երեխաների հետ նետվում է ջուրը: Դա մի գողարիկ վկայաբանություն է, որը կարող է արժանի տեղ գրադեցնել «Հայոց նոր վկաներին» նվիրված գրական հուշարձանների շարքում:

Ինչպես տեսնում ենք, Անանուն Եղեսացին անաշտ վերաբերմունք է ցուցաբերում հայերի նկատմամբ, և առանձին բացասական արտահայտությունները շեն կարող խախտել այս տպավորությունը: Որպես ազնիվ ժամանակագիր, նա չէր կարող կոծկել ուրիշների թերությունները, երբ չի խնայում անգամ իր հայրենակիցներին: Բազմաթիվ դատը խոսքեր, հայհույանքներ և նզովքներ են ուղղված, օրինակ, ասորի հոգեվորականներ Արշուն ավագ րեցի, Բարսումա Խամայելի անունով ֆահանայի և Թեոդորոս քար-Վահրուն եպիսկոպոսի հասցեին⁵⁰:

Հայերի մասին տեղեկությունները, որոնք ցրված են «Անանուն ժամանակագրության» տարբեր գլուխներում, ընդգրկում են հնագույն դարերից մինչև հեղինակի սպրած ժամանակները: Տեղեկությունների մի մասը հայտնի է նաև այլ աղբյուրներից, և այստեղ «Անանուն ժամանակագրության» դերը սահմանափակվում է միայն նրանով, որ հաստատում, նշգրտում ու մանրամասնում է այդ աղբյուրների տվյալները: Սակայն կան նաև մի շարք տեղեկություններ, որոնք հայտնի են դառնում բացառապես շնորհիվ Անանուն Եղեսացու աշխատության, որ մեծապես բարձրացնում է նրա գիտական նշանակությունը:

Ուշագրավ է, օրինակ, հեղինակի վկայությունը Եղեսիայի թագա-

⁴⁸ Նույն տեղում, էջ 353—355:

⁴⁹ Սույն թարգմանության գլ. 442:

⁰ Հմմտ. նույն տեղում, գլ 414, 421, «Հավելված Ա»:

վորների հայկական ծագման մասին⁵¹: Դա ցույց է տալիս, որ Արգար թագավորի հայ լինելու առասպելը միջնադարում այնքան էր տարածվել, որ ասորիներն անգամ հավատ էին բնծայում դրան: Ի դեպ, այդ առասպելը բոլորովին գուրկ չէ պատմական հիմքից. հայտնի է, որ հայ Պարթևների մի ճյուղը ս. թ. I դ. վերջում և II դ. սկզբում իսկապես կարճ ժամանակով տիրել է Եդեսիայի (Օսրոյենների) թագավորության գահին⁵²:

Մեծ արժեք են ներկայացնում Անանուհի տեղեկությունները VII դ. իրադարձությունների՝ արաբական նվաճումների, բյուզանդա-արաբական պատերազմների, հայ-բյուզանդական և հայ-արաբական հարաբերությունների մասին, որոնց մի մասը արդեն մտել է գիտական շրջանառության մեջ⁵³: Անանունը զգալի տեղ է հատկացնում բյուզանդա-արաբական պատերազմների բնթացքում աչքի ընկած հայ զորավարներ Մանվելի, Գեղիգորի և Դավթի գործունեությանը, որ վկայությունն է հայերի զինական նշանակալից ուժի:

Հետաքրքրական են նաև արաբական շրջանի Հայաստանի հայտնի անցուղարձեթին վերաբերող ավյալները, որոնք մեկ անգամ ևս հաստատում են պատմական մյուս սկզբնաղբյուրների արժանահավատությունը: Այս առումով արժանի են հիշատակման «Ժամանակագրության» տեղեկությունները Փիլիպպիկոս կայսեր (711—713 թթ.) հալածանքների պատճառով արաբների մոտ ասպատան գաած հայերի, Արաբական խալիֆայության դեմ հայ ժողովրդի 703 թ. ապստամբության և հայ նախարարների շարաշար ողջակիզման մասին⁵⁴:

Անանունը շատ ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հարավային Կապադովկիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանությունների մասին: Ինչպես հայտնի է, բյուզանդական կայսրերի նվաճողական ֆաղափականության հետևանքով, սկսած XI դ. 20-ական թթ., հայ ժողովրդի մի զգալի մասը գաղթել էր Եփրատից արևմուտք⁵⁵: Սելջուկյան արշավանքները հայերին ստիպում են ավելի ու ավելի հեռանալ հայրենի բնակավայրերից և թափանցել Հյուսիսային Ասորիքի և Կիլիկիայի անմատչելի գավառները: Նրանք աստիճանաբար այնքան

⁵¹ Նույն տեղում, «Հավելված Բ»:

⁵² *St' u R. Duval*, Histoire politique, religieuse et litteraire d'Edesse jus qu'à la premiere Croisade, Paris, 1892, p. 27, 52—55

⁵³ *St' u H. B. Пугулевская*, Византия и Иран..., стр. 283—284, 287—288. *А. Тер-Гевондян*, Армения и Арабский халифат, Ереван 1977, стр. 11, 23, 25.

⁵⁴ Հմմտ. սույն թարգմանությունը, «Հավելված Բ»:

⁵⁵ XI դ. հայկական գաղթների մասին մանրամասն տե'ս *G. Dédéyan*, L'immigration arménienne en Cappadoce au XI^e siècle, „Byzantion“, t. XIV (Bruxelles, 1975, p. 41—117

են սավաբանում, որ Մանագլեիտի հակառակմամբում բյուզանդացիների կրած ջախջախիչ պարսությունից հետո (1071 թ.) դառնում են այդ երկրների տերերը, կարողանալով լեզու գտնել և համաձայնության գալ սելջուկների հետ:

Մոտ աասնհինգ տարի մեծ հաշտությունների է հասնում հատկապես Փիլարտոս Վարաժնունու հիմնադրած հայկական իշխանությունը, տարածվելով Եդեսիայից մինչև Կիլիկիայի խորքեր⁵⁶: 1086 թ., սակայն, Փիլարտոսի իշխանությունը նվաճվում է սելջուկյան սուլթան Մելիֆշանի կողմից: Նրա փլատակների վրա առաջանում են մի շարք ավելի մանր հայկական իշխանություններ, որոնք կարողանում են իրենց գոյությունը պահպանել մինչև հաջորդ դարի առաջին տասնամյակները:

Նշված տարածությունների մեծ մասը խաչակրաց արշավանքների նախօրյակին դեռևս գտնվում էր հայ իշխանների տիրապետության տակ: Այսպես, լեռնային Կիլիկիայում տիրում էր Ռուբենի որդի Կոստանդինը, Քեսունում, Մարաշում, Ռապանում և Հոռմկլայում՝ Գող Վասիլը, Եդեսիայում՝ Թեոդորոս (Թորոս) կյուբապաղապը, Մելիտենեում՝ նրա անեք Գաբրիելը, Կարկառի գավառում՝ Կոստանդինը, իսկ Նգեպում⁵⁷ և Պիրում՝ Գրիգոր Մագիստրոսի թոռներ Լիկսը և Ապղարիպը:

Հայկական այս իշխանությունները, մեծ հույսեր կապելով խաչակիրների հետ, սկզբնական շրջանում զգալի աջակցություն ցույց տվեցին նրանց: Սակայն շուտով մեկը մյուսի ետևից նրանք գոհ գնացին վերջիններիս դավերին ու բռնություններին: Նախ և առաջ դավադրաբար վերացվեց Եդեսիայի հայկական իշխանությունը (1098), որին հետևեց մյուս իշխանությունների աստիճանական փայփայումն ու անկումը: Այս փաստը առանձին դառնությամբ են արձանագրում հատկապես միջնադարյան հայ հեղինակները՝ ամենայն խորությամբ գիտակցելով խաչակիրների կործանիչ դերը հայկական իշխանությունների վերացման գործում: Այսպես, բնութագրելով Եդեսիայի կոմս Բաղդուին II-ի (1100—1118 թթ.) գործունեությունը, Մատթեոս Ուռհայեցին գրում է. «...մի սա մի ֆակեաց գամենայն իշխանսն Հայոց կարգաւ՝ առանկ ֆան

⁵⁶ Փիլարտոսի և Հյուսիսային Ասորիքի մյուս հայկական իշխանությունների մասին մանրամասն տե՛ս J. Laurent, Études d'histoire arménienne, Louvain 1971, p. 61—128 (Des Grecs aux Croisés Étude sur l'histoire d'Édesse entre 1071—1098), p. 148—159 (Byzance et Antioche sous le curpalate Philarete) Γ Γ Μυκαελην, История Киликинского армянского государства, Ереван, 1952, стр 70—80

⁵⁷ Բանասիրության մեջ այս բնագավառը հաճախ շփոթվել է Միջագետքի Մրծբին քաղաքի հետ. Նգեպի տեղագրման մասին մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան. Հայերը միջնադարյան Մրծբինում և Մեծ Հայքի հարավային նահանգներում, «Պատմաբանասիրական հանդես», 1979, № 3, էջ 80—92:

զատնն Պարսից, և այսպիսի օրինակաւ հայածականս արար զիշխանս Հայոց՝ զայն, որ մնացեալ էին ի կատալի ազգէն Ռուբայց»⁵⁸: Ավելի դիպուկ է Սմբատ Սպարապետի վկայությունը «եւ այնպէս նեղեցին կամսերն Ֆռանգաց զիշխանսն Հայոց, մինչև հանին ի գաւառաց և յամբոցայ իւրեանց, և ոչ ոք կարէ պատմել զգառնութիւն, զոր ամին Ֆռանգնին ի վերայ Հայոց»⁵⁹:

Բարենպաստ հանգամանքների բերմամբ այս համատարած կործանումից զերծ մնաց միայն Ռուբինյան իշխանությունը, որը թեև բազմիցս ենթարկվեց ինչպես խաչակիրների, այնպես նաև բյուզանդացիների ու սելջուկների հարձակումներին, բայց կարողացավ շուրջ երեք հարյուր տարի պահպանել իր գոյությունը: Այդ բանին, ի միջի այլոց, անուղղակիորեն նպաստեց վերոհիշյալ հայկական իշխանությունների վերացումը, որովհետև նրանց մարդկային զանգվածների և զինական ուժերի մի մասը տեղափոխվեց Կիլիկիա:

Նշված իրադարձությունները լայն արձագանք են գտել «Անանուն ժամանակագրության» բազմաթիվ գլուխներում⁶⁰, հանգամանք, որ ընդգծում է վերջինիս անվիճելի արժեքը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման համար:

Անանուն Եդեսացին մի շարք արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Կիլիկյան հայկական պետության մասին⁶¹. Դրանցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես Լևոն I իշխանի ժամանակաշրջանի (1129—1137 թթ.) իրադարձություններին վերաբերող տվյալները: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Կիլիկիայում խոշոր բախումներ էին տեղի ունենում Դանիշմենդյան ամիրաների, բյուզանդացիների և ֆրանկների միջև, իսկ Լևոնը հաջողությամբ խուսանալով էր դրանց արանում: «Անանուն ժամանակագրությունը» կարող է զգալի դեր խաղալ նշված իրադարձությունների ուրոշ մանրամասնությունների պարզաբանման գործում:

Ուշագրավ է, օրինակ, որ ըստ Անանունի՝ Տարսունն ու Մսիսը Լևոնը գրավել է ոչ թե հույներից, ինչպես ընդունված է պատմագիտության մեջ⁶², այլ՝ ֆրանկներից⁶³: Իսկ «Ժամանակագրության» հաղորդած այն

⁵⁸ Մատթեոս Ռոմայեցի, էջ 338:

⁵⁹ Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք, աշխատասիրություններ Ս Ազըլյանի, Վենետիկ, 1956, էջ 145*:

⁶⁰ *Հմմտ. սույն թարգմանության գլ. 237—239, 241, 245, 246, 249, 252, 255, 260, 275, 277, 287*:

⁶¹ *Հմմտ. նույն տեղում, գլ. 299—300, 309, 400, 441, 443, 459, 510, «Հավելված Ա»*:

⁶² *Տե՛ս Գ. Микаелян, История*, стр 100

⁶³ *Տե՛ս սույն թարգմանությունը, գլ 309*:

փաստը, որ Ղազի Դանիշմենդյանը Բոհեմունդին չախչախելուց հետո մտադիր է եղել երկրորդ անգամ արշավել Կիլիկիա⁶⁴, հաստատում է Միֆայել Ասուրու տեղեկությունը, որ Լևոնը չի կատարել Ղազիին տված հպատակության խոստումը⁶⁵: Ընդհանուր տպավորությունն այն է, որ Լևոն I-ը ոչ թե պաշտպանողական, այլ հարձակողական կոիվներ է մղել Դանիշմենդյանների, ֆրանկների և հույների դեմ⁶⁶:

«Անանուն ժամանակագրության» որոշ տվյալներ վերաբերում են Կիլիկիո իշխան Թորոս II-ի (1144—1168 թթ.) և ֆրանկների ժամանակավոր դաշնակցությանը, երբ Թորոսը մասնակցում է Ասուրիի Նուրեդդին ամիրայի դեմ կազմակերպված մի ֆանի արշավանքների⁶⁷: Հետագոտողները հետաքրքիր մանրամասնություններ կարող են գտնել նաև Մլեն իշխանի (1169—1175 թթ.) դեմ նյութված պավադրության և նրա դժնդակ ստրանության մասին⁶⁸: Իսկ Լևոն II-ին (1185—1219 թթ.) նվիրված գլուխներում իրենց արտացոլումն են գտել Անտիոքի իշխանության և Ռումի սուլթանության դեմ Կիլիկյան պետության մղած երկարատև պայքարի առանձին դրվագները⁶⁹:

Ինչ վերաբերում է բուն Հայաստանի անցուղարձեին, ապա աշատեղ հեղինակը հասկանալիորեն նույնպիսի իրազեկություն հանդես չի բերում, ինչպես Ասուրիի և Կիլիկիայի դեպքերը նկարագրելիս: Այնուամենայնիվ, նա որոշ շափով արձագանքում է նաև Հայաստանում կատարված կարևոր իրադարձություններին: Դրանցից են, օրինակ, Անիի գրավումը վրաց Գեորգի Գ թագավորի կողմից⁷⁰, Դանիշմենդյանների և վրացիների միջև տեղի ունեցած պատերազմները⁷¹, Իվանե Զաֆարյանի՝ դեպի Խլաթ ձեռնարկած արշավանքի ձախողումը⁷², Շահարմենների ու Այուրյանների պայքարը⁷³ և այլն: Շատ արժեքավոր են հատկապես Անանուն Եղեսացու տվյալները Սասունի հայկական իշխանության մասին⁷⁴, ֆանի որ, ինչպես հայտնի է, վերջինիս վերաբերյալ ֆիչ տեղեկություններ են պահպանվել հայկական սկզբնաղբյուրներում:

⁶⁴ Նույն տեղում, գլ. 302:

⁶⁵ *Տե՛ս Դ. Միքայելյան, История* , стр 100

⁶⁶ *Տե՛ս սույն թարգմանությունը*, գլ. 299, 309

⁶⁷ Նույն տեղում, գլ. 441, 443:

⁶⁸ Նույն տեղում, գլ. 459:

⁶⁹ Նույն տեղում, գլ. 500, 510:

⁷⁰ Նույն տեղում, գլ. 456:

⁷¹ Նույն տեղում, գլ. 283:

⁷² Նույն տեղում, գլ. 508, 509:

⁷³ Նույն տեղում, գլ. 506, 507, 512:

⁷⁴ Նույն տեղում, գլ. 455:

Մի քանի խոսք հեղինակի հայացքների, նախապիտույունների և սևի մասին:

Ինչպես կարելի էր նկատել վերը շարադրվածից, Անանուն եղեսպի նորեկ ուղղակի կողմնորոշում չի ցուցաբերում: Դա բացառվում է սպին բանով, որ առեփնները վաղուց արդեն ֆաղափական նպատակներ չէին հետապնդում՝ հանդես գալով միայն որպես առանձին կրոնական համայնք: Նրանց համար դրական էր այն ափրակայր, որը կարողանում էր ապահովել երկրի խաղաղ կյանքը և չէր դիպչում հակոբիկյան եկեղեցու շահերին, լինել դա հայ, ֆրանկ, թե թուրք՝ միևնույն է: Մեր հեղինակը ևս եղեսպայի և ընդհանրապես Ասորիքի պատմական իրադարձությունները գնահատում է հիմնականում այս շափանիշով:

Անանուն եղեսպացին, միջնադարյան մյուս հեղինակների նման, երկուսին գործերում մեծ տեղ է հաակացնում նախախնամության խաղաղած դերին: «Հաղթանակ ու կարողություն ավոզը և թագավորների լործերը տնօրինողն աստված է»,—գրում է նա⁷: Բնական աղետները, սուսար նվաճողների բարբառությունները նա ներկայացնում է որպես աստվածային պատուհաս, որպես արդար հատուցում ժողովրդի գործած անհամար մեղքերի: Այսպես, օրինակ, մանրամասնորեն նկարագրելով եղեսպայի բնակչության վատ արարքները՝ հաբուսանների անգթությունը, եղեսպականների ագանությունը, կանանց անբարոյականությունը և սպին, Անանուն եղեսպացին ավելացնում է. «Այդ պատճառով աստված բարկացավ և իր գայրույթը թափեց նրանց գլխին: Նա լեց նրանց և ժառանց բռնակալի ձեռքը»⁷⁶: Մի ուրիշ դրվագում դժնդակ երաշտի համար նա գտնում է հետևյալ բացատրությունը. «Ողջ ժողովուրդը հաստովեց, որ մեր շար մեղքերի պատճառով դադարեցին անձրևները»⁷⁷:

Անանուն հեղինակի բնորոշ գծերից մեկն էլ սնահավաատությունն է, որն իր արտահայտությունն է գտել «ժամանակագրության» բազմաթիվ գլուխներում: Որպես ցայտուն օրինակ կարելի է նշել 442-րդ գլխում շարադրված պատմությունը Կարկառի երկրում ծագած սոսակալի համարակի և նրա զարմանահրաշ ավարտի մասին: Բնութագրական է նաև սպին, թե ինչպիսի լրջությամբ է հեղինակը ներկայացնում բորտանների սղրյուրի հրաշագործ գործությանը նվիրված առասպելները⁷⁸ կամ ինչպիսի մանրամասնությամբ է շարադրում եղեսպացիների՝ հեթանոսական

⁷⁶ Նույն տեղում, գլ. 309: Հմմտ. նաև գլ. 473:

⁷⁷ Նույն տեղում, գլ. 421:

⁷⁸ Նույն տեղում, գլ. 515:

⁸ Նույն տեղում, գլ. 423—424:

ծիսակատարություններ հիշեցնող զանգվածային ողբի ու աղերսանքի պատմությունը⁷⁹:

Ինչ վերաբերում է Անանունի երկի գրական առանձնահատկություններին, ապա պետք է նշել, որ այն աչքի չի բնկնում գեղարվեստական արժանիքներով: Դա մի շուրջ, դեպքերի պարզ շարադրանք ներկայացնող ժամանակագրություն է, որի հեղինակը նիգ չի թափում անգամ ունի վայելչությունն ապահովելու ուղղությամբ: Հանախակի են բառերի, դարձվածիների կրկնությունները, փերականական անհամապատասխանությունները և այլն: Այդ պատճառով երկի թարգմանությունը կապված էր որոշակի դժվարությունների հետ՝ հատկապես հայերեն շարադրանքը լեզվական անհարթություններից գերծ պահելու և աստեական բնագիրը հարազատորեն վերաբողոքելու տեսակետից:

* * *

Սույն աշխատությամբ հայ ընթերցողին է ներկայացվում Անանուն Եղեսացու «Քաղաքական ժամանակագրության»՝ շուրջ երկուհարյուրամյա ժամանակաշրջան ընդգրկող վերջին մասը, որը նվիրված է սելջուկ թուրքերի տիրապետությանը և խաչակրաց արշավանքներին⁸⁰: Հավելվածում ամփոփված են հայերին վերաբերող այն տեղեկությունները, որոնք տեղ են գտել «Քաղաքական ժամանակագրության» նախորդ գլուխներում և «Եկեղեցական ժամանակագրության» պահպանված հատվածներում:

Անանունը պատմական իրադարձությունները թվագրում է աստեական մատենագրության մեջ ընդունված սելեկյան տոմարով, որի սկիզբ է համարվում մ. թ. ա. 312 թ.: Սույն թարգմանության մեջ սելեկյան թվականների կողմին կլոր փակագծերով նշանակված են ժամանակակից թվագրության համապատասխան տարիները: Լուսանցքներում նշված են «Ժամանակագրության» աստեական բնագրի հրատարակության էջերը: Աղբյուրագետ-պատմաբանների գործը հեշտացնելու նպատակով, ծանոթագրություններում նշել ենք Մատթեոս Ռոհայեցու և Գրիգոր Երեցի «Ժամանակագրության» բոլոր զուգահեռ դրվագների էջերը:

Թարգմանության մեջ մեծ ուշադրություն ենք դարձրել անձնանունների տառադարձությանը՝ ձգտելով դրանք արտահայտել արդի գիտության մակարդակով և միաժամանակ չհրաժարվել ավանդական կաբլոր սկզբունքներից: Խայտաբղետությունից և շփոթություններից խուսափելու համար տեղանունները հիմնականում վերաբողոքել ենք միջնադարյան հայկական ձևերով (Ռուպան *ի/ս*. Ռաբան, Թյպաշար *ի/ս*. Թեյլ-Բաշիր և այլն):

⁷⁹ Նույն տեղում, գլ. 514—516:

⁸⁰ Chabot—II, p. 45—241.

ԱՆԱՆՈՒՆ ԵՊԵՍԱՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

•

1356 (1045) թվականին թուրքերի Սուլեյման² անունով թագավորը՝ Սելջուկի³ որդին, շարժվեց հյուսիսից, քանի որ արաբների⁴ թագավորությունն սկսել էր թուլանալ, և հոռոմները նրանցից քաղաքներ էին խլել. գրավված էին Մելիտենեն, Սամոսատը, Հիսն-
 46 Մանսուրը⁵, Քեսունը⁶ և Ուոհան⁷: Այդ ժամանակ // թուրքերը ելան գրավեցին Մելիտենեն, որովհետև այն պարիսպներ չունեի, և սպանեցին բյուրավոր մարդկանց: Նրա վրա հարձակվեցին Սուլեյման թագավորի կողմից ուղարկված երեք հազար թուրքեր, մինչ մարդիկ նեղվում էին ցրտից, ձյունից ու սառնամանիքից:

235. Մար⁸ Բարսումա⁹ վանքի կողոպուտի մասին

Նույն 1356 (1045) թվականին քուրդ ավազակները, մոտ 120 հոգի, եկան և գիշերով գաղտագողի մտան Մար Բարսումա վանքը՝ Նրանք ավարի մատնեցին և կողոպտեցին, ինչ որ գտան վանքում, և սպանեցին բազմաթիվ վանականների ու սպասավորների:

236. Ռումանոս Դիոգենեսի¹⁰ թագավորության մասին¹¹

1380 (1069) թվականին թագավորեց Ռումանոս Դիոգենեսը և, զորք հավաքելով, կովի ելավ թուրքերի Սուլեյման թագավորի դեմ: Այս Սուլեյմանը թուրք թագավորների մեծ ցեղից էր: Անցնելով իշխանության գլուխ՝ նա եկավ հաստատվեց Պարսից երկրում և արաբներից թագավորություն ստացավ: Այնուհետև նա սկսեց կռիվել սուլթան¹², մինչդեռ արաբ թագավորներն անվանվում էին խալիֆներ, այսինքն՝ մարգարեի փոխանորդներ: Սրանք նստում էին Բաղդադում և հռչակ վայելում ողջ մահմեդական աշխարհում, սակայն կորցրել էին իրենց ազդեցությունը բանակի վրա, և թուրքերն էին տիրում ամենուրեք:

Երբ Հայոց երկրում ճակատամարտ տեղի ունեցավ հոռոմների կայսր Ռոմանոսի և սուլթան Սուլեյմանի միջև¹³, հոռոմները պարտվեցին և թիկունք դարձրին: Շատերը նրանց զորքից սպանվեցին, մյուսները փախան: Իսկ Ռոմանոս կայսրը ողջ-առողջ ընկավ սուլթան Սուլեյմանի մի պատանի զինակրի ձեռքը: Երբ վերջինս ուզեց սպանել նրան, նա ասաց. «Մի սպանիր ինձ, ես հոռոմների կայսրն եմ»: Մինչ [պատանին] պատրաստվում էր տանել նրան թագավորի, այսինքն սուլթանի մոտ, պատահեց մի այլ թուրք, որը հարցրեց. «Ո՞վ է այդ գերին, որին բռնել ես»: Նա ասաց. «Հոռոմների թագավորն է»: // Անցնելով սուլթանի պատանի զինակրի կողքը, նա իր ձեռքում եղած թուրք խրեց նրա կողորդը, և Ռոմանոս կայսրին առավ տարավ սուլթան Սուլեյմանի մոտ, պարծենալով, թե ինքն է բռնել նրան: Իսկ վիրավորվածին, որը դեռ ողջ էր, նրա ծանոթներից մեկն անցնելիս վերցրեց կապեց, նստեցրեց ձիու վրա և բերեց ճամբար: Երբ [սուլթանը] տեսավ իր վիրավորված զինակրին, սաստիկ վշտացավ ու ասաց «Ինչո՞ւ կուլի մեջ մտար»: Իսկ Ռոմանոս կայսրը, տեսնելով այդ, ասաց սուլթանին. «Սա էր, որ ինձ բռնեց, իսկ քեզ մոտ բերողը խփեց նրան և խլեց ինձ նրանից»: Սուլթան Սուլեյմանի կարգադրությամբ վիրավորվածը հանձնվեց բժիշկներին և ապաքինվեց, իսկ մյուսը կախաղան հանվեց: Ինչ վերաբերում է Ռոմանոս կայսրին, ապա [սուլթանը] նրան նվերներ տալով, արձակեց և առանց նեղության ուղարկեց իր երկիրը:

Կոստանդնուպոլսեցիները լսելով, որ Ռոմանոսը գերի է բնկել, իրենց կայսր էին հռչակել Միքայելին¹⁴, հանգուցյալ Կոստանդինի¹⁵ որդուն: Որոշ ժամանակ անց Ռոմանոսը Հովհաննես¹⁶ պատրիկի խորամանկության և երդումների պատճառով եկա՛վ մայրաքաղաք: Երբ մայրաքաղաք մտավ, նրան բռնեցին ու կուրացրին, և նա անմիջապես մեռավ: Տեսեք, արդ, քրիստոնյաների դաժանությունը և այլազգիների մարդասիրությունը: Մինչդեռ թուրքերի սուլթանը ռազմադաշտում գերելով նրան, պարգևներ մատուցեց և առանց նեղություն տալու ճանապարհ դրեց, իր հավատակիցները սպանեցին նրան փրկությունից հետո: Այդ իսկ պատճառով աստված արդարացիորեն ձեռք քաշեց հոռոմների թագավորությունից:

237. Այն մասին, թե ինչպես նվանվեցին ֆաղաֆները և անցան թուրքերի ձեռքը, ինչպես նաև Սուլեյմանի մահվան և Աբուլֆաթահի¹⁷ թագավորության մասին

1381 (1070) թվականին մեռավ սուլթան Սուլեյմանը, և ապա թագավորեց նրա Աբուլֆաթահ որդին: Վերջինս իր Սուլեյման¹⁸ 48 անունով որդուն ուղարկեց հոռոմների երկիրը ||, որը նվաճեց մինչև մայրաքաղաքի դուռն ընկած բոլոր տարածությունները: Նա գրավեց նաև ամբողջ Պաղեստինը, Տյուրոսը¹⁹, Սիդոնը²⁰, Դամասկոսը, Երուսաղեմը, Մեծ Հայքը և ողջ Կիլիկիո երկիրը: Այդ ժամանակ Սելևկիան²¹, Տարսոնը, Անարզաբան, Մելիտենեն իր շրջակայքով և Անտիոքը գտնվում էին Փիլարտոս Դոմեստիկոսի²² ձեռքում, որը դրանք պաշտպանում էր թուրքերից:

238. Աբուլֆաթահ սուլթանի արշավանքը դեպի արևմուտք և Անտիոքի. Ուոհայի ու մյուս [ֆաղաֆների] գրավումը թուրքերի կողմից²³

1396 (1084) թվականին սուլթան Աբուլֆաթահը ելավ գրավեց Անտիոքը, այնուհետև, անցնելով Ուոհա, մարտի գլխավորումը հանձնարարեց Բուզանին²⁴, իր զորահրամանատարներից մեկին, իսկ ինքն իջավ դեպի արևելք: Ուոհայեցիները, մայրաքաղաքից օգնություն սպասելով և շատանալով այն, քանի որ հույների թագավորությունը վերացել էր, քաղաքը հանձնեցին Բուզան հրամանատարին: Այդ ժամանակ Ուոհայում էին գտնվում քաղաքի մեծամեծներն ու կառավարիչները: Այսպես, ուրեմն, 1398 (1087) թվականի մարտի 3-ին, միջին պահքի շորեքշարթի օրը Ուոհան իր բնակիչների կամքով ընկավ Բուզանի ձեռքը:

Բուզանը միջնաբերդում նստեցրեց իր հետ եղած թուրքերից մեկին, իսկ քաղաքի կառավարիչ կարգեց Թեոդորոսին՝ Հեթում կյուրապաղատի որդուն²⁵: Այսպես Բուզանը տիրեց Ուոհային: Ապա [թուրքերը] վերցրին քաղաքի կենտրոնում գտնվող սուրբ Հովհաննեսի և Աստվածածնի եկեղեցիները, որոնք Օմարի²⁶ օրոք, այսինքն՝ Ուոհայում մահմեդականների հաստատման ժամանակ, խլվել և վերածվել էին մզկիթի՝ մահմեդական աղոթարանի²⁷: Բուզանի կարգադրությամբ այս մզկիթում || մեծ ծախսով մի մինարեթ, այսինքն՝ աշտարակ, կառուցվեց, որը կանգուն է մինչև այսօր: Յոթ ա.արի մնալով թուրքերի տիրապետության տակ, քաղաքն այնուհետև Հեթումի որդու ձեռքով անցավ քրիստոնյաներին, ինչպես ցույց կտանք Տիրոջ օգնությամբ:

Հաջորդ տարի Աբուլֆաթաճի Սուլեյման անունով որդին՝ հո-
ռոմների երկրի տիրակալը, եկավ Անտիոք և, բռնագրավելով Պետ-
րոս առաքյալի մեծ եկեղեցին, որը Կասիանա էր կոչվում, այն
դարձրեց մզկիթ, այսինքն՝ մահմեդական աղոթարան, և հանձնեց
Յադի Սիան²⁸ թուրքին՝ Աբուուբեյ²⁹ թոռներից մեկին: Հույներից նա
բազմաթիվ քաղաքներ գրավեց նաև Կիլիկիայում, այն է՝ Տար-
սոնը, Անարզաբան, Մսիսը և Ադանան:

239. Թուրքերի կողմից Մելիտենեի գրավման մասին³⁰

1398 (1087) թվականին Փիլարտոս Դոմեստիկոսը եկավ սուլ-
թան Աբուլֆաթաճի մոտ՝ նրան ուխտ և երդում տալու, որպեսզի
Մելիտենեի շրջակա տարածությունները և մնացած ամրոցները
թողնվեն իր ձեռքում, իսկ ինքն ընդունի թուրքերի տիրաւթյու-
թյունն ու ենթարկվի նրանց: Մելիտենեում այդ ժամանակ քաղա-
քի կառավարիչ էր նշանակված Գաբրիել³¹ անունով մի քաղկեդո-
նական: Երբ Փիլարտոսը եկավ արևելք՝ սուլթանի մոտ, Ալփիրալ³²
անունով մի մարդ՝ սուլթանի կողմից ուղարկված թուրքական զոր-
քերի հրամանատարներից մեկը, դիմեց դեպի Մելիտենե, և Գաբ-
րիելն այն հանձնեց թուրքերին: Իսկ Փիլարտոսից սուլթանը պա-
հանջեց մահմեդական հավատ ընդունել: Նա համաձայնեց և ստա-
ցավ Մելիտենեն, սակայն երբ վերադարձավ, նրան ոչինչ չտվին:
Այսպես, թուրքերը գրավեցին բոլոր երկրները՝ Երուսաղեմը, Տյու-
րոսը, Սիդոնը, ամբողջ Պաղեստինը, Անտիոքը, Դամասկոսը, Ուռ-
հան, ողջ Ասորիքը, Միջագետքը, Հայաստանը || և ամբողջ Պոն-
տաց աշխարհը մինչև Կոստանդնուպոլսի սահմանը: Այս երկրը-
ներում նշանակվեցին զանազան ամիրաներ թուրք մեծամեծնե-
րից և զորահրամանատարների որդիներից, որոնք դուրս գալով
հյուսիսից, նվաճեցին արաբների և հույների թագավորությունը:

240. Թուրքերի մասին, որոնք տիրեցին աշխարհին

Սուլեյմանի որդի Աբուլֆաթաճ սուլթանն ունեցավ նաև մի այլ
որդի՝ Սինջարշահ³³ անունով, որին էլ հանձնեց իշխանությունն
իրենից հետո: Նա ուներ ևս մի որդի, որի անունն էր Մելիքշահ³⁴:
Սա մեռավ՝ թողնելով Մելիք Մասուդ³⁵ անունով որդուն: Նրանք
տիրում էին Պարսից և Բաղդադի երկրներին: Թեև արաբների խա-
լիֆը նստում էր Բաղդադում, բայց նա միայն անուն ուներ, որ
հռչակվում էր ողջ մահմեդական աշխարհում, իսկ նրանից հետո
հռչակում էին սուլթանի [անունը]³⁶:

Այսպիսով, ինչպես ցույց տվեցինք, թուրք ցեղի առաջնորդները, որոնք ելան, երկուսն էին՝ Սելջուկը և Արտուքը: Սելջուկից ծնվեց Սուլեյմանը, Արտուքից՝ Ղազիարսւլանը³⁷: Սելջուկի սերունդները տիրեցին Տիգրոսից արևելք ընկած երկրներին: Երբ նրանց տերությունն ընդարձակվեց, [Սելջուկի] թոռ Աբուլֆաթաճը³⁸, ինչպես նշեցինք, իր ծառաների՝ Բուզանի և մյուսների միջոցով արշավեց Կապադոկիայի կողմերը: Իսկ Հայոց երկրում, նիրկերտում³⁹, Ամիգում և Մարգինում տիրում էին Արտուքի սերունդները: Արտուքի Ղազի որդու սերունդները գրավեցին նաև Պաղեստինը, Երուսաղեմը, Անտիոքը և Ասորիքը: Եվ քանի որ բոլոր այս երկրներում հռչակվում էր Բաղդադի խալիֆը, Աբուլֆաթաճ սուլթանը նույնպես հռչակվեց Բաղդադում՝ խալիֆից հետո⁴⁰:

51 Այսպես, ուրեմն, Յազի Սիանը, Սուլեյմանը⁴¹ և իր եղբայրները Սելջուկի որդի Սուլեյմանի որդու՝ Աբուլֆաթաճ սուլթանի եղբոր՝ Արտուքի թոռներն էին, այսինքն՝ մի ցեղից էին: Իսկ Աղ-Սնդուրը⁴², Բուզանը, Ալփիրակը // և Տուտուշը⁴³ սուլթան Աբուլֆաթաճի ստրուկներն⁴⁴ էին: Արդ, Անտիոքում հաստատվեց Յազի Սիան անունով թուրքը, հոռոմների երկրում և Կիլիկիայում՝ մեծ սուլթանի թոռ Սուլեյմանը, Երուսաղեմում և ողջ առափնյա երկրում՝ Արտուքի սերունդները՝ Սուլեյմանը և իր եղբայրները, Ասորեստանում՝ Աղ-Սնդուր կոչվող մեկը, Ուտհայում և Ասորիքում իշխում էր Բուզանը, իսկ Դամասկոսում ոմն թուրք՝ Տուտուշ անունով:

241. Թե ինչպես Ուտհան անցավ Բիստունյաների ձեռքը⁴⁵

Այդ ժամանակ մեռավ սուլթան Աբուլֆաթաճը, որն ուներ փոքր զավակներ: Երկուսը գտնվում էին Մոսուլում, և նրանց խնամում էր Աղ-Սնդուր հրամանատարը: Պետության աթոռանիստ կենտրոնները գտնվում էին Պարսից երկրում՝ Խորասանում և Համադանում, որտեղ Ելդեգիդ⁴⁶ անունով մի այլ ծառա, որ կոչվեց Փահլևան, տիրելով սուլթանի երկրներին, խնամում էր նրա թողած փոքրահասակ տղաներին: Իսկ Ասորիքում մեր հիշած կուսակալներից յուրաքանչյուրը կառչել էր իր տեղին և չէր ենթարկվում որևէ մեկին: Նրանք մարտնչում էին իրար հետ՝ մեկը մյուսից քաղաքներ խլելու նպատակով: Այդ ժամանակ Բուզանը մեկնեց Ուտհայից և գնաց դեպի Դամասկոս՝ Տուտուշի դեմ պատերազմելու: Նրանց միջև տեղի ունեցած ճակատամարտում Բուզանը պարտվեց և բռնվելով՝ գերի ընկավ:

Տուտուշն անմիջապես զորք ուղարկեց Ուտհա, որպեսզի քա-

դաքն իրեն հանձնվի, սակայն ուռհայեցիները նրան ոչինչ չտվին: Բերդապետն ասաց. «Մինչև ինձ Բուզանից որևէ նշան չբերեք, ես ձեզ մի քար անգամ չեմ տա»: Երբ նրանք ձեռնունայն ետ դարձան, ուռհայեցիները վախեցան, թե չլինի հանկարծ միջնաբերդի թուրքերը բերդը հանձնեն օտար զորքերին, և սրանք գան ավարի մատնեն քաղաքը: Այդ պատճառով Հեթումի որդի Թեոդորոսը համարձակորեն ելավ և քաղաքի ներսում պարիսպ կառուցեց՝ և արևմտակողմում հոսող գետի մոտից մինչև հարավային դարպասը: Այսպիսով, մի քանի օրում նա բերդն անջատեց քաղաքից: Իսկ Տուտուշը գայրացած լինելով Ուռհայի վրա, կտրեց Բուզանի գլուխը և ուղարկեց Ալփիրակ զորահրամանատարի հետ, որն, ինչպես վերը նշեցինք, գրավել էր Մելիտենեն: Երբ սա Ուռհա եկավ, բերդապետը, տեսնելով Բուզանի գլուխը, բերդը հանձնեց նրան: Միջնաբերդ մտնելով՝ նա գրավեց նաև քաղաքը: Զորքը մտավ և բանակ դրեց քաղաքի արևմտակողմում, Ս. Հովհաննեսի տաճարի շուրջը:

Տուտուշը Ալփիրակին հրամայել էր Ուռհան ավարի մատնել՝ սկզբից նեթ իրեն չհանձնվելու համար: Ալփիրակի հետ եղող զորականները, մինչև նա միջնաբերդում էր, շարունակ ստիպում էին նրան քաղաքը ենթարկել կողոպուտի, սակայն նա օրեցօր հետաձգում էր: Մի օր միջնաբերդում նա իր զորահրամանատարների համար խնջույք կազմակերպեց՝ հրավիրելով քաղաքում գտնվող այլևայլ երաժիշտների, որոնց թվում էր նաև մի քրիստոնյա երգչուհի կիրա⁴⁷ Գալի անունով: Երբ [Ալփիրակի] սիրտը գինուց մեղմացավ, զորահրամանատարները մոտեցան և խնդրեցին, որ նա կատարի իրենց տված խոստումը քաղաքի կողոպուտի մասին: Եվ նա երլվեց, որ մյուս օրը առավոտյան կհրամայի ավարի մատնել քաղաքը: Թեև նրանք խոստում էին պարսկերեն լեզվով, երգչուհին հասկացավ նրանց խոսակցությունը: Նա անմիջապես զորավոր հնար գտավ և իբր թե փորացավից սկսեց գոռալ: Երբ հարցրին, թե ինչ է ուզում, որ բերեն իրեն. նա ասաց, որ այդ ցավն իր համար սովորական է և, երբ բռնում է, ոչինչ չի կարող օգնել բացի բաղնիքից: Նրան թույլ տվին գնալ բաղնիք: Իջնելով բերդից, նա անմիջապես ուղղվեց Հեթումի որդի Թեոդորոսի մոտ և ողջ իրողությունը հայտնեց նրան: Վերջինս ասաց. «Ո՛վ կին, ողջ քաղաքի արյունը քո ձեռքում է, տես, թե ինչպես պիտի փրկես և քաղաքը»: Թեոդորոսը նրան տվեց իր մատանին, որը շփվելով կրակի կամ ըմպելիքի հետ՝ կարող էր անմիջապես մահ պատճառել:

[Կինը], վերցնելով մատանին, բարձրացավ բերդ՝ ձևացնելով, թե ցավը կտրվել է: Տեսնելով նրան՝ նստածներն ուրախացան ու ցնծացին, և նա ելավ պարելու: Վերցնելով մի դինու բաժակ՝ նա սկսեց անպարկեշտորեն պարել և մատանին ընկղմեց բաժակի մեջ: Պարից հետո նա մոտեցավ և բաժակը մատուցեց Ալիիրակին: Հենց որ նա խմեց, անմիջապես ոռնաց փորացավից: Իսկ [Կինն] ասաց. «Տեր իմ, շտապիր բաղնիք, քանի որ բաղնիքի միջոցով անցավ նաև իմ ցավը»: Երբ նա մտավ բաղնիք, [Կինը] հանեց նրա շորերը, և հետևեց նրան: Անցնելով ներքին սենյակը՝ [Ալիիրակն] անմիջապես հոգին փշեց: [Կինը] դուրս եկավ և ասաց դռանը կանգնած ներքինիներին ու ծառաներին, որ տերը քնած է, և թող նրան շանհանգստացնեն:

Իսկ ուռհայեցիները գլխովին զինվեցին և մեծ զորքով շարժվեցին բանակած թուրքերի կողմը: Տեսնելով այդ՝ սրանց ձեռքերը թուլացան, քանի որ իրենք շատ քիչ էին ուռհայեցիների զորքի համեմատ: Թուրքերը վազեցին բաղնիք՝ լուր տալու զորսհրամանատարին, սակայն նրան մեռած գտնելով, սրտակտուր եղան: Ապա նրանք խնդրեցին ուռհայեցիներին, որ իրենց թույլ տան դուրս գալ քաղաքից: Եվ նույն ժամին նրանք բոլորը դուրս եկան քաղաքի արևմտյան դարպասից ու գնացին իրենց երկիրը: Իսկ ովքեր բերդում էին, մատնվեցին նեղության, քանի որ անջատված էին քաղաքից՝ նրա ներսում կառուցված պարսպի պատճառով: Նրանք լուր ուղարկեցին Տուտուշին և հայտնեցին իրողությունը. վերջինս պատրաստվելով զորքով շարժվել քաղաքի վրա, աստժո կամքով հիվանդացավ և մեռավ: Երբ բերդում գտնվողները լսեցին այս լուրը, սրտաբեկվեցին: Ապա Հեթումի որդի Թեոդորոսը, համաձայնության գալով բերդապետի հետ, նրանից նեց բերդը: Նա ելավ գնաց, իսկ Թեոդորոսը ստացավ քաղաքի վերին բերդը:

54 // Եվ այսպես, Ուռհան իր միջնաբերդով անցավ հոռոմներին, մինչև որ ևկան Ֆրանկները և տիրեցին նրան, ինչպես ցույց կրտանը Տիրոջ զորությամբ:

242. Դևպի Ասորիք և Պաղեստին ֆրանկների արշավանքի, այդ ժամանակի իբրադարձությունների և բուրբեից գրավված ֆաղաֆների մասին⁴⁸

1405 (1094) թվականին, այսինքն՝ մեր Տիրոջ գալստյան 1098 և արաբների 472 թվականին⁴⁹, որ այս երկրներում թուրքերի տիրապետության հիսունմեկերորդ տարին էր, Կոստանդնուպոլսում

հույների կայսրն էր Ալեքսը⁵⁰, Անտիոքում [իշխում էր] Աբուլֆաթաճ մեծ սուլթանի կողմից հաստատված վերոհիշյալ Յազի Սիան թուրքը, իսկ Երուսաղեմում՝ Աֆղալ⁵¹ եգիպտացին, որը երկու տարի առաջ այն գրավել էր Արտուքի սերունդներից՝ Սուլթանից ու նրա եղբայրներից, և ողջ առափնյա երկիրը ենթարկվում էր եգիպտացիներին*։ Ինչ վերաբերում է Ուոհալին, ասյա այնտեղ էր Թեոդորոս կյուրապաղատը, որն, ինչպես վերը ցույց տվեցինք, [քաղաքը] խլել էր թուրքերից և սպասում էր հունաց կայսրին, որպեսզի այն հանձներ նրան։

Այդ ժամանակ բազմաթիվ ֆրանկ թագավորներ և իշխաններ, բյուրահազարավոր ու անհամար զորքերի և ամեն տիպի արհեստավորների հետ միասին, պատրաստություն տեսնելով, ցամաքով
 55 շարժվեցին դեպի հունաց երկիրը՝ || Հելլենապոնտոսի նեղուցն անցնելու նպատակով, որի վրա է գտնվում Կոստանդնուպոլիսը և որտեղ այդ նեղլիկ միջանցքով իրար են միանում երկու ծովերը։ Նրանց հետ էին շորս թագավոր-զորահրամանատարներ, որոնցից մեկի անունն էր Բոհեմունդ⁵², մյուսինը՝ Գոդեֆրուա⁵³, երրորդինը՝ Սենժիլ⁵⁴, իսկ չորրորդինը՝ Տանկրեդ⁵⁵։ Նրանց մեջ կային նաև բազմաթիվ եսլիսկոպոսներ ու վանականներ։ [Ֆրանկները] դեսպաններ ուղարկեցին հունաց Ալեքս կայսեր մոտ, որպեսզի պատրաստվի արշավել իրենց հետ և հոգա իրենց կարիքները, ինչպես նաև հրաման տա իր տիրապետության տակ գտնվող գավառներին, որ իրենց զորքերն ապահովեն անհրաժեշտ հացահատիկով ու հարդով։ Ալեքս կայսրը խոստացավ պետք եղած ամեն ինչով օգնել նրանց։

Չ43. Ֆրանկների մուտքը հոռամների երկիրը և հունաց կայսեր նենգությունը նրանց հանդեպ

Երբ ֆրանկների զորքերը շարժվեցին և սկսեցին անցնել սահմանները, նրանցից մի բանակ, կազմված մեծ մասամբ աշխարհագորից և արհեստավորներից, առաջ անցնելով հասավ [...] ⁵⁶. նախքան [հիմնական] ուժերի ժամանումը։ Ալեքս կայսրը, լուր ուղարկելով, հասկացրեց Նիկիայի և շրջակայքի թուրքերին, որ-

Լուսանցագրություն. «Այդ ժամանակ, մոտավորապես 1400 (1099) թվականին, եղավ սկիզբը Հեծյալ Եղբայրների, որոնք կոչվում էին[.]. դրանից քիչ առաջ ֆրանկները մահմեդականներից գրավեցին Երուսաղեմը։ Երուսաղեմը շորս հարչուր տարի պատկանել էր մահմեդականներին։ Այսպես [...]»:

պեսզի վրա հասնեն և կոտորեն նրանց: Այդպես էլ եղավ. թուրքերը փութով հարձակման անցան և ծովափին անխնա կոտորեցին նրանց: Ողջ առաջապահ բանակն այսպիսով ոչնչացավ՝ Կոստանդնուպոլիս հասնելով՝ Ֆրանկ զորքերը հանդիպեցին հույների կայսեր ու մեծամեծների հետ և, պայմանագիր կնքելով, երդումներ փոխանակեցին: Ալեքս կայսրը պատրաստվեց անձամբ շարժվել նրանց հետ դեպի մյուս՝ գաղատական ափը:

244. Նիկիայի առումը և ֆրանկների մուտքը Կիլիկիո երկիրը⁵⁸

Ֆրանկներն ու հույները ուղղակի եկան պաշարեցին Նիկիա քաղաքը և, խլելով այն թուրքերից, տվեցին հունաց կայսրին: Ելնելով // այնտեղից՝ այնուհետև նրանք մտան Կիլիկիո երկիրը. Գետինը դողում էր նրանց առաջ: Հասնելով Ասորիք, նրանք որոշեցին պաշարել նախ Անտիոքը, քանի որ այն ողջ Ասորիքի կենտրոնն էր: Նրանք բանակ դրեցին քաղաքի մերձակա բոլոր վայրերում և փակեցին ելումուտի ճանապարհները: Ապա սկսեցին ավերել ու կողոպտել ողջ շրջակա երկիրը:

245. Ֆրանկների գալուստն Ուոհա քաղաք⁵⁹

Այդ ժամանակ, ինչպես ասացինք, Ուոհային տիրում էր Հեթումի որդի Թեոդորոսը: Երբ ուոհայեցիները լսեցին, որ ֆրանկները հասել բանակ են դրել Անտիոքի շրջակայքում, եկան Հեթումի որդի Թեոդորոսի մոտ և ասացին. «Խնդրում ենք լուր ուղարկես և ֆրանկ զինվորներից օգնություն բերես՝ քաղաքը թուրքերի սվազակություններից պաշտպանելու համար»: Թեոդորոսը համաձայն չէր դրան: Սակայն տեսնելով, որ չի կարողանա ազդել եղևսացիների վրա, քանի որ նույնիսկ հակառակ իր կամքի բերել կտային [ֆրանկներին], բանավոր հավանություն տվեց այդ ցանկությունը, թեև ներքնապես ամենևին չէր կամենում, որ նրանք գային: Նա վախենում էր մանավանդ այն բանի պատճառով, որ քաղաքի բնակիչներից շատերն իրեն ատում էին: Ի վերջո, սակայն, սուրհանդակներ ուղարկեց Գոդեֆրուա դուքսի մոտ, որ ֆրանկների զորագլուխն ու առաջնորդն էր, և խնդրեց, որ նա զորք ուղարկի՝ իր երկիրը պաշտպանելու համար: Երբ ֆրանկները կարդացին Ուոհայի կառավարիչ Թեոդորոսի նամակները, մեծապես ուրախացան և ուղարկեցին Գոդեֆրուայի եղբորը՝ Բադգուինին⁶⁰, մի բարեպաշտ, աստվածավախ և քաջասիրտ մարդու: Ուոհան այդ ժամանակ բազմազգ, մարդաշատ ու բարգավաճ քաղաք էր,

երևելի հոգևորականներով և սպասավորներով: Բարգավաճում էին նաև շրջակա գյուղերը, ագարակները և ավանները:

246. Հեթումի որդի Թեոդորոսի՝ Ուոհայի կառավարչի սպանության մասին⁶¹

57 || Ֆրանկների և Բաղդուինի Ուոհա գալուց որոշ ժամանակ անց նենգամիտ ուռհայեցիներն սկսեցին շարություն և գայթակղություն սերմանել ֆրանկների և Թեոդորոսի միջև: Եվ քանի որ նրանց սրտերը լցված էին մեծ շարությամբ, դիմեցին նույնիսկ այնպիսի նենգության, որ խորհեցին սպանել իրենց կառավարչին և տեր կարգել ֆրանկներին: Ընդ որում դա արեցին ոչ թե ֆրանկների նկատմամբ ունեցած սիրուց, այլ Թեոդորոսից դժգոհ մարդկանց շարակամության պատճառով: Կատաղելով գիշատիչ գազանների նման, նրանք լարեցին ու գրգռեցին միմյանց, և մի սեծամբոխ կազմած, ժխոր բարձրացրին աղբերակունքի մոտ, որտեղով նա պիտի իջներ վերին բերդից: Իրբ մոտեցավ այդ ամբոխին, զազաղած վրա հասան նրան, և նա փախավ մտավ քաղաքի արևվելյան դարպասի վերևում գտնվող ներքին բերդը, որ ինքն էր կառուցել ու ավարտել: Իսկ երբ նրա դեմ կովի ելան, նա երդում պահանջեց, որպեսզի իրեն թույլ տան կնոջ և երեխաների հետ հեռանալ դատարկաձեռն: Նրանք խոստացան ու երգվեցին, և նա բացեց դուռը նրանց առջև: Սակայն նրանք հաստատ շմնացին իրենց երդմանը և խաբեցին նրան: Բարձրացան, կապեցին նրան պարանով և մերկացրած, միայն մի գոգնոցով իջեցրին քաղաքի դիմացի բարձր պարսպից: Երբ նրան իջեցնում էին⁶²...

...Հեթումի որդու և նրա տան կործանումը: Այլա Բաղդուինն ստացավ Թեոդորոսի ողջ ունեցվածքը և քաղաքի երկու բերդերը:

247. Անտիոքի սլաշարումն ու առումը ֆրանկների կողմից⁶³

58 Երբ ֆրանկները լսեցին, որ Բաղդուինը թաղավորել է Ուոհայում, առավել ևս ուրախացան և գրոհի ելան || Անտիոքի դեմ: Նրանք սաստիկ հարձակումներ դործեցին նրա վրա և ահեղ մարտեր մղեցին: Եվ մինչդեռ մարտնչում էին ու շարունակում պատերազմը, պաշարվածներից ոմանք համաձայնեցին անձնատուր լինել: Նրանք լուր ուղարկեցին Բոհեմունդ զորագլխին, որպեսզի քաղաքը հանձնեն նրան: Երբ գործը գլուխ եկավ և համաձայնություն կայացավ, ֆրանկները բարձրացան պարիսպը և գրավելով այն, սկսեցին վազվզել քաղաքում: Յաղի Սիան թուրքը, որ քա-

ղաքի կառավարիչն էր, տեսնելով որ քաղաքը նվաճված է, փախուստի դիմեց: Նա ելավ լեռան գագաթին գտնվող վերին բերդի դռնից ու հեռացավ դեպի հարավ-արևելք [...]»⁶⁴: Անտիոքը գրավվեց լեռան արևելյան կողմից՝ պաշարյալների դավաճանության պատճառով:

248. Կիրբուղայի⁶⁵ արշավանքը դեպի Ուռհա, Անտիոք փաղափ պաշարումը նրա կողմից և նրա պարտությունը ֆրանկներից⁶⁶

Երբ ֆրանկները պաշարել էին Անտիոքը, արևելքից ելավ մի մեծ զորահրամանատար, որ կոչվում էր Կիրբուղա, և եկավ հասավ մինչև Ուռհա քաղաքի դուռը: Ողջ երկիրը լցված էր ձիերով, կովերով, ոչխարներով, անթիվ բնակիչներով ու եկվորներով: Նա մեծամեծ ոճիրներ գործեց երկրում. ավերեց, կոտորեց, կողոպտեց ու բազում մարդկանց գերության քշեց: Ասլա դիմեց դեպի Հալեպ՝ Անտիոք դնալու նպատակով: Երբ հասավ Հալեպ, լսեց, որ Անտիոքը գրավված է, և ֆրանկները մտել են այնտեղ: Նա փութապես եկավ Անտիոք և Բաղդադից, Ասորեստանից ու Միջագետքից իր հետ բերած բազմաթիվ զորքերով պաշարեց քաղաքը, որտեղ հաստատվել էին ֆրանկները: Այսպիսով, նա շրջափակեց ֆրանկներին և սկսեց հարձակվել քաղաքի վրա:

59 Ներսում գտնվողները նեղվում էին հացահատիկի և անասնակերի պակասությունից, քանի որ երկիրն ավերված էր, և այդ տարվա բերքը քաղաք չէր հասել: || Ֆրանկները, որ բազմահազար և մեծաթիվ էին, այնքան նեղվեցին սովից, որ մի գրաստի գինը հասավ քսան և ավելի դինարի: Իսկ ցորենն ու գարի բոլորովին չէր ձարվում: Եվ մինչդեռ այսպիսի նեղության մեջ էին, նրանց հետ եղած եպիսկոպոսներից մեկին երազում հայտնվեց հետևյալը. «Ահա, Կասիանեի մեծ եկեղեցու այսինչ տեղում թաղված է այն տեգը, որով խոցվել է Քրիստոսի պատկերը, պատրաստված հրեաների կողմից Տիբերիա»⁶⁷ քաղաքում: Եթե վերցնեք այն, տանեք ձեր առջևից և հարձակվեք ձեր թշնամիների վրա, դուք կհաղթեք նրանց»: Երբ ֆրանկները գտան այդ տեգը, շատ ուրախացան և պատրաստվեցին կռվի ելնել թուրքերի դեմ, մանավանդ որ սովից հուշահատված, մտածում էին, թե ավելի լավ է մեռնել բաց կռվում, քան թե կորչել կամ գերի բռնվել կանանց նման: Այդ տեգն ու խաչի նշաններն ամրացնելով իրենց նիզակների վրա՝ նրանք դուրս եկան, և աստված նրանց հաղթություն տվեց: Թուրքերն ընկրկեցին նրանց առջև և, թիկունք դարձնելով,

փախուստի դիմեցին: Երբ շատերին կոտորեցին, վերադարձան նրանց բանակատեղին և անհամար հարստություն՝ հացահատիկ, ձիեր ու անասուններ ձեռք գցեցին: Հաղթանակի լուրը տարածվեց, և բոլոր թուրք թագավորների սիրտը ահուզող ընկավ: Վախը տիրեց երկրի բոլոր թագավորներին:

249. Այն մասին, թե ովքեր էին այդ ժամանակ իշխում
Ասորիքի և Կիլիկիայի կողմերում

Արդ, Անտիոքին տիրեցին Բոհեմոնդը և նրա քրոջ որդի Տանկրեդը: Սրուճում⁶⁸ այդ ժամանակ իշխում էին թուրքերը, իսկ Զևգամայի⁶⁹ և Եփրատի առափնյա շրջաններում՝ հայերը, որոնք Վասակ⁷⁰ անունով մեկի որդիներն էին: Քեսունը և Ռապանը⁷¹ պատկանում էին Գող Վասիլ⁷² հային, որը ճանապարհներին մշտապես ավազակություն անելու պատճառով || էր Գող կոչվել: Սամոսատում տիրում էր Բալդուբյաններից մեկը՝ Ղազի³ թուրք անունով: Մարաշը և Սև լեռները գտնվում էին քրիստոնյաների՝ Փիլարտոս Գոմեստիկոսի որդիների ձեռքում: Անարզաբայում և Կիլիկիայում իշխում էին հայերը՝ Ռուբենի⁷⁴ որդիները: Տարսոնը, Մսիսը և Ադանան ֆրանկները գրավել էին հույներից:

250. Երուսաղեմի պաշարումն ու առումը ֆրանկների կողմից

Երբ ֆրանկները հզորացան, պատրաստվեցին արշավել դեպի Երուսաղեմ: Ընթանալով ցամաքով ու ծովով, նրանք նախ պաշարեցին և մի քանի օրում գրավեցին Յաֆա⁷⁵ քաղաքը, որ գտնվում է պաղեստինյան ծովափին: Ապա մեկնելով այնտեղից, պաշարեցին Երուսաղեմը՝ շրջապատելով այն բոլոր կողմերից: Նրանք ուժգին հարձակումներ գործեցին նրա վրա՝ օդտագործելով պաշարողական մեքենաներ և փայտե աշտարակներ: Քաղաքը լցված էր ժողովրդի, եգիպտական զորքերի, գինքի ու պատերազմական մեքենաների բազմությամբ: Երբ կռիվը թեժացավ, աստված այն հանձնեց ֆրանկների ձեռքը՝ նրանց արշավանքի երկրորդ տարում, հունաց 1409 (1098) թվականի հուլիս ամսին: Երեսուն հազար մահամեղական սպանվեց քաղաքում, որը կողոպտվեց ֆրանկների զորքերի կողմից: Ինչ վերաբերում է այնտեղի քրիստոնյաներին, ապա նրանք վճռվել էին ֆրանկների գալուց առաջ: Եվ այսպես, Երուսաղեմում թագավորեց Գոգեֆրուա մեծ դուքսը՝ ֆրանկների առաջնորդը: Այնուհետև սփռվելով երկրում, նրանք գրավեցին Պաղեստինի և ողջ Գալիլեայի գյուղերը, բերդերն ու քաղաքները:

251. Սենժիլ կոմսի կողմից Տրիպոլիի⁷⁷ պաշարման մասին⁷⁸

Սենժիլ կոմսը՝ ֆրանկների հետ եկած զորահրամանատարներից մեկը, մեծ զորք վերցնելով, պաշարեց Տրիպոլի քաղաքը։ Շրջափակելով այն՝ նա ուժգին հարձակումներ գործեց նրա վրա։

61 Քաղաքը լավ ամրացված էր եռակի պարիսպներով, յուրաքանչյուրի արանքում խոր խրամներ էին փորված։ Դա մի փոքր քաղաք էր, բայց այնտեղ շատ ժողովուրդ և քաջամարտիկ զինվորներ կային։ Քաղաքից դուրս, Լիբանանի լեռան ստորոտին, Սենժիլը մի բերդ կառուցեց⁷⁹ և բարձրացրեց մինչև քաղաքի դիրքը, որ կանգուն է մինչև այսօր։ Այսպես, նա կռիվ մղեց քաղաքի դեմ և յոթ տարի նեղության մեջ պահեց։ Եվ աստված այն մատնեց նրա ձեռքը։ Նա բազում հարստություն ձեռք բերեց և կոտորեց այնտեղ գտնվող բոլոր մահմեդականներին։ Ապա գրավեց շրջակա տարածությունները և ողջ ծովափը բացի Աշկալոն, այսինքն՝ Ասկալոն⁸⁰, քաղաքից, որ դեռևս մնում էր եգիպտացիների ձեռքում։ Դամասկոսում, Հոմսում⁸¹, Թադմորում⁸², Բոսրայում⁸³, Բաալբեկում⁸⁴, Համայում⁸⁵, Հալեպում, Քիլիսում⁸⁶, Մաբբուգում⁸⁷, Խառանում⁸⁸ և Կալլինիկոսում⁸⁹ տիրում էին թուրքերը և մեծ վնաս պատճառում ֆրանկների գրաված երկրներին։

252. Կապադովկիայի տիրակալ Դանիշմենդի⁹⁰ կողմից Անտիոքի տիրոջ՝ Բոհեմունդի գերեվարման մասին⁹¹

Այդ ժամանակ Մելիտենեում իշխում էր Գաբրիել անունով մի քաղկեդոնական, որին, ինչպես վերը հիշեցինք, կառավարիչ էր կարգել Բուզան զորահրամանատարը։ Երբ Բուզանը սպանվեց, քաղաքը մնաց նրա ձեռքում։ Գաբրիելը պատգամավորներ ուղարկեց Անտիոքի տեր Բոհեմունդի մոտ, որպեսզի նա գա Մելիտենե և իր դստերը, որի անունն էր կիրա⁹² Մորֆիա⁹³, կնության առնի՝ որպես օժիտ ստանալով նաև Մելիտենեն։ Բոհեմունդը ճամփա ընկավ Մելիտենե գնալու համար, բայց երբ հասավ քաղաքի մոտերքը, նրա վրա հարձակվեց Դանիշմենդ տիրակալը, որն իշխում էր Պոնտոսի և Կապադովկիայի երկրներում։ Բոհեմունդն ընկրկեց, նրա հետ եղած ֆրանկները կոտորվեցին, իսկ ինքը գերի ընկավ։ Որոշ ժամանակ անց նա փրկագնվեց ահագին ոսկով և եկավ Անտիոք⁹⁴։ Անտիոքում տեր կարգելով յի իր քրոջ որդուն՝ Տանկրեդին, նա ծովով ելավ գնաց իր բնիկ երկիրը և այնտեղ մեռավ։ Սենժիլը ևս, որը գրավել էր Տրիպոլին, այնտեղ հաստատեց որդուն և ծովով գնաց իր երկիրը։

62

253. Պուատվին⁹⁰ թագավորի արշավանքը, նրա գործերի կործանումը և նրա միայնակ ու տխրահուշակ վերադարձը⁹⁰

Ֆրանկների առաջնորդներից մի ուրիշը՝ Պուատվին անունով, լսելով, որ արշավանքի ելած ֆրանկները գրավել են Ասորիքի և Պաղեստինի երկրները, իր հերթին որոշեց գնալ Պամփյուլիա ու կապադովկիա և նվաճել այդ հյուսիսային երկրները։ Հասնելով կոստանդնուպոլիս, նա խորհրդակցեց Ալեքս կայսեր հետ ու նրանից առաջնորդներ և ուղեկիցներ խնդրեց։ Ալեքս կայսրը խաբեց նրանց և մոլորության մեջ գցեց։ Մարդիկ տալով, նրանց հրամայեց, որ [ֆրանկներին] մոլորեցնեն մի այնպիսի անապատում, որտեղ ո՛չ ջուր լիներ, ո՛չ հարդ։ Ապա նշան արեց տեղի թուրքերին, որ շրջապատեն նրանց։ Այդպես էլ եղավ. մեծ թվով թուրքեր հավաքվեցին և հասան նրանց, որոնք արդեն տանջվել և թուլացել էին քաղցից ու ծարավից։ Թուրքերը նոանց շրջապատեցին և նետերի ամպեր արձակեցին։ Ուժ չունենալով պատերազմելու և ու էլ միջոց՝ փախչելու համար, նրանք պարտվեցին։ [Թուրքերը] անհամար թվով մարդկանց սրի մատնեցին և մեծ հարստություն՝ ոսկի և արծաթ խլեցին։ Իսկ Պուատվինը՝ նրանց զորագլուխը, քչերի հետ փրկվեց և վերադարձավ իր երկիրը։

254. Երուսաղեմի թագավոր Գողեֆրուայի մահվան մասին⁹⁷

Երկու տարի անց մեռավ Երուսաղեմի թագավոր Գողեֆրուան, թագավորությունը կտակելով իր եղբորը՝ Ուռհայի տեր Բաղդուինին։ Երբ այդ լուրը հասավ Բաղդուինին, || նա Ուռհան հանձնեց ֆրանկների պատվարժան իշխաններից մեկին՝ մի խելացի մարդու, որը նույնպես կոչվում էր Բաղդուին⁹⁸, իսկ ինքը գնաց Երուսաղեմ և թագավորեց եղբոր փոխարեն։

Ավետյաց բլրում, այսինքն՝ Թլպաշարում⁹⁹, որը գտնվում է Մաբբուզի սահմանի վրա, իշխում էր Ուռհայի նոր տիրոջ՝ Բաղդուինի ազգականներից մեկը՝ Ժոսլին¹⁰⁰ անունով մի ֆրանկ։ Երբ Բաղդուինն Ուռհայում իշխանության գլուխ անցավ, Գաբրիելը, որն ինչպես սոսացինք, տիրում էր Մելիտենեին, նրան լուր ուղարկեց իր դստերը կնության տալու առաջարկով, որին, ինչպես ցույց տվեցինք, պատրաստվում էր ամուսնացնել Բոհեմունդի հետ։ Այդպես էլ եղավ. Ուռհայի տեր Բաղդուինը կնության առավ կիրա¹⁰¹ Մորֆիային՝ Գարրիելի դստերը և բերեց Ուռհա։

255. Դանիշմենդ ամիրայի հարձակումը Մելիտենեի վրա և վերջինիս գրավումը թուրքերի կողմից

Դանիշմենդ ամիրան՝ Կապադովկիայի ներքին շրջանների տիրակալը, Անտիոքի տեր Բոհեմունդին գերելուց ու բաղում ոսկով վաճառելուց հետո նորից հզորացավ և, դժբ հավաքելով, եկավ պաշարեց Մելիտենեն ու սաստիկ նեղեց նրան: Ներսում եղողները կռվում էին որքան կարող էին: Սակայն երբ կռիվը իրենց ուժերից վեր դարձավ, և ընկան նեղ դրուժյան մեջ, ոմանք խնդրեցին քաղաքի եպիսկոպոսին, որ խորհուրդ տա քաղաքի կառավարիչ Գաբրիելին հաշտութուն կնքել: Եպիսկոպոսն անդադար քաջալերում էր ժողովրդին և աղոթում նրա համար, որ մարտնչեն օր ու գիշեր: Սակայն երբ կռիվը թեժացավ, եպիսկոպոսը Գաբրիելին հաղորդեց ժողովրդի խնդրանքը: Անիծյալը, լսելով այդ, կարծեց, թե մեջտեղում ինչ-որ դավ կա: Ներսը սատանա մտավ, և նա ամբարշտորեն համարձակվեց սպանել եպիսկոպոսին ու քաղաքի պատվարժան քրիստոնյաներից շատերին, հուսալով, թե դա կօգնի իրեն, սակայն դա կործանեց նրան: Այդ եպիսկոպոսը || Հովհաննեսն էր՝ Սայիդ Բար-Սաբունին¹⁰²: Դրսում եղողները ուժեղացնելով ճնշումը, գրավեցին քաղաքը, և Դանիշմենդը տիրեց նրան: Իսկ Գաբրիելն սպանվեց, և նրա տունը հիմնովին քանդվեց:

64

257. Այն մասին, թե ինչպես Սրուճն անցավ Քրանկների ձեռք¹⁰³

Ուռհայի սահմանի վրա գտնվող Սրուճ քաղաքում տիրում էր Բալակ¹⁰¹ անունով մի թուրք՝ Արտուքի սերունդներից: Քաղաքն այդ ժամանակ բարգավաճ և հարուստ էր, լցված մահմեդականների և քրիստոնյաների մեծաթիվ ժողովրդով և ամեն տիպի հմուտ վաճառականներով: Հարուստ և ծաղկուն էր նաև նրա դաշտը՝ իր բազմաթիվ գյուղակներով: Սակայն մի կողմից՝ Ուռհայի, Քրանկները, մյուս կողմից՝ Եփրատի առափնյա շրջանների հայերը, որոնք միացել էին Քրանկներին ու հնազանդվել նրանց, նեղութուն էին պատճառում Սրուճին: Նկատի ունենալով այդ, Բալակը խորհեց, որ Սրուճն ի վիճակի չէ դիմանալու քրիստոնյաների արանքում: Եվ նա պատգամավորներ ուղարկեց Ուռհայի տեղ Բաղդուխի մոտ՝ ուխտ և երդում պահանջելով, որպեսզի փոխադարձ պայմանավորվածութամբ Սրուճը հանձնի նրան: Բաղդուխները, ընդունելով Բալակի պատգամավորներին, խոստացավ կա-

տարել նրա ցանկութիւնը: Սրուճն իր միջնաբերդով հանձնվեց Բաղդուինին, որն այնտեղ նշանակեց ֆրանկների նշանավոր մարդկանցից Ֆուլբեր¹⁰⁵ անունով մեկին: Իշխանության դուրս անցնելով՝ Ֆուլբերը Սրուճից բազում ոսկի գանձեց: Նա ձերբակալեց Սրուճի երեւելի մեծամեծներից ու առաջնորդներից մեկին՝ Ուբայդ անունով մի մահմեդական արաբի՝ եղբոր և ցեղակիցների հետ միասին, որոնց տներից անասելի շատ ոսկի ու հարստութիւն բռնագրավեց: Այսպես Ֆուլբերը հարստացավ և հզորացավ:

258. Այն մասին, թե ինչեւ եկան Սրուճի գլխին մահմեդականներից խլվելուց հետո. Բաղդուինի և Սուլմանի բախումը և Բաղափի մահմեդականների կոտորածը¹⁰⁶

65 Սուլմանը՝ // Արտուրի որդին և Բալակի հորեղբայրը, երբ լսեց, որ ֆրանկները գրավել են Սրուճը, զորք հավաքեց և եկավ պաշարեց այն, հույս դնելով ըաղաքում եղած մահմեդականների շատութեան վրա: Լսելով այդ, Ուսայի տեր Բաղդուինը կովի ելավ նրա դեմ: Երբ բանակները մոտեցան իրար, թուրքերը դարան մտան և առջևից ու ետևից հանկարծակի հարձակվեցին: Ֆրանկների վրա: Ֆրանկները պարտվեցին, և նրանցից շատերը կոտորվեցին: Բաղդուինը ճողոպրեց Ուսայ, ապա, շտապ անցնելով Եփրատը, գնաց Անտիոք՝ զորք ձեռք բեր՝ լու և Սրուճ վերադառնալու համար: Ֆուլբերը՝ Սրուճի կառավարիչը, գերի ընկավ, իսկ Սրուճի բոլոր քրիստոնյաները բարձրացան միջնաբերդ: Նրանց հետ միջնաբերդ բարձրացավ նաև Սրուճում գտնվող Ուսայի ֆրանկ եպիսկոպոսը, որի անունն էր Պապիոս¹⁰⁷: Նրանք ներս տարան նաև արհեստավորներին՝ հյուաններին ու դարբիններին, և իրենց համար պաշար կուտակեցին:

Թուրքերը, հաղթելով ֆրանկներին, եկան պաշարեցին միջնաբերդը և սաստիկ հարձակումներ գործեցին քրիստոնյաների վրա: Եվ մինչ սրանք գիշեր ու զօր մարտնչում էին, մի ավետաբեր հաղորդեց, որ Բաղդուինը հասել է, և թող իրենք ներսից պատրաստ լինեն: Երբ լուսացավ, ֆրանկներն իրենց նիզակների ծայրերին շահեր վառեցին և այնպիսի սաստկութեամբ առաջ շարժվեցին, որ զետիներ զողաց նրանց ձայնից: Իսկ ներսիները բերդից դուրս եկան նրանց օգնութեան: Վախն ընկավ թուրքերի սիրտը, և նրանք պարտվեցին: Նրանցից շատերը կոտորվեցին՝ սրի ճարակ դառնալով: Ֆրանկները դարձան թուրքերի ճամբարը և անհամար հարստութիւն և ունեցվածք կողոպտեցին: Քաղաքի

66

մահամեղականները սաստիկ վախեցան և շհավատացին, թե Ֆրանկներն իրենց կխնայեն: Նրանք հավաքվեցին, փակեցին քաղաքի դարպասները, ապա բարձրացան պարսպի վրա և ապստամբեցին // Ֆրանկների դեմ՝ հուսալով, թե կարող են այն պահել մինչև մահամեղական թուրքերի բանակի գալը: Ֆրանկները բազմիցս փորձեցին նրանց համոզել, որ դադարեցնեն խռովությունը, և երդմամբ խոստովանեցին, թե ամենևին չեն ցանկանում նրանց կորուստը, բայց նրանք չլսեցին: Այնժամ Ֆրանկները քաղաքի բոլոր քրիստոնյաներին կոչ արեցին խաչի նշան կրել, ապա մուրհալով առյուծների նման, ցատկեցին և քաղաք մտան միջնաբերդից: Նրանք մսագործների պես ընկան քաղաքի վրա և ծեր ու ջահել՝ բոլորին սրի մատնեցին: Քաղաքը լցվեց բյուրհազարավոր սպանվածների անհամար դիակներով: Այդ փթթուն քաղաքն ավերվեց: Իսկ քրիստոնյաները, որոնք մնացել էին այնտեղ, հավաքվեցին միջնաբերդի շուրջը և ապրեցին զրկանքների մեջ:

259. Զկրմիշ¹⁰⁸ գորահրամանատարի արշավանքը դեպի Ուռհա և նրա գործած ոնիրները¹⁰⁹

67

Վերոհիշյալ Կիրբուղայի պարտությունից, Սուբմանի ջախջախումից, Սրուհի գրավումից և նրա մահամեղական բնակչության կոտորածից հետո, Արևելքի Զկրմիշ անունով զորահրամանատարը պատրաստություն տեսավ և բազում զորքով ելավ պատերազմելու Ֆրանկների դեմ ու երկրներ զավթելու: Նախ շարժվեց դեպի Ուռհա: Նրա զինվորները, սպանելով, ավարելով, կոտորելով և իրենց ուզած ամեն ինչ անելով, ասպատակեցին շրջակա երկիրը: Երբ թուրքերը մոտեցան քաղաքի մատույցներին, Ուռհայում գրտնրվող Ֆրանկները նրանց հետ մարտի բռնվեցին քաղաքի արևելյան դարպասից դուրս՝ խանգարելով մոտենալ այդ դարպասին: Բազմաթիվ հախուռն ուռհայեցիներ վերցրին իրենց վահաններն ու սրերը և հանդուգն կերպով դուրս եկան քաղաքից՝ թուրքերի հետ մարտնչելու: Վերջիններս տեսնելով, որ նրանք գալիս են անկազմակերպ և շտապում են մոտենալ իրենց, մի փոքր միջոց տվեցին, // որպեսզի ցրվեն արևելյան կամրջի դիմաց գտնվող հարթության վրա: Խրախուսելով միմյանց՝ [թուրքերը] պատրաստվում էին բոլոր կողմերից նետվել նրանց վրա: Երբ պարսպի վրա կանգնածները տեսան այդ, վախենալով, որ նրանք կարող են խառնվել իրար և թափով շրջվել ու մտնել քաղաք, փակեցին քաղաքի դարպասները¹¹⁰: Թուրքերը դարձան և մեծ ուժով հար-

ձակվեցին ուռհայեցի մարտիկների վրա: Սրանք թիկունք դարձրին և, երբ հասան դարպասներին ու տեսան, որ նրանք փակ են, դողացին ու սասանվեցին: Չկարողանալով հասնել խրամի վրա գտնվող կամրջին, որպեսզի անցնեն պարսպի մյուս կողմը, բուլորն այս ու այն տեղ ընկան փոսը: Թուրք հետևակայիները հետապնդեցին և անխնա կոտորեցին նրանց: Մի ժամում փոսը լրցվեց սպանվածներով, և արյունը գետի նման հոսեց խրամով: Այսպես, երկիրն ավերելուց ու հրդեհելուց հետո Ջկրմիշը ելավ գնաց:

260. Թե ինչպես Սամոսատը հանձնվեց ֆրանկներին.
նաև՝ Կարկառի երկրի մասին

Սամոսատում այդ ժամանակ փոքրաթիվ թուրքերի հետ ապրում և իշխում էր Բալզուբյաններից մեկը: Նա ոսկի ստանալով, բերդը հանձնեց ֆրանկներին ու հեռացավ: Հյուսիսում՝ Կարկառի¹¹¹ երկրում ապրում էին հայերը, որոնց իշխում էին Սանբիլի¹¹² որդիներ Կոստանդինը¹¹³, Դավթուկը¹¹⁴ և Քրիստափորը¹¹⁵: Երկիրը բարգավաճ էր և լցված բազմաթիվ վանքերով ու մենաստաններով, որոնց թվում էին զառիվայր ժայռերի տակ գտնվող Մար Աբխայի վանքը, որ կոչվում է Սանդուղք, Բոկոտն Փեսկինի վանքը, սուրբ Գևորգի վանքը, Շիրայի սուրբ Շաբտայի վանքը և Մալքոսի վանքը՝ բարեբեր գյուղերով, ավաններով ու ագարակներով¹¹⁶: Դրանք բնակեցված էին բազմամարդ ժողովրդով՝ բոլորն էլ ուղղափառ¹¹⁷ Իսկ այն հայերը, որոնք, ինչպես ասվեց, իշխում || էին նրանց, հնազանդութուն էին հայտնել ֆրանկներին:

261. Ֆրանկ թագավորների հավաքն Ուռհայում, որ
հանգեցրեց մեծ աղետի

1414 (1103) թվականին, երբ ֆրանկները բոլոր երկրներում ուժեղացել էին, նրանց թագավորներն իրենց բազմաթիվ զորքերով հավաքվեցին և միասնաբար եկան Ուռհա՝ դեպի արևելք շարժվելու և երկրներ զավթելու համար: Սակայն ըստ իրենց վատ սովորության՝ մեծամտութունից համաձայնության չգալով իրար հետ, որոշ ժամանակ մնացին Ուռհայում և վիճեցին թուրքերի ձեռքում գտնվող քաղաքները բաշխելու շուրջը: Մեկը պահանջում էր Նփրկերտը, մեկը՝ Ամիզը, մյուսը՝ Մծբինը, մի ուրիշը՝ Մոսուլը, և մինչև իսկ վիճակ գցեցին նրանց վրա, որ ծիծաղի է արժանի: Ապա նրանք պատրաստվեցին դիմել դեպի Մծբին: Իսկ թուրքերը, լսելով ֆրանկների այդ հավաքի մասին, իրենք նույնպես հավաք-

վեցին հազարներով ու անհամար բյուրերով: Եվ մինչդեռ ֆրանկները Ուոհայում հապաղելով վիճում էին երկրներ բաշխելու շուրջը, մեծ թվով թուրքեր հավաքված սպասում էին, թե երբ են ֆրանկները գալու, որպեսզի ճակատամարտ տան նրանց:

262. Ֆրանկ թագավորների պառակտման մասին

Երբ ֆրանկները մեկնեցին Ուոհայից, նրանց ուղեկցում էր քաղաքացիների մի մեծ ամբոխ՝ գրավվելիք վայրերում ավարձեռք բերելու, հարստանալու և թուրք ու արաբ¹¹⁸ գերիներ ստանալու նպատակով: Սա մի հզոր բանակ էր, որը հասնելով Խառանի դաշտը, անցավ արևելյան կողմով և մոտեցավ Աբրահամի տանը¹¹⁹, որ կոչվում է Դահբանահ: Այնտեղ կա մի մեծ մզկիթ՝ մահմեդականների աղոթատեղի: Խառանցիները դողացին ֆրանկներից և, առնելով քաղաքի բանալիները, եկան նրանց առաջ խոնարհվելու և հնազանդութուն հայտնելու: || Իսկ Բաղդուինը՝ Ուոհայի տերը մտածում էր, «Խառանն իմն է և գտնվում է իմ սահմաններում: Ի՞նչե այժմ գրավենք այն, թագավորներնոր կտիրեն նրան, մեզ հետ եղած հսկա զորքը կմտնի ներս և կողոպուտ ու հափշտակութուններ կգործի՝ թուլացնելով քաղաքը և վնաս պատճառելով ինձ»: Ուստի նա վերադարձրեց բանալիներն ու ասաց. «Դուք իմն եք, գնացեք պահպանեցեք քաղաքն ինձ համար, մինչև մենք վերադառնանք, և մեզ հետ եղող օտար ժողովուրդները ցրվեն»: Տանկրեդը՝ Անտիոքի տերը, և մյուս թագավորները, լսելով այդ, խիստ դժգոհեցին և ցասումով լցվեցին Բաղդուինի հանդեպ: Ապա ասացին նրան. «Դու ճիշտ չվարվեցիր. ավելի լավ կլիներ, որ հիմա գրավեինք այս ամուր քաղաքը և տիրեինք նրան, ապա մեր ժողովրդի ավելցուկը թողնելով այնտեղ, զինված հարձակում գործեինք մոտերքում գտնվող թշնամիների վրա: Եթե աստված մեզ հաղթանակ տա, ոչ ոք չի իլի քեզնից քաղաքը: Ի դեպ, երբ մեր թշնամի թուրքերը յսեն, որ այսպիսի քաղաք ենք գրավել, սրտապատառ կլինեն: Իսկ եթե, քավ լիցի, սլարտվենք, մեզ համար մոտիկ ապաստան կլինի»: Սակայն այդ հարցում Բաղդուինը չհամաձայնեց նրանց հետ:

263. Ֆրանկների պարտությունը և նրանց ջախջախումը Բալիկ¹²⁰ գետի ափին, ինչպես նաև Ուոհայի տեր Բաղդուինի և Թլպաշարի կոմս Ժոսլինի գերությունը¹²¹

Ֆրանկները ելան Դահբանահից և դիմեցին դեպի Բալիկ գե-

տը: Մեկնեց նաև Տանկրեդը, բայց քանի որ նա զայրույթով էր
լցված, միշտ վերջինն էր տեղից շարժվում ու դանդաղ¹²² ընթա-
նում: Երբ մոտեցան գետին, հանկարծակի վրա հասան բյուրհա-
զարավոր թուրքերի անհամար զորքերը: Հունդիպելով իրար, նրանք
ֆրանկներին խոցոտեցին նետերով, որոնք թափվում էին նրանց
գլխին անձրևաբեր ամպերի նման: Ֆրանկներն ահուզողի մեջ ըն-
կան և սասանվեցին: Թուրքերը քաշեցին իրենց սրերը և սկսեցին
70 կոտորել առջևիններին: Տանկրեդն ու իր հետ եղողները, || որ
գալիս էին ետևից, երբ տեսան, որ առջևինները սրի մատնվեցին,
երեսները շրջեցին ու փախան՝ լքելով նրանց: Թուրքերը, ուժեղաց-
նելով ճնշումը, դիմեցին անխնա կոտորածի, շատերին էլ բռնե-
լով ստրկության քշեցին: Ողջ-առողջ գերի բռնվեց նաև Ուոհայի
տեր Բաղդուինը իր ազգականի՝ Թլպաշարի տեր Ժոսլին կոմսի
հետ, որը մի քաջասիրտ մարդ էր: Նրանց վրա ծանր կապանքներ
դրին և կողոպտեցին նրանց ճամբարը՝ զենքերը, ձիերն ու անհա-
մար ունեցվածքը: Բաղդուինին ու Ժոսլինին թուրքերը գերության
տարան և շղթայված հասցրին Մոսուլ, որտեղ նրանք թագավորե-
ցին իրենց սպասածի հակառակ ձևով¹²³: Իսկ Անտիոքի տեր Տանկ-
րեդը, գալով Ուոհա, մի քանի օր հանգիստ առավ, կերավ, խմեց
ու իշխեց ինչպես ուզում էր: Ապա այնտեղ կարգեց իր հետ եղած
մեծամեծներից Ռիչարդ¹²⁴ անունով մեկին և, մեծ հարստություն
ու ձիեր վերցնելով, գնաց Անտիոք:

264. Ուոհայում Ռիչարդի իշխանության և ուոհայեցիներին պատճառած վատությունների մասին¹²⁵

Երբ Ուոհայում իշխեց Ռիչարդը, որը շար, դաժան, անիրավ
ու ազահ մարդ էր, նենգամիտ ուոհայեցիներն իրենց վատությունը
դրսևորելու հնարավորություն ստացան և սկսեցին ամբաստանել
միմյանց. ով ում դեմ քեն ուներ, գտավ առիթը: Իսկ նա սկսեց
չարչարել ուոհայեցիներին դառն տանջանքներով, բանտերով ու
հափշտակումներով և ահագին ոսկի կուտակեց: Նա գիտակցում
էր, իհարկե որ ինքը ժամանակավոր ու պատահական մեկն է, և
ոչ թե օրինական տեր կամ ժառանգորդ:

265. Այն մասին, թե ինչպես Բաղդուինը և Ժոսլինը ազատվեցին ստրկությունից

Մինչպես Ուոհայի տեր Բաղդուինը և նրա նշանավոր ազգա-
կան Ժոսլինը բանտարկված էին Մոսուլում, ոչ ոք չէր հոգում

71 նրանց փրկության մասին, քանի որ Տանկրեդը զայրացած էր նրանց դեմ || իսկ Ռիչարդը դրավել էր նրանց տիրույթներն ու կառավարում էր իր ուզածի պես: Բաղդուին և Ժոսլին իշխանները խորհրդակցեցին բանտում, և Բաղդուինն ասաց Ժոսլինին. «Տվյալ պահին իմ փրկությունը դժվար է անվանս մեծության պատճառով աշխատենք, որ նախ՝ դու դուրս գաս, ապա՝ հոգաս նաև իմ փրկության մասին»: Ժոսլինի համար փրկագին սահմանվեց տասներկու հազար դինար: Նա այդ գնի համեմատ բերել տվեց տասներկու պատանդ իր ազնվական ազգականներից, ապա ելավ գնաց հավաքելու իր փրկագինն ու հոգալու նաև Բաղդուինի մասին: Մինչդեռ նա զբաղված էր դրանով և ոսկի էր հավաքում, պատանդները, որոնք պահվում էին Մոսուլում, ծակելով բանտի պատը, փախան ու ողջ-առողջ փրկվեցին: Այսպես կատարվեց Ժոսլինի ու նրա ստանդանների փրկությունը՝ առանց որևէ վնասի: Այնուհետև նա սկսեց հողալ Բաղդուինի մասին: Միջնորդութունը հանձն առավ մի մահմեդական, որը տիրում էր Եփրատի վրա գտնվող և Կալա-Ջաբար¹²⁶ անունը կրող բերդին: Նա անվանի մարդ էր և լավ միջնորդ: Բաղդուինի համար փրկագին սահմանվեց յոթանասուն հազար «Միքելատե»¹²⁷ դինար: Երբ Ժոսլինը հավաքեց մոտ քսանհինգ¹²⁸ հազար դինար, վերցրեց դրանք, անձամբ եկավ Կալա-Ջաբար և իրեն պատանդ դրեց մնացած գումարի դիմաց: Ամիրան այդ դրամը սուրհանդակների միջոցով ուղարկեց Մոսուլ և երաշխավորեց մնացածի [վճարումը]՝ Ժոսլինին պահելով իր մոտ:

72 Այդ ժամանակ Մոսուլում հաստատվել էր մի նոր զորահրամանատար՝ [Ջավալի]¹²⁹ անունով, որը թեև լսել էր Ժոսլինի մասին, բայց անձամբ նրան չէր տեսել: Երբ նա իմացավ, որ Ժոսլինը կրկին հանձնվել է մահմեդականների ձեռքը և իր անձը գրավ դրել այդ ամբողջ ոսկու դիմաց, ցանկացավ տեսնել նրան: Սուրհանդակներից ստանալով քսանհինգ¹³⁰ հազար դինարը և ընդունելով Կալա-Ջաբարի ամիրայի երաշխավորությունը || մնացած քառասունհինգ հազարի համար, նա Բաղդուին կոմսին ազատ արձակեց: Ապա զորահրամանատարը լուր ուղարկեց և պահանջեց Ժոսլինին՝ նրան տեսնելու համար, քանի որ լսել էր, թե սքանչելի քաջամարտիկ և փառավոր մարդ է: Կալա-Ջաբարի ամիրան հագցրեց Ժոսլինին, նրան տվեց մի հոյակապ ձի ու ֆրանկական զենք-ուզրահ և ուղարկեց Մոսուլ: Երբ Ժոսլինը Մոսուլ հասավ, զորահրամանատարը հավաքեց իր նշանավոր մարտիկներին, որոնք զինված ասպարեզ մտան: Զորահրամանատարը հրամայեց Ժոսլինին ձիով արշավել իր առջև: Արշավելիս սա սկսեց խաղացնել

ձեռքի նիզակը և այս ու այն կողմ շրջվել: Դա շատ դուր եկավ զորահրամանատարին, որի համար Բաղդուինի փրկագնից տաս հազար դինար զիջեց նրան: Ապա ժողովին իջավ ձիուց և, համբուրելով գետինը նրա առջև, շնորհակալութուն հայտնեց: Իր առջև ծնրադրելու համար [հրամանատարը] զիջեց ևս տաս հազար: Իսկ երբ քաղաք վերադարձան և նրա պատվին խնջույք տվեց, խնջույքի ժամանակ պակասեցրեց ևս տաս հազար դինար: [Ժողովինը] Մոսուլում մնաց մի քանի օր, և զորահրամանատարը մեծ սիրալիրութուն ցույց տվեց նրա նկատմամբ: Ապա երդվեց ու երդվեցրեց, որ քանի ողջ են, չեն հակառակի միմյանց, այլ ընդհակառակն՝ անհրաժեշտության դեպքում կօգնեն իրար: Ժողովինին նվերներ տալով՝ նա լիովին ազատ արձակեց նրան, զիջեց Բաղդուինի փրկագնի մնացած մասն էլ և խաղաղությամբ ճանապարհ դրեց: Այսպես նրանք երկուսն էլ աղատվեցին աստծու օգնությամբ:

266. Բաղդուինի և Անտիոքի տիրոջ՝ Տանկրեդի միջև ծագած պատերազմի ու Բաղդուինի պարտության մասին¹³¹

Երբ Բաղդուինն ու ժողովինը աղատվեցին, Ռիչարդը, որ գրավել էր Ուոհան, հավաքեց, ինչ որ հափշտակել էր այնտեղ, և գնաց Մարաշ՝ իր երկիրը: Բաղդուինն ու ժողովինը, Ուոհա գալով, իմացան ամեն ինչ, որ արել էին Տանկրեդն ու Ռիչարդն Ուոհայում: Երանց թշնամանքն ու ատելությունը, || որ ի սկզբանե տաժում էին միմյանց նկատմամբ, ավելի ևս սաստկացան: Ապա պատրաստվեցին պատերազմել ու կռվի բռնվել իրար հետ: Ժողովինը լուր հասցրեց Մոսուլի տիրակալին, որը նրան օգնության ուղարկեց բաղձաթիվ թուրք զինվորներ: Բանակները շարժվեցին դեպի Գուբայեի¹³² երկրները՝ Կուրուսի¹³³ և Տլուքի¹³⁴ միջև: Նշանակված օրը մարտակարգերը բախվեցին իրար, և երկինքը փոշով ծածկվեց: Թուրքերը թիկունք դարձրին և անտիրոջացիները հետապնդելով նրանց, կարճ ժամանակում կոտորեցին: Իսկ Բաղդուինն ու իր հետ եղողները փրկություն գտան փախուստի միջոցով: Այսպես ավարտվեց նրանց ճակատամարտը: Որոշ ժամանակ անց նրանք զղջացին ու հաշտվեցին իրար հետ, և նրանց միջև մեծ ու իսկական բարեկամություն հաստատվեց:

267. Մավդուդի¹³⁵ առաջին արշավանքը դեպի Ուոհա¹³⁶

Այդ ժամանակ, որ 1417 (1106) թվականն էր¹³⁷, երբ Ֆրանկ թագավորները հաշտվեցին իրար հետ, Արևելքի Մավդուդ անունը

կրող հրամանատարն ու տիրակալը, պատրաստութիւն տեսնելով, անհամար զորք հավաքեց և նախ և առաջ մեծ ուժով շարժվեց դեպի Ուռհա: Հազարներով ու անհամար բյուրերով նա բանակ դրեց արևելյան դաշտից ցած, ամրոցի շրջակայքում: Ապա նա բազմաթիվ հեծյալներ ուղարկեց՝ երկիրն ասպատակելու համար: Նրանք սկսեցին կտրատել այգիներն ու ծառերը, ապականել հողն ու քանդել վանքերը: Սակայն նրանք ընդհուպ շփոտեցան քաղաքին՝ ճակատ տալու կամ մանզղիոններ¹³⁸ ու բաքաններ տեղադրելու համար, այլ մերձենում և ետ էին դառնում.

268. Ուռհային ֆրանկների օգնության գալու մասին¹³⁹

Երբ ֆրանկներն Անտիոքում լսեցին, որ Մավդուղը պաշարել է Ուռհան, արագորեն հավաքվեցին՝ Ուռհա գնալու համար և փութապես եկան անցան Եփրատը: Թուրքերը լսելով ֆրանկների գալը, քանդեցին // իրենց ճամբարները, որտեղ բանակ էին դրել, մի փոքր հեռացան և ամրացան Գալաբ¹⁴⁰ դետի ափին: Իսկ ֆրանկները, երբ հասան, բանակեցին այն վայրում, որտեղ Մավդուղն էր հաստատվել: Ուռհային օգնության եկող ֆրանկներն էին՝ Երուսաղեմի թագավոր Բաղդուինը՝ Ուռհայի նախկին տերը, Սենժիլի որդին՝ Տրիպուլիի կոմսը¹⁴¹ և Տանկրեդն՝ Անտիոքից: Նրանք մի հսկա բազմութիւն էին կազմում՝ անթիվ բեռներով ու ձիերով: Սակայն հացահատիկ և հարդ չունեին, քանի որ Մավդուղն ավերել էր երկիրը: Գյուղացիներից շատերը փակվել էին քաղաքում և նեղվում էին կարիքից: Ֆրանկները, որոնք համբերութիւն չունեն, իրենց վատ սովորութիւն համաձայն խորհեցին անցնել Եփրատից արևմուտք, որպեսզի տեսնեն, թե ուր է ուղղվում թշնամին, և կարողանան հոգալ իրենց կարիքները:

269. Ֆրանկների հետ Եփրատ հասած ժողովրդի կոպուպուտի ու կարսայան մասին⁴²

Այս մեծ բազմութիւնը, որ գնում էր Սամոսատի ճանապարհով, վերջ չունեց, քանի որ նրան ուղեկցում էին քաղաքից ու երկրից հավաքված շատ մարդիկ: Ոմն ֆրանկ, զայրանալով իր տիրոջ՝ մեծամեծներից մեկի վրա, սատանայի դրոմամբ ու առաջնորդութիւն դարձավ եկավ թուրքերի ճամբարը, որն, ինչպես ասացինք, գտնվում էր Գալաբ դետի ափին: Մտնելով Մավդուղի մոտ, նա ասաց. «Ահա ֆրանկների անվերջ բազմութիւնը փախչում է՝ թուլացած քաղցից և հոգնած ճանապարհի դժվարութիւններից: Եթե

շտապ հետապնդես նրանց, մեծ նախճիր կգործես նրանց մեջ»։ Մավղուղի հրամանով ճամբարում կոչնակներն անմիջապես ազդարարեցին և հնչեցրին շեփորները։ Ապա զինվորներից ամենաքաջերն ու խիզախները հեծան [ձիերը] և հետապնդեցին ֆրանկներին։ Իսկ ֆրանկները, տեղյակ չլինելով կատարվածին, ետուա-
75 րաջ չէին նայում։ Այդ պատճառով, երբ հասան Եփրատին, // նախ և առաջ դիմացի ափ անցան մարտունակ զորքերը, իսկ ողջ ժողովուրդը հետևակի և բեռների հետ մնաց մյուս ափին։ Եվ քանի որ Տերն այդ ժամանակ զայրացած էր այդ բազմության, մանավանդ, ուռհայեցիների վրա, որոնք նրա մեծ մասն էին կաղմում, թուրքերը հանկարծակի վրա հասան և, մսագործների նման ընկնելով նրանց մեջ, անխնա կոտորեցին նրանց։ Սպանվածներից ավելի եղան Եփրատ գետում խեղդվողները՝ խոցստված թուրքերի նիզակներից։ Շատ շատերն էլ գերի ընկան։ Հետո թուրքերը կողոպտեցին նրանց ունեցվածքն ու բեռները։ Այս եղավ ֆրանկների գալստյան տխուր վախճանը։ Իսկ Մավղուղը ելավ գնաց իր երկիրը։

270. Մավղուղի կողմից Ուռհայի դեմ ձեռնարկված երկրորդ արշավանքի և [բաղափի] հանձնման դավաճանական գործարքի մասին¹⁴³

Հաջորդ տարի, հնձի ժամանակ, Ասորեստանի տիրակալ Մավղուղ զորագլուխը անհամար զորքերի հետ միասին, ոտքի կանգնելով, երկրորդ անգամ ուղղվեց դեպի Ուռհա և եկավ պաշարեց քաղաքը։ [Թուրքերը] կերան ու փշացրին երկիրն ու բերքը և կրատեցին մնացած այգիներն ու պարտեզները։ [Մավղուղը] շրջափակեց քաղաքն ու նեղ դրուսթյան մեջ դրեց նրան, ապա սկսեց ուժգին հարձակումներ գործել և կատաղի մարտեր մղել նրա դեմ։ Կռիվը տևեց ամբողջ ամառը, և ննրսում եղողների նեղությունը սաստկացավ [պարենի] պակասից։ Նրանց մարմինները խիստ հյուժվեցին, քանի որ տարեցտարի ցանում ու շարշարվում էին, բայց [բերք] չէին հավաքում։ Մավղուղը նրանց լուր ուղարկեց և շատ բաներ խոստացավ՝ ասելով. «Ինչո՞ւ եք այդքան շարշարանքներ կրում, ինձ հանձնեցեք քաղաքը, և դուք շատ բարիքներ կտեսնեք»։ Ուռհայեցիները հաշտության պատասխան չտվին։ Սակայն հայերից ոմանք, մոտ քսան մարդ, գաղտնի համաձայնության եկան Մավղուղի հետ՝ քաղաքը հանձնելու խնդրում և նախապատրաստեցին այդ գործը¹⁴⁴։ Դրանից հետո [Մավղուղը] վե-

76 րացրեց քաղաքի պաշարումը և գնաց շրջապատեց Սրուճը, որպես -
զի ուռհայեցիները || կարծեն, թե սա հեռանում է, և թուլացնեն
պարսպի հսկողությունը:

Քիչ ժամանակ անց, կիրակի օրվա լուսաբացին, կեսգիշերից
հետո, [թուրքերն] արագորեն եկան արևելյան կողմի պարտեղ-
ների ցանկապատերի արանքով, որպեսզի շնկատվեն: Իրենցից
ընտրելով քաջամարտիկ պատերազմողների, նրանք պայմանա-
վորված տեղում ոտքով մոտեցան քաղաքի պարսպին: Այն գտնը-
վում էր քաղաքի արևելյան կողմում, ներօին կամրջից ներս, որը
գցված էր ջրով յիբր խրամի վրա: Դա գործողության համար հար-
մար մի անկյուն էր՝ ընդարձակ տարածությամբ: Այնտեղ կար
անկյունավոր մի մեծ բուրգ, որին հսկում էր Կուրեշ անունով մի
անվանի մարդ՝ քաղաքի մեծամեծներից: [Թուրքերն], արդ, ինչ-
պես պայմանավորվել էին, հավաքվեցին այնտեղ: Դավաճանները,
դրսում եղողներին պարաններ իջեցնելով, քաշեցին մետաքսյա
սանդուղքները և ամրացրին պարսպին: Երբ նրանք սկսեցին մա-
գրլցել, նույն պահին պահապանները նկատեցին և աղաղակ բարձ-
րացրին: Հետո գույժ տարածվեց, թե «Թշնամիները պարսպի վրա
են»: Իսկ դրսում գտնվող թշնամիները աղմուկ հանեցին քաղաքի
արևմտյան կողմից՝ թմբկահարելով ու շեփոններ հնչեցնելով, որ-
պեսզի քաղաքացիները կարծեն, թե կռիվն այնտեղ է, և բոլորն
այն կողմ ուղղվեն, իսկ դավաճանները հանգիստ կերպով կարո-
ղանան [թուրքերի] բաղմությունը պարիսպ բարձրացնել: Ով
հայտնվում էր այն կողմում և անձնատուր չէր լինում, նրան սպա-
նում էին: Իսկ Կուրեշը, հակառակ իր կամքի, վախից լռեց և թր-
ղեց, որ նրանք կատարեն իրենց գործը: Երբ մոտավորապես
վաթսուն հողի բարձրացան բուրգը, լուսացավ, և բոլորը թուրքե-
րին տեսան պարսպի վրա: Թուրքերն սկսեցին ցրվել այս ու այն
կողմ: Ֆրանկներն ու նրանց առաջնորդները խուճապի մատնվե-
ցին՝ տեսնելով, որ քաղաքում դավաճաններ են հայտնվել, դրսում
կանգնած են թշնամիները, պարիսպը լցված է թուրքերով, իսկ
մարդիկ փախչելով ապաստան են որոնում իրենց տանը և ընտա-
նիքում: Սակայն ժոսլին կոմսը՝ Թլպաշարի տերը, որը գտնվում
էր Ուռհայում, խիզախորեն || ոգեշնչված բարձրացավ այդ
77 կողմի պարիսպը և մոտեցավ թշնամիներին: Երբ նրան տեսան,
բոլորը հավաքվեցին մեծ բուրգի վրա և, կանգնելով ամենաբարձր
հարթակին, սկսեցին նրա վրա բազում նետեր ու քարեր արձակել:
Համարձակորեն մտնելով այդ բուրգը, որի հարթակին նրանք
կանգնած էին, [ժոսլինը] հանեց իր սուրը պարսպի մեջ բացված

սլատուհանից, որտեղից պատերազմի ժամանակ նետեր են ար-
 ձակում, և կտրեց սանդուղքը: Նրա վրա կային բաղմաթիվ մար-
 դիկ, որ մագլցում էին. բոլորն էլ ընկան ու ջախջախվեցին: Այդ
 տեսնելով՝ վերևում եղողները հուսահատվեցին և սրտակատուր
 եղան: Իսկ ժոսլինը դեպի հարթակ տանող ելքով խիզախորեն
 բարձրացավ թուրքերի մոտ: Վերևից նրան քարկոծեցին ու կոտ-
 րեցին նրա վահանը: Բարձրացավ երկրորդ անգամ, ու նորից քար-
 կոծեցին: Նրա վահանն ամբողջովին ջարդվեց: Կրկին ոգնալովեց
 և, վերցնելով հարդեվ լիքը մի պարկ, որի վրա քնում էին պահա-
 պանները, դրեց գլխին ու կատաղած բարձրացավ նրանց մոտ:
 Նրանք փախուստի դեմեցին, և [ժոսլինն] իր ձեռքում բռնած շրով
 կոտորեց շատերին, իսկ մյուսները նետվեցին այս ու այն կողմ
 և ընկնելով ջախջախվեցին: Այսպես ձախողվեց այդ ծրագիրս ու
 գլուխ շեկավ, և Մավդուղը ելավ գնաց իր երկիրը: Մավդուղի գնա-
 լուց հետո ֆրանկները փնտրեցին դավաճաններին և, ձերբակա-
 լելով մեղավոր ու անմեղ շատ մարդկանց, կտրեցին նրանց ձեռ-
 քերն ու քթերը և կուրացրին աշրերը: Շատերը տանջամահ էղան,
 շատերին էլ սպանեցին:

271. Մավդուղի սպանության և Անտիոքի տիրակալ Տանկրեդի
 մահվան մասին¹⁴⁶

Տարիներ անց Մավդուղը նորից արշավեց դեպի արևմուտք և
 եկավ Դամասկոս: Ավերելով, կողոպտելով, սպանելով ու գերեվա-
 րելով նա մտավ Պաղեստինի ու Գալիլեայի երկրները և հասավ
 Դամասկոս: Մի ուրբաթ օր, երբ նա մահմեդականների սովորու-
 թյան համաձայն մտավ աղոթելու մեծ մզկիթում, իսմայելիտ-
 ներն¹⁴⁵ այնտեղ սպանեցին նրան: || Այդ տարի մեռավ նաև Տանկ-
 րեդը՝ Անտիոքի տերը: Եվ քանի որ նա զավակ չունեց, նրանից
 հետո թագավորեց նրա Ռոջեր¹⁴⁷ անունով քեռորդին, որը մի մե-
 ծամիտ պատանի էր:

272 Ազազ¹⁴⁸ բերդի պաշարումը ֆրանկների կողմից¹⁴⁹

Ռոջերը որք, ինչպես ասացինք, թագավորեց Անտիոքում իր
 քեռու՝ Տանկրեդի փոխարեն, մեծամիտ մարդ էր, բայց փառասել
 կազմվածք ուներ: Նա ամուսնացավ Ուհայի կոմս Բաղդուևի քրոջ
 հետ, զորք հավաքեց ու եկավ պաշարեց Ազազ կոչվող անառիկ
 բերդը, որը գտնվում է Կուրուսի դաշտում: Կատաղի հարձակում-
 ներ ձեռնարկելով՝ նա գետնի տակ խորշեր փորեց և դրանք հաս-

ցրրեց մինչև պարիսպը: Հետո նրա տակը քանդելով՝ փայտ լցրին ու կրակ տվին: Պարիսպը երերաց ու փլվեց: Ֆրանկները գոտեպնդված նետվեցին դեպի ճեղքվածքը և գրավեցին բերդը՝ սրի մատնելով այնտեղ գտնվող բոլոր մահճեղականներին: Այսպես Ռոջերը տիրեց այդ նշանավոր բերդին

273. Մարաշի ավերումը երկրաշարժից և Բաղդուիհի ու Ժոսլիհի տարածայնությունը

Հունաց 1422 (1111) թվականին, նոյեմբեր ամսի 29-ի կիրակի օրվա լուսարացին սաստիկ երկրաշարժ տեղի ունեցավ: Գերմանիկեն, այսինքն՝ Մարաշը, քանդվեց ու հիմնովին կործանվեց, ավերվեցին նրա շինությունները, փլվեցին բոլոր պարիսպները: Օտարներին չճաշված՝ զոհվեց քսանչորս հազար մարդ, ինչպես նաև հարյուրից ավելի քահանա ու սարկավագ Ավերվեցին նաև Հիսն-Մանսուրը և բազմաթիվ այլ բնակավայրեր:

Այդ տարի Ուոհայի տեր Բաղդուիհը զայրացավ Ավետյաց բլրի տիրոջ՝ Ժոսլիհի վրա, բանտարկեց նրան ու շատ նեղուխյուն սլատճառեց: Բանտից դուրս գալուց հետո վերջինս գնաց Երուսաղեմի թագավոր Բաղդուիհի մոտ, որն ընդունեց նրան, մեծ սիրալիրություն ցույց տվեց և նշանակեց Տիբերիա քաղաքի ու ողջ Գալիլեա երկրի տեր: Այնտեղ || նա մի որդի ունեցավ, որին կոչեց իր անունով՝ Ժոսլիհ¹⁵⁰:

Այդ ժամանակ մեռավ Ռիդվանը¹⁵¹, որ տիրում էր Հալեպում:

274. Մավդուդից հետո Ասորեստանում տիրակալած գորագլխի, դեպի Ասորիի նեոնարկած նրա արշավանքի ու պարտությունի մասին¹⁵²

Քանի որ թուրքերի մեծ սուլթանը նստում էր Պարսից երկրում և մշտապես զորահրամանատարներ էր ուղարկում արևմտյան երկրների բոլոր կողմերը, որոնք իշխելով այդ կողմերում, մնում էին նրա գերիշխանության և հրամանի տակ, այդ պատճառով էրբ, ինչպես ցույց տվեցինք, Մավդուդը մեռավ Դամասկոսում, Ասորեստան ուղարկվեց մի զորադուլա և կուսակալ՝ Բուրսուխ¹⁵³ անունով:

Նա բաղում զորքով արշավանքի ելավ և նախ և առաջ եկավ պաշարեց Ուոհան՝ քանդելով նրա այգիներն ու բազում ոճիրներ գործելով երկրում: Ապա անցնելով Եփրատը, նա գնաց պաշարեց Հալեպի գավառը, որքան կարող էր վնաս պատճառեց քրիստոն-

յա երկրներին ու վերադարձավ Ասորեստան: Հաջորդ տարի նա նորից ելավ և, ինչպես սովորութիւնն էր, եկավ Ուռհա՝ ավերելով երկիրն ու փշացնելով բերքը: Ապա գնաց Հալեպ և պատրաստվեց պատերազմել ֆրանկների դեմ: Ֆրանկները նույնպես հավաքեցին իրենց զորքերը և բանակ դրին Հալեպի և Անտիոքի միջև ընկած մի վայրում: Կովի պատրաստութիւն տեսնելուց հետո, հունաց 1427 (1116) թվականին, մարտակարգէր կազմեցին, հնչեցրին շեփորներն ու խփեցին թմբուկները, և աստված ֆրանկներին հաղթութիւն տվեց: Թուրքերը պարտվեցին ու սրի քաշվեցին, նրանց ճամբարը ավարի մատնուլեց, իսկ Բուրսուխը քչերի հետ փախուստի դիմեց:

275. Այն մասին, թե ինչպես Պիր¹⁵⁴ ամրոցը հանձնվեց ֆրանկներին¹⁵⁵

Պիր կոչվող անառիկ ամրոցին տիրում էր մի հայ՝ Ապլղարիպ¹⁵⁶ անունով: Ուռհայի տեր Բաղդուինը իր ազդականներից մեկի՝ Գալերան¹⁵⁷ անունով փառահեղ պատանու և բազում ֆրանկ զինվորների հետ եկավ պաշարեց այդ ամրոցը: || Պաշարումը երկար տևեց, քանի որ այն հնարավոր չէր կռվով գրավել, այլ միայն շրջափակումով: Երբ, ինչպես ասացինք, պաշարումը երկարաձրգվեց, Ապլղարիպը նեղն ընկավ, որովհետև տեսավ, որ օգնութեան հասնող չկա: Ապա նա հանձնեց ամրոցը Բաղդուինին՝ պայմանով, որ Գալերանը կնութեան առնի իր դատերը: Ամրոցը դարձավ նրա աղջկա օժիտը, և այսպես Պիրը հանձնվեց ֆրանկների ձեռքը:

276. Երուսաղեմի թագավորի մահը, Ուռհայի տեր Բաղդուինի թագավորումը Երուսաղեմում և Ժոսլինի թագավորումը Ուռհայում¹⁵⁸

1425 (1114) թվականին Ուռհայի տեր Բաղդուինը գնաց Երուսաղեմ աղոթելու: Իսկ Երուսաղեմի թագավոր Բաղդուինը զորք հավաքեց և մտավ Եգիպտոսի սահմանները՝ Ֆարմի¹⁵⁹ կոչվող վայրում: Սակայն վրա հասավ նրա վախճանը, ու նա հրամայեց, որ իրեն տանեն թաղեն եղբոր՝ Գոզեֆրուայի գերեզմանում, իսկ իրենց թագավոր կարգեն Ուռհայի տեր Բաղդուինին: Այդպես էլ եղավ. Բաղդուինը թագավորեց Երուսաղեմում, հետո Տիրերիայից կանչեց Ժոսլին կոմսին և հաշտվեց նրա հետ: Այսպիսով, Բաղդուինն այդ ժամանակ թագավորում էր Երուսաղեմում, իսկ Ժոսլինը՝ Տիրե-

րիայում: Գալով Տիրերիա, Ժոսլինը բազում սխրանքներ էր գործել
և ահաբեկել բոլոր մյուս հարևաններին¹⁶⁰:

277. Կարկառի երկրում Բալակ թուրքի գործած ոճիրների մասին

Կարկառի երկրում այդ ժամանակ իշխում էր մի հայ՝ Միքայել¹⁶¹ որդի Կոստանդնի անունով, որը Մարաշի ավերիչ երկրաշարժի օրերին գտնվում էր Սամոսատի բանտում: Այս Միքայելը, որ մի մեծամիտ պատանի էր, մեծ վնաս էր պատճառում բոլորին՝ կողոպուտի և ավազակությունների մատնելով ողջ շրջակա վայրերը: Իսկ Անձիտի¹⁶² երկրում և Հիսն-Ջիադում¹⁶³ իշխում էր Բալակ թուրքը՝ Արտուքի սերունդներից, որը մի ժամանակ տիրում էր Սրուճին: Նա անընդհատ լուր էր ուղարկում այս Միքայելին և համոզում, որ ձեռք քաշի || շարագործություններից ու թույլ չտա, որ իր ավազակները վնասեն վաճառականներին ու ճանապարհորդներին: Բայց նա չէր համոզվում, և մարդիկ միշտ գանդատվում էին Միքայելից Բալակի մոտ: Վերջինս, չհամբերելով, խրատաշունչ ղեկտեմբեր¹⁶⁴ ամսին հավաքեց թուրքմենների մի մեծ բազմություն՝ Կարկառի բարեշեն երկիրն ասպատակելու համար: Տիրոջ կամքը զորավիգ եղավ նրան, օգնեց ու առաջնորդեց՝ Նրա առջև սառեցնելով ահռելի եփրատ գետը: Մի ժամվա ընթացքում նա և բոլոր թուրքմենն զինվորները անցան մյուս կողմը: Եթև ստիպված լինելին շարժվել ծանծաղուտով, հինգ օրում չէին կարողանա անցնել: Երեկոյան հասան երկրի սահմանները, և նրա զինվորները դարանակալեցին տեղի դժվարանցանելի լեռներում: Այդ գիշեր ձյուն եկավ, և ոչ ոք նրանց չնկատեց: Տերը զայրացավ երկրի բնակիչների վրա. Ով դուրս էր գալիս գյուղից՝ լեռներով կամ հովիտներով անցնելու համար, թուրքմենները ձյան վրա թողած նրա հետքերի շավղով գնում էին նրա ետևից և, գտնելով նրան, սպանում կամ գերի էին քշում: Այնուհետև ցրվելով երկրում՝ նրանք ամբողջովին ավերեցին այն, այրեցին տներն ու գյուղերը և մեծամեծ ոճիրներ գործեցին:

278. Գալեռանի գորբերի մասին, որոնք հաւրձակվեցին
թուրքմենների վրա

Երբ Բաղդուփինը գնաց Երուսաղեմ աղոթելու, Ուռհայի կառավարումը հանձնարարեց Պիրի տիրոջը՝ Գալերանին: Սա որքան կարող էր զորք հավաքեց և անսպասելիորեն գնաց հարձակվեց թուրքմենական վրանների վրա, որոնք գտնվում էին Ուռհայից

արևելք՝ Հեամի¹⁶⁵ լեռան հարթավայրում, Արտուքի որդի Ղազիի սահմանների մոտ: Շուրջ հինգ հազար հոգու՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների, նա գերի վարեց, ինչպես նաև ավարի մասնեց հազար երկու հարյուր ձի, եզներ, ուղտեր և հարյուր հազար ոչխար: Ռազմունակ մարդկանցից շատերին սպանելուց հետո ավարը նա բերեց Ուոհա, և դա շարիքների պատճառ դարձավ: Այս դեպքերը տեղի ունեցան 1426 (1115) թվականի մարտ ամսին: ||

279. Մարդինի տիրակալ Ղազիի արշավանքը դեպի արևմուտք և Ուոհայի պաշարումը նրա կողմից¹⁶⁶

Այնուհետև Ղազին՝ Մարդինի տիրակալը, որ այդ ժամանակ Արտուքյանների պատվավոր առաջնորդն էր, զայրացավ և անսահման մեծ բազմություն հավաքած, հնձի օրերին եկավ բանակեց Ուոհայի մոտակայքում՝ քաղաքի ցանքսերից ու բերքից հեռու Հաշտության բանակցություններ վարելով՝ նա ետ ստացավ գերված թուրքմենների մնացորդներին և, առանց վնաս տալու, հեռացավ քաղաքից ու գնաց դեպի Խառան: Տիրելով նրան՝ կտրեց անցավ Եփրատն ու նվաճեց նաև Հալեպն իր գավառով: Նա այնքան զորեղացավ ու հզորացավ բոլոր թուրք զորահրամանատարների շարքում, որ նույնիսկ Ասորեստանի և Արևելքի զորագլուխները հնազանդվեցին նրան: Այնուհետև, անթիվ բազմություն հավաքելով, նա մտավ Անտիոքի երկիրը:

280. Ռոջերի՝ Անտիոքի տիրոջ պարտությունը¹⁶⁷

Ռոջերը՝ Անտիոքի տերը, լսելով, որ Ղազին մտել է իր երկիրը, ելավ Անտիոքից՝ նրան դիմադրելու համար: Իսկ Երուսաղեմի թագավոր Բաղդուինը պատրաստվեց օգնության հասնել Ռոջերին. նույնն արեց նաև Գալեերանն Ուոհայից: Բայց Ռոջերը, այդ մեծամիտ ու ինքնավստահ երիտասարդը, չձամբերեց մինչև թագավորի գալուստը և կարծեց, թե կարող է միայնակ պարտության մատնել թուրքերին և հաղթանակ ու փառք շահել: Նա հանդուգն կերպով մոտեցավ մահամեղականների բանակին, մի բան, որ թուրքերի սրտովն էր, քանի դեռ ֆրանկները չէին եկել: Թուրքերն արագորեն շրջապատման օղակի մեջ առան Ռոջերին և նրա բանակի վրա կարկուտի ամպերի նման նետեր տեղացին: Տերը բարկացավ ֆրանկների վրա և երես թեքեց շարագործ ու ամբարտավան Ռոջերից, որն անհետ կորավ այդ կռվում ու չգտնվեց ո՛չ սպան-

վածների, ո՛չ գերիների մեջ: Թուրքերն ավարի մատնեցին Ֆրանկ-
83 ների բեռները և այն ամենը, ինչ որ գտան նրանց մոտ: ||

281. Երուսաղեմի թագավորի գալուստը և թուրքերի պարտությունը¹⁶⁸

Ռոջերի ջախջախումից ու կործանումից հետո բազում զորքերով տեղ հասան Երուսաղեմի թագավոր Բազդուլինը, Տրիպոլիի կոմսը և Գալերանն Ուոհայից: Անտիոքացիները դուրս էկան դիմավորելու Երուսաղեմի թագավորին: Այնտեղ նա իշխանությունը վերցրեց իր ձեռքը, հավաքեց եղած զորքերը և զնաց դիմադրելու Ղազիին: Նրանց միջև ճակատամարտ տեղի ունեցավ: Տերը բարկացավ թուրքերի վրա, և Ղազին պարտվեց: Նրա զինվորներից շատերը սրի մատնվեցին, իսկ ինքը քշերի հետ հագիվ փրկություն գտավ Հալեպում:

282. Ժուլիների թագավորումն Ուոհայում¹⁶⁹

Բազդուլին թագավորը, ցնծությամբ ու հաղթանակով վերադառնալով Անտիոք, այնտեղից զնաց Երուսաղեմ: Ապա Տիբերիացից բերել տվեց ժոսլինին և, հուրախություն եղեսպացիների, ուղարկեց կառավարելու Ուոհան: Ուոհայում նա թագավորեց 1432 (1121) թվականին: Գալերանը վերադարձավ Պիր կոչվող իր ամրոցը: Թագավորելով Ուոհայում, ժոսլինը զորք հավաքեց, զնաց նվաճեց թուրքմենների վրանները և նրանցից շատ գերիներ վերցրեց: Նրա համբավը տարածվեց ողջ Միջագետքի երկրներում, և վախը համակեց բոլոր հարևան թուրքերին: Թուրքմենները, որոնց մի մասը գերության էր մատնվել, զնացին ապաստան գտան Ղազիի՝ Մարդինի տիրոջ մոտ, համոզելով նրան արշավել դեպի Ուոհա և առնել իրենց վրեժը: Վերջինս բյուրաթիվ ու անհամար բազմություն հավաքեց և եկավ պաշարեց Ուոհան. Շրջապատելով այն, նա հափշտակեց նրա բերքը, կտրատեց ու փշացրեց պարտեղները և զնաց:

283. Իբերներից Ղազիի կրած պարտության, նրա մահվան և նրա որդու թագավորության մասին¹⁷⁰

Ղազին, որի մասին խոսեցինք, զորեղացավ, հզորացավ ու ամբարտավանեց, քանի որ նրա, ինչպես նաև իր Սուրման անունով ևղբոր և Գաուդ¹⁷¹ անունով հորեղբորորդու տերությունը տա-

81 րածվել էր մինչև Ասորեստան ու Հայաստան, մինչև Վրաստանի
սահմանները: || Ողջ Հայաստանում, այդպիսով, տիրում էին նրա
ցեղակիցները: Շուտով, սակայն, նրա ու իբերների, այսինքն՝
վրացիների¹⁷² թագավորի միջև, որը Դավիթ¹⁷³ էր կոչվում, տարա-
ձայնություն ծագեց: Ղազին հավաքեց տարբեր ժողովուրդների
մեջ ապրող իր ցեղակիցներին և հանդգնեց մտնել իբերների եր-
կիրը: Այդ լսելով՝ իբերների Դավիթ թագավորը զորահավաք կա-
տարեց և եկավ դիմադրելու նրան: Նրանց միջև ճակատամարտ
տեղի ունեցավ, և Ղազին պարտվեց: Իբերները, հալածելով թուր-
քերին, կոտորեցին նրանց մեծամասնությունը և ավարի մատնե-
ցին նրանց ողջ ունեցվածքը: Այսպես Ղազին ամոթով դուրս եկավ
իրերների երկրից և փրկություն գտավ իր աշխարհում: Քիչ ժա-
մանակ անց Ղազին հիվանդացավ ու մեռավ: Մարդիներում, Դա-
րայում¹⁷⁴ և Նփրկերտում նրա փոխարեն թագավորեց իր որդին՝
Տիմուրտաշը¹⁷⁵, մինչդեռ Բալակը՝ նրա հորեղբորորդին, տիրում էր
Հիսն-Ղիաղում և Անձիտում¹⁷⁶:

283. Հունաց Հովհաննես¹⁷⁷ կայսեր գահակալումը¹⁷⁸

Հույների Ալեքս կայսրը, որին հիշեցինք վերևում, կենդանու-
թյան օրոք գահաժառանգ կարգեց իր Հովհաննես անունով որդուն:
Բայց մայրը դեմ էր որդու գահակալմանը, նա ուզում էր թագա-
վորեցնել իր փեսային: Այսպես ատելություն ծագեց Հովհաննեսի
և իր փեսայի միջև: Ալեքս կայսեր մահվանից հետո Հովհաննեսը
եկավ մտնելու արքունիք: Սակայն մոր և փեսայի դրդմամբ պա-
հապանները փակեցին դռները նրա առջև: Այնժամ Հովհաննեսը
կոչ արեց իր զինվորներին, թե հասնել է ժամանակը, որպեսզի
մարտիկները ցույց տան իրենց քաջությունը և պսակի արժանա-
նան՝ որպես ավար ստանալով պալատում եղած ամեն ինչ: Չին-
վորները ոգևորված՝ չորս կողմից մոտեցան պալատի պատերին
և, թափով ներս մտնելով, բացեցին դռները: Մի ժամվա ընթաց-
քում պալատում կուտակված բոլոր գանձերը՝ ոսկին, արծաթը
մարգարիտները և թանկարժեք անոթները ավարի մատնվեցին:
Տիրելով թագավորությանը, Հովհաննեսը կարգադրեց, որպեսզի
85 քաղաքում ոչ ոքի վնաս չհասցվի: ||

284. Ոսկերե լեռան մառին

Հովհաննեսն ամուսնացավ հունգարական թագավորի դստեր

հետ՝ որպես օժիտ ստանալով ոսկեբեր լեռան կեսը: Իր մորը նա կրոնավոր դարձրեց, իսկ փեսային աքսորեց: Ինչ վերաբերում է հիշյալ ոսկեբեր լեռանը, ապա դա մոտիկ անցյալում հայտնաբերվել էր այդ կողմերը տեղափոխված մի ասորու կողմից: Մի օր, անցնելով տեղի քաղաքներից մեկով, նա տեսնում է կժեր պատրաստող մի բրուտի: Զննելով կավը, նրա մեջ նա ոսկի է նկատում և օղնության կարոտ աղքատի դիմակի տակ աշակերտում կժագործին: Մի օր, երբ նա դատարկում է մոխիրը հնոցից, սկըսում է քչփորել ու տնտղել այն, և նրա հատակին գտնում ոսկու մի գունդ, որն իր ծանր քաշի պատճառով երկար ժամանակի ընթացքում հավաքվել էր այնտեղ: Հարմար առիթ գտնելով՝ նա հանում է այն ու պահում: Այնուհետև այդ կավահողի մասին զնում հայտնում է հունգարական թագավորին: Թագավորը, հավաստիանալով դրանում, այնտեղ արհեստավորներ ու ոսկի գտողներ է նշանակում և գտման եղանակով ահագին ոսկի ստանում: Իսկ ասորուն նա մեծ հարստութուն է պարգևում:

285. Մեկիտենեում Դանիշմենդի որդու տիրապետության մասին

Դանիշմենդի որդիներից հետո Մեկիտենեում տիրում էր մի մարդ՝ թուրք թագավորների մեծ ցեղից¹⁷⁹, որի մահից հետո իշխանության գլուխ անցան նրա երկու անչափահաս որդիները՝ իրենց մոր հետ: Իկոնիայում և հունաց երկրի ներքին շրջաններում տիրում էր նրա Մասուդ¹⁸⁰ անունով անդրանիկ որդին, իսկ Սեբաստիայում, Կեսարիայում և Նեոկեսարիայում¹⁸¹ Դանիշմենդի որդի Ղազին¹⁸²: Վերջինս սաստիկ հզորացավ, շարժվեց դեպի Մեկիտենե ու մեծ ջանք թափեց [քաղաքը] գրավելու և նրա կառավարչին ձերբակալելու ուղղությամբ, պատրվակ բերելով, թե ուզում է ամուսնանալ նրա դստեր հետ: Սակայն շկարողանալով նրան նենգությամբ բռնել, մատնեց || իր մտադրությունը: Զորք հավաքած նա եկավ պաշարեց Մեկիտենեն և խիստ նեղության մեջ գցեց նրան: [Պարենի] պակասից այնտեղ սաստիկ սով առաջացավ և համաճարակ ծագեց: Դրա շնորհիվ Դանիշմենդի որդի Ղազին 1434 (1123) թվականին գրավեց քաղաքը և տիրեց նրան: Այսպիսով, Ղազին՝ Կապադովկիայի ամիրայի և Մեկիտենեի ու մինչև հյուսիսի խաղարական ծովն ընկած բոլոր քաղաքների տիրոջ իշխանությունը հզորացավ, ամրապնդվեց և տարածվեց: Նա շարունակ մտնում էր հունաց սահմանները և կողոպտում նրանց զավառները, այսինքն Գաղատիան, Կողոնիան, մինչև Հերակլես

և Հյուսիսային ծովի առափնյա շրջանները: Նա գերում, ավերում և ոճիրներ էր գործում: Այդ պատճառով Հովհաննես կայսրը պատրաստվեց ելնել և վրեժ լուծել Ղազիից: Սակայն, երկրում հացահատիկ ու հարդ չգտնելով, ետ կանգնեց:

Այդ ժամանակներում մեռավ հույների թագուհին՝ հունդարական թագավորի դուստրը: Մեռավ նաև Ալեքս¹⁸³ անունով արքայսրգու կինը, որը վրաց թագավորի դուստրն էր:

286. Ուոհայի կոմս ժոսլինի և Պիրի տեր Գալերանի գերեվարումը թուրքերի կողմից¹⁸⁴

Ուոհայի կոմս ժոսլինը ամուսնացավ Անտիոքի տիրոջ՝ Ռոջերի դստեր հետ, որպես օժիտ ստանալով Աղազ ամրոցը: Երբ գնում էր նրան Ուոհա բերելու, անցավ Եփրատը և գիշերեց Պիր ամրոցում: Նույն գիշերը Մերիբայից¹⁸⁵, Ումկայից¹⁸⁶ և Պիրի շրջակայքից մարդիկ եկան և հայտնեցին, որ այդ երեկո թուրքերը հարձակվել և ավարի են մատնել երկրում եղած ամեն ինչ: Դավերը հիշված Բալակ ամիրայի՝ Անձիտի և Էրկրի և Հիսն-Չիադի մեծ տիրակալի զորքն էր: Մոտ շորս հազար թուրք ձիավորների հետ անցնելով Հալեպով, ոմանց նա ուղարկել էր այս ու այն կողմ՝ երկիրն ասպատակելու համար: Իսկ ինքը եկել || դադար էր առել Ուոհայի գավառում՝ մի աղբյուրի մոտ, որ կոչվում էր Հայիզ, այսինքն՝ կյանքի աղբյուր¹⁸⁷, և որտեղ գտնվում էր մի նշանավոր բերդ՝ Ռեշ-Քեֆա¹⁸⁸ երկրի դիմաց: Երբ լուրը տարածվեց ֆրանկների մեջ, նրանք վճռեցին հալածել հրոսակներին՝ շնկատելով, որ Բալակը երկիր էր մտել իր ամբողջ զորքով: Ժոսլինին այդ քայլին էր մղում ու դրդում հատկապես Գալերանը՝ մտահոգված իր երկրի բախտով: Նույն գիշերը Գալերանն ու ժոսլինը ֆրանկների հետ փութով հեծան արագավազ ձիերը և արշավեցին նրանց ետևից՝ հուսալով, որ Ռեշ-Քեֆայում կհասնեն նրանց: Գալով այն վայրերը, որտեղով անցել էին թշնամիները, նրանք հայտնաբերեցին վերջիններիս ևրթուղիները և հետապնդեցին նրանց: Գիշերվանից մինչև կեսօր նրանք արշավեցին այդ հետքերով՝ տոշորվելով ծարավից, փոշուց ու շոգից: Եվ այսպես հետապնդելով՝ նրանք հասան այն մեծ ճամբարին, որտեղ բանակ էր դրել Բալակը: Հայացք զցելով՝ նրանք տեսան մի մեծ բազմութուն, մինչդեռ իրենք փոքրաթիվ էին և ճանապարհի վաղքից ու հոգնությունից թուլացած: Նկատվելով թուրքերից՝ նրանք շկարողացան ետ դառնալ, և երբ եկան ջրելու ձիերը, թուրքերը ազեղները ձեռքներին շարվեցին

գետափին: Ֆրանկներից ով որ մոտենում էր, նրան ու ձիուն նետահարում էին: Թուրքերը բոլոր կողմերից շրջապատեցին նրանց, շատերին կոտորեցին, իսկ մնացածներին ողջ-ողջ բռնեցին: Չերքակալեցին նաև Ժոսլինին, Գալերանին ու նրանց հետ եղած մեծամեծներին: Երբ նրանց բերին Բալակի մոտ, սա դեռևս չէր հավատում, այլ կարծում էր, թե երազ է, որ այսպիսի թագավորները մի ժամում դարձան իր գերիները: Այսպես անսպասելի կերպով բռնվեցին ու գերվեցին այդ երկու անվանի իշխանները: Բալակը, Ժոսլինին ու Գալերանին առած, եկավ Ուռհայի դուռը, որպեսզի քաղաքը հանձնեն իրեն: || Սակայն ուռհայեցիները նրան ծաղրեցին ու համաձայնություն չտվին: Հեռանալով այնտեղից, նա գերիներին տարավ իր հետ ու պահեց Հիսն-Զիադում:

287. Բաղդուին թագավորի ժամանումն Ուռհա

Այդ ժամանակ Անտիոքում էր գտնվում Բաղդուին թագավորը, որը լսելով լուրը, անմիջապես վեր կացավ, եկավ Ուռհա: Նա խաղաղեցրեց երկիրը և զինվորներ կարգեց՝ այն պաշտպանելու համար: Ապա իրենց պատվարժան կրոնավորներից Ժոֆրուա Վանական¹⁸⁹ անունով մեկին կառավարիչ նշանակեց, որպեսզի տնօրինի երկրում, մինչև տեսնեն, թե ինչ է սպասում Բալակի գերիներին:

Այդ ժամանակ Միքայել հայր՝ Կարկառի տերը, շատ նեղվելով թուրքերից, հասկացավ, որ չի կարող պահպանել բերդը, ուստի այն հանձնեց Բաղդուին թագավորին, պահելով որոշ տարածություններ իր ապրուստը հայթայթելու համար:

288. Բալակի կողմից Բաղդուին թագավորի ձերբակալման և գերեվարման մասին¹⁹⁰

Երբ Միքայելն, ինչպես ասացինք, հանձնեց Կարկառի բերդը՝ պահելով իրեն Տլուր գավառը, և Բաղդուին թագավորը գնաց Անտիոք, Բալակը նորից սկսեց նեղություն տալ Կարկառի երկրին: Նա իր ողջ զորքով շարունակ ասպատակում էր Կարկառի, Սամոսատի, Քյահթայի¹⁹¹ և Հիսն-Մանսուրի երկրները: Բաղդուին թագավորը հարկադրվեց օգնություն գնալ երկրին և Քեսունից ու Սամոսատից հացահատիկ բերել Կարկառի բերդի համար: Երբ Բալակը լսեց, որ Բաղդուին թագավորը հասել է Քեսուն, զորք հավարեց և եկավ մինչև Սինձա¹⁹² գետը՝ Քեսունի և Սամոսատի միջև: Թագավորը չնկատեց, որ Բալակն այդքան մոտեցել է: Հարուսթյան

տոնն անցկացնելով Քեսունում՝ շորեքշաբթի օրը [Ֆրանկները] ելան և անզգույշ ճանապարհ ընկան: Նրանք անցան Սինճայի նշանավոր կամրջով¹⁹³ և մոտ մեկ փարսախ [առաջ շարժվեցին],
89 մինչդեռ || Թագավորի հեծյալների մեծ մասը գտնվում էր հեռավում և նույնիսկ գետին չէր հասել: Թագավորը, դրոշը պարզած, ոմանց հետ ընթանում էր առջևից: Եվ հանկարծ Բալակի զինված-պատրաստ դարանակալները գիշերային գայլերի նման նետվեցին որսի վրա և պաշարման օղակի մեջ առան Բաղդուին Թագավորին: Միաժամանակ նրանք բռնեցին նրա քեռորդուն՝ մի փառահեղ պատանու, ինչպես նաև նրա հետ եղած շատ այլ մարդկանց: Երբ ֆրանկ զորքերը հասան Քեսունի կամրջին, Բալակը վերցրեց թագավորին ու գերիներին և եկավ Կարկառ բերդի մոտ: Այստեղ Բալակը դառն տանջանքների ենթարկեց թագավորին, մինչև որ նա հանձնեց Կարկառ բերդը: Այսպես իրագործվեց Բալակի երազանքը, և նա տիրեց Կարկառ բերդին: Երկիրը մաքրվեց գողերից ու ավազակներից, որոնք կողոպտում ու թալանում էին շրավորներին: Ողջ աշխարհում հանգստություն ու խաղաղություն տիրեց: Բալակ ամիրայի մասին նույնիսկ պատմում են, թե կախել էր տվել մի թուրքի, որը ոմն աղբատից մի կտոր հաց էր խլել: Նրա տերության մեջ ոչ ոք իրավունք չունեի վնասելու քրիստոնյաներին, նույնիսկ խոսքով:

Կարկառ բերդը գրավելուց հետո [Բալակն] այնտեղ պահապան զորքեր կարգեց, առավ թագավորին ու գերիներին և բերեց Հիսն-Ջիադ, որտեղ բանտարկված էին Ժոսլինն ու Գալերանը: Ժոսլինը բռնվել էր սեպտեմբեր ամսին. այդ լուրը Ուռհա հասավ Խաչի տոնի երեկոյան: Եվ այդ տարի Խաչի տոնը շկատարվեց Ուռհայում, քանի որ բոլոր ուռհայեցիները սուգ էին մտել: Իսկ ապրիլին, Ջատկի շորեքշաբթի օրը, ինչպես ասացինք, բռնվեց Բաղդուինը: Պատմում են, թե Ժոսլինին ու Գալերանին գերելուց հետո մեկնելով Հիսն-Ջիադից, Բալակն իբր նրանց ասել է. «Ահա դնում եմ, և եթե աստված կամենա, Բաղդուին թագավորին կբերեմ ձեզ մոտ»: || Այդպես էլ եղավ, վեց ամիս անց վերջինս բերվեց նրանց մոտ ու նրանց հետ բանտարկվեց Հիսն-Ջիադում:

90

289. Բալակի նոր արշավանքը դեպի ֆրանկների երկրները և նրա գործած ռիսկերը

Բալակն այդ տարի նորից հավաքեց իր զորքերը և եկավ պաշարեց Ուռհան: Փշացնելով բերքն ու պարտեզները և ավերելով

երկիրը՝ նա ելավ այնտեղից ու գնաց Խառան, որը հանձնվեց նրան: Ապա եկավ Հալեպ, և այն նույնպես հանձնվեց նրան: Այնուհետև նա մտավ Ֆրանկների երկրները՝ Ավետյաց բլուր, Տլուբ և Ազազ: Հեղեղի նման ավարի մատնեց, կոշոպեց, թալանեց գյուղերը և ուղարկեց իր երկիրը, գրավեց Հիսն-Մանսուրն ու Քլատիան¹⁹⁴ և մի տարի մեծամեծ ոճիրներ գործեց Ֆրանկների հողերում:

290. Հիսն-Ջիադում ոմանց կազմակերպած դավադրության և ժուպին կոմսի փրկության մասին¹⁹⁵

Նույն տարի, 1435 (1124) թվականի օգոստոս ամսի լիալուսնի օրերին, հայ զինվորներից ոմանք¹⁹⁶, մոտ քսան հոգի, որոնք ծառայում էին Քեսունի լեռան Պեհեսնի¹⁹⁷ կոշվող անառիկ բերդում, պատրաստվեցին և [երկրի] կուսակալ ժոֆրուա Վանականի ու թագուհու հետ դավադրություն կազմակերպեցին: Նրանք շրջվոր գյուղացիների տեսքով ելան գնացին Հիսն-Ջիազ: Տաս հոգին, իսաղող, պտուղներ և հավեր բարձած, բարձրացան Հիսն-Ջիազ մեծ բերդը՝ ձևացնելով, թե շրջակայքի գյուղերից են և եկել են բողոքելու իրենց կառավարչի դեմ, որ ճնշում ու նեղում է իրենց: Մյուսները մնացին հտևում՝ գործը սկսվելուն պես նրանց միանալու պատրաստությամբ: Նրանք, որ կրում էին բեռները, բարձրացան մինչև բերդի վերին դարպասը: Երբ դռնապաններին հայտնեցին իրենց գալու պատճառը, թե գանգատ ունեն իրենց կառավարչից, նրանց մտցրին դարպասների միջանցքը, որպեսզի բերդապետին տեղյակ պահեն նրանց ժամանման մասին: || Իսկ բերդապետն այդ օրը խնջույք էր կազմակերպել և, հավաքած մեծամեծներին, դվարճանում էր: Գինին արդեն ազդել էր նրանց վրա: Պահապանների մեծ մասը գտնվում էր այնտեղ, իսկ դարպասի մոտ, ղրուսապանի ձեռքի տակ մնացել էին երկու-երեք հոգի: Երբ ուղարկվածը գնաց ներս՝ բերդապետին հայտնելու [եկողների] մասին, սրանք թռան խլեցին դարպասների միջանցքում կախված սրերը և, ծնկի բերելով պահապաններին ու բոլոր պատահողներին, սպանեցին նրանց: Ապա ձայն տվեցին իրենց մյուս ընկերներին, որոնք միանալով նրանց՝ մի ջոկատ կազմեցին: Հետո փակեցին դարպասները, հարձակվեցին խնջույքի հրավիրվածների վրա և մի ժամում բոլորին կոտորեցին ու ոչնչացրին: Այնուհետև բացեցին բանտի դռները և բանտարկվածներին ազատ արձակեցին: Այդպի-

սով նրանք գրավեցին բերդը և տիրեցին նրան: Քաղաքից շատ հայեր, ովքեր կարողացան մտնել ներս, հավաքվեցին նրանց մոտ:

Այդ ժամանակ տագնապը տարածվեց քաղաքում, և շտապ լուր ուղարկեցին Բալակին, որը դտնվում էր Հալեպում: Թուրքերը շրջապատեցին բերդը և բոլոր կողմերից գիշեր-ցերեկ սկսեցին հավաքվել նրա շուրջը: Այն առան օղակի մեջ, և ոչ ոք չէր կարող ո՛չ մտնել, ո՛չ ելնել: Ժոսլինը, սակայն, առաջին իսկ գիշերը պատրաստվեց ու հանդգնեց դուրս գալ՝ երգվելով թագավորին. որ չի հանգստանա, մինչև չհասնի Երուսաղեմ, զորք չհավաքի ու ետ չդառնա: Նա իր հետ վերցրեց ուրիշ երկու հոգու՝⁹⁸ և, ոտքով դուրս գալով, ճեղքեց բերդը շրջապատող բազմությունն ու փրկվեց աստծու կամքով: Նախ զնաց Քեսուն, ապա՝ Ավետյաց բլուր և Անտիոք, իսկ ի վերջո հասավ Երուսաղեմ: Բոլորն ուրախանում էին, թե շուտով Բաղդուին թագավորն ու Գալերանը կփրկվեն՝ ստանալով Հիսն-Ջիաղում կուտակված հարստությունը: Իսկ Բալակը, երբ լսեց այդ դեպքը, կատարված իր անառիկ բերդում, որ

92 թագավորության աթոռանիստն // ու իր հարստությունների գանձարանն էր, նույն ժամին փութով ոտքի կանգնեց, վերցրեց իր զորքերը և չորս օրում շտապ հասավ Հիսն-Ջիաղ՝ դեպքից տաս օր հետո: Կատաղի հարձակում ծավալելով՝ նա բերդի դեմ ուղղեց բազմաթիվ բաբաններ, որոնք անընդհատ ու անդադար կործանում էին նրա պարիսպները: Կոիվր չէին դադարեցնում նույնիսկ մեկ րոսլեով՝ վախենալով, թե ուր որ է ֆրանկները վրա կհասնեն: Մի քանի օրում նրանք քանդեցին պարիսպը և նրա մեջ մեծ ճեղքվածք բացեցին: Բալակը պաշարվածներին համոզում էր հանձնել դիրքերը և փրկել իրենց կյանքը, քանի որ չէր կամենում բերդը գրավել սրով ու նսեմացնել նրա արժանիքը: Այնտեղ, աղբերակունքից վեր, կար մի մեծ բուրգ, որն անընդհատ հարվածներից գետնին հավասարվեց: Երբ այն կործանվեց, ներսում եղողները ձեռնթափ և հուսակալուր եղան: Գալերանն անձամբ իջավ Բալակի մոտ և նրանից երաշխիքներ ու երդում խնդրեց իրենց կյանքի [ապահովության] մասին: Բալակը երգվեց պատվով պահել նրանց, ինչպես նախկինում: Եվ բերդը հանձնվեց: Բալակը, ներս մտնելով, բռնեց դավադիր հայերին, խստագույնս տանջանքների ենթարկեց և ի վերջո ողջ-ողջ մորթագերծ արեց: Իսկ թագավորին, Գալերանին ու նրանց հետ եղողներին վերադարձրեց իրենց նախկին բանտարկության վայրը:

291. Ժոսլինի կողմից Հալեպի պաշարման և Հալեպում

Բրիտանյաններից խլված տաճարների մասին

Ժոսլինը հասնելով Երուսաղեմ, զորք հավաքեց և եկավ երեք օրով բանակեց Հալեպի շուրջը՝ նրա արևմտյան դարպասի դիմաց գտնվող Գոշան¹⁹⁹ լեռան վրա: Ապա [տեղացիներից] հարկ վերցնելով, կամեցավ մեկնել և հասնել Հիսն-Ջիադ: Սակայն նրան լուր հասավ, որ Բալակն արդեն գրավել է բերդը և կոտորել այնտեղ գտնվող հայերին: Այդ պատճառով ժոսլինը քարուքանդ արեց իր բանակած լեռան վրա գտնվող մզկիթները, || որոնցից մեկը կոչվում էր Դաքբա, իսկ մյուսը շինվել էր Ռիդվան թագավորի կողմից: Հետո նա կտրատեց պարտեզներն ու ծառերը և գնաց:

Հալեպում այդ ժամանակ կար մի մահմեդական դատավոր, որի անունն էր Աբուլհասան իբն իսազաբ²⁰⁰: Նա կանչեց բրիտանյաններին ու հրամայեց, որ նրանք գնան և վերականգնեն ժոսլինի քանդած երկու մզկիթները: Այդ ժամանակ Հալեպի ուղղափառներ²⁰¹ եպիսկոպոսն էր Գրիգորիոս ուռհայեցին, որը կոչվում էր նաև Սամսոն: Կար նաև մի քաղկեդոնական եպիսկոպոս: Եկեղեցական գործակալները, որոնք մարում էին նվիրատվությունների գործը. շհամաձայնեցին և պատասխանեցին. «Մենք չենք կարող այդ անել և դուռ բացել, որպեսզի ամեն անգամ որևէ մզկիթ քանդվելիս, այն վերականգնվի եկեղեցու ծախսերով»: Այնժամ վերոհիշյալ դատավորը հրաման արձակեց, և հազարավոր մահմեդականներ տապարներով ու քլունգներով հարձակվեցին եկեղեցիների վրա: Մտնելով Ս. Հակոբի տաճարը, նրանք քանդեցին նրա բեմը, բերովբեններն ու խորանը և պոկոտեցին սրբապատկերները: Ապա հարավային պատի մեջ երկրպագելու տեղ բացելով, նույն ժամին սկսեցին աղոթել մզկիթի վերածված եկեղեցում: Այդպես վարվեցին նաև հույների Ս. Աստվածածնում և նեստորականների եկեղեցում: Ապա նրանք կողոպտեցին եկեղեցիներն ու եպիսկոպոսական խցերը: Քաղկեդոնականների եպիսկոպոսը փախավ Անտիոք, իսկ ուղղափառներինը եկավ Կալա-Ջաբար: Այսպես, 1435 (1124) թվականին, Աթանասիոս Բար-համորո²⁰² պատրիարքի օրոք, ավերվեցին այդ տաճարները:

292. Բալակի և ֆրանկների հակատամարտը Մաբբուզի

մոտակայքում, նրա պարտությունն ու մահը և Դաուդ անունով եղբոր գահակալումը²⁰³

Բալակ զորագլուխը, լսելով, որ ժոսլինը զորք է հավաքել Հալեպը պաշարելու նպատակով, փութով զորահավաք կատարեց,

եկավ բանակ դրեց Մաբբուզի մոտակայքում և սկսեց նեղութիւն
պատճառել երկրին, որն իրեն չէր ենթարկվել: Ժոսլինը, որի հետ
էին նաև ժոֆրուա Վանականը, մի ուրիշ ժոֆրուա և Մահին²⁰⁵,
հավաքելով իր զորքը, պատրաստվեց ճակատամարտ տալ նրան:
94 || Բալակին նա հանդիպեց Մաբբուզի մոտակայքում, և նրանց
միջև ճակատամարտ տեղի ունեցավ: Գնդերը բախվեցին իրար,
Բալակը պարտվեց, և նրա զորքերի մեծ մասը ոչնչացավ: Նա
դարձավ դեպի Մաբբուզ՝ կամենալով վրեժ լուծել նրանից, որ
իրեն օգնութեան չէր հասել: Եվ մինչ կատաղի հարձակումներ էր
գործում Մաբբուզի վրա, խոցվեց պարսպից արձակված նետով և
ավանդեց հողին: Նրան բերին Հալեպ, և Արտուրյանները թաղե-
ցին նրան քաղաքից դուրս:

293. Վենետիկցիներ կոչվող ֆրանկների արշավանքի և
նրանց կողմից ծովափնյա Տյուրոս քաղաքի պաշարման
մասին²⁰⁵

Այդ ժամանակ, 1435 (1124) թվականին, երբ տեղի ունեցավ
Հիսն-Զիադի դեպքը, վենետիկցի կոչվող մարդիկ, որոնք ֆրանկ-
ների ցեղից էին, պատրաստութիւն տեսան և մեծ բազմութեամբ
ուտքի ելան: Նրանք պատրաստեցին բազմաթիվ նավեր և իրենց
թաղավորի հետ, որի անունը Դոջ²⁰⁶ էր, ծով իջան՝ դեպի Պաղես-
տին լողալու համար: Հասնելով Տյուրոսի և Սիդոնի ափը՝ նավեռն
ու մակույկները շրջափակեցին ողջ ծովափը: Երբ ֆրանկները լսե-
ցին նրանց արշավանքի մասին, Երուսաղեմի ֆրանկ պատրիարքը
եկավ նրանց մոտ, քանի որ Բաղդադին թագավորը գերութեան մեջ
էր: Նրանք պաշարեցին Տյուրոս քաղաքը, որը դեռևս գտնվում էր
մահմեդականների ձեռքում և բովականին բաղամամարդ էր, որով-
հետև ովքեր որ փրկվել էին մահմեդականների կորցրած երկրնե-
րից, եկել էին այնտեղ: Այդ քաղաքն, ահա, պաշարեցին արշա-
վանքի ելած ֆրանկները և ծովից ու ցամաքից կատաղի հարձա-
կումներ գործեցին նրա վրա: Շուրջը տեղադրեցին տարբեր տե-
սակի պաշարողական մեքենաներ՝ ահռելի բարաններ ու բազմա-
թիվ քարարձակներ, որոնք գիշեր-ցերեկ բախում ու հարվածում
էին: Այնուհետև շինեցին երկու փայտյա հզոր բուրգեր, բաղկա-
ցած յոթական հարկից՝ յուրաքանչյուրը տաս արմունկ բարձրու-
թյամբ: Դրանք զինեցին, ծածկեցին || Թաց կաղնեփայտի
ամուր տախտակներով, որպեսզի կուպրը նրանց վրա չազդի, և
ավարտելով՝ մոտեցրին պարսպին: Սակայն քաղաքն ունեւր ոչ թէ

մեկ, այլ երեք պարիսպ, ինչպես նաև երկու արտաքին պատ: Բոլոր պարիսպների արանքում կային խոր խրամներ: Պարիսպները լավ ամրացված էին, և նրանց վրա զինյալների մի խիզախ բազմութուն կար: Տյուրոսցիները կռվում էին քաջաբար, և կռիվը տևեց մոտ յոթ ամիս: Պարիսպները ճեղքվել էին, և բազմաթիվ աշտարակներ էին քանդվել բաբաններից, բայց պաշարվածները դրանից չէին ընկճվում, քանի դեռ պարեն ունեին: Սակայն երբ պարենն սկսեց պակասել, նրանք մեծ նեղության մեջ ընկան: Հույս չղնելով քաղաքի տերերի՝ եգիպտացիների վրա, նրանք դիմեցին Դամասկոսի տիրակալին, որպեսզի օգնի իրենց և տիրութուն անի: Թղթակցութունը տեղի էր ունենում Բուշունների միջոցով, քանի որ ոչ ոք չէր կարող մտնել կամ դուրս գալ: Դամասկոսի ամիրան մեծ դորք հավաքեց՝ օգնության գալու համար, և աղավնու միջոցով նրանց հաղորդեց. «Այսինչ օրը բազմաքանակ դորքով ես կհասնեմ ձեզ մոտ: Քաջալերվեցե՛ք, սրտապնդվեցե՛ք և մի՛ վհատվեք»: Աստծու կամքով աղավնին եկավ իջավ Ֆրանկների ճամբարը: Երբ կարգացին նամակը, նրա փոխարեն կազմեցին մի ուրիշը, որի մեջ գրված էր հետևյալը. «Տյուրոսցիներ, դուք զրեյ էիք, որ օգնության գանք ձեզ, սակայն հայտնում ենք, որ չենք կարող, որովհետև շունենք մի այնպիսի բանակ, որն ի վիճակի լիներ դիմագրավել ձեր դեմ հավաքված բազմությանը: Մեզ վրա հույս մի՛ դրեք, այլ երաշխիքներ խնդրեցե՛ք ձեր կյանքի ապահովության մասին և հանձնեցե՛ք քաղաքը»: Նամակն ամրացրին աղավնուն և բաց թողեցին նրան: Երբ նամակը տեղ հասավ, և կարգացին այն, [թուրքերն] իրենց կյանքից ձեռք քաշեցին, մանավանդ որ նրանց պարենը բոլորովին սպառվել էր:

Պատմում են, թե Ալեքսանդր Մակեդոնացին, պաշարելով

46 Տյուրոսը և կատաղի հարձակումներից // հետո չկարողանալով նվաճել այն, հանել է մեծ արվեստով շինված իր հայելին և ճառագայթներ ուղղել քաղաքի վրա: Երբ նա պաշարում էր որևէ քաղաք, և վերջինս անմիջապես իրեն չէր հնազանդվում, հանում էր այդ հայելին և պահում արևի դիմաց: Նրանից ճառագայթներն անդրադառնալով քաղաքի վրա՝ այրում էին սմենը, ինչի վրա ընկնում էին: Ժողովուրդը փախչում էր պարիսպներից, և նա տիրում էր քաղաքին: Սակայն տյուրոսցիները շատ խելացի էին. մի իմաստուն ծերունի նրանց խորհուրդ էր տվել վերցնել մեծ թվով թաղիքներ, թաթախել թունդ քացախի մեջ և դրանցով ծածկել պարիսպները: Երբ Ալեքսանդրը, հանելով իր հայելին, պահել է պարսպի դիմաց, քացախի հոտը հասել է հայելուն, դրանից ճառա-

զայթումը նվազել ու աղոտացել է և չի գործել իր սովորական ազդեցությունը՝ ձախողելով Ալեքսանդրի մտահղացումը: Վերջինս ասլաժ ու զարմացած, տյուրոսցիներին ասել է. «Տվե՛ք ինձ այն մարդուն, որը ձեզ սովորեցրել է այդ բանը, և ես կհեռանամ ձեզանից»: Մարդը գնացել է նրա մոտ, արժանացել մեծ պատիվների ու մնացել մոտը՝ թագավորական խորհրդականների և իմաստունների հետ միասին:

294. Տյուրոսի հանձնումը ֆրանկների ձեռքը²⁰⁷

Այնուհետև տյուրոսցիները իրենց պատվավոր մարդկանցից ոմանց ուղարկեցին ֆրանկների Գոշ անունով առաջնորդի և նրանց սպարիարքի մոտ՝ երաշխիքներ խնդրելով իրենց կյանքի ապահովության մասին: Նրանք պայմանավորվեցին, որ ցանկացողը կարող է մնալ քաղաքում կամ իր ընտանիքով, երեխաներով և ունեցվածքով մեկնել իաղաղությամբ, ուր որ կամենա: Նրանց թույլ կտրվի հանգիստ ու ապահով անցնել գնալ: Այնուհետև բացեցին քաղաքի դարպասները, և ֆրանկները մտան ու տիրեցին նրան հուլիս ամսին²⁰⁸, մինչ Բաղդուինը, Ժոսլինը և Գալերանը բնատարկված էին Հիսն-Ջիաղում:

295. Բաղդուինի ազատագրման և Գալերանի սպանության մասին⁹⁰

97 || Այդ ժամանակ Բուրսուխը, որն, ինչպես վերը նշեցինք, պարտվել էր ֆրանկներից Հալեպի և Անտիոքի միջև, գտնրվելով Մոսուլում, ուրբաթ օրվա լույս գիշերը երազում տեսավ, որ տասնմեկ շներ շրջապատել և հոշոտում են իրեն: Երբ առավոտյան զարթնեց ու պատմեց իր երազը, ոման՝ նրան ասացին. «Զգուշացիր և այսօր աղոթարան մի դնա»: Իսկ նա ասաց. «Ուրբաթ օրով ես չեմ թերանա մասնակցել համընդհանուր աղոթքին մեծ մզկիթում»: Եվ երբ նա, մահամեղական սովորության համաձայն, կեսօրին մտավ [մզկիթի] դռնով, իսմայելիտներից տասնմեկ հոգի շրջապատեցին նրան, դաշունահարեցին ու սպանեցին: Նրանից հետո Մոսուլում և Ասորեստանում թագավորեց նրա որդին, որը նույնպես Բուրսուխ էր կոչվում²¹⁰:

296. Հալեպ քաղաքի պաշարումը ֆրանկների կողմից²¹¹

Այդ ժամանակ ֆրանկների Բաղդուին թագավորը, Տրիպոլիի Սենժիլ կոմսը և Ուոհայի Ժոսլին կոմսը հավաք գումարեցին:

Նրանց հետ նախապատրաստություն տեսավ նաև մի մահամեղա-
կան ամիրա՝ Դուբայս²¹² անունով, որը եղել էր Հիլլայի²¹⁰ և Իրաքի
տիրակալը, բայց այնտեղից հալածվելով՝ եկել էր Անտիոք ու
հնազանդություն հայտնել ֆրանկներին: Բազում զորքերով նրանք
եկան պաշարեցին Հալեպ քաղաքը և ամբողջ ինն ամիս բոլոր
կողմերից հարձակումներ գործեցին նրա վրա: Ներսում եղող մար-
դիկ այնքան նեղվեցին [պարենի] պակասից, որ նույնիսկ պիղծ
կենդանիներ կերան: Ինն ամիս հետո, երբ նրանք արդեն պատ-
րաստվում էին հանձնել քաղաքը, լուր հասավ, թե Ասորեստանի
տիրակալ Բուրսուխը գալիս է նրանց օգնության: Հիշյալ Դուբայս
98 արաբը // ֆրանկներին խորհուրդ տվեց՝ ասելով. «Ինձ զորք
տվեք, որպեսզի գնամ Եփրատ և, խանգարելով Բուրսուխի գե-
տանցը, ուշացնեմ նրա գալուստը, մինչև որ դուք գրավեք քաղա-
քը»: Սակայն հաստակող ֆրանկները շքնդունեցին նրա խորհուր-
դը: Բուրսուխն անցնելով Եփրատը, եկավ գիշերով և համարձակո-
րեն մտավ Հալեպ: Առավոտյան հալեպցիները բացեցին քաղաքի
դռները և, Բուրսուխի հետ միասին դուրս գալով, սոսկալի ճակա-
տամարտ տվին ֆրանկներին: Ֆրանկները, հեռանալով քաղաքից,
բանակ դրին Գոշան լեռան վրա, իսկ տաս օր հետո մեկնեցին
Անտիոք: Թուրքերը Բուրսուխի գլխավորությամբ մինչև Աթարիբ²¹⁴
հետապնդեցին նրանց՝ ավազակություններ և կողոպուտներ գոր-
ծելով նրանց թիկունքում: Ապա Բուրսուխը մեծ ուրախությամբ
վերադարձավ Հալեպ:

297. Ազազի պաշարումը Բուրսուխի կողմից և ֆրանկներից կրած նրա պարտությունը²¹⁵

Հալեպից ֆրանկների հեռանալուց հետո Բուրսուխը գնաց պա-
շարեց Ազազ ամրոցը և կատաղի հարձակումներ գործեց նրա
վրա՝ օգտագործելով բաբաններ, որոնք գիշեր-ցերեկ հարվածում
էին նրա պարիսպներին: Մինչև պարիսպը փորեց նաև մի գետ-
նուղի և այդպիսով խիստ նեղության մեջ պահեց ամրոցը: Երբ
ֆրանկները լսեցին այդ, Երուսաղեմի Բաղդուին թագավորն ու
Ուռհայի տեր Ժոսլինը հանդիպեցին Անտիոքում, բայց թուրքական
զորքի բազմությունից վախեցան օգնության գնալ Ազազին: Երբ
պաշարվածները շատ նեղվեցին, և ոչ ոք չէր կարողանում մտնել
կամ դուրս գալ, մի եռանդուն մարդ ոգևորված ասաց. «Աստծու
վրա հույս դրած՝ ես կգնամ և մեր նեղության մասին լուր կտա-
նեմ թագավորին՝ արագացնելով նրա գալուստը»: Նրան խոստա-

ցան որչ-առորչ վերադառնալու դեպքում ղանազան բարիքների արժանացնել: Մարդը գոտեպնդված՝ հեծավ մի ուժեղ ձի, ձեռքը սուր վերցրեց, իսկ ծոցը մի աղավնի դրեց և, կայծակի նման հանկարծակի դուրս թռչելով դարպասից, || նետվեց հետևակային զորքերի վրա, որոնք խումբ-խումբ պահակություն էին անում: Այդ վայրի շուրջը մի խոր խրամ էր փորված, սակայն ձին թափով թռավ նրա վրայից և անցավ մյուս կողմը: Երբ թշնամիները տեսան նրան, բոլոր կողմերից հարձակվեցին նրա վրա, բայց չարողացան բռնել:

Գալով Անտիոք՝ նա թագավորին պատմեց այն նեղության մասին, որի մեջ ընկել էին Ալլազի բնակիչները: Ֆրանկները գոտեպնդվեցին, և աստծու վրա հույս դրած, ճանապարհ ընկան՝ նրանց միանալու համար: Նրանք աղավնու միջոցով մի նամակ ուղարկեցին. թե՛ «Այսինչ օրը կհասնենք ձեզ մոտ, քաջալերվեցե՛ք և մի՛ վհատվեք»: Սակայն աղավնին եկավ իջավ թուրքերի ճամբարը: Կարդալով այն՝ վերջիններս նրա փոխարեն ժոսլինի անունից գրեցին. «Մեզ վրա հույս մի՛ դրեք, քանի որ թագավորն զբաղված է իրեն շրջապատած եգիպտացի թշնամիներով: Երաշխիքներ խնդրեցեք ձեր կյանքի համար և հանձնեցե՛ք բերդը» Երբ պաշարվածները կարդացին նամակը, կասկածեցին նրա վրա և ասացին. «Մի քիչ էլ համբերենք, որպեսզի մեզ հետ չպատահի Տյուրոսի աղավնու դեպքը և նամակը կեղծ դուրս չգա»: Նրանք պատրաստվեցին դիմանալ որքան կարող են, և մեռնել, բայց չհանձնվել: Թուրքերը, տեսնելով, որ այդ խորամանկությունը չօգնեց, սկսեցին իրենց մոտ գտնվող բեռներն ուղարկել Հալևա, քանի դեռ ֆրանկները չէին հասել: Ապա լրտեսներ ուղարկեցին մինչև Անտիոք, որպեսզի իրենց տեղեկացնեն ֆրանկների առաջխաղացման մասին: Մի քանի օրից լրտեսները եկան և հայտնեցին, որ ֆրանկները ճանապարհ են ընկել: Թուրքերն իրենց բոլոր ինչքը վերադարձրին Հալևա, իսկ բաբաններն ու քարաբձակները հրի մատնեցին: Սակայն ռազմունակ զինվորները մնացին տեղում՝ զինվելով և պատրաստվելով կռվի: Ֆրանկները, հասնելով Գուրուս, իրենց բեռները թողեցին այնտեղ և Քիլիս գյուղի վրա իշխող սարից իջան ընդարձակ դաշտը: Թուրքերը, նկատելով ֆրանկների ժամանումը, շարժվեցին իրենց տեղից և ուղղվեցին վեր ու վար՝ հայտնվելով ֆրանկների ձախից || և աջից: Ֆրանկներն առանց կռվի մեջ մտնելու, անցան նրանց արանքից և ամրացան թուրքերի ճամբարի տեղում: Նրանք չափազանց փոքրաթիվ էին. Թուրքերը, տեսնելով, որ նրանք քիչ են, քաջալերվեցին ու մտածեցին. «Եթե

մնան այստեղ, մենք կփակենք նրանց ճանապարհները, և նրանք կոչնչանան պարենի պակասից: Իսկ եթե հեռանան, դա նրանց վախկոտությունն է նշանը կլիինի, և մենք կհալածենք նրանց»: Ֆրանկները խորհրդակցեցին և, իրենցից բավականին թվով մարդկանց բերդ մտցնելով, ասացին նրանց. «Մենք կգնանք մի փոքր դեպի արևմուտք՝ այսինչ գյուղը, և կհանդատանանք այնտեղ մեր ձիերի հետ՝ հագեցնելով մեր ծարավն ու պաշար վերցնելով, քանի որ Ադագում ջուր չկա: Եթե թշնամիները հետապնդեն մեզ, ուշադրություն դարձրեք, թե Լրբ Լն դուրս գալու բոլոր դարանակալած զորքերը և միասնաբար ուղղվելու դեպի մեր կողմը: Բերդի գլխից մեզ ձխի աղդանշան տվեք: Եվ ինչ որ Տերը կամենում է, թող կատարվի: Եթե Տերը թույլ տա, մենք կհաղթենք, իսկ եթե կորստյան մատնվենք, դուք ամուր մնացեք, քանի որ որոշ ժամանակ դեռ կարող եք դիմադրել»: Բերդապետը միաշքանի, բայց ուժեղ և քաջ մի ֆրանկ էր՝ Սիրայգ անունով:

Ֆրանկների զորքերը առավոտյան մեկնեցին՝ ճանապարհ ընկնելով դեպի Անտիոք: Թշնամիները, տեսնելով այդ, հեծան ձիերը և հետապնդեցին նրանց: Վերջիններս փախուստ ձևացրին, և դրանից ոգևորված՝ թուրքերի բոլոր դարանակալած զինվորները վեր թռան ու սկսեցին ամբողջ ուժով հետապնդել Լրանց: Երբ բերդից տեսան, որ այլևս դարանակալներ չմնացին, պայմանավորվածության համաձայն ծխի աղդանշան տվեցին: Տեսնելով ծուխը՝ ֆրանկները թագավորի հրամանով հնչեցրին շեփորները և թագավորական դիմանշանները ետ շրջեցին: Տերը զայրացավ թուրքերի վրա. նրանք փախուստի դիմեցին և սրի բերան ընկան: Թուրքերի կողմից սպանվածների թիվը հասավ մոտ երկու հազարի: Փրկվեց միայն Բուրսուլը՝ քերի հետ միասին, որոնք հալածվեցին մինչև // Հալեպ: Այսպիսի դառը վախճան ունեցավ Բուրսուլի ձեռնարկած արշավանքն Սսորեստանից. նա ճանապարհ ընկավ Մոսուլ գնալու համար, բայց մեռավ Ռախբայում²¹⁶, Եփրատի ափին:

298. Բահեմունդի²¹⁷ գահակալումն Անտիոքում և Բանիասի²¹⁵
հանձնումը իսմայելիտների ձեռքը²¹⁹

Բաղդուին թագավորը ֆրանկների երկրից բերել տվեց Բոհեմունդ անունով մի երիտասարդի, որը որդին էր ավագ Բոհեմունդի՝ Անտիոքի առաջին տիրոջ: Վերջինս, ինչպես վերը նշեցինք, Դանիշմենդի գերությունից ազատվելուց հետո գնացել էր իր երկիրը:

Մրա որդուն, ահա, բերել տվեց Բաղդուին թագավորը և, ամուսնացնելով իր դստեր հետ, նշանակեց Անտիոքի կառավարիչ: Նրա հետ բերել տվեց նաև մի ուրիշ մարդու՝ կոմսերի ընտանիքից, որի անունն էր Ֆուլք²²⁰, և ամուսնացնելով մյուս դստեր հետ՝ իր կենդանության օրոք հայտարարեց նրուսաղեմի թագավոր:

Այդ ժամանակ Դամասկոսում իշխում էր մի թուրք ամիրա՝ Տուղտեգին²²¹ անունով, որը տիրում էր նաև Բանիաս քաղաքին: Տեսնելով, որ այն չի կարող պաշտպանել ֆրանկներից, քանի որ գտնվում էր նրանց սահմանների մեջ, կանչեց Բահրան²²² անունով մի իսմայելիտ մարդու և Բանիասը հանձնեց նրան: Վերջինս, հավաքելով մոտ հինգ հարյուր հոգու, հաստատվեց այնտեղ: Նա միշտ նվերներ էր ուղարկում ֆրանկների թագավորին՝ հնազանդություն հայտնելով նրան:

299. Ռուբինյան հայերի վատ արարքների մասին

Այդ ժամանակ Ռուբենի սերնդի հայերը, որոնք իշխում էին Կիլիկիայի գավառներում ու երկրի բերդերում, գլուխ բարձրացրին Դանիշմենդի որդի Ղազիի՝ Կապադոկիայի ու Մելիտենեի մեծ տիրակալի դեմ: Նրանց հրոսակախմբերը շարունակ գնում ավաղակություններ էին գործում նրա սահմաններում, ինչպես անում էին նրանց եղբայրակից Կարկառի հայերը Բալակի երկրում: Իսկ Ղազին, որը շափազանց հզոր ու ահարկու էր և, մարտնչելով հույն թագավորների հետ, ավերում || ու կործանում էր ողջ հունաց սլշխարհը, խիստ զայրացավ այդ հայերի վրա և պատրաստվեց մտնել ու ավարի մատնել նրանց երկիրը: Անտիոքի իշխան Բոհեմունդը նույնպես, զայրացած հայերի վրա, պատրաստվում էր մտնել և սվերել Կիլիկիո երկիրը:

300. Անտիոքի իշխան Բոհեմունդի ու Դանիշմենդի որդի Ղազիի միջև Կիլիկիո երկրում տեղի ունեցած նակատամարտի և Բոհեմունդի սպանության մասին

Երբ Անտիոքի իշխան Բոհեմունդն իր զորքերով մտավ Կիլիկիո երկիրը, մյուս կողմից մտավ նաև Ղազին: Ֆրանկ և թուրք զորքերը, որ եկել էին կործանելու երկիրը, հանկարծ հանդիպեցին իրար: Թուրքական զորքերը շրջապատեցին Բոհեմունդին ու կոտորեցին նրա զինվորներին, որոնցից ոչ մեկը չփրկվեց: Սպանվեց ու գլխատվեց նաև Բոհեմունդը՝ այդ հրաշալի երիտասարդը: Իսկ հետո նրա հոյակապ մազերի պատճառով քերթեցին նրա

զանգը և ուրիշ թանկարժեք իրերի՝ Ֆրանկական վահանների, նիզակների ու թամբերի հետ միասին գլխամաշկն ուղարկեցին ինքնակալին՝ Սպահանի մեծ սուլթանին, որպես հաղթանակի պարգևներ ու նվերներ: Այսպիսով, այդ թագավորները կոտորեցին իրար, իսկ հայերը փրկվեցին: Ո՛վ զարմանք. Դանիշմենդը՝ այս Ղազիի հայրը, կորստյան մատնեց ավագ Բոհեմունդի զորքերն ու, բռնելով նրան, գերության վարեց, իսկ այժմ Դանիշմենդի որդի Ղազին ջախջախեց նրա երիտասարդ որդուն՝ մյուս Բոհեմունդի զորքերն ու սպանեց նրան:

301. Սպահանում նստող թուրքական մեծ սուլթանի մահվան մասին²²³

103 1442 (1131) թվականին Սպահանի երկրում մեռավ թուրքերի մեծ սուլթանը*, և ողջ խորասանում մեծ խռովություններ || ու սպանություններ տեղի ունեցան²²⁴: Մահմեդականների խալիֆը, որ նստում էր Բաղդադում, իշխանությունը հանձնեց Դանիշմենդի որդի Ղազիին՝ Կապադովկիայի և Մելիտենեի տիրակալին, որն այդ ժամանակ մեր կողմերի բոլոր թուրք թագավորներից ամենահզորն ու ամենակարողն էր:

302. Ժոսլին կոմսի գահակալումն Ուոհայում

Ուոհայի տեր Ժոսլինն այդ ժամանակ արդեն ծեր էր և տարիքով առաջադաս, սակայն դեռևս չէր հանգստանում կռիվներից: Հալեպի և Մաբբուգի արանքում մի բերդ կար՝ Թելարան²²⁵ անունով, որտեղ այդ ժամանակ ավազակներ էին ապրում և մշտապես կողոպտում շրջակա երկրները: Ժոսլինը զորք հավաքեց և գնաց քանդելու այդ բերդը: Նրա տակ գետնուղիներ փորել տալով՝ կոմսն անձամբ իջավ տեսնելու դրանք: Սակայն հանկարծ մի հողագունդ փլվեց ու ծածկեց նրան: Երբ նրան շտապ դուրս կորզեցին, գտան վերջին շնչում: Նրան վերցրին բերին Ավետյաց բլուր: Նա խիստ հիվանդացավ, քանի որ մարմինը ջախջախված էր: Եվ մինչդեռ նա հիվանդ էր, Ղազին հավաքեց իր զորքերը՝ ուրբինյան հայերի երկրները մտնելու համար: Լսելով այդ՝ Ժոսլինը հրամայեց գորահավաք կատարել և, հիվանդի մահճում պառկած, գնաց Ղազիի դեմ: Երբ վերջինս լսեց, որ Ժոսլինը դեռ ողջ է, վերադարձավ իր երկիրը: Իսկ Ժոսլինը հասավ Տլուք, այդ քաղաքում գտավ իր վախ-

* Լուսանցագրություն. «Մասուդ թագավորը»:

Ճանր և թաղվեց Տլուքի եկեղեցում: Իրենից հետո թագավորեց որդին, մի անխելք պատանի, որի անունը նույնպես ժոսլին էր: Այդ տարի մեռավ նաև Երուսաղեմի Բաղդուին թագավորը: Նրա փոխարեն գահակալեց իր փեսան՝ սիր²²⁶ Ֆուլքը, որին, ինչպես վերը նշեցինք, նա թագավոր էր կարգել ղեռ իր կենդանության օրոք: Իսկ Անտիոքում Բոհեմունդի որդի Բոհեմունդի մահվանից հետո թագավորեց Պուատվինը²²⁷, որդին [պվագ] Պուատվինի, որն, ինչպես վերը նշեցինք, ելել էր արշավի և հոռոմոց երկրում իր գորբերի շախչախումից հետո վերադարձել իր երկիրը: ||

104

303. Ասորեստանում, Մոսսուլում և ողջ Միջագետքում Չանգիի²²³ տիրապետության սկզբնավորման մասին

Երբ Ռախբայում, ինչպես վերը շարադրեցինք, մեռավ վերջին Բուրսուխը, մեծ սուլթանը 1443 (1132) թվականին արևելքի ղուրազուխ նշանակեց Չանգիին, որը որդին էր Աղ-Սնդուրի: Վերջինս Բուլանի ընկերն էր, որին հիշել ենք վերը՝ ֆրանկների արշավանքի մասին [պատմելուց] սուաշ: Սրանց սպանել էր Տուտուշը՝ կոշված նաև Թաշուլմուլուք²²⁹, այսինքն՝ արքայական թագ: Իսկ սուլթանը, որ գտնվում էր Բաղդադում, Մասուդն²³⁰ էր՝ Սինջարշահ մեծ սուլթանի եղբորորդին: Սինջարշահը որդին էր Աբուլֆաթահի, որ կոշվում էր նաև Մելիքշահ: Վերջինս ղեռ Փիլարտոս Դոմեստիկոսի ժամանակներում ելել գրավել էր Ասորիքը և Անտիոքում նշանակել Յադի Սիանին, Ղուհայում՝ Բուլանին, իսկ Դամասկոսում՝ Տուղտեգինին: Սբուլֆաթահի որդի Սինջարշահը ծնվել էր մեծ տիրուհուց, երբ պաշարել էին Շիգգարը, այսինքն՝ Սինջարը²³¹, այդ պատճառով էլ նա կոչվել էր Սինջարշահ: Մասուդը՝ Սինջարշահի եղբորորդին, այդ ժամանակ տիրում էր Սալահանի ու Խորասանի երկրներին, Իրաքին, Բաղդադին ու ողջ հարավարևելյան շրջաններին: Ասորեստանից արևմուտք և հյուսիս ընկած բոլոր երկրները ենթարկվում էին նրան: Նրա հրամանով էր նշանակվում Մոսսուլի առաջնորդը, որ կոշվում էր զորագլուխ: Իսկ թուրքերը նրան անվանում էին աթաբեկ²³²: Վերջինս իշխում էր ամբողջ Միջագետքում, հյուսիսում, Հալեպում և ողջ Փյունիկիայում:

Այդ ժամանակ Մոսսուլի նշանավոր մարդիկ էին Սալահեդդինը²³³, Նասրեդդինը²³⁴ և Զեյնեդդին Ալին²³⁵, որոնք սուլթանի կողմից ճանաչված թուրքեր էին: Երբ Բուրսուխը մեռավ, նրանք էին վարում ողջ արևելքի գործերը և իրենք էին, որ հորդորեցին սուլ-

95 թանին զորագլուխ նշանակել Աղ-Սնդուրի որդի Զանգիին, որ կոչվում էր Իմադեղդին: Այդպես էլ եղավ. նա Զանգիին զորագլուխ նշանակեց Ասորեստանի և ողջ Միջագետքի, Ասորիքի || ու Փյունիկիայի վրա: Սուլթան Մասուդը նրա մոտ ուղարկեց իր երկու անչափահաս եղբորորդիներին, որպեսզի նրանք լինեն երկրների տերերը, իսկ Զանգին՝ նրանց զորահրամանատարը: Այդ ժամանակ Սպահանում մեռավ Մասուդ մեծ սուլթանը, որի մասին խոսեցինք վերը, և նրան հաջորդեց Սուլեյմանշահը²³⁶ Համադանում.

304. Զանգիի արևմտյան արշավանքի և Շենավ²³⁷ բերդի գրավման մասին²³⁸

1443 (1132) թվականին Զանգին, իր ղորքերով արշավանքի ելնելով, եկավ Ուռհայի մոտակայքը և պաշարեց քաղաքից արևվելք գտնվող մի բերդ, որը ժամանակին ֆրանկները խլել էին Մուսի իբն Ուտայր անունով մի արաբից: Զանգին գրավեց Շենավ անունով այդ բերդը և մոտեցավ Ուռհա քաղաքին: Ապա պատդամավորներ ուղարկեց ուռհայեցիներին, թե միտք չունի պատերազմել ֆրանկների դեմ, միայն թե իր հետ համաձայնության գան: Քաղաքից նրա համար թանկարժեք իրեր, նվերներ, ուտելիք ու ըմպելիք բերեցին, և նա, անցնելով այնտեղից, գնաց Հալեպ:

305. Դամասկոսի մասին, ինչպես նաև Զանգիի կողմից Բաալբեկ ֆաղափի պաշարման մասին

Դամասկոսում իր հոր՝ Տուղտեգինի մահվանից հետո թագավորել էր Թաշուլմուլուքը²³⁹: Մակայն որոշ ժամանակ անց Թաշուլմուլուքն սպանվեց իսմայելիտների ձեռքով՝ թողնելով անչափահաս եղբայրներ ու որդիներ, որոնք իրար հետ անմիաբան էին: Թաշուլմուլուքի նշանավոր ամիրաներից մեկը, որ կոչվում էր Ռենար²⁴⁰ կառավարում էր Դամասկոսը Թաշուլմուլուքի որդիներից մեկի անունից: Մյուս որդին գրավեց Բաալբեկը՝ Իսկ Զանգի զորահրամանատարը, զորք առած, եկավ պաշարեց Բաալբեկը և հզոր քարարձակների օգնությամբ, որոնք գիշեր-ցերեկ թակում էին այդ զարմանահրաշ շինությունը, կատաղի հարձակումներ գործեց նրա դեմ: Ամեն օր հազարավոր մեծամեծ քարեր էին արձակվում || նրա վրա, մինչև որ ստիպված հանձնեցին բերդը: Այսպես Զանգին տիրեց անառիկ Բաալբեկին, որից հետո սկսեց տևական պատերազմ մղել Դամասկոսի դեմ:

106

306. Երուսաղեմի թագավորի պարտությունը Զանգիից և
ապա նրանց միջև կնքված հաշտությունը

Ունարը՝ Դամասկոսի ամիրան, տեսնելով, որ Զանգին հզորացել և սկսել է նեղութիւն պատճառել իրեն, իսկ ինքը չի կարող նրան դիմադրել, դիմեց Երուսաղեմի թագավորին և նրան բազում ոսկի նվիրեց, որպեսզի օգնութեան հասնի և վանի Զանգիին: Թագավորը զորք հավաքեց և եկավ մոտեցավ Զանգիին: Իսկ Զանգին խորամանկաբար փախուստ ձեռնարկեց, խույս տվեց թագավորից, մինչև որ սա թափանցեց երկրի խորքերը: Այնժամ Զանգին թափով ետ դարձավ, և թագավորը պարտվեց: Նրա զորքերը թիկունք դարձրին, և թուրքերն սկսեցին նրանց սրի քաշել: Թագավորը քչերի հետ ապաստանեց Տրիպոլիի սահմաններում գտնվող մի բերդում, որ կոչվում է Հիսն ալ-Աքրազ²⁴¹, և իր մարդկանց հետ թաքնվեց այնտեղ: Զանգին եկավ պաշարից այդ բերդը և սաստիկ նեղութեան մեջ դրեց նրան. ներսում եղողները մինչև իսկ առանց աղի կերան իրենց ձիերն ու գրաստները:

Թագավորը լուր ուղարկեց Անտիոքի տեր Պուատվինին և Ուոհայի իշխան կրտսեր Ժոսիին, որպեսզի զորք հավաքեն և գան իրեն օգնութեան: Սակայն մինչ նրանք կհավաքվեին ու կգային, թագավորը խիստ նեղութեան մեջ ընկավ: Զանգին էլ լսելով, որ ֆրանկները ելել ու զորք հավաքած գալիս են, իսկ թագավորը նեղութեան մեջ է, վերջինիս մոտ պատգամավոր ուղարկեց՝ հետը դնելով պատվական ու ընտիր կերակուրներ, և նրա նկատմամբ բարեկամութիւն ու միաբանութիւն ցույց տվեց: Նրանք ուխտ կնքեցին, խոստումներ ու երդումներ [փոխանակեցին], և Զանգին մեկնեց այնտեղից: Քիչ անց հասան ֆրանկ զորքերը և ուղեցին հետապնդել Զանգիին, սակայն թագավորը թույլ շտվեց՝ Զանգիի հետ կնքած ուխտի || և երդումների պատճառով: Իսկ Զանգին, հզորացած ու զորեղացած, անընդհատ ավերում էր Դամասկոսի երկիրը՝ նվաճելով նրա բոլոր սահմանները, նույնիսկ Թագավորը, որ գտնվում է անապատում:

307. Աթարիբի առումը

Ֆրանկների թագավորի հետ հաշտութիւն կնքելուց հետո Զանգին այլևս չէր մարտնչում նրանց հետ: Նա կռիվ ու պատերազմ էր մղում միայն մահմեդականների երկրները զավթելու և իրեն ենթարկելու համար: Հալեպի մոտերքում մի բերդ կար, որ կոչվում էր Աթարիբ, մի ուրիշն էլ՝ Հադղանա²⁴², որոնց տիրում էր

Ֆրանկ իշխաններից մեկը: Սա զորքով եկավ ավազակություններ գործեց Հալեպի շրջակայքում, և ավար ձեռք բերելով, հեռացավ: Իմանալով այդ՝ Զանգին վերցրեց իր զորքերը և գնաց պաշարեց այդ երկու բերդերը: Երբ նեղ դրուժյան մեջ ընկան, նրանք երաշխիքներ խնդրեցին իրենց կյանքի համար: Զանգին նենգամտորեն երդվեց ու առաց. «Երդվում եմ այսինչ-այնինչով, որ ձեզ կանցկացնեմ Անտիոքի դարպասով»: Երբ բացեցին դռները նա դուրս հանեց տղամարդկանց, կանանց, տղաների ու աղջիկների ողջ բազմությունը, բուլորին բերեց հասցրեց Հալեպ և անցկացրեց Անտիոքի դարպաս կոչվող դռնով, այսպիսով կատարելով իր երդումը: Ապա բոլոր տղամարդկանց սրի մատնեց, իսկ կանանց ու երեխաներին ստրուկ ու աղախին դարձրեց:

308. Կապադովկիա երկրի և Ղազիի ուղիների մասին

Դանիշմենդի որդի Ղազիի մահվանից հետո նրա պետության մեջ թագավորեց իր որդին՝ Մահմուդը²⁴³: Սա զորեղացավ ու հզորացավ, և նրա լուծը սոսկալի դարձավ կապադովկյան երկրներում, մանավանդ մելիտենացիների համար, որոնց նեղում էր հարկերով ու տուրքերով: Սակայն աստված նրան պատժեց վատ հիվանդությամբ, և նա մեռավ: Ղազին ուներ ևս երկու որդի, մեկի անունը՝ Դաուլա²⁴⁴, մյուսինը՝ Յաղուբ²⁴⁵: Երբ Մահմուդը մեռավ, նրանից հետո թագավորեց Դաուլան:

309. Հունաց Հովհաննես կայսեր դեպի Անտիոք ձեռնարկած արշավանքի մասին //

108

Այդ ժամանակ, 1446 (1135) թվականին, հունաց կայսրը, որ Հովհաննեսն էր, նախանձախնդրությունից զրդված որոշեց արշավել դեպի Ասորիք: Հույներից, ինչպես նաև արաման²⁴⁶ և հունգար ֆրանկներից մոտ շորսհարչուրհազարանոց զորք հավաքելով՝ պատրաստվեց շարժվել դեպի Կիլիկիո ծովափը: Նա ուզում էր օգտվել ծովից և բեռները տեղափոխել նավերով, որպեսզի նրանք անընդհատ հացահատիկ և պարեն բերեին իր զորքերի համար:

Այդ ժամանակ Կիլիկիայում իշխում էր Ռուբենի որդի Լևոն²⁴⁷ անունով հայը, որը Ուոհայի իշխան կրտսեր Ժոսլինի քեռին էր: Այս Լևոնը հպարտացել ու մեծամտացել էր: Երբ, ինչպես վերը նշեցինք, նրա երկրում Ղազիի ձեռքով սպանվեց Սնտիոքի իշխան Բոհեմունդը, նա հոխորտաց ֆրանկների վրա և, մտնելով Տագրա²⁴⁸ անունը կրող ծովափնյա շրջանները, գրավեց Տարսոնն ու

Մսիսը՝ ահագին վնաս պատճառելով ֆրանկներին: Անտիոքում Պուատվինի գահակալումից հետո նրանց թշնամությունը շարունակվեց: Լևոնը մշտապես ավազակություններ էր գործում նաև հունաց սահմաններում, այդ պատճառով հունաց կայսրը խիստ զայրացած էր նրա վրա:

109 Հունաց կայսեր արշավանքի ժամանակ Պուատվինը նույնպես զորք հավաքեց և մտավ կողոպտելու Կիլիկիո երկիրը: Լևոնը պատրաստվեց ճակատամարտ տալ նրան, սակայն աննկատելիորեն ընկավ ֆրանկների պատրաստած ծուղակը և բռնվեց: Պուատվինը նրան շղթայված բերեց Անտիոք: Եվ մինչդեռ նա բանտարկված էր Անտիոքում հունական զորքերը հասան մինչև Կիլիկիո դռները: Կայսրը պատգամավորներ ուղարկեց ֆրանկների մոտ և հաղորդեց. «Ով հնազանդվում է ինձ և բարի կամենում, թող վեր կենա դա՛ ինձ պատիվ տալու»: Ուռհայի տեր Ժոսլինն ու Պուատվինը՝ Անտիոքից, եկան ողջունելու կայսրին, որին հանդիպելով Տարսոնից վեր՝ || ուրախությամբ ընդունվեցին նրա կողմից և վերադարձան իրենց քաղաքները: Հունաց կայսրը գրավեց Տարսոնը, Մսիսը և Ադանան, պաշարեց ու գրոհով նվաճեց նաև Անարզաբան, ապա շարժվեց դեպի Անտիոքի խորին հարթավայրը: Նրա զորքերը ցրվեցին այս ու այն կողմ՝ լեռներում ու դաշտերում, և բազում շարիքներ գործեցին քրիստոնյաների գյուղերում: Անտիոքի և Ուռհայի իշխանները նորից եկան ողջունելու նրան: Սակայն հունաց կայսրը պահանջեց, որ Անտիոքը տրամադրեն իրեն՝ մոտը նդած բռններն ու գանձերը այնտեղ պահելու համար, մինչև նա նվաճի մահմեդականների երկրները և փոխհատուցի տիրոջը: Անտիոքի տերը դրանից խոռվեց:

Հունաց կայսրը արշավանքի էր ելել ահռելի զորքով ու անսպառ դանձերով, իր շորս որդիների, եղբայրների, փեսաների և ողջ շքախմբի հետ միասին: Նա ուխտել էր մինչև կյանքի վերջը ետ չդառնալ իր զորքերի, կեսարների, սերաստոսների, պատրիկների²⁴⁹ և մյուս մեծամեծների հետ, օանի դեռ խոշոր հաղթանակ չի տարել: Նա այդպես էր խորհում: Սակայն հաղթանակ ու կարողություն տվողը և թագավորների գործերը տնօրինողն աստված է:

Երբ Պուատվինը՝ Անտիոքի իշխանը, վերադարձավ իր քաղաքը, ազատ արձակեց Լևոն հային, որը գնաց իր երկիրը: Լևոնը եկավ և աղերսանքով ներկայացավ հունաց կայսրին: Սակայն վերջինս շղթայեց նրան և երեխաների ու հայրազատների հետ ուղարկեց Կոստանդնուպոլիս:

400. Կիլիկիո երկրի Ադանա քաղաքի առումը և նրա բնակիչների կոտորածը թուրքերի ձեռքով²⁵⁰

Մինչ կայսրը բանակ էր դրել Անտիոքի հարթավայրում, և Ֆրանկները ձևականորեն՝ առանց ուղղամտության համագործակցում էին նրա հետ, հանկարծ Ադանա քաղաքից ցավալի գույժ ստացվեց՝ նրան հասած դառնագույն փորձանքի մասին: Ադանա քաղաքը շատ հարուստ էր օրիստոնյաներով, և նրա ողջ բնակչությունը հակօբեկներ էին: || Այնտեղի մետրապոլիտն այդ ժամանակ Հովհաննեսն էր՝ Իշո բար-Արիքան՝ Ուռհայից: Երբ հունաց կայսրը տիրեց նրանց, այնտեղ պահապան զորքեր թողնելով՝ գնաց Անտիոքի երկիրը: Նրանք ուրախացան, թե հնազանդվելով հույներին՝ վերջապես հանգիստ գտան և ազատվեցին Ֆրանկների դառն հարկերից: Եվ մինչդեռ այսպես հանգիստ ու անհոգ էին, կիրակի արվա լուսաբացին թուրքերը վրա հասան ու շրջապատեցին նրանց, և անմիջապես խելահեղ կռիվ սկսելով, լափող կրակի նման հարձակում ծավալեցին: Ապա պարիսպներին սանդուղքներ հենելով՝ սկսեցին վեր մագլցել: Եվ մինչ մի կողմից վանում էին նրանց, նրանք հայտնվում էին մյուս կողմից: Ներսում գտնվողները թուլացան նետերի ու քարերի հարվածներից և շրջապատող հսկայական կրակից: Թեև առավոտից մինչև կեսօր դիմացան այդ ննդությանը, բայց Տերը նրանցից երես թեքեց, և նրանք մատնվեցին թշնամու ձեռքը:

Դա այնպես զարմանալիորեն կատարվեց, որ լսողները չեն հավատա: Թուրքերից մեկը, մագլցելով պարսպին հենված սանդուղքով, հասավ մինչև նրա վերին ծայրը, բայց պարիսպը դեռ բարձր էր նրանից: Այնտեղ սակայն մի ճյուղ գտնվեց, որ աճել էր պարսպի վրա: Թուրքը բռնեց այն ու բարձրացավ կանգնեց՝ նրա վրա: Պաշարչալիներից մեկը, որ գտնվում էր պարսպի վրա, նրա գլխավերևում, փորձեց իր ձեռքում եղած նիզակով խանգարել հակառակորդին և նրան վայր գցել: Սակայն թուրքը ձգեց ձեռքը և բռնեց նիզակը: Վերևում կանգնածը սկսեց ուժգնորեն այն քաշել իր կողմը՝ նրա ձեռքից ազատելու համար: Թուրքն այսպես կախված [նիզակից], բարձրացավ պարիսպը և թուրը օաշեց այդ գծբախտի վրա, որն ուժատված ընկավ: Իսկ մյուսներին, || ոտ մոտ էին կանգնած, ահուղող համակեց, և նրանք սկսեցին փախչել: Թուրքերը ոգևորված բարձրացան առաջինի ետևից և գրավեցին պարիսպը: Մի ժամում պարիսպը լցվեց թուրքերով, որոնք

այնուհետև իջան քաղաք և բացեցին դարպասները: Թուրքական զորքը ներս մտավ:

Աստված զայրացավ Ադանայի ու նրա բնակիչների վրա: [Թուրքերը] ողջ ժողովրդին դուրս հանեցին, տղամարդկանց ծնկի բերելով սրի մատնեցին, ապա սկսեցին կողոպտել տները, սրահներն ու եկեղեցիները՝ զավթելով ահագին հարստություն: Տղաներին ու աղջիկներին խումբ-խումբ գերի տարան: Բռնվեցին Նաև մետրապոլիտը, քահանաները և երիտասարդ սարկավազները, որոնց կապկապելով սլաքաններով՝ նույնպես դառն գերության քշեցին: Ապա քաղաքը սրի մատնելով՝ այն վերածեցին անապատի և վերադարձան իրենց երկիրը:

Երբ այդ լուրը հասավ հունաց կայսրին, նրա զորքերը ոտքի ելան և ընկան թուրքերի ետևից, բայց չհասան նրանց, քանի որ արդեն յոթ օր էր անցել: Գերիներին բերին վաճառեցին տարբեր վայրերում, մանավանդ Մելիտենեում: Իսկ ուլքեր փրկվել էին, վերադարձան քաղաք: Հովհաննես կայսրը հոգ տարավ նրանց մասին և ապահովեց ապրուստի միջոցներով: Ադանայի աղետը տեղի ունեցավ հունաց կայսեր արշավի ելնելուց հինգ ամիս հետո. Շուտով վրա հասավ ձմեռը և կայսրն իր զորքերով ձմեռեց Կիլիկիայում: Նրանց մեջ հիվանդություններ և համաճարակներ տարածվեցին:

401. Ուռնայեցիների փառավանի ոչնչացումը և մի մեծ բազմության կոտորածն ու կողոպուտը Տափթիլում²⁵¹

Տիմուրտաշի կողմից

Այդ տարվա հոկտեմբեր ամսի վերջին, մինչ կայսրը գտնվում էր Կիլիկիայում, Սամոսատ քաղաքում մի մեծ բազմություն հավաքվեց՝ Ուռնա գնալու համար: Եթե մեծ բազմություն չէր հավաքվում, չէին կարողանում գնալ՝ վախենալով թշնամիներից, որոնք դարան մտած շարունակ հսկում էին նրանց ճանապարհները: Այսպես ուրեմն, հավաքվեց հացահատիկ, գինի և ապրուստի միջոցներ բարձած մի մեծ բազմություն՝ || անհամար մարդկանցով, գրաստներով ու ամենայն անհրաժեշտ բեռներով, որոնց ուղեկցում էին ֆրանկ հեծյալներն ու հետևակայիները:

1447 (1136) թվականի հոկտեմբերի 29-ի ուրբաթ օրվա լույս գիշերը, երբ նրանք անցել էին Եփրատը և մի քանի մղոն առաջացել դեպի Ուռնա, տաս հազար հեծյալներով վրա հասան Մարդինի և Նփրկերտի ամիրա Տիմուրտաշի՝ Ղազի Արտուքյանի որդու

հրոսակները և ողջ գիշեր մարտնչեցին նրանց հետ: Երբ բացվեց այդ դժբախտ օրվա առավոտը, մինչև կեսօր կարողացան մի կերպ դիմանալ: Աստվածային ճշմարտությունն այդ քարավանի վրա որոտաց Տափթիլ կոչվող գյուղի մոտ՝ Ուռհայի ճանապարհին: Մերկացրած սրերով հարձակման անցնելով՝ [թուրքերը] անհաշիվ թվով մարդկանց կոտորեցին, հազարներով գերի վերցրին և անըստ հարստություն, անթիվ գրաստներ՝ ձիեր, ջորիներ ու էշեր խլեցին: Ապա առնելով խումբ-խումբ կապկալած գերիներին՝ նրանց հասցրին Ուռհայի դարպասին ու պարիսպներին և, դիմելով ուռհայեցիներին, ասացին. «Ո՛վ թշվառներ, ի՛նչ եք սպասում, հանձնեցեք քաղաքը, և մենք կազատենք ձե՛ր գերիներին»: Սակայն [Տիմուրտաշի] ցանկությունը բավարարություն չտվին, և նա ելավ գնաց, քանի որ քաղաքը պաշարելու համար անհրաժեշտ ռազմական գործիքներ չէր պատրաստել:

402. Հունաց կայսեր թափանցումը ասորոց երկրները

Երբ ձմեռն անցավ, և եկավ գարունը, հունաց կայսրը պատրաստվեց մտնել ասորոց երկրները: Նա լուր ուղարկեց Ֆրանկ իշխաններին, որպեսզի հավաքվեն իր մոտ: Ապա ելավ գնաց Մարաշ²⁵², Տլուր, Այնթապ²⁵³ ու Թլպաշար և ի վերջո եկավ Մաբբուլ: Այնուհետև վերցնելով Ուռհայի տեր ժոսլինին, նրան ստիպեց պաշարել Մաբբուլի և Հալեպի միջև գտնվող Բուզաա²⁵⁴ անունով բերդը: Գրավելով բերդը՝ կայսրն այն կողոպուտի մատնեց: Իսկ հետո, նրա տերերին գերեվարելով, բերդը հանձնեց ժոսլինին: //

113

403. Շիզար²⁵⁵ անառիկ բերդի պաշարումը հունաց կայսեր կողմից

1448 (1137) թվականին մեկնելով Բուզաայից, նրանք ուղըղվեցին դեպի Հալեպ և անհամար մարդկանցով ու զորքերով մորեխի նման հայտնվեցին այնտեղ: Հալեպցիների սիրտը դողաց քանի որ կարծեցին, թե պատրաստվում են պաշարել իրենց: Եթե իսկապես պաշարեին Հալեպը, կարող էին կարճ ժամանակում գրավել այն: Սակայն օրհնյալ Ֆրանկները, որոնք բարի չէին տրամադրված հունաց կայսեր նկատմամբ և նրա հետ համագործակցում էին կեղծ սիրալիրությամբ, խորհուրդ չտվին ավյալ պահին պաշարել Հալեպը: Նրանք մի շարամիտ և կործանարար առաջարկ արեցին, որ նա գնա պաշարի Շիզար անառիկ բերդը: Դա մի ամուր բերդ էր, կառուցված բարձր լեռան գագաթին, որի ետևում լեռան

լանջերով մի գետ էր հոսում: Նրան տիրում էին պատվական մարդիկ՝ Մունկիդի որդիներ²⁰⁶ կոչվող արաբներից: Սրանք ցեղակիցներն էին Կալա-Ջաբարի տիրոջ, որի երաշխավորությամբ, ինչպես վերը նշեցինք, Մոսուլից փրկագնվել էր Բաղդուին իշխանը Բնավորությամբ բարի ու օտարասեր մարդիկ էին և միշտ էլ լավ միջնորդներ էին հանդիսանում:

114 Զանգին, որ այդ ժամանակ գտնվում էր Հալեպում, տեսնելով հույների ու ֆրանկների ձախորդ քայլը, խիստ ուրախացավ քանի որ նախ՝ գիտեր, որ նրանք ճիշտ չեն վարվում, և երկրորդ՝ որ պատերազմն առժամանակ հեռացավ իրենից: Եվ մինչդեռ նրանք պաշարել էին Շիգար բերդը, Զանգին քաջաբար հսկում էր իր սահմանները և մոտենում հույների ճամբարին: Երբ հույները, հարձակվելով բերդի վրա, ոչինչ չկարողացան անել, նրանց զորքերն սկսեցին նեղվել [սլարենի] պակասից, քանի որ նրանց մոտ մի անհամար բազմություն էր հավաքվել: Իսկ Զանգին խելամտորեն խանգարում և հսկում էր, որ նրանք ոչինչ չստանան: Երբ կարիքը բանակում սաստկացավ, ժամանակը ձգձգվեց, և հնար չգտան բերդը գրոհով գրավելու, || կայսրը հասկացավ ֆրանկների նենգությունը, որ նրանք իր ժամանակը վատնելու համար են իրեն բերել և պաշարել տվել այդ բերդը: Ներսիսներն իրենց ճերթի պատգամավորներ ուղարկեցին հունաց կայսեր մոտ և ասացին. «Ֆրանկները քեզ խիստ մոլորեցրել են, ո՛վ արքա, բերելով և պաշարել տալով այս բերդը: Մենք ոչ ոքի վնաս չենք պատճառում և չենք վշտացնում զբնաստեղյաներին»: Եվ նրան ուղարկեցին նվերներ ու պարգևներ, ոսկուց և արծաթից պատրաստված եկնդեցական սևոթներ, ինչպես էակ ու կեղեն խաչեր, որ հույն թագավորների դեմ իրենց նախնիների տարած հաղթանակների ժամանակներից պատում էին իրենց մոտ. Կայսրը մեկնեց Շիգարից ու եկավ Անտիոք, իսկ այնտեղից գնաց Անարզարա՝ վշտացած այն բանից, որ ողջ ամառը ոչինչ չէր աշել:

404. Թե ինչպես Բուզաան և որից ընկավ մահմեդականների ձեռք, և նրա գերիները փրկվեցին ստրկությունից

Զանգին ուղղվեց դեպի Բուզաա և, գրավելով այն, կոտորեց այնտեղ գտնվող բոլոր ֆրանկ զինվորներին: Ինչ վերաբերում է այնտեղից գերի տարված մարդկանց, նրանք գտնվում էին Աղադ ամրոցում: Պարենի պակասի պատճառով ամեն օր նրանց հանում էին ուրուի դաշտերը՝ սնվելու: Զանգին մի ուժեղ զորագունդ ուղար-

կեց, որը դարանակալեց նրանց: Երբ [գերիները] ցրվեցին դաշտերում, նրանք փակեցին ելումուտի ճանապարհները և բոլորին հավաքեցին: Նրանց հետ եղած պահապաններից շատերն սպանվեցին, իսկ գերիները փրկվեցին և եկան Բուզաա:

405. Հունաց կայսեր որդիների մահը և նրա ամոթալի վերադարձն իր երկիրը

Մինչ հունաց կայսրը նստած էր Կիլիկիայում, մեռավ նրա անդրանիկ որդին՝ Ալեքսը: Նրան զմոսեցին և ուղարկեցին մայրաքաղաք: Որոշ ժամանակ անց մեռավ նաև մյուս որդին, և նրան էլ զմոսելով մայրաքաղաք ուղարկեցին: Կայսրը՝ խիստ վշտացած
5 նույնպես վերադարձավ // Կոստանդնուպոլիս, մահմեդականներից գրավել Ղարոզանալով անգամ մի տուն և շտանելով ոչ մի հաղթանակ:

406. Դեսպի Կիլիկիա հունաց կայսեր ձեռնարկած երկրորդ արշավանքի և նրա մահվան մասին²⁵⁷

Հաջորդ տարի հունաց Հովհաննես կայսրը, նորից պատրաստութուն տեսնելով, ոտքի կանգնեց և եկավ մինչև Տարսոն: Նա նավաքեց Ֆրանկ թագավորներին և նրանց կշտամբեց նախորդ դեպքերի համար: Հետո որոշեց նրանց հետ խնամութուն հաստատել՝ ամուր կապեր ապահովելու նպատակով: Եվ մինչ խորհում էր դրա մասին, մի օր զվարճանալու համար գնաց որսի: Նրա առաջ մի եղնիկ հաշտնվեց, և նա լարեց նետաղեղը՝ առջևից փախչող որսին խփելու համար: Սակայն սայրը քսվեց նրա ձախ ձեռքին և, մի փոքր բերձելով այն, վերք առաջադրեց Դրանից հետո նրա թևն ամբողջովին ուռավ, և մի քանի օրից նա մեռավ: Նրա մեռ էր գտնվում իր Մանուել²⁵⁸ անունով փոքր որդին, որին էլ կայսր հոշակեց, քանի դեռ ողջ էր: Նրա զինվորները զմոսեցին նրան և, վերցնելով նաև որդուն, մեծ սգով վերադարձան Կոստանդնուպոլիս:

Այդ ժամանակ՝ 1449 (1138) թվականին ուժեղ երկշաշարժ տեղի ունեցավ, և բազմաթիվ քաղաքներ կործանվեցին, մանավանդ Կիլիկիայում և Ասորիքում: Աթարիբ ամուր բերդը գետնին հավասարվեց, կարծես երբեք գոյութուն չէր ունեցել: Սակայն Երուսաղեմը շտուժեց: Նույն ժամանակ մեռավ Երուսաղեմի թագավորը և գահակալեց նրա որդին՝ Բաղդուլինը²⁵⁹:

407. Ալամանաց²⁶⁰ թագավորի²⁶¹ արշավանքն իր
զորքերի հետ²⁶²

116 1455 (1144) թվականին²⁶³ ալամանաց թագավորը արշավանքի ելավ երկու հարյուր իննսունհինգ հազար ֆրանկների ուղեկցությամբ: Նրա հետ էր նաև մի այլ ֆրանկ թագավոր²⁶⁴, հարյուր հազար հոգով: Նրանք եկան մինչև Կոստանդնուպոլիս և հունաց կայսրից ՚՚ ուղեկիցներ խնդրեցին, որպեսզի իրենց առաջնորդեն ցամաքային ճանապարհով: Իսկ կայսրը հույների վատ սովորության համաձայն՝ նրանց հետ մարդիկ ուղարկեց և հրամայեց, որպեսզի նրանց մոլորեցնեն ամայի ճանապարհներում: Ապա լուր ուղարկեց Կապադովկիայի թուրքերին, որպեսզի կորստյան մատնեն նրանց: Ուղեկցելով նրանց և տաս օր քայլելով առջևներից՝ այդ առաջնորդողները նրանց բերին մի անբնակ անապատ ու նտ դարձան: Կարիքն սկսեց նեղել դժբախտ ֆրանկներին: Չկար մի քաղաք կամ վայր, որտեղ կարողանային որևէ բան գնել ու դիմանալ: Նրանք թուլացան քաղցից և տոշորվեցին ծարավից Ասլավրա հասան թուրքական զորքերը և հնձվորների նման ընկան նրանց վրա: Թագավորները փոքրաթիվ զորքերի հետ կարողացան փրկվել և ծովով գնալ Իտալիա, որտեղից նավով եկան Անտիոք: Թուրքերը ոսկու և արծաթի անսպառ հարստություն խլեցին և բազմաթիվ գերիներ ձեռք բերին: Այսպիսի դառը վախճան ունեցավ այդ թագավորների արշավանքը օրհնյալ հույների նենգության պատճառով

408. Ալֆոնս²⁶⁵ անունով մի այլ թագավորի արշավանքը և
նրա վախճանը

Այդ ժամանակ Ալֆոնս անունով մի այլ թագավոր, արշավանքի ելնելով, հազար ընտիր հեծյալների հետ նավով հասավ Աքքա²⁶⁶ քաղաքը Լսելով այդ լուրը, Տրիպոլիի կոմսը եկավ Աքքա՝ նրան տեսնելու: Բայց երբ իմացավ, որ իր ազգականներից է, կոմսը վախեցավ, որ նա կարող է իր երկրում ժառանգություն պահանջել: Այդ պատճառով վերցնելով նրան ու բերելով Տրիպոլի՝ նրա պատվին ընթրիք կազմակերպեց և մահադեղ տվեց: Այդպես, [Սլֆոնսը] հրաժեշտ տվեց իր անցավոր կյանքին:

409. Դամասկոս Բաղաֆի պաշարումը ֆրանկների կողմից

Այդ ժամանակ Երուսաղեմի թագավոր Բաղդուխներ, նրա եղբայր Ամորին²⁶⁷, ալամանաց թագավորն ու նրա հետ արշավանքի

117 ելած մյուս թագավորը պատրաստութիւն տեսան և իրենց զորքերով եկան պաշարեցին // Դամասկոսը: Ալամանաց թագավորը կատաղի հարձակումներ գործեց քաղաքի վրա, մինչև որ պաշարվածները նեղութեան մեջ ընկան և պատրաստակամութիւն հայտնեցին հանձնել քաղաքը: Սակայն Երուսաղեմի թագավորը նախանձկոտ քրիստոնյաների վատ սովորութեամբ զոհ չէր դրանից: Նա վախենում էր, որ ալամանաց թագավորը տիրելով Դամասկոսին, իրեն կենթարկեր նաև Պաղեստինն ու Երուսաղեմը: Եվ տեսնելով, որ պաշարվածներն ակնհայտորեն պատրաստվում են հանձնվել, նա թարուն լուր ուղարկեց նրանց՝ ասելով. «Ի՞նչ կտաք ինձ, եթե վերցնեմ թագավորներին ու հեռացնեմ նրանց քաղաքից»: Ներսիսներն ուրախացան և որոշեցին նրան տալ հարյուր հազար դինար ոսկով: Այնժամ Բաղդուինն ասաց ալամանաց թագավորին. «Ավելի լավ կլինի, եթե վերացնենք պաշարումը և հետո գանք երկրորդ անգամ պաշարենք քաղաքը»: Ալամանաց թագավորը հավատաց նրան: Երբ մեկնեցին, տեղավորվեցին մի այնպիսի վայրում, որտեղ ոչ մի հարմարութիւն, նույնիսկ ջուր չկար: Այսպես [Բաղդուինը] շարշարեց նրանց ու շեղեց պատերազմական գործից: Ալամանաց թագավորը խռովեց և ի վերջո վեր կացավ գնաց Աքքա: Մյուս ֆրանկ թագավորի հետ միասին նրանք ծով դուրս եկան և, առանց որևէ բան արած լինելու, գնացին իրենց երկիրը: Իսկ Բաղդուին թագավորը, ստանալով հարյուր հազար դինարը, տեսավ, որ բոլորն էլ պղնձյա են, հմտորեն պատրաստված դամասկացիների կողմից՝ իր անմտութեան վրա ծիծաղելու համար:

410. Զանգիի պատերազմը Արտուֆյանների դեմ և նրա գծաուրջունը ժոսլին ուռհայեցու հետ

118 Զանգին՝ Արևելքի երկրների և Հալեպի տիրակալն ու թուրքերի մեծ զորահրամանատարը, այլևս մտահոգութիւն չունենալով քրիստոնյա թագավորների կողմից, անցավ Եփրատը և սկսեց պատերազմել Արտուքի սերունդների՝ Տիմուրտաշի և Դաուդի որդիների դեմ, ասպատակելով նրանց սահմանները. նա գրավեց Դուրա քաղաքը, Թլմոզը²⁶⁸, // Զամալինն ու ողջ Շաբաբտանը²⁶⁹, ինչպես նաև՝ Խանինը, Արկնինը²⁷⁰ և Խամիմթանը²⁷¹: Արտուքյանները նեղ դրութեան մեջ ընկան և գնացին օգնութիւն խնդրեցին Ղուհայի տեր ժոսլինից՝ նրան զիջելով Կարկառի երկրում գտնվող Պեպու բերդը²⁷²: Վերջինս պատրաստվեց նրանց հետ միասին պա-

տերազմելու Զանգիի դեմ: Իսկ Զանգին, որն, ինչպես վերը նշեցինք, խորամանկ և խելացի մարդ էր, Արտուքյանների հետ հաշտություն կնքեց: Սրանք իրենք էլ շահագրգռված էին հաշտությամբ, քանի որ ժոսլինը չկարողացավ նրանց օգնել, ինչպես հույս ունեին: Իսկ Զանգիի հոգում զայրույթ և ատելություն կուտակվեց ժոսլինի նկատմամբ, և նա շարունակ առիթ էր որոնում Ուոհան գրավելու համար: Նա անընդհատ լրտեսներ էր ուղարկում իմանալու, թե երբ է այն դատարկվելու գորքերից: Խառան քաղաքում ապրում էր մի աղնվական մարդ՝ Փաղալլահ իբն Զաֆար անունով, որը արաբների ցեղապետն էր և ուոհայեցիների թշնամին: Լրտեսները մեշտ նրա մոտ էին ապաստանում, և նա առաջնորդում էր նրանց: Իսկ Զանգին այդ ժամանակ պաշարել էր Ամիդ քաղաքը:

411. Ուոհայի պաշարումը Զանգիի կողմից

Այդ ժամանակ Ուոհայի տեր ժոսլինը հավաքեց իր բոլոր զորքերը և գնաց ավաղակություններ գործելու Եփրատի առափնյա շրջաններում՝ Բալխսի²⁷³ և Ռակկայի²⁷⁴ մոտ: Խառանի վերոհիշյալ կառավարիչը շտապ լուր ուղարկեց Զանգիին, որը պաշարել էր Ամիդը, և հայտնեց նրան, որ քաղաքը դատարկվել է գորքերից: Իր զինվորներից ամենամարտունակներին՝ վերոհիշյալ Սալահեդդին անունով խիզախ մարդու գլխավորությամբ, Զանգին անմիջապես ուղարկեց Ուոհա՝ այն գրավելու հույսով: Իսկ եթե դա չհաջողվեր, նրանք պետք է պաշարեին քաղաքը և ստուգեին նրա ուժը: Եթե հանգիստին նրա կորովին ու զորությանը²⁷⁵, պետք է ևս դառնային, իսկ եթե ոչ՝ պետք է նրա շուրջը հսկիչներ կարգեին և իրեն լուր տային, որ զար: Երբ ուղարկվածները ճանապարհ ընկան, Զանգին նույնպես հետևեց նրանց: Սկզբում այդ օրը և հաջորդ գիշերը նրանք քայլում էին արագությամբ: Եվ եթե նույն գիշերը տեղ հասնեին, կարող էին գրավել քաղաքը, քանի որ ուոհայեցիները գեռև բանից անտեղյակ էին: Սակայն Երեկոյան հորդ անձրև սկսվեց, և խավար տիրեց: Հասնելով քաղաքի մոտակայքին՝ զորքերը մոլորվեցին և, երբ լույսը բացվեց, նրանք գտնվում էին Խառանի հանապարհին: Ետ դառնալով՝ նրանք այլևս չկարողացան օգտվել անակնկալից: Քաղաքի վրա նրանք հարձակումն սկսեցին 1455 (1144) թվականի նոյեմբերի 28-ի երեքշաբթի²⁷⁶ օրվա առավոտյան: Երբ հասան քաղաքի գերեզմանատանը, պարիսպների արանքում նրանք սպանեցին մի քանի հոգու և, տես-

նելով քաղաքի թուլութիւնը, Զանգիի մոտ աղավնիներ արձակեցին, որպեսզի արագացնի իր ժամանումը: Եվ ահա հինգշաբթի²⁷⁷ օրվա առավոտյան Զանգին հասավ նրանց, և նրա հետ միասին երկնքի աստղերի լափ զորքեր հայտնվեցին, լցնելով քաղաքի շրջակա ողջ հարթութիւնը:

Նրանք խմբերով շրջապատեցին քաղաքը և իրենց վրանները խփեցին նրա շուրջը: Շատ փորձեցին վրաններ խփել նաև արտաքին պարսպից ներս: Զանգին իր վրանը խփեց քաղաքի հյուսիսային կողմում՝ ժամացույցի կոշվող դարպասի դիմաց, Խոստովանողաց²⁷⁸ տաճարից վեր գտնվող բարձունքի վրա: Նրանից դեպի արևելք խփեցին մեծ արքայազնի՝ վերը հիշատակված սուլթանի որդու վրանը, իսկ դեպի հյուսիս՝ Զամալեղդին²⁷⁹ անունը կրող մի խելացի պարսկի վրանը, որը Զանգիի պետութեան վելիբրն էր և հարկերի ու եկամուտների վերահսկիչը: Վերջինս, այդպիսով, հաստատվեց դիտակետերի բարձունքի վրա: Իսկ Սալահեղդին մեծ զորավարն ու իմաստուն առաջնորդը, որ Զանգիի բոլոր զորքերի հրամանատարն էր, իր վրանը խփեց քաղաքի արևմուտյան կողմում՝ Աղբյուրի դարպասի դիմաց, դերեզմանոցի բլրի վրա, որտեղ գտնվում է սուրբ Եփրեմի²⁸⁰ գերեզմանը: Սալահեղդինից վեր՝ Սողոմոնի հովտի եզրին, || Բարսումայի անունը կրող ցանկապատի դիմաց հաստատվել էր Արբելայի²⁸¹ և Շահրդորի²⁸² տիրակալ Զեյնեղդին Ալի Քուչուկը: Քասասի²⁸³ դարպասի արևելյան կողմից բանակել էր Դուբայս անունով մեծ ամիրան՝ Բարելոնի դիմաց փոխած ստորին երկրների տիրակալը, որը, ինչպես նշել էինք վերը, մի ժամանակ խոռվել և ապաստան էր գտել ֆրանկների մոտ: Նրանից հյուսիս, Բուզանի այգում բանակ էր դրել Զաֆարանի²⁸⁴ և Արկնինի ամիրա Աբուալի: Հյուսիս-արևելքում հաստատվել էին Պողոսակի²⁸⁵ սերունդները՝ Սևերակի²⁸⁶ և Եփրատի ափերի տերերը: Քասասի դարպասի հարավում բանակել էր Այնուզգուլան՝ Շարաքտանի տերը, նրանից էլ հարավ՝ թուրքմենների, զանազան ցեղեր: Դեպի Խառան նայող հարավային դարպասի մոտ տեղավորվել էին քրդական բազմաթիվ ցեղեր, իսկ նրանցից վեր՝ մեծ թվով արաբ և հալեպցի աշխարհազորայիներ: Արևմտյան կողմից, բերդի դիմաց, ճամբար էր խփել Մաբբուզի ամիրա Հասանը²⁸⁷:

Իսկ քաղաքը շատ թույլ էր. այնտեղ զինվորներ չկային, այլ միայն կոշկակարներ, ջուլհակներ, մետաքսագործներ, դերձակներ, քահանաներ ու սարկավազներ: Կար նաև երեք եպիսկոպոս, մեկը՝ ֆրանկ, որ կոչվում էր Պապիոս²⁸⁸ և վարում էր քաղաքի գործերը,

մեկն՝ ասորի, այն է՝ Բարսեղ բար-Շումմանան²⁸⁹, որը նույն քաղաքից էր, իսկ մյուսը՝ հայ, որի անունն էր Հովհաննես:

Խիզախաբար կռվի մեջ մտնելով, [քաղաքացիները] դիմադրում էին, որքան կարող էին: Դրսում եղողները բաբաններ տեղադրեցին, իսկ ամիրաներից ամեն մեկը քարարձակներ հաստատեց, որոնք ուժգնորեն թակում էին պարիսպը: Ապա քաղաքի հյուսիսային մասից սկսեցին գեանուղիներ փորել պարսպի և ժամացույցի դարպասի մյուս կողմում գտնվող կամրջի տակ: Փորելով, նրանք հոսան մինչև պարսպի հիմքը: Կռիվը դեռևս չէր դադարում: Զանգին շարունակ խոսք էր բացում հաշտության մասին, բայց [պաշարվածները] չէին || համոզվում: Նա շատ էր ուզում խաղաղությամբ նվաճել քաղաքը, որպեսզի այն չավերվի, և բնակչությունը շոշնշանա: Նա ասում էր. «Ո՛վ թշվառականներ, տեսնում եք, որ արդեն ձեր կյանքը փրկելու հույս չկա: Խնայեցե՛ք ուրեմն ձեզ և ձեր որդիներին, դուստրերին, կանանց ու հարսդատներին, ինչպես նաև ձեր քաղաքը, որպեսզի այն չավերվի ու չամայանա»:

Սակայն քանի որ քաղաքում չկար մի ղեկավար, որի խոսքը վճռական լիներ, և ամեն մեկն ուզում էր իր կամքով շարժվել, դրա համար նրանց գործը ձախողվեց և վատ վախճան ունեցավ: Նրանք Զանգիին պատասխանեցին խիստ խոսքերով, ծաղրուծանակով և չափից դուրս անմիտ վիրավորանքներով: Սակայն ասորոց վերոհիշյալ եպիսկոպոսը մտածեց ու խորհուրդ տվեց ֆրանկ եպիսկոպոսին՝ նամակ գրել Զանգիին և նրանից մի քանի օր խնդրել, մինչև իրենց օգնության հասնելը: Այդ բանը վերջինիս ընդունելի թվաց: Խոսելով նաև մյուս խորհրդականների հետ, նրանք, որպեսզի ձգձգեն գործը և կարողանան շունչ քաշել, գրեցին այդ նամակը և կարդացին բաղմության առջև: [Ծղեսացիները] հուսահատվել էին կյանքից, հոգնել, մաշվել ու ջլատվել գեանուղիների դեմ շինություններ կառուցելուց: Կանայք, աղջիկներն ու տղաները անասելի շափով հյուծվել էին արհեստավորներին ու շինարարներին քար, ջուր և այլ անհրաժեշտ բաներ մատուցելուց: Մանավանդ որ դրսից էլ նրանց հարվածում էին մանգոլիոններից արձակված քարերը: Սահման չկար այն դառն շարշարանքին, որին դատապարտվել էին այդ թշվառները: Ահա թե ինչու եպիսկոպոսը որոշեց դադար խնդրել՝ հուսալով շունչ օրաշել և մի փոքր հետաձգել իրենց սպառնացող վտանգը: Նրանք իրենց աչքերով տեսնում էին բաբանների հարվածներից ամենևին ճաքճքված պարիսպը, ինչպես նաև հյուսիսային կողմից փորված գեանուղին,

որի միջոցով քանդել էին պարսպի հիմքերը, տեղը փայտի ու քրջի կտորտանքներ լցրել ու արանքները կուպր, ճարպ և ծծումբ ցողել, // որպեսզի կրակը հեշտությամբ բոցավառվեր, և պարիսպը կործանվեր: Սակայն մի անկիրթ մետաքսագործ, որի անունը Հասանուն էր, ձգելով ձեռքը՝ վերցրեց նամակը և պատռեց այն: Ապա խառնվեցին իրար, և այդ հրաշալի մտահղացումը ճախողվեց: Զանգին նրանց շարունակ ասում էր. «Եթե մի քանի օր ժամկետ եք խնդրում, կհամբերենք, գուցե ձեզ օգնություն հասնի, իսկ եթե ոչ՝ հանձնվեցե՛ք ու ապոեցե՛ք»: Նա ամենևին չէր ուղում ոչնչացնել նրանց, սակայն տեսավ, որ համոզելը չի օգնում, քանի որ, ինչպես ասված է Սուրբ Գրքում, «Տերը խստացրեց փարավոնի սիրտը»՝ նրան կործանելու համար²⁹⁰:

412. Ուռհայի ողբալի առումը և նրա բնակիչների բնաջնջումը²⁹¹

Այնուհետև Զանգիի կարգադրությամբ պարսպի տակ կրակ տվին: Աստված²⁹² հրաման արձակեց կորստյան մատնել ու կործանել Ուռհան: Գուժկանները ճամբարում աղդարարեցին, որ պատրաստվեն հարձակման և պարսպի փլվելու հետ մեկտեղ, բացվածքով նետվեն քաղաք: Քաղաքը [Զանգին] երեք օրով հանձնեց նրանց՝ կողոպտելու: Նախ՝ բոցավառվեցին կուպրն ու ծծումբը. ապա՝ փայտերը, իսկ ճարպն սկսեց եռալ նրանց վրա: Հյուսիսից քամի փչեց և ծուխը քշեց ուռհայեցիների կողմը: Պարիսպը երևրաց ու փլվեց: Երբ այն փլվեց, պարզվեց, որ ուռհայեցիների կողմից ներսում նրա դիմաց շինված կառույցը երկու կողմից էլ կարճ էր, որովհետև փլվածքն ավելի մեծ էր, քան շինությունը: Ծննդյան տոնի նախօրյակին՝ դեկտեմբերի 21-ի շաբաթ օրվա առավոտից մինչև ցերեկվա ժամը երեքը ուռհայեցիները կռվեցին հրկու ճեղքվածքների մոտ: Այդ բացվածքում զոհվեցին շատերը, և թուրքերը ներխուժեցին քաղաք: Տերը զայրացավ նրա բնակիչների վրա, և սկսեցին նրանց սրի քաշել՝ շխնայելով ոչ մեկին: Այդ օրը կոտորվեց մոտ վեց հազար մարդ:

413. Բերդի դուռն դիմաց առաջացած սոսկալի հրմշտոցի մասին²⁹³

// Երբ թուրքերը քաղաք մտան, կանայք, երեխաներն ու պատանիները սկսեցին վազել դեպի քաղաքի վերին բերդը՝ թշնամիներից աղատվելու և սրից թաքնվելու համար: Սակայն տեսան,

որ ֆրանկներն իրենց վատ սովորության համաձայն փակել էին դուռը: Ֆրանկ եպիսկոպոսը նրանց հրամայել էր. «Մինչև շտեմանք իմ դեմքը, դուռը չբացեք»: Այսպիսով՝ բազմությունը խոնվեց իրար և կոտորածի ու գերության վախից՝ մի խումբը ոտնատակ անելով մյուսին, բարձրացավ նրա վրա: Դա մի ողբալի և ահալոր տեսարան էր: Նրանք խեղդվում, ջարդուբուրդ էին լինում և ճշմում իրար: Սոսկալի շնչահեղձության զոհ դարձավ մոտ հինգ հազար մարդ, գուցե և ավելի: Իսկ տաս հազարի շափ տղաներ ու աղջիկներ գերի քշվեցին: Երբ Պանդին, քաղաք մտնելով, հասավ բերդի մոտակայքին ու տեսավ այդ սարսափելի հրմշտոցը, շատ տխրեց և անմիջապես հրամայեց դադարեցնել կոտորածը: Բերդի ճանապարհին սպանվեց ֆրանկների եպիսկոպոսը. գլխին տասլարի հարված ստացավ ու մեռավ: Կոտորածին զոհ գնացին նաև բազմաթիվ քահանաներ, սարկավազներ, վանականներ ու կրոնավորներ:

414. Բերդի հանձնումը Չանգիի ձեռքը²⁹⁴

Հասնելով վերին բերդի դռանը, Չանգին հաշտություն առաջարկեց՝ երաշխավորելով պաշարվածների կյանքը: Նրա մոտ իջան մի քանի հոգի՝ բերդում պատսպարված ֆրանկների համար երաշխիքներ և երդումներ խնդրելու նպատակով: Չանգին այցելողներից մեկը մի անաստված քահանա էր, որ կոչվում էր Բարսումա Իսմալելի: Թող նրա անունը ջնջվի կենաց դպրությունից, ինչպես և եղավ, քանի որ նրա բռնած ուղին միշտ խոտոր էր, և նրա համար ապոծու դատաստան կամ աստվածավախություն գոյություն չունեի: Նա ո՛չ աստծուց էր վախենում, ո՛չ էլ մարդկանցից պատկառում, ո՛չ կանոններն էր ընդհարում, ո՛չ էլ օրենքին ենթարկվում, ո՛չ Քրիստոսին էր ճանաչում, ո՛չ էլ առաքյալներին ընդունում, ո՛չ մտն էր հիշում, ո՛չ էլ դատաստանից երկյուղում, ո՛չ գեհենից էր դողում, ո՛չ էլ հարությանը հավատ ընծայում: Խոսքը, սակայն, երկարեց այդ մարդու մասին, որը, դժբախտաբար, հույնպես գտնվում էր բերդում:

Արդ, երդումներ ստանալով Չանգիից, [պաշարյալները] հանձնեցին բերդը քաղաքի գրավումից երկու օր հետո: Մյուս օրը Չանգին հրամայեց բոլոր վրաններից հավաքել գերիներին: Սակայն ովքեր բռնվել էին սկզբում և հեռու տարվել, գերության քրշվեցին: Ասլա քաղաքը հսկելու համար պահապաններ կարգեցին, որպեսզի թուրքերը չանհանգստացնեն քաղաքացիներին: Պահա-

պաններ դրեցին նաև քաղաքի դարպասի մոտ, որպեսզի ոչ մի զինվոր քաղաք չմտնի: Այսպես ուռհայեցիները հաստատվեցին իրենց տեղերում, և Զանգին բավարարեց նրանց բոլոր կարիքները հացահատիկով և այլ բաներով: Նրանց սիրտը բացվեց, և ամեն մարդ բնակվեց իր տանը:

415. Ուռհայի բերդում գտնվող ֆրանկների հետ պատահած դեպքը

Ավելացնենք նաև թուրքերի ձեռքն անցնելուց հետո քաղաքի բերդում գտնվողների հետ պատահած դեպքերի նկարագրությունը: Ինչպես վերը ցույց տվեցինք, մի մեծ բազմություն ոչնչացավ, և մոտ երկու հազար կին ու երեխա գերի քշվեցին: Բերդի առջև կոտորածից ու շնահեղձությունից զոհվեց մոտ վեց հազար մարդ, գուցե և ավելի: Զորագլուխը զինվորների ձեռքից ազատեց մոտ տաս հազար հոգու: Փրկվեցին նաև նրանք, ովքեր թաքնվել էին գետնի տակ և երկու բերդերում: Երբ, ինչպես ասացինք, վերին բերդի դռները բացվեցին, և [պաշարյալները] երաշխիքներ ստացան իրենց կյանքի համար, Զանգին բերել տվեց վերոհիշյալ տեր Բարսեղ մետրապոլիտին, որը գտնվում էր մի զորախմբի հսկողության տակ: Այս սկսեցին դուրս թողնել բերդում գտնվող ժողովրդին և ֆրանկներին՝ իրենց կանանց, երեխաների, քահանաների || ու սարկավազների հետ, բազմաքանակ ոսկով, արծաթյա անոթներով ու հագուստեղենով: Շատ քաղաքացիներ հետևեցին նրանց, որպեսզի գնան նրանց հետ, որովհետև Զանգին երդվել էր անցկացնել նրանց Եփրատի մյուս ափը, որ դնան, ուր կամենում են:

Սալահեղդին անունով ամիրան, մտնելով բերդ, բռնեց մետրապոլիտի ձեռքը և սկսեց խոսել նրա հետ, ասելով. «Սրբազան, խնդրում ենք երդվես խաչով ու ավետարանով, որ մեզ հավատարիմ կմնաք: Դու շատ լավ գիտես, որ բոլորդ էլ մահապարտ եք, քանի որ ընդվզեցիք մեր ամիրայի դեմ ու ծաղրեցիք մեր մարգարեին: Մենք այժմ պատրաստ ենք ձեզ լավություն անել: Մենք ադատ արձակեցինք ձեր բոլոր գերիներին: Շատ լավ գիտես նաև, որ այս քաղաքը, մահմեդականների կողմից նվաճվելուց հետո երկու հարյուր տարի մնալով նրանց տիրապետության տակ, բարգավաճում էր մայրաքաղաքի նման: Իսկ ահա հիսուն տարի է, որ ֆրանկները տիրում են նրան և, ինչպես տեսնում եք, ավերել ու ամալացրել են երկիրը: Ամիրան, թող ապրած կենա, հոժար է ձեզ լավություն անել: Ապրեցեք խաղաղությամբ, մտեք նրա իշխանության հովանու տակ և աղոթեցեք նրա կյանքի համար»:

Դրանից հետո բերդից դուրս թողեցին բոլոր ասորի և հայ քաղաքացիներին, որոնք գնացին իրենց տները: Ինչ վերաբերում է ֆրանկներին, ապա նրանց ողջ ունեցվածքը՝ ոսկին, արծաթեղենը, եկեղեցական սպասքները, արծաթյա բաժակներն ու գավաթները, խաչերը և բազմաքանակ զարդեղենը կողոպուտի մատնեցին: Այնուհետև նրանցից անշատելով քահանաներին, աղնվականներին ու ավագներին, մերկացրին նրանց հանդերձները և գերի վարեցին Հալեպ: Անշատեցին նաև արհեստավորներին և որպես գերիներ պահեցին իրենց մոտ, որպեսզի յուրաքանչյուրն զբաղվի իր արհեստով: Մնացած մարդկանց՝ մոտ հարյուր հոգու, տանջանքների ենթարկեցին: Մի մասին նետաձգության թիրախ դարձրին, մյուսներին սրի բերան մատնեցին և այսպես կոտորեցին բոլորին:

416. Զանգիի մեկնումն Ուոհայից և նրա արած կարգադրությունները

126

|| Դրանից հետո Զանգին կանչեց մետրապոլիտին և նրան թախանձագին խորհուրդ տվեց հավատարիմ մնալ մահմեդականներին: Ուոհայեցիներին նա մթերքներ, տավար ու հացահատիկ բաժանեց և քաղաքում նշանակեց մի թուրք ամիրա՝ Զեյնեդդին Ալի Քուչուկ անունով, որը Արբելայի և Շահրգորի տերն էր: Քաղաքը պաշտպանելու համար նրա մոտ թողեց նաև յոթ այլ ամիրաների՝ բազմաքանակ զորքերի հետ միասին: Իսկ նվաճումից շորս օր հետո Զանգին մեկնեց և, անցնելով Խառանով, գնաց Եփրատի ափին գտնվող Կալլինիկոս քաղաքը: Ուոհայեցիները գնացին փրկագնեցին իրենց գերիներին, և քաղաքը վերաբնակեցվեց: Զեյնեդդին ամիրան լավ բնավորություն ուներ և շատ լավ էր վարվում նրանց հետ:

417. Մրուհի առումը և Պիր կոչվող անառիկ ամրոցի պաշարումը

Ուոհայի նվաճումից քառասուն օր հետո Զանգին իր զորքերն ուղարկեց Մրուհ, որտեղից քրիստոնյաները փախան Պիր: Թուրքերը գրավեցին Մրուհը, ապա մեկնելով այնտեղից, 1455 (1144) թվականի²³⁵ մարտ ամսի լիալուսնի օրերին պաշարեցին Պիրը Զանգին իր զորքերով անձամբ եկավ ու պաշարեց այն, ապա նրա շուրջը տասը բաբան տեղադրելով, թափով հարձակվեց նրա վրա: Զատկի հինգշաբթի օրվանից մինչև Հարության կիրակի օր-

վա երեկոն նա պատերազմեց բերդի դեմ, և կոխվր շրադարեց նույնիսկ մեկ ժամով: Բոլորովին քանդելով արտաքին պարիսպը» [Թուրքերը] կրկին հարձակում գործեցին նրա վրա: Հետո ոգևորված նետվեցին դեպի պարիսպները և զրավեցին արտաքին բերդը: Գետնի պատովելու նման սոսկալի աղաղակ բարձրացավ: Սակայն ներսում եղողները սրտապնդվեցին, քաշելով իրենց սրերը՝ նետվեցին թուրքերի վրա և վանեցին նրանց: Վերջիններս շրջեցին իրենց երեսները և, թիկունք դարձնելով, փախուստի դիմեցին: |

127

418. Պիրին օգնության հասած ֆրանկների մասին

Մինչդեռ նրանք շարունակում էին մարտը, կոմսի²⁹⁶ զորավարներից ու զորահրամանատարներից մեկը, որի անունն էր Ռոբերտ Հսկա²⁹⁷, նույնպես Ռոբերտ անունով մի ուրիշ զորավարի հետ, որոնք երկուսն էլ խիզախ և մարտերում փորձված մարդիկ էին, երկու հարյուր հոգով եկան Հոռմկլա, որը գտնվում է Եփրատի ափին, Պիրից մի օրվա ճանապարհի կամ մի փոքր քիչ հեռավորության վրա: Նրանք բարձրացան երկու նավ և խիստ զինվեցին: Նավերը նրանք ծածկեցին լայն տախտակներով ու ամուր վահաններով, վերցրին պարեն ու զենք, որքան պահանջվում էր, և ընթացան գետով: Հասնելով բերդի մոտակայքին, նրանք մի սխալ գործեցին՝ հնչեցրին փողերը: Երբ թուրքերը լսեցին շեփորների ձայնը, զինվորների մեջ խլրտում առաջացավ, և նրանք փութացին բոլոր կողմերից: Նկատելով դեպի պաշարվածներն ընթացող նավերը, նրանք գետի երկու ափերից և նրա մեջտեղում գրանրվող մակույկներից սկսեցին մարտնչել նրանց դեմ:

Իսկ [պաշարյալները] չգիտեին, թե ինչ է պատահել, և վախը պատել էր նրանց: Լսելով շեփորների ձայնը՝ նրանք կարծել էին, թե դրանք թշնամիներն են, որ եկել են կովի: Այդ պատճառով, երբ նավերը մոտեցան գետափին, ոչ ոք չկար, որին կարողանային սլարան կամ նիզակ մեկնել՝ նավը կանգնեցնելու համար: Նրանք սկսեցին մեկ առ մեկ ցատկել ջրի մեջ և մեծ սարսափով դուրս լողալ: Մի մասը հաղթվեց ջրերից և ցած քշվելով բռնվեց թշնամիների կողմից, մի մասն էլ ջրահեղձ եղավ: Իսկ այն նավը, որի վրա էր Ռոբերտ Հսկան, սլոկվելով իր տեղից՝ բերդի առջևից, քշվեց թշնամիների մեջտեղը, քանի որ չկար մեկը, որ այն կանգնեցներ: Շատերը հուսահատված նետվեցին ջուրն ու խեղդվեցին: Իսկ ովքեր մնացին նավերի վրա, թուրքերը եկան և կոտորեցին նրանց:

Ինչ վերաբերում է Ռոբերտ Հսկային, ապա նա նետվեց // գետը և, շարժվելով տիղմի միջով, հասավ մի գյուղ, որ գտնվում էր գետից արևմուտք: Բայց քանի որ նա բոկոտն ու ծանրամարմին էր, չկարողացավ երկար քայլել: Նա մտավ թաքնվեց մի տան մեջ, որտեղ լիքը հարդ կար: Նույն օրը թուրքերը եկան այդ գյուղը հարդ հայթայթելու համար. նրան հայտնաբերեցին այդ տանը, և բռնելով, բերին մեծ զորավար Զանգիի մոտ, որը նրան գերինների հետ Հալեպ ուղարկեց: Իսկ մյուս Ռոբերտը փոքրաթիվ փրկյալների հետ բերդ մտավ: Սակայն բերդի դեմ ձեռնարկված մի հարձակման ժամանակ նա նետով վիրավորվեց աչքից և անմիջապես մեռավ: Այսպես, քառասուն օր կռիվ մղվեց բերդի դեմ:

419. Նասրեդդինի սպանությունը Մոսուլում և Պիրի անսպասելի փրկությունը

Մինչդեռ Զանգին, պաշարելով Պիրը, կատաղի կռիվ էր մղում նրա դեմ, գիշերով մի սուրհանդակ հասավ, մրրիկի նման սուրացող ուղտ հեծած, և ասաց. «Քո փոխանորդը՝ Նասրեդդինը, սպանվել է Մոսուլում, և Ասորեստանում մեծ խռովություն է ընկել Ես շտապ ելա այնտեղից և շփտեմ, թե ինչ է տեղի ունենում քաղաքում» Հսկայի այդ բաները, Զանգին ապշեց ու երկյուղի մեջ ընկավ, քանի որ կարծեց, թե այնտեղ իշխանության գլուխ է անցել սուլթանի պատանի որդին, որը կարող էր հափշտակել իր ողջ տերությունը: Նա վախենում էր մանավանդ նրա մոտ եղած զորքերից: Այդ պատճառով անմիջապես կանչեց Զեյնեդդինին՝ Ալբելայի տիրոջը, որին նշանակել էր Ուռհայում, և շտապ կերպով նրան ուղարկեց Մոսուլ, որպեսզի զբաղեցնի Նասրեդդինի տեղը: Իսկ ինքը՝ Զանգին, նույն գիշերը Պիրից մեկնեց Հալեպ՝ վախենալով, որ այնտեղ էլ խռովություն չծագի: Երբ բացվեց առավոտը, ճամբարում ոչինչ չէր մնացել՝ ո՛չ վրան, ո՛չ մարդ: Բերդից նկատեցին այդ և մեծապես զարմացան, որ հուրը շրջանցեց իրենց: Եվ այդպես Պիրն ազատվեց Զանգիից, որը քառասուն օր պատերազմեց նրա դեմ: //

420. Թե ինչպես նասրեդդինն սպանվեց Մոսուլում

Քանի որ հիշատակեցինք Նասրեդդինի սպանության մասին, ասենք, թե ինչպես նա սպանվեց: Այս նասրեդդինը մի զորեղ և ահարկու մարդ էր իր զինվորների համար: Ահարկու և սարսափազդու էր նաև բոլոր ասորեստանցիների համար: Նա նստում էր

Մոսսուլում և Չանգիի փոխանորդն էր: Լինելով խորամանկ և խե-
յացի մարդ, նա պահպանում էր Չանգիի իշխանությունը:

Ինչպես վերը նշեցինք, Չանգիի մոտ էին գտնվում Պարսկաս-
տանում թագավորող թուրքերի մեծ սուլթանի Լրկու որդիները,
որոնց հոր մահից հետո գահակալել էր նրանց հորեղբայրը՝ սուլ-
թան Մասուդը: Այս վերջինս էր, որ Չանգիին իշխանություն տա-
լով, ուղարկեց կառավարելու այդ երկրները: Չանգին երկու պա-
տանիներին վերցրեց հետը, քանի որ այդ երկրներն իրենց հո-
րեղբոր կողմից տրվել էին նրանց, իսկ ինքը նրանց կառավարիչ
և զորագլուխ էր կարգվել: Նրանք արքայական պատիվ էին վա-
յելում նրա մոտ: Մեկը նստում էր Մոսսուլում, իսկ մյուսին Չանգին
շրջեցնում էր իր հետ՝ ձեռքնելով, թե նրա համար է երկրներ նվա-
ճում: [Չանգին] անվանապես էր ենթարկվում նրանց, իրականում
նրանք էին, որ ենթարկվում էին իրեն: Երբ Մոսսուլում նստողը մե-
ծացավ ու շափահաս դարձավ, ոմանք նրան խորհուրդ տվին և
ասացին. «Դու ես թագավորը, և քեզ ու քո հորն են պատկանում
այս երկրները: Բայց դու իշխանություն չունես և կարծես գերի
լինես: Այժմ արդեն դու տղամարդ ես, ինչպե՞ս ես հանդուրժում՝
տեր լինելով ենթարկվել ստրուկների հրամանին»: Նա անսաց այդ
խորհրդին: [Դավադիրները] որոշեցին սպանել Նասրեդդինին և
Մոսսուլի երկրներում դահ բարձրացնել [արքայազնին]՝ վերացնե-
լով Չանգիի տան իշխանությունը: Եվ երբ Նասրեդդինը սովորու-
թյան համաձայն առավոտյան եկավ պատիվ տալու սուլթանի որ-
դուն, պալատի մուտքում ծառաները սպանեցին նրան: Քաղաքում
130 մեծ խուճապ առաջացավ: Չորքերը հավաքվեցին, || Մոսսուլի
քուրդ զինվորներն ու Նասրեդդինի ծառաները սիրտ ստան և, պա-
լատ մտնելով, բռնեցին սուլթանի պառանի որդուն ու պահեցին
պալատի սենյակներից մեկում: Տաս օր հետո Չեյնեդդինը ժամա-
նեց և ցույց տվեց Չանգիի նամակներն ու կնիքները: Քաղաքը,
բերդերը, պետական գանձարանը և երկրի ողջ իշխանությունը
հանձնեցին նրա ձեռքը: Իշխանության գլուխ անցնելով՝ նա ամ-
րապնդեց իր դիրքերը և, բռնելով դավադիրներին, կախաղան
բարձրացրեց: Ծածուկ կերպով նա կորստյան մատնեց նաև սուլ-
թանի պատանի որդուն

421. Առաջին գրավումից հետո Ուռհայի հոգևորականների
և աշխարհականների գործած վատ արարքների մասին

Չեյնեդդինից հետո Ուռհայի տիրակալն ու պահապանը Այ-
նուդդաուլան էր՝ Շարաքտանի տերը: Այնտեղ կար նաև մի այլ

կառավարիչ՝ Խառանի իշխան Ֆադլալլահ իբն Ջաֆարը, որը քաղաքի նվաճման և նրա դեմ գործված դավադրության պատճառն էր հանդիսացել: Երբ ժողովուրդը առաջին գերությունից հետո վերաբնակվեց, շրաժարվեց իր վատ սովորություններից, թեև եպիսկոպոսը՝ վերոհիշյալ Բարսեղը, միշտ խրատում էր նրան: Նա հիշեցնում էր պատահած դեպքերը և համոզում՝ մանավանդ մեծամեծներին ու հարուստներին, առավել ևս հոգևորականներին, որ ետ կանգնեն իրենց սովորություններից ու խոտոր ճանապարհից: Վերջիններս ատում, խայթոտում ու զրպարտում էին իրար, ազահությունից ճնշում, զրկում ու կողոպտում էին միմյանց և անխիղճ անօրենություններ գործում իրար նկատմամբ՝ կատաղած շների նման հարձակվելով իրար վրա: Ավելին, նրանք մեծ վիշտ էին պատճառում նաև թշվառ հովվին, գալլերի պես աննկատելիորեն հոշոտում էին նրա մարմինը և թաքուն զրպարտում նրան Ով իր մեղքերի համար արժանանում էր եպիսկոպոսի հանդիմանությանը, նրան սատանա էր համարում:

131

Այդ ժամանակ իր շարագործություններով հռչակվեց ՎԱԲՈՒՆ ավագերեցը՝ շարության պատվանդանը և եկեղեցու հուզումների ու խռովությունների աղբյուրը: Չնայած քաղաքի կրած զրկանքներին ու ավերներին, եկեղեցու կործանմանը, ժողովրդի կոտորածին ու քահանաների ոչնչացմանը, և նույնիսկ քաղաքի գրավման ժամանակ իր երիտասարդ որդու սպանությանը՝ նա քարից ավելի կարծր սիրտ ունեցող մի բռնակալ էր, որ չէր հրաժարվում ու ետ չէր կանգնում իր շարագործություններից: Մոտ ութսուն տարեկան կլիներ, խոր ծերության էր հասել, բայց մեշք բարության նշույլ չկար. սրան ատում էր, նրան արհամարհում, մյուսին ճնշում, իսկ եկեղեցուն շահամուլաբար էր նայում: Այդ բոլոր շարիքների հետմեկտեղ նա ուրանում և հայհոյում էր հոգու փառահեղ խորհուրդները: Սուտ էր համարում մարգարեական մտքի սրբազան խոսքերը և ամենևին չէր հավատում Սուրբ Գրքին ու սրբերի պատմություններին, չհաշված բառմաթիվ այլ բաները, որոնք շարժե հիշատակել: Երանելի Բարսեղն իր գրքում²³⁶ գրում է. «Այս բաները մենք ոչ թե ուրիշներից ենք իմացել, այլ նրա նենդ բերանից ենք շարունակ լսել: Շատ անարդար ենք վարվել, որ լռել ենք և չենք հակադրվել նրան՝ վախենալով ժամանակի անպատեհությունից: Սակայն մինչ մենք լռեցինք, աստված չհամբերեց և, բարկանալով ինչպես մեզ, այնպես էլ նրա վրա, մեզ գլխովին կործանեց»:

Կար նաև մի ուրիշ ամբարիշտ քահանա, որ կոչվում էր Բար-

սումա Իսմայելի: Սա արդեն բոլորովին տգետ ու խելագար էր: Մերժում էր Սուրբ Գիրքը, չէր ճանաչում աստծու զորությունը և չէր ընդունում Քրիստոսին: Բռնած ուղին միշտ խոտոր էր, և նրա աչքում աստվածավախություն չկար: Իր ողջ կյանքը՝ սկսած Ֆրանկների օրերից, նա անց էր կացրել շարիքներ գործելով, ոտնահարելով կանոններն ու արհամարհելով բոլոր օրենքները: Իսկ երբ տեղի ունեցավ այդ փոփոխությունը, և մահմեդականները տիրեցին // քաղաքին, նա բոլորովին հրաժարվեց հավատացյալների օրենքից ու կենցաղավարությունից և սկսեց ծառայել թուրքերին: Նա բազում թշնամանք գործեց և, շատերին զրպարտելով, փորձանքի մեջ գցեց ու վնաս պատճառեց:

Ուռհայեցի կանայք խառնակվեցին թուրքերի հետ և իրենց կամքով նրանց կին դարձան: Այս բանը առավել ևս տրտմեցրեց աստծու հոգին: Հազիվ մի տարի էր անցել, որ թուրքերը գտնվում էին քաղաքում, բայց հարյուրից ավելի կանայք ամուսնացել էին հեթանոսների հետ: Այդ պատճառով աստված բարկացավ և իր դայրույթը թափեց նրանց գլխին: Նա լքեց նրանց և մատնեց բրոնակալի ձեռքը:

422. Զանգի ամիրայի ժամանումն Ուռհա

Զանգին՝ Իմադեղդին իբն Աղ-Սնդուր անունը կրող մեծ տիրակալը, մի տարի Հալեպում մնալուց հետո մեկնեց այնտեղից և հաջորդ տարվա հնձի ժամանակ եկավ Ուռհա²⁹⁹: Նա իր զորքերը թողեց Գալաբ կոչվող դեռի մոտ, որոնք ճամբար խփեցին նրա ափին՝ Քասաս բերդի և Խառանի միջև: Իսկ ինքը՝ ամիրան, հետը վերցնելով իր մեծամեծներին, զորահրամանատարներին, գավառապետներին և մյուս խորհրդականներին, հինգ օրից՝ Պենտեկոստեի երեքշաբթի օրը, եկավ քաղաք: Նրան դիմավորելու ելան մետրապոլիտը, քահանաները, սարկավագները և քրիստոնյա ողջ ժողովուրդը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ մահմեդականների բազմությունը, որն այնտեղ էր հավաքվել համայն երկրից:

Ամիրան քրիստոնյաներին սիրալիք ընդունելություն ցույց տվեց, վերցրեց ավետարանն ու համբուրեց այն, ապա ողջունելով մետրապոլիտին՝ հարցրեց նրա որպիսությունը և ասաց. «Ձեզ համար եմ եկել, որպեսզի բավարարեմ ձեր կարիքները»: Այնուհետև շրջանցելով քաղաքի արևելյան դարպասը՝ նա գնաց մտնելու հյուսիսային դարպասով, որտեղից գրավվել էր քաղաքը: Պարսպի ձեղքը և բաբանների կողմից հիմնովին քանդված յոթ հզորաշեն

133 բուրգերը վերակառուցվել էին: || Նրանց վրա արաբներեն գրությամբ արձանագրել էին նվաճման պատմությունը և ամիրայի անունը: Քաղաքից դուրս գտնվող Խոստովանողաց տաճարը քանդել և նրա քարերով վերանորոգել էին պարիսպը: Սուրբ Հովհաննեսի հոյակապ տաճարի³⁰⁰ մոտ սկսել էին կառուցել մի բերդ ամիրայի համար, որպեսզի նա հաստատվեր այնտեղ: Տաճարի շուրջը հսկիչներ էին կարգել, որպեսզի այն չփշացնեն, քանի որ Ֆրանկներն այն զարդարել էին շքեղորեն: Փոխել էին նրա տանիքը, նորոգել կղմինդրը: Նա ուներ բազմաթիվ պատուհաններ՝ մոտավորապես հարյուրի հասնող: Բոլորի համար արճճե ցանցեր էին պատրաստել, որպեսզի լույսը թափանցեր. բայց թռչունները ներս չմտնեին: Տաճարի մեջ, բեմի ետևում, թաղված էին Ֆրանկ եպիսկոպոսները: Պապիոսը նույնպես, որ սպանվեց [քաղաքի] գրավման ժամանակ, այնտեղ էր թաղված: Գերեզմանի վրա դրված էր եպիսկոպոսի արձանը՝ քանդակված կարմիր մարմարից: Գերեզմանի տապանաքարը մի կտորից էր. Թադևոս առաքյալի և Աբգար թագավորի աճյունները նույնպես ամփոփված էին այդ տաճարում՝ արծաթյա ոսկեպատ նշխարատուփի մեջ: [Քաղաքի] գրավման ժամանակ այդ տուփը գողացվել էր, և ոսկորները ցլրուցան էին եղել: Հավատացյալները սակայն հավաքել էին դրանք՝ սրբերի բազմաթիվ մասունքների հետ և, ամփոփելով մի տուփի մեջ, դրել էին ասորական Սուրբ Թեոդորոս եկեղեցու հյուսիսում գտնվող գանձարանը:

Մահմեդականները գրավեցին նաև Սուրբ Ստեփանոսի և Թովմա առաքյալի տաճարները, քանի որ Ֆրանկները պաշտոն էին մատուցում այդ երեք եկեղեցիներում: Սուրբ Թովմայի [եկեղեցին] Վերածեցին ախոռի, Սուրբ Ստեփանոսինը՝ հացահատիկի և ամիրայի մյուս եկամուտների պահեստի. Իսկ Խոստովանողաց տաճարը, որը գտնվում էր քաղաքից դուրս և կառուցված էր մոտ հարյուր տարի առաջ, ինչպես ասացինք, քանդեցին: Քանդեցին նաև Սուրբ Թեոդորոսի || և Միքայել հրեշտակի տաճարները, որոնք գտնվում էին քաղաքի հարավային կողմում: Նրանց քարերով վերականգնեցին այդ կողմի պարսպի և վերին բերդի քանդված մասերը, ինչպես նաև պետք եղած մյուս տեղերը: Մահմեդականները վերանորոգեցին և նորից հաստատեցին իրենց մզկիթն ու աղոթատունը, որը դարձել էր Ֆրանկ եպիսկոպոսի նստավայրը: Արդ, Չանգին, ինչպես ասացինք, մտավ ժամացույցի կոչվող հյուսիսային դարպասով և դիմեց դեպի Սուրբ Հովհաննեսի տա-

ճարը: Ապա իջնելով աղբյուրի կողմը, ուշադիր դիտեց [շուրջը] և եկավ Թովմաս առաքյալի տաճարը ճաշելու: Դրանից հետո նա հեծավ [իր ձին] և գնաց դեպի կլոր ավազանը, որ կոչվում է Աբգարոս, քանի որ ժամանակին այնտեղ է գտնվել Աբգար թագավորի պալատը: Այն վաղուց ավերվել է և տեղը այգի է տնկվել, որը մինչև օրս էլ կոչվում է Մետրապոլիտի [այգի]: Ուշ երեկոյան նա բարձրացավ Սուրբ Հովհաննեսի տաճարը, որովհետև այնտեղ էր իջևանել: Տաճարի շուրջը խփված էին նրա մեծամեծների վրանները: Առավոտյան նա կանչել տվեց մետրապոլիտին և հարցուփորձ արեց այն ջրհորի մասին, որը գտնվում է քաղաքից դուրս՝ նրա հարավային կողմում, և որի շնորհիվ ապաքինվում են բորոտները: Մետրապոլիտը պատմեց նրան ողջ իրողությունն սկզբից մինչև վերջ, ինչպես որ եղել էր:

423. Թոռոտների աղբյուրի մասին, որ գտնվում է ֆաղափից դուրս

Այժմ շարադրենք նաև մենք այդ ջրհորի պատմությունը: Մենք արդեն գրել ենք մեր տեր Քրիստոսի դաստառակի մասին³⁰¹, որն ուղարկվեց Ուռհայի Աբգար թագավորին, նաև այն մասին, թե ինչպես վերջինս բուժվեց իր ախտից: Իսկ այժմ խոսենք վերոհիշյալ ջրհորի մասին, թե ինչպես և որտեղից նա ձեռք բերեց բուժիչ գորությունը: Վերը մենք նշել էինք, որ այդ կողմերում կա մի նշանավոր վանք՝ նվիրված երանելի սուրբ Կոզմային՝ ճշմարիտ խոստովանողին և վկային, որը մարմինների բժիշկ էր Ուռհայում՝
135 || իր Դամիանոս անունով ընկերոջ և հոգևոր եղբոր հետ³⁰²: Նրանք իրենց ունեցած դեղերով ձրի բուժում էին ամենքին, իսկ ի վերջո երկուսն էլ նահատակվեցին, ինչպես գրված է նրանց պատմության մեջ: Կողման թաղվեց այդտեղ, և նրա [գերեզմանի] վրա կառուցվեց այն վանքը, որ հիշեցինք: Իսկ Դամիանոսը թաղվեց ավելի վեր՝ լեռներում, և նրա [դերեզմանի] վրա նույնպես մի հոյակապ վանք կառուցվեց: Նրանց ոսկորները բուժիչ զորություն ունենին:

Ժամանակին Ուռհայում Արևմուտքից մի մարդ հայտնվեց: Սպասելով որոշ ժամանակ՝ նա հարմար առիթ որսաց և եկեղեցուց գողացավ այն դաստառակը, որ ուղարկվել էր մեր Տիրոջից Աբգարին և պահվում էր Ուռհայի եկեղեցում: Վերցնելով այն՝ նա երեկոյան կողմ դուրս եկավ քաղաքի հարավային դարպասից և գիշերեց սուրբ Կոզմայի վանքում: Սակայն նրա ծոցում հղած

դաստառակը կարծես կրակով լցված լիներ և այրում էր նրան: Ստիպված նա հանեց այն իր ծոցից և վախից նետեց վանքում գտնվող այդ խոր ջրհորի մեջ: Նույն պահին նրա վրա մի հրեղեն սյուն հայտնվեց՝ իջնելով երկնքից մինչև ջրհորը: Մարդիկ ցանկացան տեսնել, թե ինչ է պատահել: Երբ զննեցին ջրհորը, ջրի մեջ արեգակի գնդի նման փայլփլող մի բան տեսան: Մտնելով ջրհորը՝ նրանք գտան դաստառակը և վեր բարձրացրին: Վանքում գտնվող բոլոր հիվանդները, լվացվելով այդ ջրով, բուժվեցին: Լուրը տարածվեց ողջ երկրում, և շատ շատերը, հատկապես բորոտները և բոլոր նրանք, ովքեր տառապում էին Աբգար թագավորի ախտով³⁰³, սկսեցին գալ այնտեղ: Նրանք լվացվում էին այդ ջրհորի ջրերով և բուժվում: Անմիջապես բուժվում էին նաև նրանք, ովքեր օտար էին մեր քրիստոնեական դավանանքին:

424. Զանգիի մասին, որն իր հիվանդության պատճառով լվացվեց ջրհորի ջրերով

Վ6 // Երբ Զանգին մետրապոլիտից լսեց այդ ջրհորի սլամությունը, ասաց. «Ես հավատում եմ, որ Քրիստոսի օրհնությունը կարող է այդպիսի զորություններ գործել»: Զանգի ամիրան ոտքերի հոգացավ ուներ և շատ էր տառապում դրանից: Նա վեր կացավ, հեծավ [իր ձին] և, գալով այդ ջրհորի մոտ, նրանից ջուր հանեց ու լվաց իր ոտքերը: Վանքը վաղուց արդեն քանդված էր, նրանից պահպանվել էր միայն արևելյան խորանը: Զանգի ամիրան հրամայեց այնտեղ մի մեծ պանդոկ կառուցել՝ ժամանող հիվանդների և ախտահարվածների պետքերի ու հանգստի համար: Նաև կարդազրեց, որպեսզի շրջապատի դաշտերից բավարարեն պանդոկի կարիքները: Սակայն աստված չկամեցավ, որ գործը զլուխ գա, և այն ի դերև հանեց ամիրայի մահով, ինչպես ցույց կտանք:

425. Զանգիի մեկնումն Ուոհայից

Զանգին այցելեց մեր՝ ասորիներին և կեղեցիները և, տեսնելով նրանց գեղեցկությունը, կարգադրեց բերել երկու խոշոր զանգ՝ նրանց վրա դնելու համար, ինչպես սովորություն էր ֆրանկների օրոք: Ապա պատրաստվելով մեկնել՝ մետրապոլիտին և ժողովրդին պատվիրեց հոգ տանել քաղաքի պահպանության մասին և շղավաճանել իր իշխանությանը: Պենտեկոստեին հաջորդող ուրբաթ օրը նա մեկնեց նրանց մոտից և գնաց նախ՝ Խառան, իսկ այնտեղից՝ Ռակկա: Ապա իր զինվորներին ուղարկեց կողոպտելու

Կալա-Ջաբար անառիկ ամրոցի շրջակայքը: Նրանք գերեցին մոտ երեք հարյուր հրեա ընտանիք՝ կանանց ու երեխաների հետ միասին, և բնակեցրին Ուռհայում:

426. Կալա-Ջաբարի պաշարումը Զանգիի կողմից, վերջինիս սեռալի սպանությունը³⁰⁴, նրա զորքերի փայփայումը, բանակի խռովությունը և նրա որդիների տիրակալումը

137 Որոշ ժամանակ Ռակկայում մնալուց հետո Զանգին իր զորքերով մեկնեց այնտեղից և եկավ պաշարեց Կալա-Ջաբար անառիկ ամրոցը՝ ուժգին հարձակում գործելով նրա վրա: Սակայն ի՞նչ կարող էր նա || անել այդ հզոր ամրոցին: Նա գրավել էր բերդի շրջակայքը և իր հարձակումներով նեղում էր նրան՝ երգվելով, որ չի հեռանա, մինչև այն չնվաճի: Սակայն սեպտեմբերի 14-ին, Սուրբ Խաչի տոնի լույս գիշերը, մինչև նա հանգիստ քնած էր, երագելով երկար կյանքի մասին, նրա հավատարիմ ներքինիներից երկուսը սպանեցին նրան իր մահճում և փախչելով մտան բերդը:

Նույն գիշերը, երբ իմացվեց, որ Զանգի ամիրան սպանվել է, նրա հզոր բանակում հուզումներ և խռովություններ ծագեցին: Գիշերով սկսեցին կողոպտել իրար: Ով մեկի դեմ ոխ ուներ և ուժը պատեց, իր ուղածի պես վրեժ լուծեց նրանից: Իսկ մեծամեծներն ու զորահրամանատարները՝ հինգ-վեց հոգով խորհրդակցելով, որոշեցին, որ յուրաքանչյուր մարդ ապաստան գտնի իր երկրում: Զորքերի մնացորդները, հավաքված ժողովուրդը և ճամբարում գտնվող վաճառականները կողոպուտի մատնվեցին: Նրանցից խլեցին, ինչ որ ունեին, անգամ վրանները: Կողոպտեցին և հափշտակեցին մինչև իսկ ամիրայի վրանը և այնտեղ եղած դանձերը, զենքերն ու թագավորական զարդերը, ինչպես նաև անհամար անասուններ և ձիեր: Հետո ամեն մարդ գնաց իր ուղած կողմը: Իսկ նա, ով դեռ երեկոյան սարսափի մեջ էր պահում աշխարհը, առավոտյան գտնվեց բոլորովին լքված, այնպես որ թաղող անգամ չունեի:

Նա ուներ շորս որդի: Անդրանիկը, որ կոչվում էր Ղազի Սեյֆեդդին³⁰⁵, գտնվում էր Պարսից երկրում՝ Մարաստանի և Բաբելոնի սուլթանի մոտ: Հաջորդը՝ Մահմուդ Նուրեդդինը³⁰⁶, [Զանգիի] սպանության ժամանակ գտնվում էր նրա ճամբարում: Մյուս երկուսը՝ Կուտբեդդին Մավդուդը³⁰⁷ և Ամիր Ամիրանը³⁰⁸, Մոսուլում էին: Հենց որ Սալահեդդին ծերունի ամիրան և իմաստուն առաջ-

նորդը ճամբարում լսեց Զանգիի սպանության մասին, վերցրեց Մահմուդին՝ Զանգիի որդուն և մյուս մեծամեծներին, որոնք հետևեցին իրեն, և փութապես գալով Հալեպ, իշխանությունը վերցրեց իր ձեռքը՝ // տիրելով այնտեղ կուտակված բազմաթիվ գանձերին ու մեծ հարստություններին:

Զանգիին շթաղեցին: Բոլորը նրան լքեցին ու հեռացան: Հասարակ մարդիկ նրան վերցրին, բերին Ռակկա և թաղեցին այնտեղ: Մոսուլում գահակալեց վերոհիշյալ Կուտբեղդին Մավդուդը, մինչ Զեյնեդդինը վարում էր այնտեղի գործերը: Իսկ Նուրեդդինը 1458 (1147) թվականին տիրեց Հալեպին և Միջագետքի երկրներին: Նա նվաճեց նաև Համան, Հոմսը և Գամասկոսը, որոնք իր հայրը շէր կարողացել գրավել: Ապա հաշտություն և բարեկամություն հաստատելով ֆրանկների հետ՝ հանդիպեց ժոսլինին, և նրանք երդումներ փոխանակեցին: Նա իր հորից ավելի խորամանկ և նենգամիտ էր: Այդպես նա հզորացավ ու զորեղացավ, և թագավորությունը նրա ձեռքում ամրապնդվեց: Նա գրավեց Ազազ ամրոցը և Տախիք անունով մի եզիպտացուց խլեց Բաալբեկը:

427. Համառոտ կերպով թշվառ Ռուհայի վերջին աման և նրա իսպառ կործանման մասին³⁰⁹

Ֆրանկներից ամեն մեկը նստել էր իր երկրում և հանգիստ ապրում էր: Իսկ Ռուհայի տեր ժոսլին կոմսը տանջվում էր Ռուհայի համար, բայց չէր կարողանում որևէ բան անել: Երբ նա լսեց Զանգիի սպանության մասին, շատ ուրախացավ՝ կարծելով, թե մահմեդական կուսակալների և զորահրամանատարների միջև պառակտում ու խռովություն կստացան, և նրանք հոգ չեն տանի Ռուհայի մասին: Նա օգնության համաձայնություն ստացավ Քեսունի և Մարաշի տեր Բազդուլինից³¹⁰, որը պատրաստություն տեսավ նրա հետ և խոստացավ օժանդակել և օգնել նրան: Իսկ Անտիոքի իշխան Պուատվինը դժգոհ էր երկուսից էլ և խիստ զարացած էր նրանց վրա, որովհետև իրեն չէին հնազանդվում, այդ պատճառով նա հրաժարվեց նրանց օգնել: Զանգիի սպանությունից հետո քառասուն օրում Բազդուլինն ու ժոսլինը գործի անցան և, իրենց զորքերը հավաքելով Տլուք քաղաքում, պատրաստվեցին արշավել դեպի Ռուհա: Նրանք կարծում էին, որ գիշերով հավանաբար կկարողանան գրավել այն: // Երբ Հալեպում գտնվող զորավորույթները լսեցին նրանց հավաքի մասին, Ռուհայի կառավարիչների մոտ սուրհանդակներ ուղարկեցին՝ ասելով. «Ահա ֆրանկ-

ները հավաքվել են, բայց թե որ կողմ են պատրաստվում դիմել, չգիտենք: Մենք էլ ենք հավաքում մեր զորքերը, և եթե ուղղվեն ձեր կողմը, մենք նույնպես կգանք արագորեն: Ուշադիր եղեք և պահպանեցե՛ք քաղաքը: Երդվեցրե՛ք քրիստոնյաներին և նրանցից պատանդներ վերցրեք»: Ստանալով հրամանը, քրիստոնյաներից մոտ հիսուն հոգու՝ ճարտարասպետների, արհեստավորների ու դարբինների, պատանդ վերցրին և քաղաքի բերդերում նրանց համար պատրաստեցին բոլոր անհրաժեշտ բաները:

Առաջին գրավման երկրորդ տարվա հոկտեմբեր ամսի 27-ի կիրակի օրը օրհնյալ ֆրանկները անսպասելիորեն հայտնվեցին և մինչև երեկո թաքնվեցին մի հովտում: Երբ մուժն ընկավ, բազմաթիվ խիզախ հետևակայիններ պատրաստվեցին և արևմտյան կողմից մոտեցան քաղաքի մատույցներին: Ընտրելով մի անկյուն, որտեղ պահպաններ չկային, նրանք անմիջապես մագլցեցին պարսպով և, պարաններ կախելով, վեր քաշեցին սանդուղքներն ու բարձրացրին իրենց ընկերներին: Նկատելով այդ, պահասյանները մոտեցան տեսնելու, թե ովքեր են: Վերջիններս ձեռքերը երկարելով ու բռնելով [թուրքերից] մի բանիսին՝ նրանց սպանեցին և պարսպից դուրս նետեցին: Ողբի ձայներից մեծ աղմուկ առաջացավ: Իսկ ֆրանկները պարսպի վրա մեծածայն գոշյուն բարձրացրին և փառք տվին աստծուն: Հեռվում դարանակալած գինվորները կռահեցին և, ցատկելով տեղից, հեղեղի նման հորդեցին ու հասան քաղաք:

Գիշերվա ժամը երեքն էր՝ առաջին գիշերապահը՝ նրանք իշան և բացեցին քաղաքի արևմտյան դարսպասը, որ գտնվում է աղբյուրից վեր: Ֆրանկ հեծյալներն ու նրանց հետ եղող հետևակայիները ներս մտան: Ներխուժումից հետո այդ անմիտ թշվառները դադարեցին կռվել ու քաղաքը պաշտպանել բերդերում գտնվող մահմեդականներից՝ անցնելով տների կողոպուտին և ունեցվածքների հափշտակմանը: Նույն գիշերը նրանք սկսեցին ջարդել Սլլավ և վատ մարդկանց, մահմեդականների և քրիստոնյաների խանութների ու տների դռները՝ կողոպտելով եղած ամեն ինչ: Բազաքում գտնվող մահմեդականները, տեսնելով հանկարծակի վրա հասած եղեռնագործությունը, շտապ վազեցին դեպի բերդերը: Իսկ ովքեր գտնվում էին բերդերում, բացեցին դռները և նրանց հանգիստ ներս առան՝ երեխաների և ունեցվածքի հետ միասին: Նրանք չկրկնեցին ֆրանկների վատ արարքը, որոնք առաջին գրավման ժամանակ փակեցին դռները՝ տեղիք տալով սոսկայի շնչահեղձության ու եղեռնի: Շատ մահմեդականներ էլ գիշերն իջան պարսպ-

140

պից և փրկութիւն գտան հառանում, որովհետև նրանց հետապընդող չկար:

Երբ լուսացավ, կոմսը բերել տվեց ասորիների մետրապոլիտին և պահանջեց, որ նա բաբաններ պատրաստի բերդերի մոտ տեղադրելու համար: Բաբանները բերին և տեղադրեցին: [Ֆրանկները] մոտեցան ներքին բերդին և թափով հարձակվեցին նրավրա, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետև այն շատ բարձր ու ամուր էր: Իսկ վերին բերդի վրա չկարողացան հարձակվել, քանի որ այնտեղ մեծ ու հզոր բաղմութիւն էր հավաքվել: Եվ այսպէս թշվառ քաղաքը վեց օր մնաց այս փորձանքի մեջ:

Երբ ֆրանկները տեսան, որ քաղաքի բերդերից ոչ մէկը չեն կարողանում գրավել, իսկ թշնամիները շատանում և բոլոր կողմերից հավաքվում են, ընկան մեծ մտահոգութեան և վախի մեջ. Ուռհայեցիները թուրքերի վախից ամեն երեկո հավաքվում էին ֆրանկների մոտ, Աբգարի վանքի շուրջը, որտեղ նրանք բանակ էին դրել: Շաբաթ օրը թշնամիների մոտից մի լրտես եկավ և ասաց Ժոսլինին. «Հոգ տար քո անձի և քեզ հետ եղողների մասին: Ահա Հալեպի և Մաբբուգի զինվորները՝ բազմաթիվ թուրքմեններն ու զանազան ցեղերը, հասել և դարան են մտել լեռներում: Վաղը նրանք ձեզ շրջապատման օղակի մեջ կառնեն: Նրանք պատրաստվում են ձեզ ընկճել քաղաքի ներսում և բոլորիդ կորստյան մատնել»: Երբ Ժոսլինը լսեց այս բաները, նրա սիրտը վախ ընկավ. 141 նա գլուխը կորցրեց || և շգիտեր ինչ աներ, քանի որ բազմաքանակ թուրք զորքերը հասել և բռնել էին հարավային դաշտն ու լեռները:

Ֆրանկները որոշեցին գիշերով թաքուն դուրս գալ քաղաքից, որպէսզի բերդերում նստած մահմեդականները և հարավային դաշտում ու լեռներում գտնվող թուրքերը չնկատեն իրենց: Սակայն ինչպէ՞ս կարող էին բազմահազար մարդիկ, ձիերն ու անասունները առանց նկատվելու դուրս գալ մեկ դռնով: Եթե ցերեկով դուրս դային, իրենց վրա ուշադրութիւն կհրավիրեին: Այդ պատճառով սպասելով մոտավորապէս մինչև գիշերվա ժամը երեքը, նրանք բացեցին քաղաքի հյուսիսային դարպասը, որ կոչվում է Ժամացույցի, և զինվորներն սկսեցին դուրս գալ: Երբ ուռհայեցիները, որոնք իրենց կանանցով ու երեխաներով հավաքված էին այնտեղ, նկատեցին այդ և տեսան, որ ֆրանկները մեկնում են՝ իրենց թողնելով հեթանոս հալածիչների ձեռքում, սոսկացին, աագնապեցին և ընկան ահուղողի մեջ:

Քաղաքում մեծ սուգ տիրեց՝ կանանց ու երեխաների լացու-

կոծով և դառն հառաչանքներով: Մայրը կանչում էր իր երեխաներին, և նրան չէին արձագանքում: Երեխաները գոռում էին, ընկնում այս ու այն կողմ՝ դառնաղի լացով փնտրելով իրենց մայրերին, բայց նրանց չէին գտնում: Նետվում էին դեսուդեն՝ մարդկանց, ձիերի և անասունների արանքը, տրորվելով, հրմշտվելով ու ջախջախվելով ձիերի և գրաստների սմբակների տակ, բայց ոչ ոք նրանց չէր բարձրացնում: Խավար և անլույս գիշեր էր: Բոլորը վաւում էին դեպի Ժամացույցի դարպասը տանող փողոցով: Զինվորներն ու զինակիրները, ձիերն ու գրաստները, տղաները, կանայք և երեխաները խառնիխուռն առաջ էին շարժվում՝ հրմշտելով և անգթաբար ճզմելով միմյանց: Ընկնում էին անասունները, ջորիներն ու գրաստները, որոնք կրում էին ֆրանկների կողմից քաղաքում կողոպտված ծանր բեռներն ու բազմաքանակ զարդեղենը: Երբ նրանք ընկնում էին, ոչ ոք ի վիճակի չէր կանգ առնել՝ նրանց բարձրացնելու կամ բեռներն արձակելու համար: Երեխաները ճզմվում էին նրանց արանքում, || տանջվում և ողբերգարար հրածեշտ տալիս կյանքին: Բոլոր փողոցներում բազմաթիվ ընկածներ կային՝ տղամարդիկ, անասուններ, կանայք, մանուկներ, ծրծկերներ, որոնք անխղճաբար ոտնակոխ էին լինում: Ոչ ոք չկար, որ խղճար նրանց և ձեռք մեկներ: Այսպես տեղի ունեցավ նրանց տխրահռչակ մեկնումը՝ թողած բարիքներով ու ինչքով լի տները, բաց դռները, վառվող ճրագներն ու հարդարված անկողինները:

142

428. Ֆրանկների հետ մեկնող ժողովրդին վիճակված դառր փորձության մասին

Երբ ֆրանկ զորքերը և նրանց հետ հեռացող բազմությունը ելան քաղաքից, հավաքվեցին Խոստովանողաց տաճարի առջև գտնվող բուրգի, այսինքն՝ Ճզնավորների սյան շուրջը: Թուրքերը շրջապատման օղակի մեջ առան նրանց և, անձրևի տարափի պես նետեր արձակելով, սոսկալի կերպով խոցոտեցին շատերին: Ապա խառնվեցին ժողովրդին և մսագործների նման սկսեցին կոտորել նրան: Կացինների ձայն էր լսվում. կարծես անտառ էին հատում: Նախճիրը տեղի էր ունենում գիշերվա մթության մեջ, երբ քրիստոնյան թուրքից չէր ջոկվում: Ֆրանկ զինվորները խառնվել էին ժողովրդին, և նրանցից յուրաքանչյուրը վախից թաքցնում էր իր անձն ու խցկվում բազմության կենտրոնը: Ֆրանկ իշխաններն ու զորահրամանատարները կոչեցին հետևակայիններին և ողորմագին աղաղակեցին. «Հանուն Տիրոջ դ՛ուրս եկեք ամբոխից և վա-

նեցե՛ք հակառակորդի ճնշումը»։ Հեծյալները, իջնելով ձիերից, շրջապատեցին ժողովրդին և մնացին այդպես։

Վաղ լուսաբացին Բաղդուինն ու ժոսլինը [ձի] հեծան և դասավորություններ կատարեցին։ Բաղդուինն անցավ ժողովրդի առջևը, ժոսլինն սկսեց ընթանալ ետևից, իսկ բոլոր հետևակայինները՝ բազմության աջից և ձախից։ Նրանք մեկնեցին սուրբ Գևորգի տոնին՝ նոյեմբերի երեքի այդ շարագուշակ կիրակիի արշալույսին և դանդաղորեն շարժվեցին Սամոսատի ճանապարհով։ Իսկ թշնամիները // հազարներով ու անհամար բյուրերով վխտում էին նրանց շուրջը։ Ժողովրդից և գինվորներից շատերը վիրավորվեցին, սակայն հետևակայինները, որոնց շարքերում կային բազմաթիվ լսիդախ նետաձիգներ, հերոսաբար կանդնած, թույլ չէին տալիս, որ թուրքերը մոտենան ժողովրդին։ Այսպես նրանք տառապանքով և մեծ փտանդի ենթակա առաջ էին շարժվում։

Ո՞վ կարող է նկարագրել Ուռհայի խուճապահար ժողովրդի ցավագին և շափազանց ողբալի տեսքը։ Արազ-արագ և բորիկ ոտքերով բոլորը վազում էին քարերի, փշերի, տատասկների ու սրածայր մոլախոտերի վրայով։ Նրանց ոտքերը ասես կտրատվում էին դանակներով, և արյունն առատորեն հոսում էր նրանցից։ Նրանք խոնվում ո՞ր հրմշտում էին իրար, սայթաքում և ընկնում էին, կոխկրտում ու ճզմում էին մեկը մյուսին և իրենց վրա արձակվող բազմաթիվ նետերի վախից թաքնվում միմյանց թիկունքում։ Մեկը վիրավորվում և ընկնում էր, մյուսը սրտապնդվում և վազում էր փրկվելու հույսով։ Մի ուրիշը ընկնում և փոխվում էր՝ հայացքն ուղղած դեպի արևելք, իսկ հետապնդողները վրա էին հասնում ու ոչխարի պես մորթում։ Ոտաբոբիկ երեխաներն ու մանուկները տանջահար վազում էին տատասկների միջով, և նրանց փափլիկ ոտքերը արյունոտվում ու ծակծկվում էին սուր փշերից։ Նրանց լեզուները ծարավից կախ էին ընկել, բերանները դառնացել հալվեի նրման, իսկ ատամները սևացել, ինչպես ածուխ։ Նրանք հրմշտվում ու տրորվում էին բազմության մեջ, կոխկրտվում ձիերի սմբակների տակ, ջախջախվում ու շարաշար կործանվում։

Այդ բոլոր տառապանքներից ու դառն շարշարանքներից բացի, նրանք ընթանում էին անտանելի ճանապարհով։ Այն հովտում, որտեղով նրանք անցնում էին, շատ խոփվ ու մայցառ կար։ Թշնամիները կրակ տվեցին, և նրանց առջևն ու շուրջը բոցավառվեց։ Այլ կողմ շրջվելու հնարավորություն չկար. այդ պատճառով մեծ փտանգի ենթարկվելով՝ նրանք քայլեցին կրակի վրայով և այրեցին իրենց ոտքերը։ Այսպես // նրանք տառապեցին մինչև

օրվա իններորդ ժամը: Նրանց շրջապատող թշնամիները, որոնք նույնպես հոգնած էին ողջ այդ գիշերվա ու ցերեկվա դժվարին մարտերից և արագ վազքից, պատրաստվեցին ետ դառնալ: Նրանք վախենում էին, որ ֆրանկները կարող են ժողովրդին տեղավարել մի բերդում և շրջվել իրենց վրա: Բացի այդ, նրանք ցանկանում էին մասնակցել քաղաքի կողոպուտին, քանի որ նրանց հետ եղած բազմաթիվ հետևակայիներ մնացել էին քաղաքում, իսկ ուրբեր գտնվում էին բերդերում, նույնպես դուրս էին եկել և սկսել կողոպտել ու հափշտակել քաղաքի հարստությունն ու ունեցվածքը: Երբ թշնամիները հավաքվեցին և պատրաստվեցին ետ դառնալ, ժողովրդի շուրջը մնացին փոքրաթիվ թուրքեր, հավաքագրված թուրքմեններից:

429. Ֆրանկների ձախորդ վարմունքի, նրանց կրած սլաքաուրթյան և Ուոհայի թշվառ ժողովրդի խսպառ բնաջնջման մասին

Այնուհետև ֆրանկները մի շար և կործանարար միտք հղացան: Նրանք իրար հետ պայմանավորվեցին նետվել և հարձակվել իրենց շուրջը մնացած թուրքերի վրա: Չախորդ նախաձեռնությամբ ժոսլին կոմսն ու իր կողմնակիցները, որոնք գտնվում էին բազմության ետևում, հարձակվեցին իրենցից ձախ, արևմտյան կողմում կանգնած թշնամիների վրա: Իսկ Քեսունի տեր Բաղդուինը, տեսնելով, որ կոմսը պոկվեց տեղից, և շեփորները հնչեցրին, իր հերթին թռավ և արշավեց դեպի հարավ: Այսպես խառնիխուռն և անկանոն կերպով ֆրանկ հեծյալներն սկսեցին արշավել: Թուրքերը մի փոքր ցրվեցին այս ու այն կողմ, մինչև առաջինները թափով անցան, որից հետո հարձակվելով ետևից՝ ջախջախեցին նրանց: Ֆրանկներն այլևս չնայեցին ո՛չ ժողովրդի, ո՛չ էլ իրար վրա: Ամեն մեկը դարձավ իր աչքը կտրած կողմը և ամոթալի փախուստի դիմեց: Նրանք նետեցին նիզակներն ու վահանները, շարտեցին զրահներն ու իրենց կրած բոլոր զենքերը, // վախից դեն գցեցին նույնիսկ ձեռքերում պահած սրերը: Իսկ հետևակն անկորուստ հասավ ձախ կողմում գտնվող մի բերդ, որը տեղադրված էր Արծվի բլրի³¹¹ վրա: Այնտեղ ապաստանեց մոտ երկու հազար հոգի՝ ուռհայեցի քաջասիրտ պատանիներ ու երիտասարդներ: Կանայք, երեխաները և մանուկները դերի քշվեցին, իսկ ողջ հարստությունը ավարի մատնվեց: Ժոսլինը նետով վիրավորվեց ազդրից և ահուղողով փրկութուն գտավ Սամոսատ քաղաքում:

Ֆսկ Բաղդուինը՝ այդ փառահեղ ու գեղեցկատես երիտասարդը, որ մի ամբողջ գլխով բարձր էր իր ժամանակի բոլոր մարդկանցից և հայտնի պատերազմող էր, զոհ գնաց այդ նախճիրին և սպանվեց նետահարումներից ու սրերի հարվածներից, քանի որ այդ պահին շիմացան, թե ով է նա: Ջարդին զոհ գնացին նաև բազմաթիվ քահանաներ, սարկավագներ ու վանականներ, որոնք փրկվել էին առաջին կոտորածից: Թուրքերն ավարի մատնեցին ողջ քաղաքը՝ Ժոսլինի, Բաղդուինի և բոլոր քաղաքացիների անհամար բեռներն ու ինչքը:

430. Վերջնական անկման ժամանակ ֆաղաֆում սանձագերծված կոտորածի, կողոպուտի և ոնիրների մասին

Թուրքերն ու զանազան այլ ցեղերը, ներխուժելով այդ նշանավոր քաղաքը, տիրեցին նրան: Սելեկիոսի³¹² օրոք հիմնադրվելու ժամանակներից ի վեր հազար շորս հարյուր վաթսուն տարի այն կողոպուտի չէր ենթարկվել: Առաջին պատերազմի ժամանակ, երբ [Ուոհան] գրավվեց, միայն երկու օր ավարի մատնվեց: Մեծահզոր Չանգիի հրամանով քաղաքն անմիջապես պաշտպանության տակ առան և դադարեցրին ու արգելեցին կոտորածն ու կողոպուտը: Սակայն այս վերջնական կործանման ժամանակ ոչ թե երկու օր, || այլ մի ամբողջ տարի շրջում էին քաղաքում և, փորփրելով ու խուզարկելով պատերի ու ձեղնահարկերի թաքստոցները, բազում զանձեր էին գտնում, պահված հայրերի ու նախնիների վաղեմի ժամանակներից: Գտնվեցին նույնիսկ բազմաթիվ զանձեր էլ, որոնց մասին քաղաքի բնակիչներն անգամ գաղափար չունեին:

431. Ասորական եկեղեցու հնագույն թափառաբանների հայտնաբերման և այս սոսկալի ավարառության ընթացքում կողոպուտի մատնված մյուս զանձերի մասին

Այդ օրերին հայտնաբերվեցին նաև մեր ասորական եկեղեցու թաքստոցները, որոնք գտնվում էին Կաթուղիկե մեծ եկեղեցում: Այնտեղից մեծ հարստություն և եկեղեցական սպասքներ հաննցին՝ խաչեր, ավետարաններ, գավաթներ, սկիհներ, սրբազան մեռոնի մեծ անոթը, բուրվառներ, գավազանների գլխիկներ և զանազան այլ գարդեր, բուլբուն էլ պատրաստված ոսկեզօծ արծաթից, ինչպես նաև արքայական բազմաթիվ շքեղ ու թանկագին քողեր, խորանածածկեր, կրկնոցներ, որոնք նվիրվել էին հին թագավորների և ազնվականների կողմից և վաղուց պահվում էին այնտեղ,

չհաշված այն զարդերն ու արքայական գորգերը, որ ձեռք էին բերվել վերջին ժամանակներս: Դրանք ամեն տարի ուղարկվում էին մայրաքաղաքից Եզիա անունով մի հավատացյալ ուռհայեցու, ինչպես նաև Սլիբա անունով մի այլ հավատացյալի կողմից, որի մականունն էր Քիմաշ: Նրանք ապրում էին մայրաքաղաքում և մշտապես հոգ էին տանում Ուռհայի եկեղեցիներին: Ամեն տարի նրանք բազում ոսկի էին ուղարկում եկեղեցիներին, ազքատներին ու հիվանդներին: Սակայն Սբղուն Արբելացին, որին վերը հիշեցինք, դրանք թաքցնում ու յուրացնում էր: Այսպես Ուռհան կործանվեց, նրա բնակիչները ցրվեցին ողջ աշխարհում և վաճառվեցին զանազան երկրներում:

432. Գերությունից խուսափողների, սպանվածների և նրանց մասին, ովքեր այլ երկրներում կարեկցանք ցուցաբերեցին ուռհայեցիների նկատմամբ

147 Այն բազմությունը, // որ փրկվեց կոտորածից և ապաստանեց վերը հիշված բերդում, մութն ընկնելուց հետո սկսեց հինգտասական հոգով ցրվել: Փրկվեցին քչերը. բազմաթիվ մարդիկ սպանվեցին, իսկ շատերն էլ գերի ընկան: Արդուն ավագերեցը, ավելի ճիշտ՝ ավագ խառնակիչն ու եկեղեցու մեծ խոովարարը, այդ սոսկալի գիշերը բռնվեց քաղաքի դարպասից դուրս: Նա ընկել էր փոսք և գոռում էր. «Ո՞վ է ուզում հարյուր դինար ինձ հանելու համար»: Նա հույս ուներ, թե քրիստոնյաները կիջնեն և կբարձրացնեն իրեն: Սակայն իշավ մի թուրք և սպանեց նրան: Նա խլեց նրա մոտ եղած ոսկու քսակը և խեղդեց նրան: Նրա դիակը շների կեր դարձավ, իսկ հոգին ընկավ հավիտենական տանջանքների մեջ: Եթե Տերը նրան շգթա, հավիտենական դժոխքն էլ քիչ է նրա համար:

Ժողովրդի գերվելուց հետո նրանք, սվքեր խուսափել էին դերությունից ու կոտորածից, մոլորված՝ հույս էին փայփայում զրտնեյ իրենց գերիներին: Այդ ժամանակ իրենց ողորմածությամբ ու մարդասիրությամբ աչքի ընկան Եփրատից արևելք ապրող քրիստոնյաները, հատկապես Մարդինի, Շաբաքտանի և Սևերակի բնակիչները, թող Տերը նրանց գթասրտություն ցույց տա: Նրանց մեջ էր Մարդինի Հովհաննես³¹³ սրբազան եպիսկոպոսը, որը ծագումով ուռհայեցի էր: Անհնար է նրան գովաբանելը, քանի որ նրա հիշատակը դրոշմված է վերին Երուսաղեմում: Ինչ վերաբերում է Եփրատից արևմուտք ընկած երկրներում ապրող քրիստոնյանե-

րին, հատկապես քահանաներին ու եպիսկոպոսներին, ապա նլ անք ոչ թե կարեկցանք, այլ դաժանություն, անգթություն, խստաւր-տություն ու շարամտություն ցուցաբերեցին: //

433. Ֆրանկ թագավորների արշավանքը դեպի այս Լեկերներ՝ Բրիտոնյաներին օգնելու նպատակով³¹⁴

1458 (1147) թվականին, Ուոհալի վերջնական անկումից հետո, ալամանների և ֆրանկների թագավորները երևք հարյուր իննսունհինգ հազար զինվորների հետ միասին ծովով եկան հույների մայրաքաղաքը: Հունաց կայսրը նրանց տեղափոխեց վատ ճանապարհով և հետները առաջնորդներ ուղարկեց, որպեսզի նրանց մոլորեցնեն մի այնպիսի վայրում, որտեղ ո՛չ ջուր լիներ, ո՛չ էլ ապրուստի միջոցներ: Կոստանդնուպոլսից տաս օրվա ճանապարհ կտրելուց հետո [Ֆրանկների] պարենը վերջացավ: Չկար մի բնակավայր կամ գյուղ գնումներ կատարելու, մանավանդ ջուր հայթայթելու համար: Նրանք բնկել էին մի ամալի անապատ և շփտեին ուր գնան, քանի որ առաջնորդները գիշերով նրանց լքել ու հեռացել էին: Միաժամանակ լուր էր ուղարկված Կապադովկիայի թուրքերին: Եվ Մասուդ թագավորը բազում զորքերով վրա հասավ Գտնելով նրանց այդ անապատում՝ տոշորված սովից ու ծարավից, [թուրքերը] հարձակվեցին նրանց վրա և սրի մատնեցին: Ընդ որում, շատերը սովամահ էին եղել: Ալամանների և ֆրանկները թագավորները փոքրաքանակ զորքով ճողոպրեցին ծովափ և գնացին Իուսլիա, հետո նավով եկան Անտիոք՝ զրկված իրենց ողջ ու նեցվածքից: Իսկ թուրքերը շափազանց հարստացան և քարերի շափ անհամար ոսկի և արծաթ ձեռք բերին:

Որոշ ժամանակ անց, նույն տարվա մեջ, ծովով արշավի ելավ և Աքքա հասավ Ալֆոնս անունով մի այլ թագավոր՝ կնոջ, երեխաների և հազար հեծյալների հետ միասին: Նա Տրիպոլիի կոմսի մոտիկ ազգականներից էր: Վերջինս տեսնելով նրան, վախեցավ, որ նա կարող է իր երկրից բաժին պահանջել: // Այդ պատճառով նրա ընտանեկիցներից մեկի հետ մահադեղ ուղարկեց և, տալով նրան, մեռցրեց:

434. Դամասկոսի պաշարումը ֆրանկների կողմից

Այդ ժամանակ Երուսաղեմի թագավորն էր Բաղդուխնը: Ալամանների և ֆրանկների թագավորները հավաքվեցին նրա մոտ, Երուսաղեմում, և պայմանավորվեցին գնալ պաշարել Դամասկոս

քաղաքը: Գալով և պաշարելով քաղաքը, նրանք, մանավանդ ալամանները, կատաղի հարձակում գործեցին նրա վրա: Երբ դամասկացիները նեղ դրուձյան մէջ ընկան, ուզեցին հանձնել քաղաքը: Սակայն Ֆրանկների շար նախանձը՝ իրար նկատմամբ ունեցած անբարյացակամութիւնը, կործանեց նրանց: Երուսաղեմի թագավորը մտածեց. եթե այդ օտարները դրավեն Դամասկոսը և հղորանան, կխլեն նաև իր երկրները: Նա գաղտնի լուր ուղարկեց պաշարյալներին՝ ասելով. «Ի՞նչ կտաք ինձ, եթե այնպես անեմ, որ այդ օտար թագավորները հեռանան ձեր մոտից: Ես ձեր հարեանն եմ և ձեզ բարիք եմ կամենում»: Լսելով այդ՝ պաշարյալները մեծապես ուրախացան և խոստացան, որ Երուսաղէմի թագավորին կտան հարյուր հազար ոսկե դինար: Այնուհետև նա թագավորներին խորհուրդ տվեց փոխել քաղաքի պաշարման դիրքերը և հարմար տեղից նրանց տեղափոխեց մի ուրիշ, դժվարին վայր: Թագավորները, նկատելով Երուսաղեմի թագավորի հակառակութիւնը, վրշտացած բոլորովին հեռացան Դամասկոսից և եկան Աքքա: Երուսաղեմի թագավորը, երբ ստացավ հարյուր հազար դինարը, որոշ ժամանակ անց նկատեց, որ դրանք պղնձյա են: Իսկ թագավորները, ծով դուրս գալով, գնացին իրենց նախկին հայրենիքը:

435. Երկրում գտնվող Զուբարա³¹⁵ վանքերի և բերդի կողոպուտի մասին

Այդ ժամանակ Մելիտենեի ամիրան, որ կոչվում էր Դաուլա որդի Ղազիի որդի Դանիշմենդի, յոթ լսեց ժոսլինի և Ուոհայի բնակչութիւն հետ պատահած շարիքի մասին և հավաստիացավ, 150 || որ Քեսունի տեր Բաղդուինը, որի իշխանութիւնը տարածվում էր Զուբարա կոչվող վանքերի և մինչև Մելիտենեի սահմանը ձրդվող լեռան վրա, գոհվել է, բազում զորք հավաքեց և եկավ նշված վանքերը, որոնք պատկանում էին հայերին: Դրանք էին՝ Զուբարի մեծ վանքը և Տաղնքար, Շամանոգ ու Շիբբար վանքերը³¹⁶: Երեք օրում նա գրավեց դրանք և շրջապատի մյուս վանքերն ու գյուղակները, շնայած նրանք խիստ ամրացված էին Դրանք բարդավաճող, բարիքնօրով լեցուն և բերքառատ վայրեր էին, որովհետև վաղ ժամանակներից թշնամին երբեք չէր տիրել նրանց: Նա գերի վարեց այնտեղի բնակիչներին՝ յոթ հազար շորս հարյուր հոգու և նրանց ողջ ունեցվածքը ավարի մատնեց. Նույնիսկ կողոպուտիչներն ու հափշտակիչները զարմացան իրենց ձեռք բերածի առատութիւնից, այդուհանդերձ նրանք շխնայեցին [անգամ] կարիքավորներին ու նեղյալներին: Ամեն ինչ կողոպուտելուց և ժողովրդ-

դին գերելուց հետո նրանք այդ վայրերը կրակի մատնեցին ու այրեցին: Այնտեղ անչափ գինի, շամիչ, թուզ, ընկույզ, հացա՛ատիկ և բանջարեղեն ոչնչացավ՝ բազում և բազմատեսակ գրքերի հետ:

Նույն ժամանակ թուրքերը գրավեցին Սամոսատից վեր գրտնըվող մի բերդ, որ կոչվում էր Թել-էդնա կամ Ագնագթալ³¹⁷: Այնտեղ եղած բոլոր տղամարդկանց սրի բերան մատնեցին, կանանց ու երեխաների մեծ բազմությունը գերի վարեցին, իսկ բերդն այրեցին ու ավերակի վերածեցին: Թուրքերը գրավեցին նաև մի ուրիշ բերդ՝ Թլպաշարի երկրում, որ կոչվում էր Շիրզագ³¹⁸: Այստեղ էլ տղամարդկանց կոտորեցին, կանանց ու երեխաներին գերեցին և բերդն ավերեցին:

Այդ ժամանակ Թել-Արսանում³¹⁹, որ գտնվում է Եփրատի մեջ թափվող Արածանի³²⁰ գետի ափին, տիրում էին Արտուքյան Դաուդ ամիրայի որդիները: Իրենց հոր մահից հետո նրանց միջև երկպառակություն ծագեց: Նրանցից ամենազորեղները Էկան և մի քանի օրվա պաշարումից հետո || սրով նվաճելով այդ վայրը, մոտ հինգ հազար ասորի քրիստոնյաների գերության քշեցին, կողոպտեցին ու հափշտակեցին, ինչ որ գտան, և հեռացան:

436. Սուրբ Բարսումա վանքի կողոպտումը Ժոսլինի կողմից³²¹, որը պատճառ դարձավ վերջինիս անհետ կորստյան

1459 (1148) թվականին, ուսհայեցիների ողբալի և վերջնական գերեվարությունից մի տարի հետո, սատանան մի շար միտք հուշեց Ուսհայի կոմս Ժոսլինին: Վերջինս լուր տարածեց, թե ուղում է գնալ ավարի մատնել Մելիտենեի և Կղոզիայի³²² երկրները: Մակայն երբ հասավ Սպիտակ³²³ լեռանը՝ Դիզա³²⁴ կոչվող գետի ափունքին, որ գտնվում է Կղոզիայի ծայր արևմուտքում, պատրվակ բռնեց, թե երկրի մարդիկ նկատել են իրեն: Նա իր ճանապարհը շրջեց դեպի Սուրբ Բարսումայի վանքը՝ իբրև թե աղոթելու, շնայած դա կղանդաղեցներ իր ընթացքը: Հունիսի 28-ի շաբաթ օրը Ժոսլինը սուրհանդակ ուղարկեց վանք՝ հաղորդելու, որ գալիս է: Վանականները շատ ուրախացան, որ քրիստոնյա մի թագավոր գալիս է աղոթելու իրենց վանքում: Բոլորը խաչերով ու ավետարաններով ընդառաջ ելան նրան մինչև վանքի վրա իշխող աղոթարանը: Նենգամիտը ծաղրանքով իջավ ջորուց: Երբ վանք մտավ, նրա ողջ զորքը նույնպես ներս խուժեց: Նրա հետ էին նաև ծովի մյուս կողմից նոր ժամանած ֆրանկներ: Վանականները նրանց

չխանգարեցին ներս մտնել իրենց գենքերով, թեև սովորության համաձայն գենքով մտնելն արգելված էր: Նրանց գիտակցությունն այդ պահին բթացել էր, թերևս կարծում էին, թե ֆրանկներից շատ ոսկի և նվերներ կստանան: Այդ պատճառով նրանք զարդարել էին վանքը և, հանելով սրբության տուփը³², դրել էին բազմոցին, որպեսզի ֆրանկները օրհնություն ստանան նրանից:

152 Սրբի առջև ազոթելուց հետո այդ նենգամիտը մի թուղթ դրեց պատարագի սեղանի վրա: Ապա ելնելով տաճարից՝ նստեց եկեղեցուց դուրս գտնվող գավթում, և հավաքելով // վանականներին, ասաց. «Իմ հորեղբորորդին, որ ահա եկել է Հռոմից, ուզում է տեսնել վանքի վերին ծայրում գտնվող բուրգը»: Վանահայրը կարդագրեց թուլլատրել: Երբ այդ զորագլուխը և իր հետ եղող մարդիկ մտան բերդը, կոմսի հրամանով հետևակայինները փակեցին բուրգի դարպասը և շարվեցին պարսպի վրա: [Ժոսլինը] վանականներին ասաց. «Ես ուզում եմ այստեղ պահապաններ թողնել, որպեսզի նրանք մտնեն Մելիտենեի երկիրը և պատժեն նրա տիրոջը՝ Զուբարի վանքերում գործած ավերումների և գերեվարումների համար: Ես լսել եմ, որ ձեզ մոտ են պահվում թուրքերից խլված հարստությունները, և երկրի մեծամեծները ձեզ մոտ են թաքցնում իրենց ունեցվածքը: Մինչդեռ ինքս կարիքի մեջ եմ»: Երբ նա նեղեց նրանց, վերջիններս բերին, ինչ որ պահվում էր տաճարում, և դրին նրա առաջ: Ապա նա վառականներին բանտարկեց նախասրահում, այսինքն՝ խոհանոցում, և մի ֆրանկ քահանայի ու նրա հետ եղած մարդկանց ուղարկեց հանելու եկեղեցու ողջ սպասքները՝ գավաթները, սկիհները, խաչերն ու ավետարանները: Տաճարում եղած ամեն ինչ վերցնելուց հետո ձեռք ձգեցին վանականների խցերին և մեկ առ մեկ խուզարկեցին դրանք: Ոճրագործները յուրացրին ու հափշտակեցին ամեն ինչ:

Երբ [Ժոսլինը] խլեց վանքի ողջ ունեցվածքը, բարձեց ուղտերին ու վանքին պատկանող տասներկու ջորիներին, դրանից հետո պահանջեց, որ իրեն տան տաս հազար դինար, որպեսզի դուրս գա վանքից: Նրան պատասխանեցին. «Ինչ որ ունեինք արդեն վերցրիր, մենք այլևս ոչինչ չունենք, որտեղի՞ց տանք բեզ»: Այնժամ նա վանքում երկու կառավարիչ նշանակեց, իսկ բերդում ավագներ ու մարդիկ թողեց՝ վանքը հսկելու և նրա հացահատիկը, պաշարը, գինին ու մնացած բաները խժռելու համար: Ապա վերցրեց Սուրբ Բարսուղա վանքի վանականներին և մեկնեց Քյահթայի կողմը: Այնտեղից նա եկավ Հիսն-Մանսուր, իսկ հետո մեկնեց

Ավետյաց բլուր Թլպաշարի քրիստոնյաները նրան խնդրեցին վան-
քը վերագարձնել վանականներին: || Այնտեղ դանվոզ ուռհայկչի
մարդկանց երաշխավորությամբ նրանց համար սահմանեցին տաս
հազար դինար և հինգ ծերունի վանականների պատանդ թողին
նրա մոտ: [Ժոսլինը], իր մոտ պահելով նաև սրբի աջը, մյուս
վանականներին բաց թողեց, որպեսզի գնան իրենց վանքը: Նրանք
վանք եկան այդ տարվա օգոստոս ամսին Քեսունի մետրապոլիտ,
սրբազան տեր Հովհաննեսի՝ Եղիա Շաքբամցու³²⁶ ուղեկցությամբ:
Հասնելով վանք՝ նրանք տեսան, որ խցերն ու խորանները քարու-
քանդ են արված հնամյա ավերակների նման: Նրանք շինեցին,
վերանորոգեցին ու կարգի բերեցին վանքը և իրենց վանահայր
ընտրեցին Ղազարոս ծերունուն: Ապա նվիրակները, շրջելով, հա-
վատացյալներից հավաքեցին հինգ հազար դինար և 1461 (1150)
թվականի Քանուն³²⁷ ամսի սկզբին բերին տվին ժոսլինին: Նա վե-
րագարձրեց սրբի աջը և սաստեց նրանց: Վերջիններս երաշխիք-
ներ տվին, որ կբերեն նաև մյուս հինգ հազարը և, վերցնելով յուրք
աջը, բերին վանք:

437. Զանգիի ուղի Նուրեղգինի պարտությունը Յագրայի³²⁸ մոտ

Այդ տարի Նուրեղգինը, հավաքելով իր զորքերը, եկավ պա-
շարեց Անտիոքի երկրում գտնվող Յագրայի բերդը և կատաղի
հարձակում գործեց նրա վրա: Անտիոքի տերը դանվում էր Գա-
բալայում³²⁹, ծովի ափին: Երբ նա լուր ստացավ, վերցրեց իր զոր-
քերը և, վրա հասնելով, հանկարծակի հարվածեց թուրքերին: Վեր-
ջիններս պարտություն կրեցին, և Նուրեղգինը երկու հարյուր հեծ-
յալներով փախավ մտավ Հայեպ: Նրա զորքերի մեծ մասը, մոտ
տաս հազար հողի, սպանվեց: Ֆրանկները կողոպուտի մատնեցին
թուրքերի վրանները, այդ թվում նաև Նուրեղգինին, և ոսկի, ար-
ծաթ, ծառաներ ու աղախիսներ ձեռք բերին: Նրանք տիրեցին նաև
նրանց թմբուկներին, շեփոռներին և անգամ երգչուհիներին ու
մյուս երաժիշտներին: Անտիոքի տերը և Ֆրանկները վերցրին այդ
ամենը և ցնծությամբ մտան Անտիոք: Յնծությամբ էլ դիմավորե-
ցին նրանց, բոլոր քրիստոնյաները մեծ ուրախության մեջ էին: ||
Ֆրանկների մոտ էր գտնվում նաև մի արաբ ամիրա՝ Ալի իբն Վա-
ֆա անունով, որը գժտվել էր Նուրեղգինի հետ և ծառայում էր Ան-
տիոքում:

Թուրքերի վերը նկարագրված պարտությունից երեք ամիս հետո Նուբեղդինը հավաքեց իր զորքերը և եկավ պաշարեց Ինաբ³³¹ անունը կրող բերդը: Լսելով այդ, Պուատվինը՝ Անտիոքի տերը, ելավ առավ իր զորքերը և եկավ ճակատամարտ տալու նրան: Իսկ Նուբեղդինը, երբ լսեց ֆրանկների գալուստը, հեռացավ բերդից և բարձրացավ լեռը: Ֆրանկները եկան և բանակեցին Թելլայի³³² և Ինաբի միջև գտնվող դաշտում: Երբ Նուբեղդինը լրտեսների միջոցով իմացավ, որ ֆրանկները փոքրաթիվ են, զինեց իր զինվորներին, որոնք հնչեցնելով շեփորները՝ հարձակվեցին ֆրանկների վրա: Տերը բարկացավ ֆրանկների վրա. նրանք թիկունք դարձրին ու պարտվեցին: Սպանվեց ժոֆրուան՝ Մարաշի տերը³³³, ինչպես նաև Ալի իրն Վաֆա արաբը³³⁴: Ֆրանկ զինվորներից շատերը սրի քաշվեցին: Դուբսի³³⁵ երկիրը ավարի մատնվեց և քարուքանդ եղավ: Գրավվեցին Խարիմը³³⁶, Իմմը³³⁷, Արտախը³³⁸ և Խարիմի բերդի շուրջը գտնվող բոլոր դյուղերը: Այս ճակատամարտում զոհվեց նաև Անտիոքի տերը³³⁹: Դա մի սոսկալի պարտություն էր: Թուրքերը անսասման թվով ստրուկներ, զերիներ, ձիեր ու ինչք ձեռք բերին:

Ինչ վերաբերում է ժոսլինին՝ Ուոհայի կոմսին ու կառավարչին, ապա նա այդ ժամանակ գտնվում էր Ազաղում. Երբ նա լսեց, որ Անտիոքի տերն սպանվել է, փոքրաթիվ մարդկանց հետ դուրս եկավ Աղազից ու ճանապարհ ընկավ՝ Անտիոք դնալու և այնտեղ թագավորելու նպատակով: Սակայն երբ հասավ Կուրուսին և ուղեց անցնել Շիխ³⁴⁰, ծառերի արանքից վրա թռան թուրքմենները: Բռնվելով [ժոսլինն] ասաց. «Ինձ տարեք Ազաղ, և ես ձեզ կտամ, ինչ որ ուզեք»: Նրան վերցրին և բերին մի դյուղ, որի անունը Շիխ-Աղդեյր³⁴⁰ էր, սակայն չգիտեին, թե ով է նա. Տեղի քրիստոնյաները || ճանաչեցին նրան և ուղեցին փրկագնել թուրքերից՝ առաջարկելով վաթսուն դինար: Սակայն աստված կամեցավ լքել նրան, մի բան, որին նա արժանի էր: Ոմն հրեա ներկագործ գյուղով անցնելիս ճանաչեց նրան և թուրքմեններին հայտնեց, որ դա ժոսլինն է: Թուրքմենները նրան վերցրին բերին Հալեպ Նուբեղդինը հրամայեց կուրացնել նրա աչքերը և ծանր շղթաներով բանտ նետել: Բանտում նա մնաց ինը տարի և այնտեղ էլ մեռավ:

439. Ասկալոն քաղաքի պաշարումը ֆրանկների կողմից և նրա նվաճումը մահմեդականների ձեռքից

1463 (1152) թվականին Բաղդուինը՝ Երուսաղեմի թագավորը, պատրաստութուն տեսավ, կարգավորեց իր զորքերը և եկավ պաշարեց Ասկալոն քաղաքը: Ֆրանկների երևելի մարդկանցից մեկը, որի անունը Ռայմոնդ³⁴¹ էր, մեծ հերոսութուն գործեց քաղաքի դեմ մղվող այդ հարձակման ժամանակ: Ապա նա խնդրեց թագավորից, որ իրեն կնության տա պատերազմում սպանված Անտիոքի տիրակալի կնոջը: Թույլտվություն ստանալով՝ նա գնաց ամուսնացավ Անտիոքի տիրուհու հետ, իշխանությունը վերցրեց իր ձեռքը և վերադարձավ: Բաղդուին թագավորը դեռ շարունակում էր Ասկալոնի պաշարումը: Նրանք կատաղի և ուժգին հարձակումներ գործեցին նրա վրա: Շինեցին մի փայտյա աշտարակ և մտտեցրին քաղաքին, աշտարակն ավելի բարձր էր, քան պարիսպը: Աշտարակի մեջ տեղավորեցին մարտունակ մարդկանց, իսկ վրան դրին մի քարարձակ մեքենա, որը քարեր և նետեր էր արձակում քաղաքի վրա: Այսպիսով, ով հայտնվում էր քաղաքի փողոցներում կամ դուրս էր գալիս իր տնից, սպանվում էր: Քաղաքացիները խիստ նեղության մեջ ընկան և ընկճվեցին քաղցից ու արտաքին հարձակումներից: Կռիվը երկար տևեց ու ձգձգվեց: Եվ երբ տեսան, որ փրկիչ կա, քանի որ, ինչպես ցույց կտանք, եգիպտացիները զբաղված էին իլար դեմ մարտնչելով, իսկ որևէ այլ տեղից || փրկություն չէր սպասվում, նրանք երաշխիքներ խնդրեցին իրենց կյանքի համար: Նրանց ավագներից մի քանիսը եկան թագավորի մոտ, երզվեցրին թագավորին ու պատրիարքին և հանձնեցին քաղաքը: Ով ուզում էր մնալ քաղաքում՝ ֆրանկների տիրապետության տակ, մնաց, իսկ ով ուզում էր դնալ Եգիպտոս, ստանալով իր ընտանիքն ու ունեցվածքը՝ գնաց խաղաղությամբ:

440. 1470 (1159) թվականին պատահած դեպքերի մասին

Այդ տարի սաստիկ երկրաշարժ տեղի ունեցավ, որի ժամանակ ավերվեց Շիզարը: Ձոհվեց քառասուն հազար մարդ, որոնց թվում նաև նրանց կառավարիչը՝ իր երեխաների և ընտանեկիցների հետ: Լեռը, որի վրա կառուցված էր այդ բերդը, կիսով չափ փլվեց: Բաղձաթիվ մարդիկ զոհվեցին նաև Համայում, Սալամիայում³⁴² և շրջակայքի շատ գյուղերում:

Այդ տարի Նուրեդդինը եկավ և իւլեց Խառանը իր եղբոր՝ Ամիր Ամիրանի ձեռքից: Ապա պաշարեց ու գրավեց նաև Պեհեսնին. Թուրքերը կողոպտեցին Արիզում³⁴³ գտնվող վանքը, քրտեղ սպանվեցին շորս վանականներ: Նույն տարի Նուրեդդինը եկավ և սրի ուժով գրավեց Այնթապը՝ քարուքանդ անելով, ինչ որ դտավ այնտեղ: Նա չխնայեց որևէ մեկին, գերիներ ու ավար վերցրեց և բերեց Հալնալ:

157 Միևնույն տարվա հունիս ամսին Մելիտենեում սատանայի դրդումով մի հայ քահանա նետվեց իր մոտ մտած մի աղջկա վրա, ձեռք դցեց և բռնի ուժով տիրեց նրան: Վախենալով, որ վերջինս կարող է բռնաբարության ցավից ձայն բարձրացնել, ձեռքը դրեց բնրանին, և այդ թշվառականը չզգաց, որ նա տանջանքից մեռավ: Ավարտելով իր ամոթալի գործը, նա տեսավ, որ աղջիկը մնում է: Հետո կորզեց նրա վրայի ոսկիներն ու զարդերը, նրան դրեց պարկի մեջ, գցեց ուսը և տարավ խցկեց մի աշտարակի մեջ, որտեղ հարդ էր լցված: Քաղաքի դարպասը բաց էր, քանի որ ուրբաթ օրվա կեսօրն էր: Երբ փնտրեցին աղջկան ու չգտան || ողջ քաղաքում, բոլոր հարևաններին, որոնց թվում նաև քահանային, ձերբակալեցին: Նրանց տանջանքների ու զրկանքների ենթարկեցին, բայց ոչ ոք չխոստովանեց: Թշվառական քահանան նույնպես, կտտանքների ենթարկվելով, շհամարձակվեց բացահայտել իրողությունը: Սակայն Արդարությունը զայրացավ նրա վրա և թույլ չտվեց ապրել: Ազատվելով բանտից, նա փորձեց փախուստի դիմել, բայց հազիվ էր հեռացել քաղաքից, երբ թուրքերը հասան ու բռնեցին նրան: Տանջանքների ենթարկվելով՝ նա խոստովանեց, ապա գնաց ցույց տվեց այն տեղը, ուր նետել էր դժբախտին: Երբ վերջինիս հանեցին հարդի տակից, տեսան, որ նրա զեղեցկությունն արդեն եղծվել է, իսկ սիրուն դեմքը փշացել է նեխումից: Քաղաքացիներն սկսեցին լալ ու ողբալ գեղեցկատես օրիորդի այդքան ապականված և ցավալի տեսքի համար: Բոլորն անխնա հարվածներ հասցրին թշվառ քահանայի գլխին, մանավանդ թուրքերը որոնք այդ պղծին ստիպեցին տանել մեռյալի նեխած դին մինչև գերեզմանոց: Նրա դավանակից հայերից մեկը, բռնված ինելազար Մուլուցքով, ողջ-ողջ մորթազերծ արեց նրան քաղաքի դարպասից դուրս հավաքված ամբոխի առջև: Քրիստոնյաները, հատկապես քահանաները, ծաղրի առարկա դարձան մարդկանց համար:

441. Ֆրանկ թագավորների ծովային արշավանքը, Խարիմի նվաճումը մահմեդականներից և նրանց երկրների կողոպտումը, հունաց կայսեր արշավանքը և այդ ժամանակ Ասորիում պատահած դեպքերը

1470 (1159) թվականին ֆրանկ թագավորների ցեղից մի նշանավոր մարդ, որի անունն էր Կոնդֆլանդ³⁴⁴, բազում զորքով եկավ Երուսաղեմ և ֆրանկներին հավաքեց ծովափում: Դրանց մեջ էին Երուսաղեմի թագավորը, Տրիպոլիի կոմսը և Թորոս³⁴⁵ հայր՝ Կիլիկիայի իշխանը: Նրանք մեծ բանակ կազմ՝ ցին, զնացին պաշարեցին

58 || Շիզար բերդը և ավարի մատնեցին ողջ երկիրը: Գրավելով բերդը՝ նրանք կողոպտեցին ու հափշտակեցին այնտեղ եղած ամեն ինչ, սպանեցին մեծ թվով մարդկանց, մոտ Ըինգ հազար հոգու՝ կանանց ու երեխաների գերի բռնեցին և անհամար ոսկի ու արծաթ ձեռք բերեցին: Ապա մեկնելով այնտեղից՝ եկան պաշարեցին Խարիմ բերդն ու խաղաղ ճանապարհով տիրեցին նրան: Տեղի մահմեդականները զնացին Հալեպ:

Հաջորդ տարի հունաց կայսր Մանուելը ելավ եկավ Անտիոք նա բանակ դրեց Աֆրին³⁴⁶ գետի ափին՝ դեպի Հալեպ արշավելու և այն պաշարելու նպատակով: Նուրեդդինը հավաքեց մահմեդականների բոլոր զորքերը Ասորեստանից, Միջագետքից, Ամիդից, Մարդինից ու Նիոկերտից՝ հունաց կայսեր դեմ պատերազմելու համար: Մահմեդականները շատ վախեցած էին: Այդ միջոցին հունաց կայսրին մայրաքաղաքից լուր հասավ Անդրոնիկոս անունով մի իշխանի ապստամբության մասին. խելով այդ՝ կայսրը հաշտութուն կնքեց Նուրեդդինի հետ, և վերջինս ազատեց Հալեպում պահվող ռեհիններին: Դրանց մեջ էր վերոհիշյալ Ալֆոնս թագավորի որդին³⁴⁷, որի հայրը մահադեղով սպանվել էր Տրիպոլիի կոմսի ձեռքով: Հունաց կայսրը վերադարձավ մայրաքաղաք՝ առանց որևէ բան արած լինելու:

Նույն այդ տարի սաստիկ երկրաշարժ տեղի ունեցավ, որից ավերվեց ծովափին գտնվող Գաբալան: Մոտ երկու հազար մարդ խեղդվեց այնտեղ:

Միևնույն տարվա մեջ Անտիոքի իշխան Ռայմոնդը և Ժոսլինի որդի Ժոսլինը³⁴⁸, որը տիրում էր Խարիմին, եկան ավարի մատնելու Հալեպի գավառը: Նրանք կողոպտեցին ու հափշտակեցին, ինչ կամեցան, և ողջ-առողջ ետ դարձան: Ռայմոնդը զնաց Անտիոք, իսկ Ժոսլինը, նստած մի գյուղում, կերուխում էր անում: Սակայն վրա հասան թուրքական զորքերը, բռնեցին նրան այդ գյուղում և,

բերելով Հալեպ, շղթայակապ պահեցին իր հոր տեղում:

159 // Որոշ ժամանակ անց, նույն տարվա մեջ, Անտիոքի լիշիանը Ռայմոնդը դուրս եկավ ասպատակելու Հալեպի շրջակայքը: Երբ
// նա ավար առած ետ էր դառնում, թուրքական զորքերը Սև գե-
տի³⁴⁹ մոտ վրա հասան, կոտորեցին նրա բանակը, ապա բռնելով
նրան՝ տարան շղթայեցին: Այդ տարի Անտիոքում գահ բարձրա-
ցավ ավագ Պուատվինի որդին³⁵⁰: Նա վռնդեց իր մորը, որը գնաց
Հառղիկե³⁵¹:

142. Պոնաոսի և Հյուսիսի երկրներում այդ տարիներին պատահած դեպքերի մասին

1474 (1163) թվականին Աղուբ Արսլանը՝ [Սեբաստիայի]³⁵²
տիրակալը, մտավ Կամախի³⁵³ երկիրը, ասպատակեց այն ու դուրս
եկավ: Թուրքերի գերած մարդկանց մեջ էր մի հայ երեցկին՝ Լը-
կու երեխաներով: Թուրքերն ուղեցին պղծել նրան, ապա վաճա-
ռել: Իսկ նա ջերմեռանդ հավատով ասաց նրանց. «Էս ձեզ երկու
հարյուր դինարի շափ փրկագին կտամ իմ և երեխաներիս համար,
սակայն խնդրում եմ՝ ինձ չմտենաք: Մեր օրենքով երեցկինոջն
սրգելվում է մերձենալ այլ տղամարդու: Եթե դա պատահի, երե-
ցը կկորցնի իր քահանայությունը: Գթացեք ինձ ու իմ ամուսնուն»:
Իսկ նրանք ամբարտավանորեն պատասխանեցին. «Այս դիշեր մենք
բոլորս կպառկենք քեզ հետ, իսկ հետո կվաճառենք»: Քիչ անց,
երեկոյան կողմ նա թույլտվություն խնդրեց նստել Եփրատ գետի
ափին և իր երեխաների գլուխները սանրով մաքրել ոջիլներից:
Երբ թույլ տվին, նա գնաց գետի ափը, խաշակնքեց, երեխաներից
մեկին վերցրեց աջ թևի տակ, մյուսին՝ ձախ և նետվեց ջուրը: Այս-
պիսով նա փրկվեց անսլատվությունից, իսկ իր երեխաները՝ ստոր-
կությունից:

160 Այդ ժամանակ անձրևի առատությունից մեծ ջրհեղեղ առա-
ջացավ, իսկ Սուրբ Բարսումայի վանքի շրջակայքում ձյան ծած-
կույթ նստեց: Գետը խիստ վարարեց, ջրերը լցվեցին վանքի աղո-
րիքը և ողողեցին այն: Աղորիքում գտնվող վանականները մաղըլ-
ցեցին բարձր տեղեր և շտուժեցին: // Աղորիքում նրանք մի գինու
կարաս ունեին, որը թեև ողողվեց, բայց չթափվեց: Նույնիսկ աղո-
րիքի ճրագը, որ լողում էր ջրերի վրա, չհանգավ:

Այդ ժամանակ ջրհեղեղի պատճառով մեծ համաճարակ առա-
ջացավ Հյուսիսի երկրներում, հատկապես Եփրատի ափերին: Մի
ոմն թուրք եկավ Կարկաոի սահմաններում գտնվող Ալիոս³⁵⁴ դյու-

ղը և ասաց. «Իմացեք, թե ով է առաջինը մեռել այս համաճարակից»: Հարցուհորձ անելով՝ իմացան, բացեցին [մեռյալի] գերեզմանը և տեսան, որ շորս ամիս անցնելուց հետո նա դեռ չէր փտել: Նրա աչքերը բաց էին, մեկ թիզ և շորս մատ բացվածք ուներ նաև բերանը: Պատանքի գլխամասն ու կրծքամասը կերված էին, իսկ դեմքի շուրջը ասես ածելիով կտրված լիներ: Աջ ձեռքը կրծքից ընկել էր կողքի վրա: Թուրքը փակեց նրա բերանը և նրա մեջ մի մեծ գամ մեխեց: Այդ օրվանից այլևս ոչ ոք չմեռավ:

Այդ տարի համաճարակ բռնկվեց նաև Սևերակում: Հոկտեմբերից մինչև մարտ հազարից ավելի մարդ մեռավ: Գավառի քրդական շորս գյուղեր գլխովին բնաջնջվեցին իրենց կանանցով ու երեխաներով: Մարդիկ հիվանդանում էին միայն երկու օր և մեռնում:

443. Հալեպի մոտակայքում գտնվող Խարիմ բերդի գրավումը և ֆրանկների կրած մեծ կորուստն այնտեղ

1475 (1164) թվականին Նուրեդդինը զորահավաք կատարեց: Նա կանչել տվեց իր Կուտբեդդին անունով եղբորը, որը տիրում էր Ասորեստանում ու Մոսուլում, ինչպես նաև՝ Արբելայի Զեյնեդդին ամիրային, Սինջարի ամիրային, Անձիտի երկրում գտնվող Հիսնֆեֆայի³⁵⁵ Ֆախրեդդին³⁵⁶ ամիրային, Մարդինի Խուսամեդդին³⁵⁷ ամիրային, Զեզմայի և Պիրի Շիհաբեդդին ամիրային, նրա Մաչդեդդին անունով հորեղբորորդուն ու Մաբբուզի և Ուռհայի Սեյֆեդդին ամիրային: Երբ զորքերը հավաքվեցին, եկան պաշարեցին Խարիմի բերդը: Հաշվելով իրենց զորքերը՝ [թուրքերը] տեսան, որ վաթսուն հազար հեծյալ և քառասուն հազար հետևակ ունեն: Նրանք // մանգղիոնների օգնությամբ կատաղի հարձակումներ գործեցին բերդի վրա: Բերդին այդ ժամանակ տիրություն էր անում Ռենալդ³⁵⁸ անունով մի ֆրանկ, որը քաջասիրտ մարդ լինելով, ուժեղ դիմադրություն ցույց տվեց թուրքերին:

Ֆրանկները Տրիպոլիի կոմսի³⁵⁹, Անտիոքի տիրոջ և Թորոս հայի գլխավորությամբ հավաքեցին մոտ վեց հարյուր հեծյալ ու շուրջ վեցհազարանոց հետևակ և, դուրս գալով Անտիոքից³⁶⁰, ուղղվեցին դեպի Խարիմ: Երբ թուրքերն իմացան, որ ֆրանկները ելել են Անտիոքից և գալիս են դեպի իրենց, հեռացան բերդից ու եկան Իմմ գյուղը, որը մի փոքր հեռու էր բերդից: Ֆրանկները, ժամանելով, ճամբար խփեցին բերդի շուրջը, որտեղ նախապես բանակել էին թուրքերը: Թորոս հայը՝ Կիլիկիայի իշխանը, նրանց ասաց. «Բավարարվենք այն սխրանքով, որ նրանց վռնդեցինք բերդից:

Այժմ դուրս հանենք բերդում գտնվող թույլերին և այնտեղ տեղավորենք մարտունակ ու քաջ մարդկանց՝ բավարար սննդամթերքով: Իսկ մենք վերադառնանք Անտիոք, մինչև Երուսաղեմի թագավորը ետ գա Եգիպտացիների երկրից»: Ի դեպ, Երուսաղեմի թագավորն իր զորքերով մտել էր Եգիպտոսի երկիրը, որ ստորև ցույց կտանք Տիրոջ օգնականությամբ: Տրիպոլիի կոմսը շանսաց այդ խորհրդին, այլ ասաց. «Եկեք հարձակվենք թուրքերի վրա և ջախջախենք նրանց, այլապես մեզ ի՞նչ կհամարեն, եթե ոչ շներ»:

162 Նրանք մեկնեցին հարիմից ու եկան Իմմ: Երբ մոտեցան, և թուրքերը լեռներից տեսան, որ նրանք սակավաթիվ են, հնչեցրին շեփոռները, հարձակվեցին նրանց վրա և, շրջապատման օղակի մեջ առնելով, ծանր հարվածներ հասցրին նրանց: Կոմսն³⁶¹ ու Թորոսը ճողոպրեցին, հույների դուկը³⁶² բռնվեց, իսկ ողջ հետևակր սրի բերան մատնվեց: Գերի ընկան նաև Անտիոքի տերը և Ֆրանկ հեծյալների մեծ մասը: Այդ տարվա օգոստոս ամսին շատերը կորըստյան մատնվեցին ձիերի և անսահման գույքի հետ միասին: Սրանկաների ջախջախումից հետո թուրքերը եկան պաշարեցին հարիմ բերդը, և վերջինս խաղաղությամբ հանձնվեց նրանց: Գրավելով բերդը՝ նրանք մտան դուկի երկիրը և ավարի մատնեցին այն: Ապա գնացին Սիման³⁶³ անունը կրող մեծ վանքը, որտեղ հույն վանականներ էին բնակվում, և կողոպտեցին, ինչ որ գոան նրանց մոտ՝ ոսկեղենը, արծաթեղենը, թանկարժեք իրերն ու գրքերը, ինչպես նաև սկիհները, գավաթները, խաչերը, բուրվառները, ոսկուց ու արծաթից պատրաստված սրբապատկերները, բարձրարժեք սփռոցներն ու վանականների ողջ ունեցվածքը: Բոլոր վանականներին, որպես գերի, բերին Հալեպ: Խարիմի պարտության ժամանակ զոհված ֆրանկների թիվը անցավ տաս հազարից: Դրանից էլ ավելի թուրք սպանվեց: Այնուհետև թուրքերը գնացին պաշարեցին Բանիասը և խաղաղ ճանապարհով տիրեցին նրան, քանի որ նրա տերը՝ Երուսաղեմի թագավորը, գտնվում էր Եգիպտոսում:

444. Երուսաղեմի թագավորի Եգիպտական արշավանքի պատճառը, Նուրեդդինի մեծամեծներից մեկի՝ Շիրկունի³⁶⁴ մուաֆր Եգիպտոս և այդ ժամանակ երկրում տեղի ունեցած իրադարձությունները

Եգիպտոսում արաբական նվաճումներից ի վեր տիրում էին Ալի իբն Աբուտալիբի³⁶⁵ ցեղի խալիֆները: Սրանք հակառակու-

163 թյան մեջ էին Բաղդադի խալիֆների հետ, որոնք մարգարե կոչված Մուհամմեդի քեռու՝ Աբասի³⁶⁶ ցեղից էին: Մեկն ասում էր, թե ինքն է խալիֆների ժառանգորդը, մյուսը թե՛ ինքը: Արևմտացիներն ու եգիպտացիները Եգիպտոսի խալիֆի կողմնակիցներն էին և հերձվածի պես մի բան էին³⁶⁷: Իսկ Ասորիքը, Արևելքը, թուրքերը և այդ կողմերի ժողովուրդները ենթարկվում էին Բաբելոնի խալիֆին և նրա գահն էին ճշմարիտ համարում: Եգիպտոսի խալիֆին ոչ ոք չէր տեսնում, // քանի որ նա, ինչպես Բաղդադինը, իր անձը դաղտնի էր պահում: Նա ուներ մի վեզիր, այսինքն՝ փոխանորդ, որ վարում էր իր գործերը: Եգիպտոսի խալիֆը որևէ ազդեցություն չուներ: Իշխում էր նա, ով հզորանում և իր կողմն էր գրավում եգիպտացի մեծամեծներին: Խալիֆը նրան շնորհում էր արքայական զգեստներ ու հանդերձներ, հուշակում վեզիր, և վերջինս անցնում էր իշխանության գլուխ: Այսպես, մինչ իրար կործանում էին, խալիֆը, փակված իր պալատում, զբաղվում էր կերուխումով, երդուպարով ու զվարճություններով:

Այդ ժամանակ, այսինքն՝ 1476 (1165) թվականին, Եգիպտոսի խալիֆն էր Ադուղեդդին Ալլահը³⁶⁸, իսկ կառավարիչը, իշխանապետն ու հրամանատարը՝ Սալիհ իբն Ռուզայկը³⁶⁹: Նա էր վարում ողջ Եգիպտոսի և Կահիրեի գործերը: Քուշում³⁷⁰ և արևմտյան Երկրներում տիրում էր աշարների ցեղից մի մարդ, որի անունն էր Շավիր³⁷¹: Շավիրի և Եգիպտոսի վեզիր ու կառավարիչ Ռուզայկի միջև հակառակություն առաջացավ: Սակայն այդ ընթացքում Սալիհը մեռավ, և նրան հաջորդեց, այսինքն՝ նրա տեղն զբաղեցրեց իր որդին, որի անունն էր Ռուզայկ³⁷²: Շավիրը ելավ եկավ Եգիպտոս: Եգիպտական զորքերը դավաճանեցին Ռուզայկին. դրանց մեջ էր նաև Եգիպտոսի հայտնի մեծամեծներից մեկը՝ Դիրգամ³⁷³ ամիրան: Սա էր, որ գրեց և բերել տվեց Շավիրին: Վերջինիս և Ռուզայկի միջև պատերազմ ծագեց, Ռուզայկը պարտվեց ու փախավ, իսկ Շավիրը մտավ Եգիպտոս և, գրավելով իշխանությունը, ողջ երկրի գործերը վերցրեց իր ձեռքը:

445. Շավիրի մեկնումը Եգիպտոսից

164 Որոշ ժամանակ անց Դիրգամն այս անգամ դավաճանեց Շավիրին և սկսեց սիրաշահել զորքերին՝ իշխանությունը զավթելու նպատակով: Բոլոր մեծամեծներին իր կողմը գրավելուց հետո նա բացահայտ դարձրեց իր հակառակությունը: // Նրանց միջև տեղի ունեցած ճակատամարտում Շավիրը պարտվեց ու փախավ,

իսկ նրա որդին սպանվեց: Դիրգամը տիրեց Եգիպտոսին և երկրի իշխանութունն ու տնօրինումը վերցրեց իր ձեռքը: Իսկ Շավիրը գնաց Դամասկոս և օգնութուն խնդրեց Նուբեդդինից: Վերջինս տաս հազարանոց մի զորաբանակով նրա հետ ուղարկեց մի խորամանկ և քաջասիրտ հրամանատարի, որի անունն էր Շիրկուհ Ասադեդդին: Ասադեդդինյան նպատակով նրանք ոսկի և նվերներ տվին Եգիպտոսի ճանասլարհի վրա գտնվող Կրակ և Շուբակ³⁷⁴ ամրոցների ֆրանկ իշխանին, որի անունն էր Ֆիլիպ Դգիյ³⁷⁵: Երբ հասան Բիլբայս³⁷⁶, Դիրգամը նրանց դեմ ուղարկեց եգիպտական զորքերը իր եղբոր գլխավորութամբ, որի անունն էր Ֆարիս ալ-Մուսլիմին. նրանք բախվեցին իրար, և եգիպտացիները պարտութուն կրեցին: Դամասկացիները կողոպտեցին նրանց, հարստացան ու եկան պաշարեցին Կահիրեն՝ կատաղի հարձակումներ գործելով նրա վրա: Եգիպտական զինվորները իրենց վատ սովորության համաձայն սկսեցին դավաճանել և մեկ առ մեկ անցնել Շավիրի կողմը: Մի քանի օրից քաղաքը դրավվեց: Դիրգամը ձի հնձավ ու փախավ, սակայն քաղաքից դուրս նրան գտան և սպանեցին: Շավիրը կրկին տիրեց Եգիպտոսին և ողջ երկրի գործերը վերցրեց իր ձեռքը: Ասադեդդինը բանակել էր քաղաքից դուրս: Շավիրը ամեն օր գալիս էր նրա ողջութունը հարցնելու և շարունակ նվերներ ու պարգևներ էր ուղարկում նրան:

446. Ասադեդդինի և Շավիրի տարածայնությունը

Որոշ ժամանակ անց տարածայնություն ծաղեց Ասադեդդինի և Շավիրի միջև: Ասադեդդինը՝ դրսից, իսկ եգիպտացիները ներսից սկսեցին մարտնչել իրար դեմ: Ասադեդդինը շկարողացավ ոչինչ անել, գնաց պաշարեց Բիլբայսը և սկսեց կողոպտել ու շարունակ նեղության մեջ պահել եգիպտացիներին: Իսկ Շավիրը օգնութուն խնդրեց Երուսաղեմի Ամորի թագավորից՝ խոստանալով նրան տալ օրական հազար եգիպտական դինար՝ իր երկրից դուրս գալու օրվանից մինչև օգնության հասնելը: || Ամորի թագավորը բազում զորքերով եկավ պաշարեց Բիլբայսը, իսկ Շավիրը եգիպտական զորքերով գնաց նրա մոտ: [Ֆրանկ] ղինվորներին ամեն օր դրամ և մթերք էին վճարում: Ֆրանկները ելումուտ էին անում Եգիպտոսում ինչպես մի տնից մի այլ տուն: Նրանք կատաղի հարձակում գործեցին Բիլբայսի վրա և նրա դեմ մի փայտյա աշտարակ կանգնեցրին: Կռիվը տևեց երեք ամիս: Պաշարվածներից շատերը կոտորվեցին՝ սպանվելով ու սովահարվելով: Երբ

Ասադեղդիներ տեսավ, որ այլևս հնար չկա, քանի որ [զորքերը] հուսահատվել էին կյանքից, խոստում և երդումներ խնդրեց, որպեսզի թողնեն և ձեռնունայն հեռանան: Այդպես էլ եղավ: Քազավորը գնաց Երուսաղեմ, իսկ Ասադեղդիներ փոքրաթիվ մարդկանց հետ վերադարձավ Դամասկոս:

417. Ասադեղդին Շիրկունի երկրորդ արշավանքը Եգիպտոս

1478 (1167) թվականին Ասադեղդիներ նորից վերցրեց իր զորքերը և եկավ Եգիպտոս: Շավիրը սուրհանդակներ ուղարկեց և դարձյալ օգնություն խնդրեց Երուսաղեմի Ամորի թագավորից: Երբ վերջինս եկավ, Ասադեղդիներ փախավ գնաց Ալեքսանդրիա և գրավեց այն: Ֆրանկներն ու եգիպտացիները հետապնդեցին նրան: Տեղեկանալով, որ նրանք հասնում են, [Շիրկունհը] Ալեքսանդրիան թողեց իր Սալահեղդին³⁷⁷ անունով եղբորորդուն և գնաց Քուշ: Ֆրանկներն ու եգիպտացիները պաշարեցին Ալեքսանդրիան և երեք ամիս նեղեցին, որից հետո այն հանձնվեց, և նրանց միջև հաշտություն կնքվեց: Ասադեղդիներ եկավ Քուշից ու գնաց Դամասկոս: Երուսաղեմի Ամորի թագավորը վերադարձավ Երուսաղեմ: Որոշ ժամանակ անց եգիպտացիների և ֆրանկների միջև կնքված դաշինքը խախտվեց, և Երուսաղեմի թագավորը շարժվեց դեպի Եգիպտոս:

448 Երուսաղեմի թագավորի երրորդ արշավանքը դեպի Եգիպտոս, Բիլբայսի առումը, Շավիրի սպանությունը և Ասադեղդինի գահակալումը Եգիպտոսում

1480 (1169) թվականին Երուսաղեմի թագավորը, կոտորելով ու ավար առնելով, մտավ Եգիպտոսի սահմանները: // Ապա եկավ պաշարեց Բիլբայսը և, հարձակում գործելով նրա վրա, բռնի ուժով գրավեց այն: Նա կոտորեց նրա բնակիչներին՝ ավելի քան շորս հազար հոգու, և այն ամայացրեց: Այնուհետև եկավ պաշարեց Կահիրեն: Եգիպտացիները, նեղ դրուժյան մեջ ընկնելով, սուրհանդակներ ուղարկեցին Նուբեղդիների մոտ: Բազում զորքերով և երեկվելի մարդկանցով վերջինս նրանց մոտ ճանապարհեց Ասադեղդինին: Իսկ ֆրանկները, երբ իմացան այդ բանը, հաշտություն կնքեցին եգիպտացիների հետ և, ոսկի ստանալով, վերադարձան իրենց երկիրը:

Երբ Ասադեղդիներ եկավ, եգիպտացիները նրան ընդառաջ ելան:

Նա բանակ դրեց Կահիրեի մոտակայքում, Նեղոս գետի ափին: Շավիրն ամեն օր գալիս էր նրա ողջութունը հարցնելու: Ասադեդդինի ժամանելուց հազիվ մի քանի օր էր անցել, երբ Շավիրը դավ նյութեց՝ նրան սպանելու նպատակով: Նա իր մեծամեծներին հրամայեց, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը խնջույք կազմակերպի Ասադեդդինի երևելի մարդկանցից որևէ մեկի պատվին, և հանձնարարեց, որ նրանք սպանեն իրենց մոտ խնջույքի եկողներին: Նա մարդիկ նախապատրաստեց նաև Ասադեդդինին սպանելու համար: Ասադեդդինը զգաց ամեն ինչ և, երբ հրավիրվեց խնջույքի, շփուտաց՝ պատճառաբանելով, թե հիվանդ է: Շավիրը ձի հեծավ և անձամբ գնաց՝ նրան խնջույքի հրավիրելու: Հասնելով Ասադեդդինի վրանին՝ նա իջավ ձիուց: Ասադեդդինը նրան ընդառաջ ելավ մինչև վրանի դուռը: Վրանի պահապաններն ու նախապատրաստված մարդիկ սպանեցին Շավիրին: Ասադեդդինը անմիջապես հեծավ Շավիրի ձին և իր զորքերի հետ եկավ քաղաք: Նա մտավ արքունական պալատ և վայելեց ճաշկերույթը:

Այսպիսով նա տիրեց Կահիրեին և այնտեղ իշխանության գլուխ անցավ: Խալիֆը փակված էր Կահիրեի ամրոցում, այսինքն՝ միջնաբերդում, արքունական սրահների մեջ: Նա իշխանություն չունեց, այլ միայն անուն: Ասադեդդինը տիրեց Եգիպտոսի ողջ երկրին, զորեղացավ ու շափազանց հզոր դարձավ: Նա ծանրացրեց եգիպտացիների հարկերն ու տուրքերը և դաժանութուն ցուցաբերեց քրիստոնյաների նկատմամբ: // Ավելացրեց նրանց հարկերն ու տուրքերը, ջնջեց նրանց հին օրենքները, հրամայեց գոտի կապել³⁷⁸, գլխին փաթթոց չկրել և ձի կամ ջորի չհեծնել: Այդ տարի Եգիպտոսում ավելի քան տասնչորս հազար մարդ մահմեդականություն ընդունեց:

Երկրին տիրելուց հետո դեռ չէր անցել մի տարի և երկու ամիս, երբ Ասադեդդինը մեռավ, Եգիպտոսի տնօրինումը հանձնելով իր եղբորորդուն, որի անունն էր Յուսուֆ Սալահեդդին իբն Այուբ և որը առատաձեռն ու իմաստուն կառավարիչ էր: Ցանկանալով անցնել իշխանության գլուխ, բայց տեսնելով, որ իր հորեղբոր՝ Ասադեդդինի մեծամեծներից ու ժառանգներից շատերը դաշեն կամենում, նա սկսեց հարստություն ու գանձեր բաշխել և աստիճանաբար հարթեց բոլոր դժվարությունները: Հետո նա Եգիպտոսից գնաց Դամասկոս և հաստատվեց Եգիպտոսի իշխանության գլուխ, ինչպես ցանկանում էր: Ասլա դավադրաբար սպանեց խալիֆին, ձերբակալեց բոլոր նրանց, ովքեր ծառայում էին նրան, ինչպես նաև նրա երեխաներին ու եղբայրներին, և դրեց պահապանի-

ների հակողության տակ: Գանձարաններից ու սլահեստներից նա հասնեց բազում թանկագին քարեր, մարգարիտներ և արքայական զարդերի մի այնպիսի հարստություն, որի նմանը երևէ տեսնված չէր: Դրանով նա շահեց Բաղդադի խալիֆի սերն ու հարգանքը և նրա կողմից մեծ սուլթան հռչակվեց, ինչպես ստորև ցույց կտանք Տիրոջ օգնականությամբ:

449. Արևելքի երկրներում և Ասորիքում նուրեղդինի կատարած գործերի մասին

Մինչ Սալահեդդինը գտնվում էր Եգիպտոսում, 1481 (1170) թվականին նուրեղդինը ուղղվեց դեպի արևելք, որովհետև մեռել էր նրա եղբայր Կուտբեդդինը՝ Մոսուլի տիրակալը: Երբ հասավ Մծբին, // մահմեդականները ամբաստանեցին քրիստոնյաներին, թե իբր նրանք վերականգնում են իրենց եկեղեցիները: Նուրեղդինը հրամայեց քանդել բոլոր այն կառույցները, որոնք նոր էին կանգնեցվել: Այսպիսով քանդեցին նեստորականների ձեռքում գտնվող Սուրբ Հակոբի տաճարի, ինչպես նաև հակոբիկների Սուրբ [.....]³⁷⁹ եկեղեցու որոշ մասերը: Այդ ժամանակ Մարդինի մահմեդականները նույնպես ոտնձգություն կատարեցին և խլեցին Քառասուն վկաների եկեղեցու գավիթը: Նուրեղդինը, հասնելով Մոսուլ, տիրեց նրան և Ասորեստանի բոլոր քաղաքներին: Նա ամուսնացավ իր մեռած եղբոր՝ Կուտբեդդին Մավդուդի կնոջ հետ: Իշխանությունը վերցնելով իր ձեռքը՝ նա Մոսուլում թողեց իր սլահեստանի եղբորորդուն, որի անունն էր Սեյֆեդդին Ղազի³⁸⁰: Իսկ Ֆախրեդդին Աբդլմասիհ³⁸¹ անունով մի ներքինու, որը Կուտբեդդինի օրոք Մոսուլի և նրա շրջակայքի կառավարիչն էր և որը սիրում էր քրիստոնյաներին, նա վերցրեց իր հետ և առաջնորդ ու ղեկավար կարգեց իր զորքերի վրա: Նա քրիստոնյաներին նորանոր ծանր պարտավորությունների ենթարկեց՝ Հրամայեց քանդել բոլոր նոր շինված եկեղեցիներն ու կառույցները, պարտադրեց գոտի կապել³⁸², բոլոր քրիստոնյա դպիրներին հեռացրեց դիվանատնից և քրիստոնյաներին արգելեց ձի կամ թամբած ջորի հեծնել: Բոլոր դպիրները վճռվեցին արքունիքից, բացի Աբդուն սարկավագից, որը մի ծերունի ասորի էր՝ խելացի և իմաստուն, ոսկու և գիտելիքների հարուստ պաշարով: Այնուհետև նուրեղդինը մեկնեց Մոսուլից և Լկավ Դամասկոս: Նուրեղդինի գնալուց հետո քրիստոնյաները գտան իրենց հանգստությունը և ազատվեցին իրենց պարտադրված

օրենքներից նուրեզդինի եղբորորդու՝ Սեյֆեզդին բարի կառավարչի մարդասիրության շնորհիվ:

169 Այդ ժամանակ քրդերը կողոպտեցին Սուրբ Մատթայի վանքը³⁸³, // որը գտնվում է նինվեի շրջանի Ալիափ³⁸⁴ լեռան վրա: Նրանք ավարի մատնեցին ողջ սպասքները և սպանեցին տասներեք Վանականի: [Կողոպտեցին] նաև Մարավ լեռան³⁸⁵ վրա գրտնըվող Սուրբ Սարգսի վանքը, որտեղ յուսում էր ստացել Մովսես բար-Քեֆան³⁸⁶:

1482 (1171) Թվականին սաստիկ երկրաշարժ տեղի ունեցավ: Ավերվեց Անտիոքի մեծ մասը, և անհամար մարդիկ զոհվեցին այնտեղ:

450. Նուրեզդինի մսևվան մասին

1485 (1174) Թվականին հիշյալ Նուրեզդինը մեծամտաբար խորհեց գնալ պաշարել Երուսաղեմը: Նա լուր ուղարկեց Ասորեստան, Միջագետք, Ասորիք, Պաղեստին ու Եգիպտոս՝ իր տիրապետության տակ գտնվող բոլոր զորքերին, որպեսզի շտապ հավաքվեն իր մոտ: Սակայն նույն տարվա մայիսի 23-ին³⁸⁷, մինչ զորքերը ժամանում էին բոլոր կողմերից, նա հանկարծակի մեռավ Գամասկոսում՝ քսանութ և կես տարի տիրելուց հետո:

451. Նուրեզդինի բնավորության և սովորույթների մասին

Սա սկզբից ևեթ փառք ձեռք բերեց իր հաղթանակների շնորհիվ՝ նվաճելով բազմաթիվ քաղաքներ: Կեղծավոր ու խորամանկ էր և հետևում էր իր օրենքներին: Գինի բոլորովին չէր խմում և ոչ էլ թույլատրում էր խմել: Նա արհամարհում ու իրենից վանում էր երգերը, խաղերն ու պարերը, որոնք սովորական են թագավորների համար: Ասում են, որ նրան ոչ ոք չի տեսել ծիծաղելիս: Նա ոչ որի հետ չէր ճաշում, այլ՝ առանձին և այն էլ օրական մեկ անգամ: Ամուսնության կամ բազմամուսնության նկատմամբ ցանկասեր չէր, որպիսի սլզծությունը սովորական է թուրք թագավորների համար: Հագուստ-կապուստի մեջ գերադասում էր հասարակ զգեստները: Նա մեղմ ու հանդարտ էր, միշտ ծոմ էր պահում և ընթերցում իրենց Գիրքը³⁸⁸: Նա արդարադատ, ողորմած և զթասիրտ էր աղքատ մահմեդականների և բարեպաշտ քրիստոնյաների նկատմամբ: Միշտ և ամենուրեք ջանում էր ամրապնդել մահմեդական օրենքներն ու սովորույթները: [Վերուցնում էր] զանազան բրնույթի հարկերն // ու ամեն կարգի անիրավությունները: Իր տիրապետության տակ գտնվող բոլոր երկրներում վերացրել էր մաքսա-

վճարը: Երբ նա լուր էր ստանում կատարված անիրավությունների մասին, իսկույն հարթում էր դրանք և հատուցում վնասը: Առանց դատի և ճշմարիտ վկայութեան երբեք չէր պատժում հանցավորներին: Նրա ճամբարում ժխոր, խաղ կամ աղմուկ չկար, այնտեղ հանդարտություն և խաղաղություն էր տիրում:

452. Նուրեդդինի որդու զահակալման, Երուսաղեմի քաղաքի մահվան և Ուոհայի եկեղեցիների ավերման մասին

Նուրեդդինի մահվանից հետո Հալեպ քաղաքում թագավորեց նրա քսանամյա պատանի որդին, որի անունն էր Մելիք Սալիհ³⁸⁹. Երուսաղեմի թագավորը լսելով, որ Նուրեդդինը մեռել է, սրտապրնդվեց և, մտնելով Դամասկոսի երկիրը, կողոպուտի և ավարի մատնեց այն: Նա պաշարեց մի ամրոց, որ կոչվում էր Բանիաս, և նեղ վիճակի մեջ դրեց: Սակայն աստծու հրամանով թագավորը հիվանդացավ և, գալով Աքքա քաղաքը, մեռավ Նուրեդդինի մահվանից մեկ ամիս հետո: Սարսափը տիրեց բոլոր քրիստոնյաներին երիտասարդ թագավորի ողբալի մահվան պատճառով: Նրան հաջորդեց իր տասնհինգամյա պատանի որդին, որը հաշտություն կնքեց մահմեդականների հետ:

Այդ ժամանակ դեռևս կանգուն էին Ուոհայի Այա-Սոֆիա կոչվող մեծ եկեղեցու ողջ հարավային մասը, խորանը և արևմտակողմը: Սակայն դրանք սկսեցին քանդել և այդ հոյակապ կառույցը իջեցրին մինչև հիմքերը: Քարերն օգտագործեցին բերդապարսպի շինության համար՝ նրանց մեծ մասը հառանի մահմեդական մզկիթը տեղափոխելուց հետո: Ամբողջովին կանգուն և անխաթար էր նաև Առաքելոց մեծ եկեղեցին: Սակայն երբ նրա հյուսիսային կողմը փլվեց, դա էլ սկսեցին քանդել || և քարերը բերդ տեղափոխել: Սկսեցին քանդել նաև Սուրբ Ստեփանոսի տաճարը, որը նույնպես ամբողջովին կանգուն էր: Այն հիմնահատակ արին և քարերը տարան՝ բերդը շինելու համար: Հիմնովին ավերեցին նաև մահմեդականների մզկիթի մոտակայքում գտնվող Քառասուն վկաների տաճարը:

453. Մոսուլի տիրակալի դեպի արևմուտք ձեռնարկած սուլթանը և Ուոհայի պաշարումը նրա կողմից

Մոսուլի տիրակալը՝ Սեյֆեդդին Ղազին, որը Նուրեդդինի եղբորորդին էր, լսելով իր հորեղբոր մահը, դուրս ելավ Մոսուլից և

եկավ պաշարեց Մծբինը: Մի քանի օրից նա գրավեց այն և վերահանգնեց հորեղբոր վերացրած հարկերն ու տուրքերը: Նա թույլ տվեց բացահայտորեն գինի խմել և վերցրեց ջարդեց մզկիթի դռան վերևում դրված քարե տախտակը, որի վրա նուրեգդինի կողմից նշովքներով ու լուտանքներով գրված էր, որ անվերապահորեն կատարվեն իր հրամանները: Նա լուր ուղարկեց և իր մոտ կանչեց բոլոր հարևան կուսակալներին: Դրանց թվում էին Մարդինի և Հիսնֆեֆայի տերերը, որոնք դաշինք կնքեցին նրա հետ: Բազում զորք հավաքելով՝ նա եկավ պաշարեց Խառանը և մի քանի օրից գրավեց այն: Ապա այնտեղից անցավ պաշարեց Ուտհան: Եվ եթե ուռհայեցիներն իրենց կյանքը փրկելու համար շտապ շրջադարձեցին հաշտության առաջարկը ու շհանձնեցին [քաղաքը], իսպառ կորսյան կմատնվեցին: Այնուհետև նա գնաց գրավեց Սրուճն ու Եփրատի շրջակայքի բոլոր երկրները և ուղղվեց դեպի Հալեպ ու Դամասկոս: Տեղի մարդիկ սասանվեցին նրա առջև և, աղերսող պատգամավորներ ուղարկելով, հաշտություն կնքեցին նրա հետ: Նա վերադարձավ Մոսուլ՝ իր մայրաքաղաքը:

454. Սալահեդդին Յուսուֆ իբն Այուբի թագավորության սկիզբը, որը կոչվեց նաև Մելիֆ ան-Նաոիր

172 Այդ տարի՝ 1486 (1175) թվականին Սալահեդդինը, որ թագավորել էր Եգիպտոսում, ուղարկելով իր Շամսուլիսլամ³⁹⁰ եղբորը, իր հերթին գրավեց // Եմենն ու Յատրիբը³⁹¹, այդպիսով տիրելով մինչև Նուբիայի³⁹² և Հաբեշստանի սահմաններն ընկած հարավարևելյան բոլոր երկրներին: Նա ուներ վեց եղբայր³⁹³, որոնք էին՝ Մելիբ ալ-Ադիլ Սեյֆեդդին Աբուբաքրը³⁹⁴, Սեյֆուլիսլամը³⁹⁵, Շահանշահը³⁹⁶, Տարուխշահը³⁹⁷, Շամսուլիսլամը և Թաջուլմուլուքը³⁹⁸: Այս բոլորին նա երկրներ պարգևեց, ապա պատրաստվեց ուժեղ զորաբանակով արշավել դեպի Ասորիո, որ ցույց կտանք Տիրոջ օգնականությամբ:

Արարական տիրապետությունն սկիզբ առավ 933 (622) թվականին³⁹⁹, հունաց Հերակլիոս⁴⁰⁰ և պարսից Խոսրով⁴⁰¹ արքաների ժամանակ, որով և ավարտվեց պարսից թագավորությունը: Արաբների տիրապետությունից շերս հարյուր քսաներեք տարի հետո, ինչպես վերը նշեցինք, աշխարհի ծայրագույն սահմանից հայտնվեցին թուրքական ցեղերը և, խառնվելով արաբների հետ, հետևեցին նրանց հավատին: Մուհամմեդի դավանանքը, այդպիսով, որդեգրեցին ոչ միայն արաբները, այլ նաև թուրքերը, քրդերը և

պարսիկները: Եվ քանի որ թուրքական զաղթերի ժամանակ արաբների թագավորությունը թուլացած էր, վերջիններս թուրքերի օգնության կարիքն ունեցան քրիստոնյաների դեմ: Թուրքերի շնորհիվ մահմեդականների տիրապետությունն ամրապնդվեց: Թուրքերն աստիճանաբար հողեր ձեռք բերին և տիրեցին դրանց: Սկզբում նրանք քաղաքներ ու երկրներ էին խլում հոռոմոց թագավորությունից, սակայն հետո սկսեցին դավթել նաև մահմեդականներից:

173 Այսպիսով, հարյուր երեսուն տարի անց, այսինքն՝ մեզ մոտիկ ժամանակներում, արաբական թագավորությունն արդեն լիովին դադարել էր ողջ աշխարհում, և թուրքերն էին տիրում ծայրագույն արևելքից մինչև Պոնտոսի ծովը: Արարների ցեղից թագավոր կամ սուլթան չէր մնացել, բացի Բաղդադում նստողից, որին սակայն ոչ թե թագավոր, // այլ խալիֆ, այսինքն՝ իրենց մարգարեի փոխանորդ էին կոչում: Եգիպտոսում նստողը, որն իրենց մարգարեի քրոջ սերունդներից էր, նույնպես եգիպտացիների կողմից խալիֆ էր կոչվում, սակայն, ինչպես տեսանք վերևում, նա այլևս գոյություն չունեի: Սալահեդդինը, Եգիպտոսում իշխանության գլուխ անցնելով, որոշել էր վերացնել սրան, որի անունն էր Ադուդեդդին Ալլահ: Խալիֆն, ինչպես ասացինք, զգալով այդ բանը, լիզեց իր մատանու ալը, որը մահացու գորություն ուներ, և հրաժեշտ տվեց կյանքին: Բաղդադում և Եգիպտոսում նստող [խալիֆների] դավանանքների միջև ինչ-որ տարբերություն կար⁴⁰²: Թուրքերը հետևում էին Բաղդադիներին: Այդ պատճառով նրանք վերացրին Եգիպտոսի գահը, որպեսզի բոլոր մահմեդական ժողովուրդներն ունենան մի խալիֆ:

455. Սասունի Լեկում գտնվող բերդերի մասին,
որոնք գրավվեցին թուրքերի կողմից⁴⁰³

Այդ տարի թուրքերը տիրեցին նաև Սասուն լեռանը, որը գտնվում է նփրկերտից վեր: Նրանք այնտեղից դուրս քշեցին հայերին, որոնք վաղնջական ժամանակներից պահպանում էին իրենց ինքնուրույնությունն այդ լեռներում: Ասում են, որ Սենեքերիմի⁴⁰⁴ որդի Ասարհադոնի⁴⁰⁵ օրերից մինչև նշված ժամանակները հայերն ինքնազուլույս էին այդ լեռներում, որոնք կոչվում են Սասուն և մշտնում են Կորդվացի⁴⁰⁸ երկրի մեջ: Նրանք չէին ենթարկվում ոչ մի թուրքական իշխանության, որոնք բոլոր կողմերից շրջապատել էին իրենց:

Այդ ժամանակ հայերը հինգ տարուց ի վեր բախման մեջ էին նփրկերտի և Մարդինի թուրքերի հետ: Երբ նրանց թշնամությունը խորացավ, Մարդինի ամիրան սկսեց անընդհատ մարդիկ ուղարկել՝ նրանց երկիրը կողոպտելու համար: Հայերը մերթ պարտվում, մերթ էլ հաղթում էին: Այսպես հինգ տարի հայերը ենթարկվեցին 174 թուրքերի ճնշմանը // և ի վերջո ընկճվեցին: Նեղվելով նաև սովից՝ նրանք իրենց բերդերը հանձնեցին Հայաստանի մեծ տիրակալին՝ Խլաթի տիրոջը, որ Շահարմենն⁴⁰⁷ էր:

Այդ ժամանակ հայերն ունեին մի իշխան, որն այդ լեռան և բերդերի տերն էր և կոչվում էր Վիգեն⁴⁰⁸: Նրան իր երկրում մի քանի գյուղ թողին ապրուստի համար: Հետո այդ Վիգենը հագարացավ, այսինքն՝ մահմեդական դարձավ, որևէ բերդ ստանալու նպատակով բայց դա նրան չօգնեց:

456. Հայոց երկրի Անի քաղաքի մասին

Այդ տարի իբերների թագավորը⁴⁰⁹ գրավեց Հայոց երկրի մեծ քաղաքը, որ կոչվում էր Անի: Նրա բնակիչներին նա փրկեց մահմեդականների դաժան լծից, որովհետև այն ամբողջությամբ բնակեցված էր քրիստոնյա հայերով:

457. Ամինեղդին ներփնու սպանությունը Մարդինում

1486 (1175) թվականին կար մի ներքինի, որը կոչվում էր Ամինեղդին և ազգությամբ հայ էր: Ստրկության քշելով՝ նրան ներքինի էին դարձրել և սնուցել Ամիդ քաղաքի մեծամեծների տնտեսում: Նա յուրացրել էր ամիրանների վարվելակերպն ու կառավարման ձևերը և շատերից առաջ անցել: Այնուհետև տեղափոխվելով Մարդին՝ պաշտոնի էր անցել Մարդինի ամիրայի՝ Նաջմեղդինի⁴¹⁰ տանը և ամենայն կարողությամբ կառավարում էր նրա տիրույթները: Նա դաժան և անգութ էր մարդասպանների ու գողերի նկատմամբ և, որքան հնարավոր էր, անաշու կերպով էր վարում դատական գործերը: Նրա օրոք այդ կողմերում կայուն խաղաղություն էր տիրում. նրա անունը մեծարվեց ու հռչակվեց ողջ աշխարհում: Իր բնավորությամբ նա իսկապես արժանի էր կառավարելու: Երբ Նաջմեղդին ամիրան հիվանդացավ, զառամեց ու անկարող դարձավ, ներքինին իր ձեռքը վերցրեց պետության ղեկավարումը:

175 Սակայն նաջմեղդինն ուներ մի երիտասարդ և փառահեղ որդի,
|| որի անունն էր Կուտբեղդին⁴¹¹: Դա մի քաջասիրտ մարդ էր,
բայց զրկված իշխանությունից ու ազդեցությունից: Ոմանք շար-
ժեցին նրա նախանձը, և թեև շատ համառեց, նախանձը տեղ գը-
տավ նրա սրտում: Մի անգամ, դեկտեմբերի 15-ի կիրակի օրը,
Ամինեղդինը եկավ Մարդինի բերդը՝ ողջունելու Կուտբեղդինին:
Նրա հետ զինվորներ չկային, բացի մի ծառայից, որն իրենց սո-
վորության համաձայն կրում էր նրա սուրը: Ամիրայի մի փոքրիկ
ակնարկով զինվորներից մեկը հարվածեց ներքինուն և ամիրայի
աչքերի առջև կտրեց նրա գլուխը: Երբ դա պատահեց, Ամինեղ-
դինի զինակիրը քաշեց սուրը և վրա եկավ, որպեսզի խփի Կուտ-
բեղդինին: Սակայն զինվորներից մեկը գլխատեց նաև սրան, և
այսպիսով երկուսն էլ սպանվեցին: Կուտբեղդինը, վերցնելով գլու-
խը, գնաց իր հոր մոտ: Իսկ դիակը բերդի գլխից քաղաք շարտե-
ցին: Եվ այն մարդուն, որը քիչ առաջ դողացնում էր աշխարհը,
այժմ քարշ էին տալիս փողոցի կեղտաջրերի մեջ: Բոլորն ահու-
դողի մեջ ընկան: Մի փոքր ևս, և քաղաքում կարող էր կոտորած
ու կողոպուտ սկսվել, եթե գուժկանները չշտապեին խաղաղության
կոչ անել բոլորին: Ձերբակալվեցին միայն սպանվածի զինվոր-
ներն ու հարազատները: Նրա ողջ ունեցվածքը՝ անհամար ոսկին,
հարստությունը, ծառաներն ու ձիերը մուժվեցին Կուտբեղդին ա-
միրայի գանձարան: Վերջինս առանց կովի գրավեց նաև ներքի-
նուն ենթակա բերդերը: Կուտբեղդինը տեր ու տիրակալ հայտա-
րարվեց իր հոր հետ միասին:

458. Մելիսեևեի առումը և նրա տիրոջ սպանությունը
նույն տարվա փետրվար ամսի լիալուսնի օրերին

176 Մելիտենեի ամիրան⁴¹² թողել ու դառնացած հեռացել էր
Նրան հաջորդել էր իր եղբայրը⁴¹³, որը, սակայն, որոշ ժամանակ
անց, ընկնելով ձիուց, մեռել էր: Սրանից հետո թագավորել էր
մյուս [եղբայրը]⁴¹⁴ և ամուսնացել || մեռնողի կնոջ հետ, որը
Հիսն-Ջիադի տիրոջ դուստրն էր: Հիշյալ ամիրան, որի անունն
էր Մուհամմեդ, սկսել էր ցոփությամբ շրջագայել տարբեր երկրո-
ւներում: Սակայն նա բռնվեց Նուրեղդինի կողմից և որոշ ժամա-
նակ բանտարկվեց: Այնտեղից նա փախավ Անտիոք, իսկ հետո
եկավ Հիսն-Ջիադ: Այդ միևնույն տարվա մեջ, համաձայնության
գալով որոշ մարդկանց և իր եղբոր կնոջ հետ, նա գաղտնի եկավ

Մեկտեղնե՛ առանց ճանաչվելու որևէ մեկի կողմից, բացի իր հետ եղած երկու մարդուց: Փետրվար ամսի լիալուսնի կիրակի օրվա գիշերը, վտանգելով իր կյանքը, նա մագլցեց այն սրահի պատով, որտեղ քնած էր իր եղբայրը, և գաղտագողի ու հապշտապ սպանեց նրան: Ապա վերցնելով նրա գլուխը և բերդի բանալիները, նույն գիշերը եկավ այն մեծամեծների մոտ, որոնք, ինչպես նա համոզված էր, իր կողմնակիցներն էին: Ցույց տալով իր եղբոր կտրված գլուխը, նա ահաբեկեց ու սարսռացրեց նրանց, և վերջիններս համաձայնեցին երդում տալ նրան: Դա տեղի ունեցավ ժամը տասի և տասներկուսի միջև: Իսկ լուսաբացին նա բարձրացավ բերդը, և լուր տարածվեց, որ իշխանության գլուխ է անցել մի նոր ամիրա, որ ժամանակով սուաջինն էր⁴¹⁵: Եվ քանի որ պարիսպն ու դարպասները հսկողության տակ առնվեցին, նա առանց կովի տիրեց [քաղաքին]: Ապա ամուսնացավ եղբոր կնոջ հետ, որը, ինչպես նրանց պիղծ սովորությունն էր, իրենից առաջ պատկանել էր իր երկու եղբայրներին:

459. Կիլիկիայի իշխան Մլեհի⁴¹⁶ սպանության մասին, որ տեղի ունեցավ նույն տարում

Կիլիկիայի իշխանը, որի անունն էր Մլեհ, բռնությամբ ու դաժանությամբ էր կառավարում: Նա իր ամբարշտությամբ գերազանցեց ոչ միայն քրիստոնյա անօրեն իշխաններին, այլ նույնիսկ մահմեդական և հեթանոս բռնակալներին: Սակայն զինվորներն ու ժողովուրդը շահադուրժեցին նրա անիրավությունները, և զորքերն ապստամբեցին նրա դեմ: Իմանալով այդ՝ նա փախավ և փորձեց մտնել իր երկրում գտնվող մի անառիկ բերդ: Սակայն
 177 երբ հասավ [.....]⁴¹⁷ կոչվող բերդի դարպասին, // բերդում եղող զինվորները դուրս գալով բռնեցին և շարաշար սպանությամբ պատառտեցին նրան, իսկ հետո մարմնի մասերը նետեցին շներին: Դա մի սահմուկեցուցիչ և դաժան արարք էր: Այնուհետև Տարսոնից կանչել տվեցին Մլեհի պատանի եղբորորդուն, որի անունը Ռուբեն⁴¹⁸ էր և որն այնտեղ էր փախել իր հորեղբոր շարագործությունների պատճառով: Մլեհի կինը հայոց Գրիգոր⁴¹⁹ կաթողիկոսի բույրն էր: Երբ Մլեհն սպանվեց, և իշխանության գլուխ անցավ Ռուբենը, կաթողիկոսը զնաց այնտեղ և, վերցնելով քոջը, բերեց Հռոմկլա: Ռուբենը վերջինիս երեք բերդ տվեց Կիլիկիո երկրում. մեկը կոչվում էր Բեֆա դ-Սարնուդ, մյուսը՝ Սիման, իսկ երրորդը՝ Բանբին⁴²⁰:

Այդ տարի Բաղդադում նույնպես ապստամբություն ծագեց, երբ խալիֆը իր սիրելի ժառանգրից մեկին, վեր դասելով բոլոր հարազատներից ու մեծամեծներից, կառավարիչ նշանակեց իր տիրույթների ու տան վրա: Վերջինիս անունն էր Կուտբեղդին: Նա այնքան առաջ գնաց, որ ամբողջությամբ իր ձեռքը լերցրեց զորքերի ու քաղաքների կառավարումը: Այնուհետև նա որոշեց ապստամբել և, ի կատարումն այդ մտադրության, գլուխ բարձրացրեց իր տիրոջ դեմ: Զորահավաք կատարելով՝ նա շրջապատեց խալիֆի ապարանքը և կատաղի գրոհներով ու նետարձակումներով նեղ դրություն մեջ դրեց նրան: Երբ խալիֆը հուսահատված պատրաստվում էր արդեն տեղի տալ, բարձրացավ վերին հարկահարթակը և սկսեց լացուկոծ անել: Ողջ քաղաքի բնակչությունը, տեսնելով նրա անձի անպատվությունն ու լսելով նրա ողբի ձայնը, գրգռվեց, և քաղաքի բյուրհազարավոր մարդիկ հավաքվելով պատրաստվեցին ճակատամարտ տալ այդ ժառանգին. Վերջինս պարտվեց || ժողովրդի բազմությունից և փախուստի դիմեց դեպի Մոսուլ՝ հետև ունենալով ևրեսուն հազար հեծյալ ու հետեւակ զինվորներ: Երբ նա հասավ Մոսուլի մոտակայքը, վերջինիս տիրակալը վախեցավ նրանից և նվերներով ու հաշտության առաջարկով պատգամավորներ ուղարկեց նրան դիմավորելու համար: Սակայն մինչ նրանք գտնվում էին այդ ամայի և անմարդաբնակ ճանապարհին, հանկարծ մի կիզիչ քամի փչեց, և թանձրամած ու հեղձուցիչ խավար տիրեց, որ կաշկանդում էր նրանց շնչառությունը: Բոլորը շնչահեղձ եղան, և նրանց դիակները փոփոցին այրված փայտածուխի նման: Փրկվեցին միայն Կուտբեղդինը և մոտ հարյուր հոգի՝ մեծամեծներից ու երեւելիներից: Սակայն ևրբ որոշ ժամանակ անց հասան Մոսուլ, Կուտբեղդինը մեռավ այնտեղ:

461. Սալահեդդին մեծ տիրակալի արշավանքը դեպի Ասորիք և նրա տիրապետության սահմանների քնդարձակումն այդ կողմերում

Այդ տարի, որ 1486 (1175) թվականն էր, Սալահեդդինը մեծ զորքով և հսկայական հարստությամբ ելավ Եգիպտոսից ու եկավ Դամասկոս՝ ցույց տալով, թե իբր ուզում է օգնել Նուրեդդինի որդուն և ամրապնդել նրա թագավորությունը: Սակայն նա կեղ-

ծում էր և իրականում իր ձեռքն էր վերցնում բոլոր գործերը: Եգիպտոսում նա թողեց իր Սեյֆեդդին Աբուբաքր⁴²² անունով եղբորը: Երբ հասավ Դամասկոս, այն հանձնեցին իր ձեռքը: Այնտեղից նա մեկնեց դեպի Հոմս և գրավեց ինչպես այդ, այնպես նաև Համա [քաղաքն] ու ողջ Փյունիկիան՝ մինչև Հալեպի մոտակայքը: Մելիք Սալիհը՝ Նուրեդդինի որդին, գտնվում էր Հալեպում: Սալահեդդինը եկավ և հինգ ամսով բանակ դրեց Հալեպի մոտակայքում: Նա դեսպաններ էր ուղարկում և խոստանում ենթարկվել Նուրեդդինի պատանի որդու հրամանին, ժառայել միայն որպես զորահրամանատար, իսկ թագավորությունը, հռչակն ու ազդեցությունը թողնել նրան: Սակայն քանի որ գիտեին // նրա խորամանկությունը, թույլ չտվին, որ նա մտնի Հալեպ, և պատանին ընկնի նրա ձեռքը: Այնժամ Սալահեդդինն սկսեց բացահայտ պատերազմ մղել Նուրեդդինի որդու դեմ, գրավելով Լիբանանի լեռնալանջերի ու Հալեպի շրջակայքի ողջ տարածությունները:

Այդ տարի, ապրիլի 11-ի կիրակի օրվա առավոտյան արևի խավարում տեղի ունեցավ: Նրա գունդն ամբողջությամբ մթնեց, և աստղերը երևացին ինչպես խոր գիշերվա մեջ: Դա 1486 (1175) թվականն էր^{422a} :

462. Եփրատից արևելք տիրող ամիրաների պատերազմը Սալահեդդինի դեմ և Մոսուլի տիրակալ Սեյֆեդդինի պարտությունը

1486 (1175) թվականին վերոհիշյալ Սեյֆեդդինը՝ Մոսուլի և Միջագետքի տիրակալը, որը Նուրեդդինի եղբորորդին էր, հավաքելով իր և հարևան ամիրաների զորքերը, պատրաստվեց գնալ պատերազմել Սալահեդդինի դեմ և օգնության հասնել իր հորեղբորորդուն՝ Հալեպի տիրոջը: Բազմաքանակ զորքերը, որոնց մեջ Սեյֆեդդինը չկար, եկան և հասան մինչև Հալեպի մոտակա հարթությունը: Այստեղ էլ տեղի ունեցավ արևելցի և եգիպտացի զորքերի ճակատամարտը: Տերը հաղթանակ տվեց եգիպտացիներին: Զախչախիչ պարտություն կրելով՝ արևելցիները փախուստի դիմեցին, և նրանց ճամբարը ավարի մատնվեց: Փրկվեցին միայն նրանք, ովքեր իրենց տակ ուժեղ ձիեր ունեին: Այս հաղթանակը տանելուց ու հաղթողի պսակին արժանանալուց հետո Սալահեդդինի հռչակը տարածվեց, և բոլոր թագավորներն ահուղողի մեջ ընկան: Ապա նա վերադարձավ Դամասկոս և հաշտություն կնքեց ֆրանկների հետ:

463. Սեյֆեդդինի ճակատամարտը Սալահեդդինի հետ և նրա ծանր պարտությունը

180 Հաջորդ տարի՝ 1487 (1176) թվականին, Սեյֆեդդինը նորից պատրաստվեց և, անհամար զորք հավաքելով, հսկայական զորաբանակներով եկավ հասավ մինչև Ուռհա: Նա դեսպաններ ուղարկեց Սալահեդդինի մոտ՝ ասելով. || «Վերադարձրու այն երկրները, որ զավթել ես Հալեպում նստող իմ պատանի հորեղբորորդուց: Ապա թե ոչ՝ պատրաստվիր մարտի»: Իսկ Սալահեդդինը խորամանկաբար պատասխանեց. «Ես Նուրեդդինի որդու ստրուկն եմ և նրա համար էլ դուրս եմ եկել Եգիպտոսից, որպեսզի ամրապնդեմ նրա թագավորությունը: Ես պատրաստվում եմ նրան տալ ոչ միայն իմ ձեռքում եղած երկրները, այլ նաև նրանք, որոնք թեև այժմ գտնվում են քո ձեռքում, բայց պատկանել են նրա հորը»: Երբ նրանց հակասությունը սրվեց, Սեյֆեդդինը ուղղվեց դեպի Հալեպ: Կողմերը պատրաստվեցին բախվել այնտեղ, որտեղ տեղի էր ունեցել առաջին ճակատամարտը: Սեյֆեդդինն ուներ ավելի քան հարյուր հազար զինվոր: Իսկ Սալահեդդինի զորքերի թիվը հազիվ հասնում էր տասներկու հազարի: Երբ մարտակարգերը դասավորվեցին, և կողմերը, խփելով թմբուկները, հարձակվեցին իրար վրա, արևելցիները իրենց մեջ եղած դավաճանության պատճառով թիկունք դարձրին: Նրանք ընկրկեցին թշնամու առաջ և, ջախջախիչ պարտություն կրելով, փախուստի դիմեցին: Փրկվողները հետիոտն էին և զրկված ամեն ինչից: Ինչ վերաբերում է Սեյֆեդդինին, ապա նրա տակի ձին հազիվ դիմանալով մինչև Եփրատ, ընկավ ու սատկեց: Նա մնաց հետիոտն: Սակայն այն գյուղում, որտեղ հայտնվեց, նրան մի գրաստ տվին, և նա ճողոպրեց Մոսուլ՝ ճանապարհին վախից չհայտնելով իր ով լինելը: Այս եղավ նրա արշավանքի դառն վախճանը: Իսկ եգիպտացիները ոսկու, արծաթի, ձիերի, անասունների, վրանների, զանազան զարդերի ու զենքուզրահի տեր դարձան:

464. Մաբբուգի պաշարման մասին

181 Հալեպում Նուրեդդինի պատանի որդու մոտ էին գտնվում Սեյֆեդդինի եղբայրը⁴²³, Գյումուշտեգին⁴²⁴ անունով ներքինի կառավարիչը, ինչպես նաև Նուրեդդինի մյուս մեծամեծները: Սալահեդդինը միառժամանակ թողեց Հալեպը և եկավ պաշարեց || Մաբբուգ քաղաքը: Մաբբուգին տիրում էր Կուլտեդդին իբն Հասան անունով մի մարդ, որն առաջ, երբ Ուռհան ընկավ մահմեդականներ-

րի ձեռքը, իշխում էր այնտեղ, մինչև որ եկավ Նուրեդդինը և, իշխանութիւնը նրանից վերցնելով, տվեց Մասուդ Ֆախրեդդին Չաֆարանի անունով մի մարդու՝ Համայի, Հոմսի և Բարինի⁴²⁵ տիրոջը: Իսկ Կուտբեդդինն ստացավ Մաբբուզը, որը նախկինում պատկանում էր իր հորը: Կուտբեդդինն Ուռհայում շատ ոսկի էր ձեռք բերել և հարուստ էր ոչ միայն ունեցվածքով, այլ նաև գիտելիքներով: Սակայն ո՛չ ոսկին, ո՛չ էլ խելքը չօգնեցին, որովհետև ժողովուրդն ամենուրեք դավաճանեց նրան: Մի քանի օրից Սալահեդդինը գրավեց Մաբբուզը և, բռնելով ամիրային, բանտ նետեց: Ապա յուրացրեց ողջ այն հարստութիւնն ու ոսկին, որ նա հավաքել էր երկար տարիների ընթացքում:

465. Ազազի պաշարումը և այդ կողմերի բնակավայրերի ու բերդերի առումը

Առանց կռիւի գրավելով Թլպաշարը, Այնթապն ու նրանց պատկանող տարածութիւնները՝ Սալահեդդինը եկավ պաշարեց Ազազ ամրոցը և ուժեղ գրոհ ձեռնարկեց նրա դեմ: Նրա զինվորների հարվածներից շատերն սպանվեցին այնտեղ: Ի վերջո նա գրավեց այն ու քարուքանդ արեց: Ապա մեկնելով այնտեղից, եկավ պաշարեց Հալեպ քաղաքը և կատաղի հարձակումներ գործեց նրա վրա: Հալեպցիները օգնութիւն խնդրեցին ֆրանկներից: Ֆրանկները մտան Եգիպտոսի սահմանները և սկսեցին կողոպտել ու ավերածութիւններ գործել: Ֆրանկներից ոմանք էլ պատրաստվեցին հարձակվել նրա ճամբարի վրա: Ընկնելով նեղ դրութիւն մեջ՝ նա հեռացավ Հալեպից և եկավ Դամասկոս:

182 Այդ տարի, դեկտեմբեր ամսի շաբաթ օրերից մեկում հորդառատ և ուժգին անձրև տեղաց: Սակայն կեսօրից հետո անձրևը տեղի տվեց ուժեղ քամու պատճառով, որը ողջ Միջագետքում, Ասորիքում և Պաղեստինում կարմիր փոշի լցրեց կտուրների, տների ու դաշտերի վրա: Տեղէր կային, //որտեղ մարդու հասակից ավելի փոշի էր կուտակվել, իսկ որոշ տեղեր էլ՝ մոտ երկու թիզ:

Այդ տարի մեռավ Նաջմեդդինը՝ Մարդինի տերը, որը մի բարեհամբույր և հաճելի մարդ էր: Նա լավ էր տրամադրված քրիստոնյաների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ և քրիստոնյաներից ավելի հոգ էր տանում իր երկրում եկեղեցիներ շինելու գործին: Նա շարունակ շրջում էր վանքերը և սիրում էր իջևանել այնտեղ ու կերուխում անել:

466. Իկոնիայի սուլթանի, Պոնտոսի երկրի, ինչպես նաև
 Բրիտանոնյաներին օգնելու նպատակով հունաց կայսեր
 ձեռնարկած արշավանքի և նրա անփառունակ ու
 ձեռնունայն վերադարձի մասին

1186 (1175) թվականին հունաց կայսրը, որի անունն էր Մա-
 նուել, որսի ժամանակ վիրավորվեց ազդրից՝ վարազի դեմ [ար-
 ձակված] մի նետով: Լուր տարածվեց, թե նա մեռել է: Այդ պատ-
 ճառով Իկոնիայի սուլթան Քիլիջ Արսլանը⁴²⁶ սրտապնդվեց ու
 շարժվեց դեպի Պոնտոսի ծովը: Սակայն երբ Դանիշմենդի ցեղի
 շառավիղներն իմացան, որ հոռոմոց կայսրն ապաքինվել է, օգնու-
 թյուն խնդրեցին նրանից և հորդորեցին պատերազմ սկսել թուր-
 քերի դեմ: Վերջինս մեկնեց մայրաքաղաքից և եկավ բանակ դրեց
 սահմանամերձ երկրներում: Նա սկսեց կռիվ մղել սուլթանի դեմ,
 և պատերազմը նրանց միջև թեժացավ: Հույն ղեկավորներից շա-
 տերը զոհվեցին: Թուրքերը հույներին անասունների նախիրների
 նման խումբ-խումբ գերի էին քշում իրենց երկրից: Կապաղով-
 կիան, Հայաստանը, Ասորիքը և Միջագետքը լցվեցին տղաներով
 ու աղջիկներով, որոնք դարձան թուրքերի ստրուկներն ու աղախին-
 ները: Վաճառականները նրանց տարան նույնիսկ մինչև աշխարհի
 ծայրը: Դա մի ցավալի և ողբի արժանի տեսարան էր

467. Նեոկեսարիա ֆաղափի պաշարումը հունաց կայսեր կողմից

183

Այդ ժամանակ հունաց կայսրն || իր քրոջ որդուն և դանիշ-
 մենդյան Դանուն անունով ամիրային մոտ երեսունհազարանոց բա-
 նակով իր բանակավայրից ուղարկեց պաշարելու Նեոկեսարիա
 քաղաքը: Իսկ ինքն զբաղված էր երեք ավերված քաղաքների վե-
 րակառուցմամբ, որոնք քանդվել էին շատ ժամանակներ առաջ:
 Պաշարելով Նեոկեսարիան, [հույները] տասներկու օր կատաղի
 հարձակումներ՝ գործեցին նրա վրա, որն արդեն քիչ էր մնում ընկ-
 ներ նրանց ձեռքը: Սակայն թուրքերը, որոնք փակված էին ներ-
 սում, հնար գտան և քաղաքի քրիստոնյաների անունից հունարեն
 գրով մի նամակ գրեցին դրսում եղող հույներին, որտեղ ասված
 էր. «Այդ Դանուն թուրքը, որ ձեզ առաջնորդել է այստեղ, նենգո-
 րեն դավ է նյութում ներսի իր ցեղակից թուրքերի հետ՝ ձեզ ոչըն-
 չացնելու նպատակով»: Նամակն արձակեցին նետով: Երբ անմիտ
 հույները կարդացին այն, սկսեցին դողալ կանանց նման, և Տերը
 նրանց զրկեց հաղթանակից: Նրանք ահուդողի մեջ ընկան և փա-
 խուստի դիմեցին: Թուրքերը դուրս եկան քաղաքից և, հետապըն-

դելով նրանց, ավելի քան հազար հոգու սրի մատնեցին և խլեցին նրանց ողջ ունեցվածքը: Հունաց կայսեր քրոջ որդին սպանվեց, իսկ Դանունը բռնվեց և տանջանքներով ու շարշարանքներով շրջ-
թաների դատապարտվեց:

468. Կայսեր առաջխաղացումը, նրա զինվորների և ունեցվածքի կորուստը և նրա անփառունակ վերադարձը մայրաքաղաք

184 Մանուել կայսրը, լսելով պատահարի մասին, զայրացած վեր կացավ իր բանակած տեղից և հինգ օրաճանապարհ թափանցեց թուրքերի երկրի խորքը: Սուլթանը փախավ նրա առջևից և բարձրացավ լեռը: Սակայն թուրքմենները, որոնք ծովափի ավազի նման լցված էին այդ երկրում, տեսնելով, որ հունաց կայսրը մտել է իրենց բնակություն վայրերը, իսկ սուլթանից որևէ օգնու-
թյուն չի սպասվում, հավաքվեցին բոլոր կողմերից և շրջապատեցին կայսեր բանակը, || ոմանք՝ լեռներից, ոմանք՝ դաշտերից, ոմանք էլ՝ աջից ու ձախից: Ովքեր ընթանում էին առջևից, այրում էին գլուղերը, խոտը, հարդը, հացահատիկն ու մնացած ամեն ինչ, ինչպես նաև պղծում էին ջրերը: Իսկ ովքեր գալիս էին ետևից, հսկում էին ճանապարհները, որպեսզի նրանցով պարեն չմատակարարվի: Հինգ օր պարեն չստանալով՝ [հույները], քանի որ հսկայական բազմություն էին կազմում, թուլացան քաղցից ու ծարավից՝ իրենց ձիերի հետ միասին: Տիրոջ բարությունը երես էր թեքել նրանցից: Թեև նրանք երեք հարյուր հազար հոգի էին, սակայն նույնիսկ տաս մարդ դուրս չեկավ ճամբարից՝ որևէ բան հայթայթելու կամ իրենց մատակարարումն արգելակող թուրքերին վանելու համար: Նրանք թուլամորթների նման կուտակվել էին ճամբարի ներսում, ինչպես ուլերը՝ փարախում: Զիմանալով, թե ինչ պիտի անեն, և հալումաշ եղած, նրանք սկսեցին վազել Իկոնիա քաղաքի կողմը:

Երբ թուրքերն զգացին նրանց թուլությունը, համարձակու-
թյուն ստացած՝ թիկունքից ծանր հարված հասցրին նրանց: Խլեցին նրանց երինջները, երամակները, եզներն ու ձիերը, ինչպես նաև ետևից փոխադրվող անհամար բեռներն ու գույքերը: Կայսերն ուղեկցում էր հիսուն բեռ ոսկե դինարի արժողությամբ մի հարստություն: Թուրքերը հարձակվեցին ու զավթեցին այն: Հույները ծարաված, քաղցած ու սպառված՝ առաջ էին շարժվում, բայց Իկոնիան դեռ հեռու էր: Եվ մինչդեռ նրանք գտնվում էին այդ լեռներում, թուրքերը հարձակվեցին նրանց վրա և, շրջապատելով, սկսեցին գազանների պես գազազել նրանց վրա: Ապա լուր

ուղարկեցին սուլթանին, որն առջևում բազմաթիվ ջահեր պարզած՝ գիշերով միացավ նրանց:

185 Երբ հուլյները լսեցին թմբուկների ու շեփորների ձայնը, ինչպես նաև ամբոխի ու զորքի աղաղակը, սարսափելի ահուդողի մեջ ընկան: Նրանց ձեռքերն ու ոտքերը դողացին, և նրանք սկսեցին աղաչել կայսրին. || «Կյուրիե էլեեսոն⁴²⁷, քո մոտ եղած ոսկին նետիր թուրքերին, որ ձեռք քաշեն մեզնից»: Սակայն կայսրը գիտակցելով, որ դա ոչնչով չի օգնի, հնար գտավ և սուլթանին ուղարկեց հետևյալ լուրը. «Հիշիր իմ և քո միջև եղած նախկին բարեկամությունը: Ես իմ կամքով չեմ որ եկել եմ այս երկիրը, ինձ խաբելով այստեղ բերին քո ցեղակիցները: Արդ, բարությամբ հաշտություն կնքիր, և ես քեզ կնվիրեմ իմ վերականգնած երեք քաղաքները, ինչպես նաև ուրիշ վայրեր»: Սուլթանը համաձայնեց և, կայսեր մեծամեծների ու ազգականների միջից ընտրելով հիսուն պատանդ, նրան օգնության ուղարկեց մի զորագունդ. Սակայն թուրքմենները չհանդուրժեցին դա և, աղաղակելով, հափըշտակելով ու գուփելով, մինչև մայրաքաղաք հետևեցին նրանց: Այս եղավ Մանուելի արշավանքի դժբախտ վախճանը:

Այդ տարի անձրևի պակասությունից սով առաջացավ: Հաջորդ տարի սովը սասակացավ ու ծավալվեց հատկապես Պաղեստինի, Խորին Ասորիքի, Դամասկոսի, Փյունիկիայի և Հաուրանի⁴²⁸ երկրներում: Շատ վայրեր մարդաթափ եղան: Այդ երկրներում ցորեն ու գարի բուրրովին չկար, և սնվում էին խոտով ու խոզակաղնով:

469. Մաադների, այսինքն՝ արաբների բազմամարդ ժողովրդի մասին, որը ժայթքելով դուրս հորդաց անապատից

186 [14]88 (1177) թվականի ապրիլին անապատից ժայթքելով դուրս հորդացին սև արաբների բազմամարդ ցեղեր, որոնք արաբերեն լեզվով կոչվում էին բեդուիններ: Սովից նեղված՝ նրանք լքեցին իրենց բնակության վայրերը և հասան մինչև Եփրատի ափերը: Սակայն նկատելով այդ, Կալլինիկոսի քաղաքագլուխը, որի անունն էր Կուտբեդդին և որը ժամանակին եղել էր Ուոհայի կառավարիչը, թույլ չտվեց նրանց անցնել: Նա ասաց. «Ես չեմ կարող առանց Ասորեստանի տիրակալի հրամանի ձեզ թույլ տալ մտնել || Միջագետք»: Անցնելու թույլտվության դիմաց նրան առաջարկեցին հինգ հազար ոսկե դինար, ինչպես նաև ձիեր և ուտեր: Սակայն նա նրանց մասին տեղեկություն ուղարկեց Մոսուլ՝

Թույլ տալու կամ շտալու խնդրանքով: Պատասխան եկավ՝ շթույլատրել, որպեսզի սովը ավելի չսաստկանա երկրում:

Կալլինիկոսի կառավարիչը նրանց վաճառեց իր մոտ կուտակված հացահատիկը: Գնելով այն և մի փոքր հագեցնելով իրենց քաղցը, [արաբները] համարձակվեցին անցնել առանց Թույլտվության՝ բռնի կերպով: Նրանք թափով մտան գետը և գտան մի ծանծաղուտ, որտեղով կարողացավ անցնել տղամարդկանց, կանանց ու երեխաների ավելի քան հարյուրհազարանոց հետիոտն բազմությունը՝ ձիերի և ուղտերի հետ միասին: Երբ թուրքերը նկատեցին այդ, նրանց դեմ զորքեր հավաքեցին Կալլինիկոսից, Խառանից, Ուոհայից ու Սրուճից և գիշերով հարձակվեցին նրանց ճամբարի վրա: Վերջիններս պարտություն կրեցին և, թիկունք դարձնելով, փախուստի դիմեցին: Նրանք ուղղվեցին դեպի Եփրատ՝ իրենց երկրում ապաստան գտնելու նպատակով: Սակայն, երբ ուղտերը, ձիերը, մարդիկ ու հոտերը կուտակվեցին ծանծաղուտում, ինչպես ականատեսներն են պատմում, գետի մեջ մի ամուր պատնեշ ստեղծվեց, որը խոչընդոտում էր ջրերի ընթացքը: Զրերը ճնշման տակ հոսեցին դեպի գետի ափերը: Սակայն հանկարծ ջրերի այդ հսկայական շեղջը քշեց տարավ մի ահագին բազմություն և անասուններ: Խառնաշփոթի մեջ փրկվեցին միայն հատուկենտ մարդիկ:

470. Մելիտենեի պաշարումը սուլթան Քիլիյ Արսլանի կողմից

Այդ տարի, 1488 (1177) թվականին, Իկոնիայի սուլթանը, որ զավթել էր Սեբաստիայի շրջակայքն ու Դանիշմենդի ցեղի բոլոր տիրույթները և, ինչպես վերը տեսանք, հաղթանակ էր տարել հույների նկատմամբ ու շախշախել Մանուել կայսրին, մեկնելով իր երկրից, եկավ պաշարեց Մելիտենե քաղաքը: Նրա նպատակն էր ձեռք գցել Դանիշմենդի ցեղի շառավիղը հանդիսացող մի ամիրայի՝ հատկապես այն պատճառով, || որ այդ թշվառականը հանդգնել էր անգթաբար սպանել նրա եղբորը: Ուստի նա նույնպես պետք է մատնվեր շարաշար պատժի: Մելիտենեի բնակիչները, որոնք չէին սպառվել իրենց բաժին ընկած բազմաթիվ փորձանքներից, լսելով բռնակալի գալուստը, ցրվեցին Միջագետքի երկրներում, և խեղճերը, օրվա հացի կարոտ, կոտորվեցին այդ նեղ տարում: Իսկ ովքեր մնացել էին ներսում, անասելիորեն տառապեցին սովահարությունից:

Շրջապատելով քաղաքը՝ զորքերը շորս ամիս և հինգ օր ուժեղ արքցանի մեջ պահեցին այն՝ սկսած այդ տարվա հունիսի 19-ից

մինչև 1489 (1178) թվականի հոկտեմբերի 25-ը⁴²⁹: ներսում եղող ամիրան ողորմածաբար էր վարվում քաղաքացիների հետ: Սակայն երբ տաղնապն ու վայնասունը փողոցներում սաստկացան, կառավարիչը խորհեց իր մտքում. մի փոքր ևս՝ և հացը կվերջանա, զինվորները կսպանեն իրեն ու կհանձնեն քաղաքը: Այդ պատճառով նա ծածուկ կերպով, զինվորներից աննկատ լուր ուղարկեց և իր կյանքի ապահովության երաշխիք խնդրեց: Նրան տվին Քեսունն իր շրջակայքով, ինչպես նաև հազար դինար: Նա ահուգողով դուրս եկավ և գնաց Հիսն-Չիադ: Իսկ սուլթանը շորեքշաբթի օրը մտավ քաղաք, և այնտեղ լիակատար խաղաղություն հաստատվեց:

Այդ ժամանակ սուլթանը վերացրեց երանելի Մար-Բարսումայի մեծ վանքին պարտադրված ոսկու տուրքը: Երբ նա մտավ Մելիտենե, Միքայել⁴³⁰ պատրիարքը եկավ նրա մոտ և պատվավոր ընդունելության ու սիրալիրության արժանացավ նրա կողմից: Նրա պատվին էլ հենց վերացվեցին վանքի վրա դրված հարկերը⁴³¹:

471. Ինչպես սուլթանի եղբայրն ընկավ ֆրանկների ձեռք

188

Այդ տարի՝ 1489 (1178) թվականին, գերվեց Շահանշահը, ի որը սուլթան Մասուդի⁴³² որդին և Քիլիշ Արսլանի եղբայրն էր: Մինչ նա ծովում նավագնացություն էր կատարում, քամին նրան քշեց Լաոդիկեի նավահանգիստը, որտեղ գտնվում էր Պրինցը՝ Անտիոքի տերը⁴³³: Վերջինս ձերբակալեց ու շղթայեց նրան, որի մոտ բազում ոսկի, թանկարժեք անոթներ ու ձիեր կային, քանի որ վերադառնում էր մայրաքաղաքից՝ հունաց կայսեր մոտից: Նա գնացել օգնություն էր խնդրել նրանից և, քրիստոնեություն ընդունելով, մեծ հարստություն ստացել: Սակայն նա ուզեց խաբել կայսրին և նավ նստեց, որպեսզի գնա Սալահեդդինի մոտ՝ Եգիպտոս: Բայց աստված նրան մատնեց ֆրանկների ձեռքը: Միաժամանակ ձերբակալվեցին նաև նրա երեք որդիները և քառասուն երեկի անձնավորություններ՝ իրենց ծառաներով:

472. Սալահեդդինի պառապությունը ֆրանկներից Ասկալոնի երկրի Ռամլա⁴³⁴ կոչվող վայրում

1489 (1178) թվականին Եգիպտոսի տիրակալ Սալահեդդինը բազում զորքերով վճռական և հոխորտալից արշավանքի ելավ, ունենալով երեսուներեք⁴³⁵ հազար զինված հեծյալներ և ավելի քան տասներկու հազար հետևակ զինվորներ՝ զենք ու պարեն

քարձած ուղտերի հետ միասին: Հասնելով Ասկալոնի մոտակայքը, նա համարձակվեց անցնել Ֆրանկների սահմանը, որովհետև արհամարհում էր Ֆրանկների Բաղդուին⁴³⁶ թագավորին՝ հանգուցյալ Ամորիի որդուն, որը տառապում էր բորոտությամբ: Բոլորը ձևոք էին քաշել այս հիվանդ և գրեթե կիսամեռ թագավորի կյանքից Սակայն վերջինս ուժ գտավ իր մեջ և ելավ դիմակայելու Սալահեդդինին: Նրա հետ էին Ֆրեր⁴³⁷ կոչվող եղբայրները և Ռենալդ պրինցը⁴³⁸, որն ազատվել էր տասնհինգամյա բանտարկությունից: Նրանք սկսեցին մարտնչել ու պատերազմել թուրքական ցեղերի դեմ: Երկու օր կոտորելուց ու կոտորվելուց հետո Տերը ցույց տվեց իր ողորմածությունը: Ֆրանկները ուժ առան // և ջախջախիչ պարտության մատնեցին թուրքերին: Տերը զայրացավ վերջիններիս վրա և, նրանք թիկունք դարձնելով, փախուստի դիմեցին: Ֆրանկները մի ամբողջ օր կոտորելով հետապնդեցին նրանց: Ովքեր շկարողացան ճողոպրել, հինգ օր տոչոչվեցին անապատում՝ տառապելով քաղցից ու ծարավից: Նրանցից շատերը կորստյան մատնվեցին, իսկ Սալահեդդինը հազիվհազ փրկություն գտավ Եգիպտոսում: Հաղթանակը նշանակալից էր, և մահմեդական ժողովուրդներն ամենուրեք սուգ մտան:

473. Գյումուշտեգին ներհինու սպանության և ֆրանկների կողմից Խարիմի բերդի պաշարման մասին, որը գտնվում է Անտիոքի մոտակայքում

Այդ տարի Հալեպում էր գտնվում Գյումուշտեգին անունով նշանավոր ներքինին, որը պատիվ էր վայելում Նուրեդդինի ընտանիքում: Մահանալիս Նուրեդդինն այս ներքինուն, նրա խելքի և հավատարմության համար, կարգել էր իր փոքր որդու՝ Մելիք Սալիհի դայակ ու դաստիարակ: Իշխանության գլուխ անցնելով՝ նա հաջող գործեր ձեռնարկեց և հռչակվեց իր վարվեցողությամբ: Նա պահպանում էր պատանու տիրապետության տակ գտնվող երկրները, իսկ նրան էլ լավ դաստիարակություն էր տալիս: Նա խելամտությամբ դիմակայում էր ինչպես թուրքերին, այնպես էլ ֆրանկներին՝ իր ձեռքում պահելով բոլոր քաղաքների, բերդերի, ամրոցների ու գյուղերի կառավարումն ու տնօրինումը: Խարիմի բերդը, որը գտնվում է Անտիոքի մոտակայքում, նույնպես ամբողջովին նրան էր պատկանում Նուրեդդինի կենդանության օրերից: Սակայն ներքինու ընկերակիցները նախանձից խորհուրդ տվին, ավելի ճիշտ՝ մոլորեցրին Նուրեդդինի պատանի որդուն, որը ձերբակալեց և սպանեց Գյումուշտեգին ներքինուն: Երբ վեր-

շինս սպանվեց, Խարիմի բերդում գտնվող զինվորները ապստամբեցին Մելիք Սալիհի դեմ և բերդը նրան շահանձնեցին: Նրանք, լուր ուղարկելով, օգնություն խնդրեցին Ֆրանկներից և ընդունեցին նրանց գերիշխանությունը: Ֆրանկները սիրալիք ընդունելություն ցույց տվին և վստահություն ներշնչեցին նրանց՝ երգվելով

190

|| խաչով ու ավետարանով:

Այդ ժամանակ ոմն կոմս, որի անունն էր Կոնդֆլանդ⁴⁸ ծովով օգնության եկավ քրիստոնյաներին: Նա հավաքեց բոլոր ֆրանկներին, որոնք մի հսկայական և մինչ այդ շտեմնված բաղմություն դարձան: Դրանց մեջ էին Երուսաղեմի և առափնյա երկրի զորքերը, Տրիպոլիի կոմսը, Անտիոքի պրինցը, Կիլիկիայի իշխան Ռուբեն հայը և ինքը՝ Կոնդֆլանդը, ինչպես նաև բաղմաքանակ աշխարհազորայիններ, որոնց թիվը հասնում էր երեսուն հազարի: Թշվառական ֆրանկները թափով առաջ շարժվեցին և եկան պաշարեցին այդ քաղաքը, այսինքն՝ Խարիմի բերդը, մնալով այնտեղ դեկտեմբերի սկզբից մինչև մարտի վերջը: Նրանք նեղ դրության մեջ դրին այդ երկրի և ողջ լեռան, ինչպես նաև Իմմ և Արթախ գավառների գյուղացիներին: Զանազան տուրքերով և հարկադրանքներով բռնադատեցին նաև Անտիոքի բնակիչներին՝ պարեն հայթայթելու նպատակով, որն անհրաժեշտ էր իրենց և իրենց անասուններին ու գրաստներին: Զքավորներն անգամ տուժեցին այդ նեղությունից:

Սակայն աստված, որ տնօրինում է ամեն ինչ և հաղթանակ տալիս՝ ում կամենում է, զայրացավ [ֆրանկների] վրա և շօզնեց նրանց: Նա աջակցություն ցույց տվեց բերդում գտնվող թուրքերին, որոնք փոքրաթիվ էին, բայց կարողացան պահպանել իրենց անձը, շնայած ֆրանկները քարեր արձակող մանգղիոնների և բաղմազան պատերազմական մեքենաների օգնությամբ կատաղի մարտեր էին մղում նրանց դեմ: Շատ ֆրանկներ զոհվեցին ներսից արձակված քարերից ու նետերից, ինչպես նաև կուպրից, որն այրում էր նրանց: Երկու կողմերն էլ, այսինքն՝ և՛ պաշարվածները, և՛ պաշարողները, թուլացան ու հոգնեցին կովից: Երբ բերդի թուրքերը, ընկճված և ի վիճակի չլինելով այլևս պաշտպանվել, ըստ ամենայնի պատրաստվում էին հանձնվել, մտածեցին ու խորհրդակցեցին իրար հետ, որ ավելի լավ է հանձնվել իրենց դավանակից թուրքերին, քան թե ֆրանկներին: Նրանք լուր ուղարկեցին Հալեպ՝ Նուրեդդինի որդի Մելիք Սալիհին, որ եթե նա իրենց փրկի ֆրանկներից, || բերդը կհանձնեն նրան: Այդ պատանին ֆրանկների մոտ մի պասագամավոր ուղարկեց, որն առան-

191

ձին-առանձին [հանդիպելով] բոլոր նրանց մեծամեծների հետ, երկպառակույթյուն սերմանեց նրանց միջև: Դա վերաբերում է հատկապես Անտիոքի [տիրոջը], որին խոստացան հիսուն հազար դինար և բերդապատկան գյուղերի կեսը: Երբ Անտիոքի տերն իր զորքերով հեռացավ, մյուսները նույնպես ամոթով ևտ քաշվեցին՝ դառնալով ամենքի ժաղրուծանակի առարկան:

474. Սալանեդդինի արշավանքը Եգիպտոսից Ասորիք, Մոսուլի տիրակալ Սեյֆեդդինի մահը, նրա եղբոր գահակալումը և այդ ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները

1490 (1179) թվականին Սալահեդդինը ելավ եկավ Դամասկոս, իսկ այնտեղից մեկնեց պաշարելու Բաալբեկը, որի տերը՝ իր մեծամեծներից մեկը, ապստամբել էր իր դեմ:

Այդ ժամանակ մեռավ Սեյֆեդդինը՝ Մոսուլի տիրակալը: Նրանից հետո ողջ Ասորեստանում և Մոսուլում՝ մինչև Մծբին, թագավորեց նրա եղբայր Իզզեդդինը⁴⁴⁰: Այսպես ուրեմն, այդ ժամանակ Մոսուլին տիրում էր Իզզեդդինը: Նա ուներ մի կառավարիչ, որը տնօրինում էր արևելքի բոլոր երկրների գործերը: Դա Մուշահիդեդդին Կայմազ⁴⁴¹ անունով ներքինին էր: Սինջարին և նրա շրջակայքին տիրում էր Իմադեդդինը⁴⁴², Մոսուլի տիրոջ եղբայրը: Զեզիրեում իշխում էր Սեյֆեդդինի պատանի որդին, որ կոչվում էր Սինջարշահ⁴⁴³: Արբելային, Շահրզորին ու նրա շրջակայքին տիրում էր վերևում հիշված Զեյնեդդին Ալի Քուչուկի որդին⁴⁴⁴: Ինչ վերաբերում է Ուռհային, ապա նրան տիրում էր մի թուրք ամիրա, որի անունն էր Ֆախրեդդին Մասուդ իբն Զաֆարանի: Ինչպես վերը նշեցինք, այդ [քաղաքը] նա կառավարում էր Նուրեդդինի օրերից: Նուրեդդինի օրոք նրան էին պատկանում նաև Համան, Հոմսը, Բարինը և ուրիշ վայրեր: Սակայն Նուրեդդինի մահվանից հետո, նրա որդու օրոք, դրանք խլվեցին նրանից Գյումուշտեգին ներքինու ձեռքով: Ֆախրեդդինը փախավ եկավ 192 // Ուռհա, ապա մեկնելով դեպի արևելք՝ Մոսուլ, Սեյֆեդդինից ստացավ Ուռհան:

475. Ուռհայեցիների գանգատն իրենց կառավարչից

Հազիվ էր Ֆախրեդդինն Ուռհայում տեղավորվել, երբ որոշ անմիտ ու անդաստիարակ մարդիկ, որոնք ուզում էին քաղաքում բարձր տեղ զբաղեցնել, բայց ֆրանկների օրերի սովորույթյամբ, այսինքն՝ աղքատների ու այրիների տները կողոպտելու միջոցով,

չէին հասել իրենց նպատակին, ինչպես նաև որոշ վաշխառուներ ու հարկահավաքներ, որոնցից պահանջվել էր իրենց յուրացրած ոսկին, կազմակերպելով ամբոխին, խռովութիւնն ու գրգռութիւնն առաջացրին կառավարչի դեմ և հավաքվեցին եկեղեցում նրանք ամեն օր, խփելով զանգերը, հավաքում էին հասարակ մարդկանց և շինծու ջերմեռանդութեամբ ցուցադրում իրենց հոգացողութիւնը քաղաքի և աղքատների նկատմամբ։ Նրանք եկեղեցու մեջտեղում մի ավետարան և խաչ էին դրել, որոնցով երգվեցնում էին բոլոր ներս մտնողներին։ Այս շար գործն ու խռովութիւնը գլխավորում էին Մլեհի որդի Բարսումա քահանան, Սահգա անունով մի բժիշկ, որը վատահամբավ Շումնա ցեղից էր, և ուրիշ խռովարարներ։ Նրանց մեջ էր նաև սևերակցի մի խելառ երիտասարդ՝ Բարսեղ անունով, որը հավաքում էր քաղաքի հայերին և գրգռութիւններ հրահրում փողոցներում։

Եվ այսպես, երբ նրանք իրար հետ շարամիտ համաձայնութեան եկան, իրենցից որոշ մարդկանց ուղարկեցին Մոսուլ Այստեղ նրանք սկզբում ընդունելութիւն գտան, և նրանց հետ ուղարկվեց մի ամիրա՝ հարցը տեղում պարզելու նպատակով Անմիտները, երբ տեսան, որ իրենց ուղեկցում է մի ամիրա, մեծ գրգռութիւնն առաջացրին քաղաքում։ Ողջ ժողովուրդը մի մարդու պես հավաքվեց և ուղղվեց դեպի կառավարչի պալատը, ինչպես մի ժամանակ վարվել էին նրանց ծնողները Հեթումի որդու⁴⁴⁵ հետ Սակայն դա ոչ թե բարիք, այլ շարիք եղավ նրանց համար։ Ֆախրեղդին ամիրան կաշառքով շլացրեց ուղարկված մարդուն, որը նրանց թողեց շաղակրատելու։ Այնժամ կառավարիչը ձևացրեց, թե ուզում է գնալ Մոսուլ, իսկ Մոսուլից եկած մարդը պատրաստվեց մեկնել նրա հետ։ // Ուռհայեցիները նույնպես որոշեցին նրա հետ Մոսուլ գնալ։ Այդպես էլ եղավ. նրանք երկրորդ անգամ ճանապարհ ընկան դեպի Մոսուլ։ Բայց կառավարիչը շմեկնեց, այլ միայն պարզեներ ուղարկեց։ Ուռհայեցիները դատարկաձեռն ետ դարձան։ Դրանից հետո Ֆախրեղդինը պատրաստվեց և գնաց Մոսուլ։ Ուռհայեցիները երրորդ անգամ ներկայացան այնտեղ Սակայն կառավարչի տված կաշառքների պատճառով այդ թշվառականները շարագույն կերպով վռնդվեցին այնտեղից։ Երբ նրանք վերադարձան քաղաք, կառավարիչը ձերբակալեց խռովութեան կազմակերպիչներին և իրենց կանանց ու երեխաների հետ վրոնդեց քաղաքից։ Դրանց թվում էին վերոհիշյալ Բարսումա քահանան, Սահգա բժիշկը, Աբրահամ էրեցը և ուրիշներ։ Նրանք գնացին Սամոսատ և որոշ ժամանակ մնացին այնտեղ, Իսկ այնու-

հետև, բազում նեղություններ կրելուց հետո, վերադարձան քաղաք, որին մեծ վնաս էին պատճառել՝ նրա բնակիչներին թշնամացնելով կառավարչի հետ և վատ համբավ ստեղծելով նրանց մասին:

Խառանում այդ ժամանակ տիրում էր մի երիտասարդ մարդ՝ Մուզաֆֆարեղդին⁴⁴⁶ անունով, որը վերը հիշված Ջեյնեղդին Ալիի որդին էր և նույնպես ենթարկվում էր Մոսուլի տիրակալին: Նա թուլություն ուներ Ուոհայի նկատմամբ և շատ անգամ կաշառքներ մատուցելով, այն խնդրել էր Մոսուլի տիրակալից, բայց չէր ստացել: Այդ պատճառով նա քեն էր պահել արևելքի ամիրաների դեմ և դրա համար էլ զաղտնի կերպով գրեց ու սուրհանդակներ ուղարկեց Սալահեղդինի մոտ՝ նրան խորհուրդ տալով անցնել Եփրատը:

476. Նուրեղդինի որդի Մելիֆ Սալիհի մահվան և Հալեպում Իզզեղդինի թագավորության մասին

Այդ ժամանակ, 1493 (1182) թվականին, Հալեպում մեռավ Մելիֆ Սալիհը՝ Նուրեղդինի որդին, թագավորութունը կտակելով իր հորեղբորորդուն՝ Մոսուլի տիրակալ Իզզեղդինին: Վերջինս այնտեղ դահակալել էր իր եղբորից՝ Սեյֆեղդինից հետո և, ինչպես նկարագրեցինք, նրա օրոք էլ հենց ուոհայեցիները ներկայացրել էին իրենց դանդատը: Իզզեղդինը շտապ եկավ և թագավորեց Հալեպում: Ինչպես ասացինք, Սինջարում տիրում էր նրա եղբայր Իմադեղդինը: Սրանք մշտապես վեճ ու կռվի մեջ էին իրար հետ: Եվ մինչ Իզզեղդինը դառնվում էր Հալեպում, նրա միտքը Մոսուլում էր: Վախենում էր, որ եղբայրը կարող է այնտեղ որևէ դավ նյութել իր դեմ: Այդ պատճառով նա ինքը մի անվայել միտք հղացավ. դեսպաններ ուղարկեց եղբոր մոտ և նրա հետ հաշտություն կնքեց՝ Սինջարը Հալեպի հետ փոխանակելու պայմանով: Դա գլուխ եկավ, և Իզզեղդինը մեկնեց Հալեպից, հետը տանելով իր հորեղբոր՝ Նուրեղդինի օրերից այնտեղ պահվող բոլոր դանձերը: Իմադեղդինը եկավ տիրեց Հալեպին, իսկ Իզզեղդինը, ստանալով Սինջարը, այն տվեց իր մյուս եղբորը, որի անունն էր Շիհաբեղդին:

477. Սալահեղդինի առաջխաղացումը և թափանցումն արևելք

Այդ ժամանակ վերոհիշյալ Մուզաֆֆարեղդինը՝ Խառանի տերը, ելավ դնաց Համա՝ Սալահեղդինի մոտ և նրան դրդեց շարժ-

վել դեպի արևելք: Երբ Սալահեդդինը տեսավ, որ Իզզեդդինը հե-
ռացավ Հալեպից՝ այն թողնելով իր եղբորը, հասկացավ նրա շար-
մտադրությունը: Նա սրտապնդված մեկնեց Համայից և գնաց
պաշարեց Հալեպը: Սակայն մի քանի օր [քաղաքին] նեղություն
պատճառելուց հետո հեռացավ այնտեղից և կտրեց անցավ Եփրա-
տը: Նա պաշարեց և բռնի ուժով գրավեց Մաբբուզը, որտեղ տի-
րում էր Կուտբեդդին իբն Հասան անունով մի մարդ՝ նախկինում
Ուհայի կառավարիչը: Սալահեդդինը խլեց նրա մոտ եղած բո-
լոր գանձերը և տարիների ընթացքում ապօրինի կամ օրինական
միջոցներով Ուհայում հավաքած ամեն ինչ: Այնտեղից մեկնելով,
նա նորից կտրեց անցավ Եփրատը և եկավ պաշարեց Խառանր:
Մի քանի օր այնտեղ հանգստանալուց հետո նա իր զորքերն ու-
ղարկեց պաշարելու Ուհան:

478. Ուհայի և մինչև Մոսուլ ընկած միջագետյան մյուս
ֆաղաֆների պաշարումը Սալահեդդինի կողմից

195 1494 (1183) Թվականին Սալահեդդինը և վերոհիշյալ Մու-
զաֆֆարեդդինը՝ // Խառանի տերը, իրենց զորքերով եկան պա-
շարեցին Ուհան: Քաղաքի կառավարիչն էր Ֆախրեդդինը որին
հիշեցինք վերևում: Իսկ վերին բերդում նստում էր Համամ անու-
նով արևելցի մի ամիրա՝ նշանակված Մոսուլի տիրակալ Իզզեդ-
դինի ձեռքով: Երբ քաղաքի հարավային կողմից հարձակումն ըս-
կըսվեց, ամիրան դավաճանաբար վաճառեց այդ բերդը տաս հա-
զար ոսկով: Ֆախրեդդինը նկատելով դավաճանությունը, ինքը
նույնպես հանուն իր անձի փրկության հաշտություն կնքեց և հանձ-
նեց քաղաքը: Այսպես Սալահեդդինը տիրեց նրան և այն տվեց
Մուզաֆֆարեդդինին: Ապա նա մեկնեց այնտեղից և գնաց պա-
շարեց Կալլինիկոսը, այսինքն՝ Ռակկան, որը գրավելով, ժամա-
նակավորապես հանձնեց Ֆախրեդդինին: Հետո Սալահեդդինը մեկ-
նեց և իջավ դեպի Խաբուլ⁴⁴⁷, իսկ այնտեղից գնաց պաշարեց Սին-
ջարը և կատաղի հարձակում գործեց նրա վրա: Մի քանի օրից
գրավելով այն, նա ետ դարձավ և գնաց պաշարեց Մոսուլը՝ նրա
դեմ նույնպես ուժեղ հարձակում ձեռնարկելով: Նա անթիվ-անհա-
մար զորքերով բանակ դրեց Տիգրիս գետի երկու ափերին Սա-
կայն մինչ շարունակում էր Մոսուլի պաշարումը, լուր ստացավ,
որ իր հորեղբորորդի Նասրեդդին իբն Շիրկուհը⁴⁴⁸ արևմուտքում
ապստամբություն է նախապատրաստում իր դեմ: Վերջինս կարո-
ղացել էր իր կողմը գրավել հոր [...] ⁴⁴⁹ ծառաներին, և շատ զին-
վորներ միացել էին նրան: Նա ուզում էր ապստամբել և զավթել

196 *իշխանութիւնը: Այդ պատճառով Սալահեդդինը թողեց Մոսուլը և ետ դարձավ: Սակայն հասնելով Խառան, նա ծանր հիվանդացավ: Ասում են, թե նրան մահադեղ էին տվել վերոհիշյալ Նասրեդդինի դրշմամբ: Ավելի քան շորս ամիս նա հիվանդ մնաց Խառանում: //*

479. Թուրքմենների և ֆրդերի միջև տեղի ունեցած կովի մասին

Այդ տարի վեճ, կռիվ, կոտորած ու խժոժութիւններ ծագեցին թուրքմենների և քրդերի միջև: Նրանց թշնամութիւնը սաստկացավ, և սկսեցին անխնայորեն կոտորել միմյանց: Մեծաթիվ ժողովուրդ ոչնչացավ: Թուրքմենները, ավելի ու ավելի հանդուգն դառնալով, սկսեցին կոտորել ոչ միայն իրենց թշնամի քրդերին, այլ նաև ճանապարհին պատահող ցանկացած մարդու: Նրանք քարուքանդ էին անում գյուղերը և կողոպտում ճանապարհ քնկած վաճառականներին: Նրանք համարձակութիւն ստացան հատկապես հզոր սուլթան Սալահեդդինի հիվանդութիւնից հետո և սկսեցին լուր տարածել, թե նա մեռել է: Իսկ քրդերն այլևս չէին կարողանում բացահայտ կերպով երևալ ճանապարհներին: Բազմաթիվ քրդական գյուղեր ավերվեցին, ամայացան նաև այն լեռները, որտեղ նրանք բնակվում էին: Իսկ ովքեր փրկվեցին, փախան և չքավորութեան մեջ բնակվեցին քաղաքների շուրջը: Թուրքմեններն այն ժամանակվանից սովորութիւն դարձրին արշուն թափելը, կողոպտուն ու համատարած կոտորածները:

480. Սալահեդդինի ապափինման և Նասրեդդինի մահվան մասին

Սալահեդդինը առողջացավ և մեկնեց Խառանից: Ճանապարհին նա լուր ստացավ, որ Հոմսում մեռել է իր հորեղբորորդի Նասրեդդինը, որը միաժամանակ իր փեսան էր, այսինքն՝ քրոջ ամուսինը. Տեղ հասնելով՝ նա խլեց նրա բոլոր գանձերը, ողջ ունեցվածքը և անհամար ձիերն ու ուղտերը, որոնց արժեքը կարող էր զուգակշռվել այնքան արծաթյա դրամի հետ, որքան կարելի էր տեղավորել Հոմսի միջնաբերդի բուրգերից մեկում.

481. Հալեպ փաղափի առումը

Որոշ ժամանակ մնալով Դամասկոսում՝ Սալահեդդինը նորից զորահավաք կատարեց, նախապատրաստված եկավ պաշարեց

Հալեպը և կատաղի հարձակումներով սաստիկ նեղեց նրան: Ի վերջո, Իմադեդդինը, որը ժամանակին եղել էր Սինջարի տերը, հաշտություն կնքեց նրա հետ և, հանձնելով Հալեպը, փոխարենն ստացավ Սինջարը, դրան գումարած \parallel նաև Բակկան, ողջ Խաբուրի գավառը և Մծբինն իր շրջակայքով: Այսպես տեղի ունեցավ Հալեպի առումը: Սալահեդդինը տիրեց նրան և հանգստացրեց իր սիրտը, որովհետև դա Ասորիքի թագավորության մայրաքաղաքն էր: Այնտեղ նա նշանակեց իր որդուն, որի անունն էր Ղազի Մելիք աղ-Չահիր⁴⁵⁰: Օսման Մելիք ալ-Ազիզ⁴⁵¹ անունով մյուս որդուն կարգեց Եգիպտոսի վրա: Իսկ Դամասկոսը տվեց իր ավագ որդուն, որի անունն էր Ալի Մելիք ալ-Աֆղալ⁴⁵²: Հոմսում տիրում էր վերոհիշյալ նասրեդդինի տղան, որը Սալահեդդինի քրոջ որդին էր: Համային ու նրա ողջ շրջակա երկրին տիրում էր Սալահեդդինի եղբորորդի Տաթեդդինը⁴⁵³: Սալահեդդինի մի եղբայրը, որի անունն էր Մելիք ալ-Ադիլ Աբուբաքր, կառավարում էր Եգիպտոսի թագավորությունը: Այսպիսով, բոլոր այդ կողմերում տիրում էին նրա որդիները, ազգականներն ու եղբայրները:

482. Սալահեդդինի նոր արշավանքը դեպի արևելք

1495 (1184) թվականին Սալահեդդինը նորից շարժվեց իր գործերով և, ուղղվելով դեպի Նիփոկերտ, պաշարեց ու գրավեց այն: Ապա նա եկավ և պաշարեց Ամիդը, որտեղ այդ ժամանակ տիրում էր Հասանի ցեղի մարդկանցից մեկը: Դրանք արաբներ⁴⁵⁴ էին, որոնք հաջորդելով մեկը մյուսին, պահում էին [քաղաքը]՝ Մահմեդական շատ թագավորներ բազում անգամ պաշարել էին այն, բայց չէին կարողացել նվաճել: Սալահեդդինը, գալով և կատաղի հարձակում գործելով նրա վրա, մի քանի օրից ղենքի ուժով գրավեց այն: Նա կողոպտեց երկար տարիների ընթացքում այնտեղ կուտակված ողջ հարստությունն ու ունեցվածքը, սակայն քաղաքացիներին որևէ անհանգստություն չպատճառեց: Քաղաքը նա տվեց Նուրեդդին իբն Դաուդ իբն Կարաասլանին⁴⁵⁵, որը Տիմուրտաշի սերունդներից էր: Հետո նա ետ դարձավ և գնաց երկրորդ անգամ պաշարեց Մոսուլ քաղաքը: Եվ թեև առաջին անգամվանից ավելի կատաղի հարձակում ձեռնարկեց նրա վրա, սակայն չկարողացավ ոչինչ անել: Լուր ստանալով, որ \parallel առափնյա շրջանների ֆրանկները հանդգնել են վնաս պատճառել իր երկրին, նա ետ դարձավ այնտեղից և եկավ Դիմաշկ, այսինքն՝ Դամասկոս:

483. Պատերազմը ֆրանկների դեմ և վերջիններիս ջախջախումը-
նրանց ֆաղաֆների գրավումը և երկրների ավերումն ու
կողոպուտը. Երուսաղեմի առումը և նրա բնակչության
խապառ բնաջնջումը

Հունաց 1498 (1187) թվականի հուլիս ամսին, նախապատ-
րաստություն տեսնելով, Սալահեդդինը բազմաքանակ զորքեր հա-
վաքեց ողջ արևելքից, արևմուտքից ու Եգիպտոսից և եկավ բա-
նակ դրեց Հաուրանի դաշտում, Տիրերիայի լճից վեր: Ֆրանկները
նույնպես հավաքվեցին և պատրաստվեցին կռվի: Կողմերը դա-
սավորվեցին դեմ-դիմաց [... ..]⁴⁵⁶ կռվող դաշտում: Հաղթանա-
կը բաժին ընկավ մահմեդականներին, և ֆրանկները ջախջախվե-
ցին ու դառնագույն պարտություն կրեցին իրենց շար գործերի
պատճառով: Ամսի 4-ին, շաբաթ օրը, մի անթիվ-անհամար բազ-
մություն սրի մատնվեց: Գերիներն այնքան շատ էին, որ ավելի
քան քսան հազար հոգու շների նման կապեցին պարաններով և
քարշ տվին մեկը մյուսի ետևից, իսկ ավելի քան երեսուն հազար
մարդ սրի բերան մատնվեց: Ողջ-ողջ բռնվեցին Երուսաղեմի թա-
գավորը, Սիդոնի տերը, այսինքն՝ կառավարիչը, Գաբալայի իշ-
խանը, Բիրզանի որդին, Սիթայի երկու որդիները, ինչպես նաև
ծերունի սիր Ռենալդ պրինցը⁴⁵⁷, որ Շուրակ⁴⁵⁸ բերդի տերն էր:
Զերբակավեցին նաև Ֆրեր եղբայրներից և Հոսպիտալիերներից⁴⁵⁹
ավելի քան հարյուր հիսուն երևելիներ: Նրանց բոլորին ուղարկե-
ցին Դամասկոսի բանտը, բացի ծերունի պրինց Ռենալդից, որին
բազմաթիվ ուրիշ երևելի գերիների հետ գլխատեցին Սալահեդդի-
նի աչքի առջև: Վերջինիս վրանի առաջ սպանվածներից մի բլուր
գոյացավ: || Երկու օր անց նա գրավեց Տիրերիա քաղաքը և եր-
կուշաբթի օրը կրակի մատնեց այն: Ապա գնաց պաշարեց Աք-
քան, որը գրավեց ամսի 9-ին, հինգշաբթի օրը: Վերջինս գրավվեց
խաղաղ ճանապարհով, այդ պատճառով [Սալահեդդինը] ոչ ոքի
նեղություն չպատճառեց: Ամսի 24-ին, երեքշաբթի օրը, նա գրա-
վեց Նազարեթը⁴⁶⁰ և այն տվեց Ուռհայի տեր Մուզաֆֆարեդդինի
զինվորների ձեռքը՝ կողոպտելու: Բնակիչներին թալանեցին, տղա-
մարդկանց մատնեցին սրի բերան, իսկ երեխաներին ու կանանց
ստրուկներ ու աղախիններ դարձրին:

Այսպես կամաց-կամաց նա պաշարեց ու գրավեց երկրի և
ծովափնյա շրջանների բոլոր բերդերը, դրանք մատնելով ավարի,
կոտորածի ու բնաջնջման: Զինվորներն անհամար հարստություն,
ստրուկներ ու աղախիններ ձեռք բերին: Այնուհետև նա պաշարեց

Տյուրոսը, բայց չկարողանալով այն գրավել, մեկնեց այնտեղից և գնաց պաշարեց Աշկալոնը, այսինքն՝ Ասկալոնը: Նա հարձակվեց նրա վրա, բայց նրա զինվորներից շատերը զոհվեցին այնտեղ: Այդ պատճառով Դամասկոսից կանչել տվեց Թագավորին և խոստացավ, որ եթե Ասկալոնը հանձնեն իրեն, ապա նրան թույլ կտա գնալ, ուր կամենում է: Այսպիսի հնարքով նա գրավեց քաղաքը և, նվերներ ու հանդերձներ շնորհելով, ազատ արձակեց Թագավորին: Հետո Սիթայի երկու ուղիների և Բիրզանի տղայի ուղեկցությամբ նրան ուղարկեց Տյուրոս: Ասկալոնը նա գրավեց շաբաթ օրը, այն հիմնահատակ արեց, քանդեց նրա պարիսպը և ամայացրեց: Տրիպոլիի կոմսը, որն այդ պարտության ժամանակ փախուստի էր դիմել, հասնելով իր քաղաքը, մի քանի օրից մեռավ վշտից: Ասում են, որ նա էլ դավաճանել ֆրանկներին, և նրա պատճառով էին վերջիններս պարտություն կրել: [Սալահեդդինը] հիմնովին վերակառուցեց Աքքան, նրա պահպանությունը հանձնարարեց մարտունակ մարդկանց, ապա Կարակուլ⁴⁶¹ անունով ումն ներքինու մի քանի ուրիշ կառավարիչների հետ նստեցրեց այնտեղ:

484. Երուսաղեմի առումը

200 Նույն տարվա սեպտեմբեր ամսին Սալահեդդինն իր զորքերով մեկնեց Ասկալոնից և եկավ պաշարեց Երուսաղեմ // քաղաքը: Նա կատաղի հարձակում ձեռնարկեց նրա դեմ, որովհետև այնտեղ էին հավաքվել ամեն կողմից փախած բոլոր փրկյալները: Սակայն քանի որ նրանք փրկություն չունեին և որևէ տեղից օգնություն չէին սպասում, նեղ դրության մեջ ընկան և, երաշխիքներ ստանալով, հանձնեցին քաղաքը: Ֆրանկները դուրս եկան, և նրանց թույլատրվեց գնալ, ուր ուզում են: Սակայն մինչ նրանք հիսունական կամ հարյուրական հոգով հեռանում էին, մահմեդականները հարձակվում կոտորում էին նրանց և կողոպտում նրանց ունեցվածքը: Ինչ վերաբերում է քաղաքում մնացած մյուս բնակիչներին՝ հայերին, հռոմեներին և ասորիներին, ապա նրանցից պահանջվեց, որ տղամարդիկ վճարեն տասական, իսկ կանայք հինգական դինար և ելնեն գնան, ուր ուզում են: Խեղճերն արժանի էին լացի ու ողբի, որովհետև նրանք չնչին գներով թափում էին իրենց ունեցվածքը, բայց գնող չկար:

Այդ ժամանակ Երուսաղեմում էր գտնվում Աթանասիոս⁴⁶² եպիսկոպոսը՝ Միքայել պատրիարքի եղբայրը, վանականների

հետ: Դրանց թվում էր Սահդա Ուռհայեցին, որը Աթանասիոսի մահվանից հետո եպիսկոպոս դարձավ և կոչվեց Իգնատիոս⁴⁶³: Եպիսկոպոսի մոտ էր նաև Թեոդորոս բար-Վահաբունը⁴⁶⁴, որը բազում փորձանքներ բերեց վանքի գլխին, վնասեց և՛ սրբազանին, և՛ վանքին, շատ թշնամանք հարուցեց եպիսկոպոսի դեմ՝ հավակնելով պատրիարքության, սակայն հետո նորից բարեկամացավ սրբազանի հետ, որովհետև նրա հայրենակիցն էր և որովհետև եպիսկոպոսը լավ բնավորություն ուներ:

201 Այդ ժամանակ ես՝ նվաստս, որ գրում եմ այս բաները, նույնպես գտնվում էի Երուսաղեմում: Լեզուն ու գիրն անկարող են նկարագրել մեր աչքերի տեսած այն ոճիւրները, որ գործվեցին քաղաքում. ինչպես այլազգիների⁴⁶⁵ ձեռքով քաղաքի փողոցներում վաճառքի հանվեցին սրբազան անոթները, ինչպես եկեղեցիներն ու խորանները վերածվեցին ձիերի ու գրաստների ախոռների կամ պղծության, կերուխումի || ու երգուպարի սրահների, ինչպես ծաղրուծանակի ենթարկվեցին վանականները, ինչպես այլազան ցեղերի հետ պղծության մատնվեցին երևելի կանայք և սրբակենցաղ կրոնավորուհիները, ինչպես տղաներն ու աղջիկները դարձան թուրքերի ծառաներն ու աղախինները՝ ցրվելով շորս կողմ: Եկեղեցիներից պոկոտելով երկաթեղենը, փայտեղենը, դռներն ու նույնիսկ պատերի և հատակի մարմարյա ծածկերը՝ բարձեցին ու տարան ուրիշ երկրներ: Խնայեցին միայն Հարության մեծ եկեղեցին, որի վրա պահապաններ նշանակեցին՝ նրա տված օգուտի պատճառով, քանի որ ամեն մի քրիստոնյա, որ մտնում էր երկրպագելու սուրբ գերեզմանին, տաս դինար էր վճարում:

485. Ֆրանկների նոր արշավանքը և Աֆհայի պաշարումը
նրանց կողմից. Ալամանների թագավորի արշավանքը
ցամաքով և նրա կործանումը Կիլիկիայում

Հաջորդ տարի, երբ այդ լուրը հասավ ֆրանկների բուն երկրները, Մարքիզ⁴⁶⁶ անունով մի կոմս, նախապատրաստություն տեսնելով, ծովով եկավ Տյուրոս և տիրեց նրան: Հետո նա իր զորքերով գնաց պաշարեց փյունիկյան Աքքան: Սալահեդդինը նույնպես պատրաստվեց և, բազում զորք հավաքած, եկավ բանակ դրեց մի մարգագետնում, ֆրանկների դիմաց: Այսպես մնալով մեջտեղում, ֆրանկները երկու տարի կռիվ մղեցին մի կողմից՝ աքքացիների, մյուս կողմից՝ Սալահեդդինի դեմ:

Այդ նույն ժամանակ Ալամանների թագավորը⁴⁶⁷ նույնպես

պատրաստութիւն տեսավ և ելավ օգնութեան հասնելու քրիստոն-
 յաներին: Նա շարժվեց ցամաքով և հասավ Կոստանդնուպոլիս:
 Ապա մտավ հոռոմոց երկիրը և, հասնելով Իկոնիա, գրավեց այն՝
 կողոպտելով ու կոտորելով շատերին: Իսկ այնտեղից նա շարա-
 բաստիկ կերպով մտավ Կիլիկիո երկիրը: Եթե ներխուժեք մահ-
 մեղականների երկրները, գուցե կարողանար որևէ օգուտ տալ,
 քանի որ հողը դղրդում էր նրա առջև, և ողջ Ասորիքի մահմեդա-
 կանները ահուդողի մեջ էին ընկել || նրա դալու պատճառով: Սա-
 կայն նա եկավ Կիլիկիո երկիրը և, երբ մի անգամ մտավ լողա-
 նալու երկրի լճերից մեկում, խեղդվեց: Նրա զորքերը ոչնչացան,
 ոմանք մեռան հիվանդութիւններից, ոմանք էլ ձեռնունայն եկան
 Անտիոք: Եվ այսպես առանց որևէ օգուտ տալու նրանք ցրվեցին:

486. Աֆֆալի առումը ֆրանկների կողմից

Աքքայի պաշարումից երկու տարի անց, ինչպես ասացինք,
 ֆրանկներն արժանացան հաղթանակի և սկսեցին նեղել քաղաքը:
 Թուրքերը հուսահատվելով, կոտորեցին քաղաքի բոլոր քրիստոն-
 յաներին: Ի վերջո, զենքի ուժով այն գրավվեց, իսկ բազմահազար
 քաջամարտիկ և ընտրյալ թուրքերը, որոնք պահապան էին կարգ-
 վել այնտեղ և շարունակ աճում էին, կոտորվեցին: Սալահեդդինը
 [ֆրանկների] հետ որոշ ժամանակով հաշտութիւն կնքեց և վե-
 րադարձավ Դամասկոս:

487. Սալահեդդինի մահը 1504 (1193) թվականին

Սալահեդդինը խաղաղութեան պայմանագիր կնքեց ֆրանկ-
 ների հետ և մնաց Դամասկոսում: Ուռհայի տերը գրավեց Արբե-
 լան ու Շահրզորի գավառը: Այդ պատճառով Սալահեդդինը Ուռ-
 հան տվեց իր Տաքիեդդին եղբորորդուն, որը տիրում էր նաև Խա-
 ոանին, Սամոսատին ու Նփրկերտին: Երկու տարի այնտեղ մնա-
 լուց հետո վերջինս գնաց պատերազմելու Խլաթի երկրի դեմ և
 պաշարեց Արզունը⁴⁶⁸: Սակայն այստեղ նա գտավ իր օրհասը և
 մեռավ՝ իր երկրները թողնելով որդուն, որի անունն էր Մուհամ-
 մեդ Մելիք Մանսուր⁴⁶⁹: Մի տարի հետո հիշյալ երկրները՝ Ուռհան
 և մնացած վայրերը [Սալահեդդինը] տվեց իր Մելիք ալ-Ադիլ
 Աբուբարբ եղբորը, դրանց գումարելով նաև Եփրատի վրա գտնվող
 Կալա-Ջաբար անառիկ ամրոցը: Երբ սա եկավ և, ստանալով այդ
 երկրները, տիրեց նրանց, նրա եղբայրը՝ մեծահոգի թագավոր

203 Սալահեդդինը, մեռավ Դամասկոսում 1504 (1193) թվականի փետրվար ամսին: Ոչ ոք նրա ընտանիքից չտուժեց և ոչ ոք // որևէ վնաս չկրեց, քանի որ նրա որդիներից և եղբայրներից ամեն մեկը, ինչպես ասացինք, տիրում էր իրեն հատկացված երկրներին:

488. Արևելի տիրակալների արշավանք

Ինչպես ցույց տվեցինք, Մոսուլում թագավորում էր Իզզեդդինը, իսկ Սինջարում՝ նրա եղբայր Իմադեդդինը: Հսելով Սալահեդդինի մահը, նրանք պատրաստութուն տեսան և միաբանեցին իրար հետ: Նրանց հարեցին նաև Մարդինի Կուտբեդդին ամիրան և Ամիդի [տերը], նրանք եկան մինչև Թլմոզ, որը գտնվում է Ռեշայնայի⁴⁷⁰ մոտակայքում, և երեք ամիս մնացին այնտեղ՝ վախենալով, սակայն, մարտի բռնվել և դիմել դեպի Խառան կամ Ուռհա: Մելիք ալ-Ադիլը փոքրաթիվ զորքերով բանակել էր Խառանում, Երեք ամիս հետո Մոսուլի տիրակալ Իզզեդդինը հիվանդացավ և մեկնեց իր երկիրը: Մյուսները նույնպես ցրվեցին. Մոսուլ հասնելուց որոշ ժամանակ անց Իզզեդդինը մեռավ, և թագավորեց նրա անդրանիկ որդին՝ Նուրեդդինը⁴⁷¹: Մեռան նաև Իմադեդդին Սինջարցին և Կուտբեդդին Մարդինցին: Իսկ Մելիք ալ-Ադիլը գնաց հասավ մինչև Մծբին՝ մտադրվելով շարժվել դեպի Մոսուլ և պաշարել այն: Սակայն այնտեղ հաշտութուն կնքեցին նրա հետ: Նա ստացավ Ռակկան և Սրուճը, որոնք պատկանում էին Սինջարի տիրոջը: Այնուհետև Մելիք ալ-Ադիլը, պատրաստութուն տեսնելով, դիմեց դեպի Խլաթ: Նա այնտեղ մնաց մինչև աշուն և ավերեց, կործանեց ու կողոպտեց երկրի մեծ մասը: Սակայն երբ ձյուն իջավ, նա վերադարձավ այնտեղից: Այս դեպքերը տեղի ունեցան 1505 (1194) թվականին:

489. Սալահեդդինի որդի Մելիք ալ-Ազիզի արշավանք և Դամասկոսի պաշարումը նրա կողմից

204 Վերը նշեցինք, որ իր կենդանության օրոք Սալահեդդինը որդիներից ամեն մեկին մի որոշակի երկիր էր հատկացրել: Անդրանիկ որդուն՝ Մելիք ալ-Աֆդալին տվել էր Դամասկոսը և նրան էլ իր կենդանության օրոք թագավոր էր հռչակել, որը պետք է հաջորդեր իրեն: Սակայն Սալահեդդինի մահվանից հետո՝ 1506 (1195) թվականին, // Մելիք ալ-Ազիզը, որը տիրակալ էր նշա-

նակվել Եգիպտոսում, պատրաստվեց դալ Դամասկոս և պահանջել, որպեսզի իրեն գահ բարձրացնեն և շնորհեն թագավորութունը: Եվ ահա նա իր զորքերով եկավ պաշարեց Դամասկոսը: Մելիք ալ-Աֆղալը մարդիկ ուղարկեց և օգնություն խնդրեց իր հորեղբայր Մելիք ալ-Ադիլից, որն իր զորքերով մեկնեց Ուռհայից, գնաց Դամասկոս և, պատերազմելով իր եգիպտացի եղբորորդու դեմ, հաղթեց նրան: Վերջինս վերադարձավ Եգիպտոս, բայց Մելիք ալ-Ադիլը⁴¹² նրան հետապնդեց մինչև այնտեղ: Եգիպտոսում նրանց միջև կնքվեց հետևյալ պայմանագիրը, որ ողջ Եգիպտոսում, Ասսրիքում և Միջագետքում՝ մինչև արևելք, պետք է ազդարարվի եգիպտացի Մելիք ալ-Ադիլի անունն ու թագավորական իշխանությունը: Իսկ Մելիք ալ-Ադիլը պետք է դառնա այդ երկրների կառավարիչը, և Դամասկոսը պետք է պատկանի նրան: Այդ պայմանով Մելիք ալ-Ադիլը ելավ գնաց: Հասնելով Դամասկոս, նա խլեց այն իր եղբորորդի Մելիք ալ-Աֆղալից և նրան տվեց Բոսրան ու Սալբաթը⁴⁷³: Այսպիսով վերջինս զրկվեց թագավորութունից:

490. Թեբնին⁴⁷⁴ ամբողջի պաշարումը ֆրանկների կողմից

Այդ ժամանակ, 1507 (1196) թվականին, երբ լրացավ հաշտություն պայմանագրի ժամկետը, ֆրանկները շարժվեցին իրենց տեղերից և եկան պաշարեցին Թեբնին կոչվող ամրոցը, որը գտնվում է Տյուրոսի մոտակայքում: Եվ մինչ նրանք կատաղի ու երկարատև կռիվ էին մղում նրա դեմ, Մելիք ալ-Ադիլը եկավ և բանակեց նրանց դիմաց: Բայց նա չկարողացավ նրանց վռնդել բերդի մոտից, այդ պատճառով պաշարվածները նեղվեցին կարիքից: Նրանք արդեն պատրաստվում էին հանձնվել, երբ Մելիք ալ-Ադիլի հետ վրա հասան եգիպտական զորքերը: Եվ հանկարծ, մինչ ֆրանկներին ոչ ոք չէր անհանգստացնում, նրանք լքեցին ճամբարը և մտան Աքքա: Ամրոցը փրկվեց, թուրքերը գնացին պաշարեցին ծովափնյա Յաֆա քաղաքը և զենքի ուժով տիրեցին նրան: Ապա այն ավարի մատնեցին, սպանեցին այնտեղ եղած բոլոր տղամարդկանց, իսկ երեխաներին ու կանանց դարձրին ծառաներ ու աղախիներ: Դա Յաֆայի երկրորդ գերեվարումն էր:

205 // Եգիպտացիները վերադարձան Եգիպտոս, իսկ Մելիք ալ-Ադիլը՝ Դամասկոս: Երուսաղեմը տրվեց եգիպտացուն: Մելիք ալ-Ադիլը որոշակի ժամկետով հաշտություն կնքեց ֆրանկների հետ և ելավ գնաց Ուռհա:

491. Մարդիների պաշարման, Մելիք ալ-Ազիզի մահվան
և այդ ժամանակի իրադարձությունների մասին

1509 (1198) թվականին Մելիք ալ-Ազիզը ողջ Ասորիքում և Արևելքում զորահավաք կատարեց: Դամասկոսում նա թողեց իր կրտսեր որդուն, որի անունն էր Շարաֆեդդին Մելիք ալ-Մուազզամ⁴⁷⁵, իսկ Ուռհայում, Խառանում և Սամոսատում՝ իր մյուս որդուն՝ Մելիք ալ-Քամիլ⁴⁷⁶ անունով: Նփրկերտում տիրում էր նրա մի այլ որդին, որի անունն էր Մելիք ալ-Աուհադ⁴⁷⁷, իսկ Ամիդում նրա փեսան՝ Կուտբեդդին իբն-Նուրեդդին⁴⁷⁸ անունով, որը Տիմուրտաշի սերունդների ցեղից էր:

Այդ ժամանակ Մարդինի անառիկ և նշանավոր բերդաբազարին տիրում էր վերոհիշյալ Կուտբեդդինի ծառաներից մեկը, որը դայակություն էր անում նրա երկու անշափահաս երեխաներին և որի անունն էր Նիզամեդդին: Մելիք ալ-Ազիզը աչք ուներ Մարդինի այս անառիկ բերդի վրա: Այդ պատճառով նա հավաքեց բազմաթիվ հեծյալներ ու հետևակայիններ և գնաց պաշարեց այն: Տիրելով ողջ շրջակա երկրին, նա հափշտակեց նրա բերքը: Ամեն օր նա կատաղի կոփվներ էր մզում և ի վերջո 1511 (1200) թվականի⁴⁷⁹ հոկտեմբերին բռնի ուժով գրավեց քաղաքի միջնաբերդից դուրս գտնվող մասը: Ողջ ձմեռը վերին բերդը մնաց պատերազմական դրության մեջ, և բերդում եղող մարդիկ խիստ նեղվեցին քաղցից:

Այդ տարվա դեկտեմբեր ամսի վերջին լուր ստացվեց Եգիպտոսի Մելիք ալ-Ազիզ թագավորի մահվան մասին: Նրա մեծամեծներն ու հոր ծառաները եկան և, վերցնելով Մելիք ալ-Աֆդալին, նրան թագավորեցրին Եգիպտոսում: Սակայն վերջինս մի շարաբաստիկ գործ ձեռնարկեց: Զորք հավաքելով՝ անմիջապես դուրս եկավ Եգիպտոսից || և գնաց նվաճելու Դամասկոսը: Երբ Մելիք ալ-Ազիզը լսեց այդ լուրը, փութով ելավ և միայնակ մեկնեց Մարդինից՝ բաժանվելով բոլոր զորքերից և իր որդուց՝ Ուռհայի տիրոջից: Քչերի հետ նա շուտափույթ կերպով անապատի ճանապարհով հասավ Դամասկոս: Հենց որ նա մտավ Դամասկոս, նրա եղբորորդի Մելիք ալ-Աֆդալը հասավ Եգիպտոսից: Եկան նաև նրա մյուս եղբորորդիները՝ Մելիք ազ-Չահիրը՝ Հալեպից և մեկ ուրիշը՝ Համայից ու Հոմսից: Սրանք միաբանած՝ պաշարեցին Դամասկոսը և իրենց հարձակումներով նեղ դրության մեջ դրին նրան:

Ինչպես ասացինք, Մարդինի բերդում գտնվողները սաստիկ հյուժվել էին պարենի պակասությունից: Այդ պատճառով նրանք երաշխիքներ խնդրեցին՝ հանձնվելու պատրաստակամությամբ: Սակայն այդ քայլին դիմեցին խորամանկաբար, քանի որ պահանջեցին, որպեսզի երաշխիքներն ուղարկվեն Դամասկոսից՝ Մելիք ալ-Ադիլի անունով: Վերին բերդի գագաթին նրանք պարզեցին Մելիք ալ-Քամիլի դռը: Նրանք ուտելիք, խմելիք, ոսկի և նվերներ ստացան, բայց դրսից ոչ ոք բերդ չմտավ: Այդ տարվա⁴⁸⁰ մայիս ամսին նրանք դեսպան ուղարկեցին Դամասկոս՝ երաշխիքների խնդրով: Հետո սկսեցին իջեցնել թույլերին և նրանց փոխարեն բարձրացնել մարտունակ մարդկանց: Սուրհանդակներ էին ուղարկել նաև Մոսուլի տիրակալ Նուրեդդին իբն Իզզեդդինի մոտ: Մի քանի օրից վերջինս ժամանեց իր հորեղբորորդիների՝ Սինջարի ու Զեզիրեի տերերի և նրանց զորքերի հետ միասին: Նրանց շուրջը հավաքվեցին ողջ Մարդինի երկրի աշխարհագորն ու Դունայսիրի⁴⁸¹ բնակիչները: Կազմելով մի մեծ բազմություն, նրանք շրջապատեցին ողջ լեռան լանջերը, որտեղ առաջ բանակ էր դրել Մելիք ալ-Ադիլը:

207 Այսպիսով, ինչպես Մարդինում գտնվողները, այնպես նաև վերին բերդում նստածները ասես բանտի մեջ լինեին՝ լուռումունջ և առանց որևէ ձայն արձակելու: Արևելցիները սրտապնդված, շուտափույթ կերպով հարձակում սկսեցին և շատ օրեր քաջաբար կռիվ մղեցին: || Բերդում նստածները, խախտելով իրենց խոստումը, պատրաստվեցին առավոտյան իջնել վերևից, մինչ դրսինները ճնշում պետք է գործադրեին իրենց դիրքերից և այսպիսով շրջապատման մեջ առնեին [թշնամուն]: Գիշերը Մելիք ալ-Քամիլի կողմնակիցները պատրաստվեցին և, կրակի մատնելով բոլոր պահեստները, լեռան արևելյան կողմից ճողոպրեցին դեպի նփրկերտ: Նրանք իրենց հետ տարան միայն այնքան բան, որքան կարող էր կրել նրանցից յուրաքանչյուրը: Զորքերը, տազնապի մեջ ընկնելով, ողջ գիշեր փախեփախ եղան: Առավոտյան արևելցիները բարձրանալով, իսկ բերդում եղողները ցած իջնելով, տարվեցին հարստությունների, վրանների, զենքերի ու զանազան իրերի կողոպուտով և ձեռք քաշեցին փախչողներին հետապնդելուց: Այսպես փրկվեց Մարդինի անառիկ բերդը, որը նվաճման վտանգի տակ էր: Քամիլը՝ Ադիլի որդին, իր զորքերով ուղղվեց դեպի նփրկերտ ու Ամիդ, ապա Սևերակի ճանապարհով հասավ Ուռհա: Իսկ Մոսուլի տիրակալը մեծամտացած ճանապարհ ընկավ և

հասավ Ռեշայնա՝ դեպի Ուոհա դիմելու և այն պաշարելու մտադրությամբ: Սակայն որոշ ժամանակ Ռեշայնայում մնալուց հետո նա հիվանդացավ և իր զորքերի հետ միասին վերադարձավ Մոսուլ:

493. Մելիֆ ալ-Քամիլի ժամանումը Դամասկոս և այդ ֆաղափի խնդրի լուծումը

Սալահեդդինի որդիները, որոնք, ինչպես ասացինք, աշաշարել էին Դամասկոսը, իրենց ամենօրյա կատաղի հարձակումներով սաստիկ նեղության մեջ էին պահում այն: Ներսում գտնվող նրանց հորեղբայրը ծանր դրության մեջ էր ընկել, բայց իր իմաստության շնորհիվ կարողանում էր քաջաբար դիմանալ: Նրա որդին, որն, ինչպես ցույց տվեցինք, վերադարձավ Մարդինից, հավաքեց իր զորքերը և փութաց դեպի Դամասկոս՝ հորը օգնության հասնելու նպատակով: Երբ հասավ նրա մոտերքը, Սալահեդդինի որդիների ղինվորները հանկարծակիորեն խուճապի մատնվեցին, և ամեն մարդ, թողնելով իր ողջ ունեցվածքը, փախավ աչքը կտրած ուղղությամբ: || Հալեպի տերը դիմեց դեպի իր երկիրը, իսկ Մելիֆ ալ-Աֆղալը՝ դեպի Եգիպտոս: Ինչ վերաբերում է Մելիֆ ալ-Ադիլին, ապա նա ընդառաջ ելավ իր որդուն և մեծ խնդրությամբ դիմավորեց նրան: Դամասկացիները դուրս գալով, տիրեցին ճողոպրածների ողջ ունեցվածքին: Մելիֆ ալ-Ադիլը զորք վերցրեց, և իր որդու հետ եգիպտացիներին հետապնդելով մինչև Կահիրեի մատույցները, այնտեղ ճակատամարտ տվեց նրանց: Եգիպտացիները ջախջախիչ պարտություն կրեցին, և Մելիֆ ալ-Աֆղալը փախավ մտավ քաղաք: Կահիրեցիները սակայն մեծ ցնծությամբ ընդառաջ ելան Մելիֆ ալ-Ադիլին և նրան Կահիրե հրավիրեցին: Նա տիրեց [քաղաքին], իսկ Մելիֆ ալ-Աֆղալը, վերցնելով իր մարդկանց, գիշերով փախավ Բոսրա:

494. Եգիպտոսում Մելիֆ ալ-Քամիլի թագավորման և այդ ժամանակ Ասուրիում կատարված իրադարձությունների մասին

Տիրելով Եգիպտոսին և, ինչպես երազում էր, այդ կերպ դառնալով սուլթան, Մելիֆ ալ-Ադիլը Ուոհայից բերել տվեց իր որդուն և թագավորեցրեց այնտեղ, իսկ ինքը ելավ գնաց Դամասկոս: Ուոհայում զանազան կառավարիչների և զորագլուխների հետ միասին նա նստեցրեց իր մյուս որդուն, որի անունն էր

Մելիք ալ-Ֆահիզ⁴⁸²: Համայի տերը՝ Մելիք ալ-Մանսուր իբն Տաքիեզդինը տեսնելով, որ Մելիք ալ-Ադիլը հաղթեց իր եղբորորդիներին և սեփականեց թագավորութիւնը, նրա հետ դաշն կնքեց և նրան հանձնեց Մաբբուզն ու Եփրատի ափին գտնվող մի բերդ, որ կոչվում էր Կալա-Նաջմ⁴⁸³:

495. Իկոնիայի Ռուֆնեդդին⁴⁸⁴ սուլթանի արշավանքի մասին

1512 (1201) թվականին, մինչ Մելիք ալ-Ադիլը գտնվում էր Եգիպտոսում, Իկոնիայից առաջ խաղաց Քիլիշ Արսլանի որդի Ռուֆնեդդինը և եկավ պաշարեց Մելիտենեն, որը պատկանում էր իր Մուսղեզդին⁴⁸⁵ անունով եղբորը: Վերջինս Մելիք ալ-Ադիլի փեսան էր դստեր կողմից: Մելիտենեն պաշտպանելու համար ուղարկվեցին Ուսհայի զորքերը: Սակայն այդ ժամանակ համարձակութիւն ստացավ Հալեպի տիրակալ || Մելիք ազ-Չահիրը, որը պաշարելով Մաբբուզը, գրավեց այն և կործանեց նրա պարիսպներն ու միջնաբերդը: Նա գրավեց նաև Եփրատի ափին գտնվող վերոհիշյալ բերդը: Հետո շարժվեց դեպի Ապամեա և ավարի մատնեց Համայի տիրոջ ողջ երկիրը, որովհետև վերջինս դաշինք էր կնքել իր հորեղբոր հետ: Բանակելով Համայի մոտակայքում՝ նա մեկ ամիս շարունակ կատաղի հարձակումներ էր գործում նրա վրա: Համայի տերը, նեղ դրութիւն մեջ ընկնելով, հաշտութիւն կնքեց նրա հետ: Վերջինս մեկնեց այնտեղից և եկավ ճամբար խփեց Հոմսի մոտակայքում՝ պատրաստվելով երկրորդ անգամ պաշարել Դամասկոսը:

496. Ամիդի տիրոջ մահվան և Մոսուլի եկեղեցիների կողոպուտի մասին

Այդ ժամանակ Ամիդի տերն էր վերոհիշյալ Կուտբեզդինը, որը մի փառահեղ երիտասարդ էր: Մի գիշեր Հիսն-Քեֆայում, որ գտնվում է Տիգրիս գետի վրա, նրա ծառաները խեղդեցին նրան և սենյակի պատուհանի հսկայական բարձրութիւնից նետեցին այգու մեջ: Առավոտյան նրան մեռած գտան: Հիսն-Մանսուրում նա ուներ մի եղբայր՝ Նասրեդդին⁴⁸⁶ անունով, որը երեք օրից հասնելով Ամիդ, տիրեց եղբոր ողջ երկրին և նվաճեց բոլոր բերդերը: Տիրախեղդ ծառային, որի անունն էր Ֆախրեզդին, Ամիդի տիրակալը մեծ պատիվներ էր տվել: Շատ սիրելուց նրան կնութիւն էր տվել նաև իր քրոջը և հիշյալ եղբորն էլ վաճառել էր նրա

պատճառով: Սակայն նա դավաճանեց և շարությամբ հատուցեց [տիրոջը]. Եվ ահա Նասրեղղինը, ձերբակալելով [Ֆախրեղղինին], հափշտակեց նրա ողջ ունեցվածքը և նրան դառնագույն տանջանքների ենթարկելուց հետո նետեց գուբի մեջ: Հետո նա ամուսնացավ իր հանգուցյալ եղբոր կնոջ հետ, որ Մելիք ալ-Ադիլի դուստրն էր:

210 Այդ ժամանակ, մինչ Մոսուլի տիրակալը իր զորքերի հետ գտնվում էր դրսում՝ պատրաստվելով արշավել դեպի արևմուտք, // սատանայի զրգամամբ նինվեի երկրի Բարտելա⁴⁶⁷ գյուղում հակառակություն ծագեց քրիստոնյաների և տեղի մահմեդական քարոզչի միջև Երբ գանգատվեցին նրանից, գյուղապետը նրա գործած մեղքի համար պատժեց նրան գանահարովյամբ: Վերջինս եկավ Մոսուլ և, գոտի կապելով, ուրբաթ օրը աղաղակ բարձրացրեց մեծ մզկիթում: Թեթևամիտ մահմեդականների մի բազմություն հետևեց նրան, և քաղաքում մեծ խռովություն ծագեց. նրանք թափով դուրս եկան մեծ մզկիթից, որպեսզի գնան ավերեն Բարտելան: Սակայն հասնելով քաղաքի դարպասին և տեսնելով, որ այն փակ է, կտրուկ շրջվեցին դեպի թագրիտցիների⁴⁸⁸ մեծ եկեղեցին, խորտակեցին նրա դռները և, ներս մտնելով, հափշտակեցին այնտեղ եղած ամեն ինչ: Նրանք եղծեցին նրա ողջ շքեղությունը՝ դռները, բեմը, և խլեցին եկեղեցու բոլոր գեղեցիկ սպասքները՝ արքայական վարագույրները, խաչերը, ավետարանները, ինչպես նաև եկեղեցում պահվող բոլոր արծաթյա և ոսկյա գավաթներն ու սկիհները: Մաֆրիանը⁴⁸⁹ Մոսուլում շէր: Նրանք բռնովյամբ մտան նրա սրահը և կողոպտեցին այնտեղ եղած ամեն ինչ: Փորփրեցին սրահի հատակը, ջարդեցին դռներն ու պահարանները և խուզարկեցին պատերը: Նրանք ահռելի քանակովյամբ պարեն, հացահատիկ, ցորեն ու տարբեր տեսակի մթերքներ հափշտակեցին:

497. Մելիտենեի մասին

Արդ, Ռուբենեղղինը՝ Քիլիջ Արսլանի որդին, [1]512 (1201) թվականի հունիս ամսին եկավ պաշարեց Մելիտենեն և ութ օրից գրավեց այն: Նրա եղբայրը, որ գտնվում էր ներսում, նեղ դրության մեջ ընկնելով, հանձնեց [քաղաքը] և, լքելով երկիրն ու իշխանությունը, թշվառ ու ձեռնուձեռնացնելով Ուռհա:

Այդ ժամանակ Կահիրեում և ողջ Եգիպտոսում սաստիկ սով էր տիրում, որովհետև նեղոս գետը սովորականի պես չէր վա-

211 րարել և շէր ողողել այդ հողը. Սովն այնպէս սաստկացավ, || որ մարդիկ նույնիսկ սատկած անասուններ էին ուտում և շուկաներում նեխած միս վաճառում: Սովից հետո [եգիպտացիները] պատժվեցին մահտարածամով: Հավասարապէս մեռնում էին և՛ հարուստները, և՛ աղքատները: Տները, գյուղերն ու քաղաքները ամայացան և անհամար թվով մարդիկ բնաջնջվեցին: Իսկ փրկվողները, թշվառացած և հյուծված, ցրվեցին ողջ աշխարհում՝ հասնելով մինչև ստորին Բաբելոն:

498. Արևելցիների զուրահավաք և Դամասկոսի պաշարումը
նրանց կողմից. Մելիք ալ-Ադիլի մեկնումը
Եգիպտոսից

Այդ ժամանակ Սալահեդդինի վերահիշյալ որդիները, որոնք կանգնած էին իշխանության գլուխ, նորից հավաքվեցին և պատրաստվեցին պաշարելու Դամասկոսը: Այդ տարվա հունիս ամսին նրանք եկան պաշարման մեջ առան այն և սուրհանդակներ ուղարկեցին արևելցիների մոտ, որպեսզի նրանք էլ ելնեն ու պաշարեն Ուռհան: Մոսուլի, ինչպես նաև Սինջարի ու Ջեզիրեի տերերը, պատրաստութուն տեսնելով, եկան հասան մինչև Դունայսիր, ապա մեկնելով այնտեղից, գնացին Ռեշայնա: Ուռհայի և Խառանի երկիրը դողաց սարսափից: Մոտ երեք ամիս նրանք մնացին իրենց տեղում: Ամիգի տերը նույնպէս հավաքեց իր զորքերը և եկավ Ուռհա՝ իր աներձագների մոտ: Երբ լուր ստացվեց, որ Մելիք ալ-Ադիլը դուրս է եկել Եգիպտոսից և հասել Երուսաղեմ, որոշվեց պատերազմ սկսել արևելցիների դեմ: Սակայն արևելցիների սիրտը վախ ընկավ, և նրանք, հաշտութուն խնդրելով, ձեռնունայն վերադարձան իրենց երկրները:

Մելիք ալ-Ադիլը Երուսաղեմ հասավ այդ տարվա հուլիս ամսին, մինչ նրա եղբորորդիները մարտնչում էին Դամասկոսի դեմ: Դամասկոսում էին գտնվում վերը հիշված Շարաֆեդդինը և մի ուրիշ խելացի առաջնորդ, որի անունն էր Սարեմեդդին: Ուռհայեցի զինվորներն այլևս հակառակորդ չունեին, քանի որ արևելցիները հաշտվել և վերադարձել էին իրենց երկիրը, իսկ հոռոմների երկրի սուլթան Ռուքնեդդինը || գնացել պաշարել էր Արզունը: Այդ պատճառով նրանք պատրաստութուն տեսան, և Մելիք ալ-Ֆահիզը բոլորին վերցրեց՝ Դամասկոսին օգնության հասնելու համար: Իսկ Մելիք ալ-Ադիլը հնարամտությամբ և խորամանկությամբ երկպառակութուն սերմանեց իր եղբորորդիների միջև,

որոնք գժտվեցին իրար հետ: Ավագին՝ Մելիք ալ-Աֆղալին նա տվեց Սամոսատի բերդն ու Սրուճը, և նա, հաշտութիւն կնքելով, հեռացավ Դամասկոսից: Հալեպի տերը նույնպէս գիշերով փախուստի դիմեց Դամասկացիները, նորից դուրս գալով, ավարի մատնեցին նրանց ճամբարը, որոնք երկրորդ անգամ ծաղրի առարկա դարձան Մելիք ալ-Ադիլը եկավ Դամասկոս և իր Մելիք ալ-Ֆաիզ որդուն տվեց Ալեքսանդրիան, իսկ Ուռհան հանձնեց իր մյուս որդուն, որը նշանակված էր Երուսաղեմի վրա և որի անունն էր Մուսա Մելիք ալ-Աշրաֆ⁴⁹⁰: Սրան զորքերի հետ ուղարկեց Ուռհա:

499. Մարդինի պաշարման, Ռուֆնեղդինի՝ իբերներից կրած պարտության և ժամանակի իրադարձությունների մասին

1513 (1202) թվականի ապրիլ ամսին Մելիք ալ-Ադիլը հաշտութիւն կնքեց իր եղբորորդու՝ Հալեպի տիրոջ հետ: Ապա նա իր որդուն՝ վերոհիշյալ Մելիք ալ-Աշրաֆին, զորքերով ուղարկեց պաշարելու Դունայսիրը և Մարդինի լեռան ողջ շրջակայքը: Ամբողջ ամառը նրանք մնացին այնտեղ՝ ավերելով երկիրը, ուտելով նրա բերքը և անարգել կերպով անելով իրենց ցանկացածը:

Այդ տարի Քիլիջ Արսլանի որդի Ռուֆնեղդինը ջախջախիչ պարտութիւն կրեց իբերներից: Արդունն ու շրջակա երկրները գրավելուց և Անձիտի ու Հիսն-Չիագի գավառները հնադանդեցնելուց հետո նա ճամբար էր խփել Հայոց երկրում, և նրա շուրջն էին հավաքվել իր զորքերը: Իբերները հարձակվեցին և, սոսկալի հարված հասցնելով նրանց, անհամար ավար ձեռք բերին: Նրա զորքերից մոտ քսան հազար մարդ սպանվեց, իսկ շատերը, այդ թվում նաև նրա եղբայրը, գերի ընկան:

500. Զուբեյրի վերադարձը Մարդինից

213 // Ինչպես ասացինք, ողջ ամառը Մարդինի երկրում մնալուց հետո, երբ վրա հասավ ձմեռը, զորքերը թողեցին եկան Ուռհա:

Այդ տարի քիչ անձրևներ եկան, և ամենուրեք հացահատիկի թանկութիւն ընկավ. Հացահատիկն ու հարդը այնքան նվազեցին, որ մի քաշ⁴⁹¹ ցորենը վաճառվեց 12 արծաթով⁴⁹²: Հացահատիկի նվազութիւնն այսպէս զգացվեց ողջ այդ և հաջորդ տարին:

Այդ տարի ապրիլ ամսին զորքերը նորից պատրաստվեցին

զնալ Մարդինի երկիրը: Երբ այնտեղի տիրակալները նեղ գրության մեջ ընկան և տեսան, որ օգնող շունեն, հարկադրված զիջեցին Ռեշայնան և հիսուն հազար սսկյա դինար՝ ի հատուցումն Մարդինից փախչելու ժամանակ Մելիք ալ-Քամիլի կորցրած [հարստության]: Այսպիսով հաշտություն կնքվեց, և նրանք ձեռք քաշեցին արշավանքից: Ռեշայնան տրվեց Սալահեդդինի որդի Մելիք ալ-Աֆդալին: Սակայն հաջորդ տարի նա գժտվեց իր հորեղբոր հետ: Վերջինս ետ խլեց Սրուճն ու Ռեշայնան և տվեց իր որդուն, որ Ուհայի տերն էր:

Այդ տարի Ամիդի տերը գայրացավ Սևերակի տիրոջ վրա և, բռնելով ու բանտարկելով նրան, գրավեց նրա բոլոր տիրույթները:

Նույն տարվա մեջ Կիլիկիայի իշխանը⁴⁹³ պաշարեց Անտիոքը և, սաստիկ նեղելով նրան, կերավ ու փշացրեց նրա բերքը: Հաջորդ տարի նա ավելի ևս ուժեղացրեց ճնշումը քաղաքի վրա և, հարձակվելով արևմտյան կողմից, ներխուժեց քաղաք ու տիրեց նրան: Ֆրանկները սիրտ առան և, զենքի դիմելով, փորձեցին բռնել նրան, բայց նա ճողոպրեց ու փախավ և կարողացավ դուրս պրծնել: Նրան հետապնդեցին, բայց չհասան. Քաղաքը փրկվեց:

Այդ տարի Ամիդի տերը եկավ պաշարեց Կատտինա⁴⁹⁴ կոչվող բերդը, որ գտնվում է Եփրատի ափին, և հարձակում ձեռնարկեց նրա դեմ: Սակայն նա կորցրեց իր զինվորներից շատերին և ձեռնունայն ետ դարձավ:

214 Մենք նկարագրեցինք մինչև այժմ, այսինքն՝ մինչև 1514 (1203) թվականը կատարված դեպքերը: || Թող աստված օգնի մեզ ողորմածաբար և հաշտություն ու խաղաղություն հաստատի իր ժողովրդի և եկեղեցու մեջ, ամեն:

501. Եգիպտոսում ծագած մահտարածամի մասին

Այդ տարի, 1515 (1204) թվականին, Եգիպտոսում առաջացած սոսկալի ուժեղ սովից և դրան ուղեկցող մահտարածամից հետո, որ վերը նկարագրեցինք, Նեղոս գետը սովորականի պես վարարեց և ողողեց այդ երկիրը: Վարուցանք կատարեցին, առատ բերք ստացան և երկիրը շենացավ: Սակայն հետո հանկարծակի մի սարսափելի մահտարածամ ծագեց: Մեռնողներն այնքան շատ էին, որ թաղող չկար: Համաճարակին անթիվ բազմությամբ մարդիկ զոհ գնացին:

502. Ֆրանկ թագավորների արշավանքը դեպի
Կոստանդնուպոլիս⁴⁹⁰

Այդ տարի ֆրանկ թագավորները ոտքի ելան՝ Ասորիքի քրիստոնյաներին օգնության հասնելու և հնարավորության դեպքում սուրբ քաղաքը մահմեդականների ձեռքից փրկելու նպատակով: Նրանցից ոմանք շարժվեցին դեպի կղզիները, իսկ այնտեղից եկան Կոստանդնուպոլիս և, կատաղի հարձակում գործելով նրավրա, այն խլեցին հույների ձեռքից: Տիրելով նրան՝ նրանք այնտեղ նստեցրին մի հույն պատանու: Սա որդին էր այն կայսեր, որին հույները որոշ ժամանակ առաջ կուրացրել և զրկել էին թագավորությունից: Այս պատանու մայրը ծագում էր ֆրանկներից: Նրանից հետո հույներն այլևս երբեք թագավոր չունեցան⁴⁹⁶: Պատանին օգնություն խնդրեց [ֆրանկներից] և հնազանդվեց նրանց բռնատիրությանը: Ֆրանկները ողջ ձմեռ, մինչև Քառասնորդաց պահքը, տիրեցին Կոստանդնուպոլսում և հաշտություն կնքեցին Իկոնիայի սուլթան Ռուքնեղդին իբն Քիլիշ Արսլանի հետ: Վերջինս նրանց խոստացավ ճանապարհ տալ իր երկրում՝ // հոգալով նրանց կարիքները և ուղևորության համար անհրաժեշտ բաները: Ոմանք էլ եկան ծովի ուղղությամբ մինչև Տյուրոս, Սիդոն, Աքքա ու Փյունիկիա և, դուրս գալով, ասպատակեցին մինչև Երուսաղեմի և Տիրեբիայի մատույցները: Նրանք մահմեդական գյուղերից ահագին բազմություն գերեցին: Առևանգեցին նաև բազմաթիվ մարդկանց, որոնք գնում էին Եգիպտոս, ինչպես նաև երևելիների կանանց ու երեխաներին, որոնք ճամփա էին ընկել Դամասկոսից դեպի Եգիպտոս:

215

503. Մելիք ալ-Աշրաֆի արշավանքը դեպի արևելք և
արևելցիների դեմ մղված պատերազմը

Հունաց 1515 (1204) թվականին Մոսուլի տիրակալ և աթաբեկ Նուրեդդինը պատրաստվեց և, զորք հավաքած, եկավ պաշարեց Թելլ-Աֆարը⁴⁹⁷ իր հորեղբորորդու՝ Սինչարի տիրոջ հետ ունեցած քենի պատճառով: Սինչարի տերը դիմեց Մելիք ալ-Աշրաֆին, որը զորք հավաքեց՝ նրան օգնության հասնելու նպատակով: Մեկնելով Ուոհայից՝ նա գնաց բանակեց Բեթ-Շադե⁴⁹⁸ անունը կրող գյուղի աղբյուրների մոտ: Այնտեղ էլ հավաքվեցին եղբայրները՝ Մելիք ալ-Աշրաֆը, Սինչարի տերը, Նփրկերտի տեր Մելիք ալ-Աուհադը, Ամիդի, ինչպես նաև Սինչարի ու Զե-

զիրեի տերերը: Լսելով այդ, Մոսուլի տիրակալը պատրաստված եկավ դիմակայելու նրանց: Երբ մարտակարգերը դասավորվեցին և հնչեցրին շեփորներն ու թմբուկները, աստված մի քամի ուղղեց դեպի Մոսուլի տիրակալի կողմնակիցները: Նրանց աչքերը կուրացան փշող քամուց, հողափոշուց և զորքերի ծխից: Մոսուլցիները պարտվեցին ու փախան: Դա Մելիք ալ-Աշրաֆի առաջին հաղթանակն էր: Մելիք ալ-Աշրաֆի կողմնակիցները առաջ շարժվեցին և, հասնելով Մոսուլի մոտակայքը, հափշտակեցին իրերի հանդերում կուտակված բերքը, կողոպտեցին գյուղերն ու ետ դարձան:

504. Ռուֆնեղդին սուլթանի մահվան մասին

216 // 1517 (1206) թվականին մեռավ Աբուլֆաթահ մեծ սուլթանի որդի Քիլիշ Արսլանի որդի Ռուֆնեղդինը: Ռուֆնեղդինից հետո թագավորեց և հռոմոց երկրներին տիրեց նրա մանկահասակ որդին, որի անունն էր Քիլիշ Արսլանշահ⁴⁹⁹: Այդ ժամանակ հայտնվեց պատանու հորեղբայր խոսրովշահը⁵⁰⁰, որը, հալածվելով իր եղբայր Ռուֆնեղդինից, ապաստան էր գտել մայրաքաղաքում և այնտեղ ամուսնացել մի հույն կնոջ հետ: Լսելով եղբոր մահը, նա մեկնեց Կոստանդնուպոլսից և, թուրքմենական ցեղերի ուղեկցությամբ գալով պաշարելով Իկոնիան, պատերազմ սկսեց իր եղբորորդու դեմ: Վերջինս պարտվեց և քաղաքն ընկավ [խոսրովշահի] ձեռքը, որը բռնեց ու բանտարկեց պատանուն, իսկ նրա մեծամեծներին կոտորեց: Այսպես խոսրովշահը տիրեց հռոմոց երկրներին:

505. Խոսրովշահի պարտությունը Մելիք ալ-Աշրաֆից

Այդ ժամանակ խոսրովշահը դաշինք կնքեց Հալեպի տիրակալ Մելիք ազ-Չահիրի հետ, և վերջինս նախապատրաստված եկավ պաշարեց Համան: Ութ ամիս շարունակ նա ամենօրյա հարձակումներ գործեց նրա վրա. Մելիք ալ-Աշրաֆը սլատրաստվեց Համալից դուրս վճռել իր հորեղբորորդի Մելիք ազ-Չահիրին, որովհետև այն նվեր էր տրված իր դստերը: Երբ Մելիք ազ-Չահիրը տեսավ, որ Մելիք ալ-Աշրաֆը կազմ ու պատրաստ հասել է Մաբբուգ, օգնական զորք խնդրեց Կապադովկիայի սուլթան խոսրովշահից: Վերջինս անհամար զորքեր ուղարկեց, որոնք մոտեցան Սամոսատի շրջակայքին: Տեղեկանալով այդ մասին,

Մելիք ալ-Աշրաֆը իր զորքերի և բազմաթիվ արաբների հետ մեկնեց Մաբբուգից և ճակատամարտ տվեց ումայց⁵⁰¹ զորքերին՝ Վերջիններս պարտվեցին, և արաբները գերեցին Խոսրովշահի զինվորներին, որոնք բաղկացած էին քսան-երեսուն հոգիանոց խմբերից: Ռումայց [զորքերը] թիկունք դարձրին, և արաբներն ու Մելիք ալ-Աշրաֆի զինվորները տիրեցին նրանց ձիերին ու ունեցվածքին, // մինչդեռ դրանից առաջ երկրները դողում էին Խոսրովշահի զորքերից: Դա Մելիք ալ-Աշրաֆի երկրորդ հաղթանակն էր: Մելիք ալ-Աշրաֆը բարյացակամ էր բոլորի նկատմամբ և մանկությունից վատություն չէր արել որևէ մեկին:

506. Հայոց Խլաթ Բաղաֆի վիճակի մասին

Հայաստանի այս քաղաքը՝ Խլաթը, թագավորության աթոռանիստն էր: Շահարմենի մահվանից հետո թագավորեց Բեգթեմուրը⁵⁰², որը նյա ծառաներից մեկն էր: Շահարմենի անժառանգության պատճառով որոշ ժամանակ թագավորելուց և հաջողությունների հասնելուց հետո Բեգթեմուրը մի ուրբաթ օր սպանվեց մզկիթում: Նա ուներ մի փոքրահասակ որդի⁵⁰³, որը չէր կարող զորքերի գլուխ կանգնել: Երկրի իշխանությունն անցավ մի այլ ծառայի ձեռքը, որի անունն էր Հազարգինար⁵⁰⁴: Տիրելով երկրին՝ նա որոշ ժամանակ մնաց թագավորական գահի վրա ու մեռավ: Երկիրն ալեկոծվեց, քաղաքի մեծամեծները պառակտվեցին իրարից, որովհետև նրանցից յուրաքանչյուրն ուզում էր թելադրել իր կամքը: Ոմանք որոշեցին թագավորեցնել Արզունի տիրոջը, որը Խոսրովշահի եղբայրն էր, ոմանք էլ ուզեցին հրավիրել Մարդինի տիրոջը, ուրիշները խնդրեցին Մելիք ալ-Ադիլ մեծ սուլթանին, որպեսզի գահն զբաղեցնելու համար ուղարկի իր որդիներից մեկին, սակայն մյուսներն էլ նախընտրեցին Փահլևան⁵⁰⁵ անունով մի ծառայի, որը զինվորների աջակցությամբ գրավեց երկիրը:

Նփրկերտի տերը, որը Մելիք ալ-Ադիլի որդին էր, պատրաստված մտավ այդ երկիրը, գրավեց սահմանամերձ բերդերն ու ետ դարձավ: Մարդինի տերը նույնպես, բանակ և աշխարհաջ գոր հավաքելով, մտավ երկրի խորքերը՝ Խլաթին տիրելու նպատակով: Փահլևանը տեսնելով, որ շատերն աչք ունեն երկրի վրա մտածեց, որ ավելի լավ կլինի, եթե ինքը գրավի այն, և դրա համար սպանեց Բեգթեմուրի մատաղ որդուն: Մարդինի տերը շկարողանալով ձեռք ձգել Խլաթը, ահագին ոսկի ծախսելուց հետո

218 ձեռնունայն վերադարձավ Մարգին: Իսկ Արզունի տերը // կեղծ դաշինք կնքեց Փահլևանի հետ և, հարմար առիթ գտնելով, սպանեց նրան: Նփրկերտի տերը, զորքեր ստանալով իր հորից, զենքի ուժով առաջ շարժվեց և, վերցնելով իր համակիրներին, գրավեց երկիրը: Խլաթ մտնելուց հետո նա գրավեց բազմաթիվ բերդեր, որոնց թվում՝ Մանազկերտի անառիկ բերդը, և մի շարք այլ վայրեր: Արզունի տերը զղջաց, որ սպանել է Փահլևանին:

507. Մելիք ալ-Ադիլի որդի Մելիք ալ-Աունադի
փախուստը Խլաթից⁵⁰⁶

Արզունի տերը զորահավաք կատարեց և եկավ պաշարելու Խլաթը: Երբ Խլաթի տեր Մելիք ալ-Աունադը տեսավ, որ հակառակորդներն իրենից ուժեղ են, հեռացավ Խլաթից և ապաստանեց Մանազկերտի բերդում: Արզունցիները եկան և պաշարեցին այդ բերդը: Եվ մինչ նրանք մարտնչում էին իրար հետ, մեկ ամիս անց Մելիք ալ-Աունադին բազում զորքերով օգնության հասավ նրա եղբայր Մելիք ալ-Աշրաֆը, որն Ուռհայի տերն էր: Քաղաքը պաշարելուց ու նվաճելուց հետո նրանք գրոհով գրավեցին նաև միջնաբերդը: Նրանք կոտորեցին բազմաթիվ մեծամեծների ու երևելիների, ինչպես նաև Արզունի տիրոջ հետ համագործակցած մարդկանց: Մելիք ալ-Աունադը լիակատար իշխանություն ստացավ Խլաթում:

508. Իբերների, այսինֆն՝ գյուրջիների արշավանքը
Արզունի տիրոջն օգնելու նպատակով

Արզունի տերը գնաց օգնություն խնդրեց իբերներից՝ Խլաթը վերագրավելու մտադրությամբ: Նրան տրված զորքերը պաշարեցին և գրավեցին Մանազկերտը, որից հետո մոտեցան Խլաթին: Խլաթի տերը ելավ և դիմադրություն ցույց տվեց նրանց: Վերջիններս պարտվեցին, կոտորվեցին, թուլացան և հրաժարվեցին Խլաթին մոտենալու մտքից: Մինչև ձմեռ այնտեղ մնալուց հետո, իբերները ձեռնունայն ետ դարձան:

509. Մելիք ալ-Ադիլի արշավանքը դեպի արևելք և գուրբերի
առաջխաղացումը Սինջարի ուղղությամբ. իբերների,
այսինֆն՝ գյուրջիների առաջնորդ Ջաֆարիայի⁵⁰⁷
եղբոր՝ Իվանեսի⁵⁰⁸ գերումը

219 Հունաց 1520 (1209) թվականին Մելիք ալ-Ադիլը // զորքերով եկավ և բանակեց Գունայսիրում: Հավաքելով նաև Ջեզի-

րեում գտնվող զորքերը և դողացնելով ողջ արևելքը՝ այդ տարվա դեկտեմբեր ամսին նա գնաց պաշարեց Շիգգարը, այսինքն՝ Սինջարը: Կես տարի նա կատաղի հարձակումներով սաստիկ նեղություն պատճառեց նրան: Արբելայի և Շահրզորի տեր Մուզաֆֆարեղիինը, ինչպես նաև Մոսուլի տիրակալը պատրաստվեցին օգնության հասնել Սինջարի տիրոջը: Սակայն մինչ նրանք զբաղված էին դրանով⁶⁹, քառասուն օր անընդհատ ձյուն եկավ, և արեվելքի քաղաքների տներն ու փողոցները լցվեցին ձյունով ու սառույցով՝ սոսկալի ուժեղ ցրտի պայմաններում: Զմռան ցրտից Մելիք ալ-Ադիլի զինվորները թուլացան, և նա հաշտություն կրեց Սինջարի խնդրում: Հետո գնաց գրավեց Մծբինն ու հաբուրի գավառը և թողեց գնաց հառան:

Մինչ նա գտնվում էր հառանում, իբերներն սկսեցին ասսլատակել հլաթի երկիրը և դավ նյութել խլաթեցիների հետ՝ քաղաքն իրենց հանձնելու համար: Նրանք գաղտագողի եկան իրենց առաջնորդ Իվանեսի հետ, որը իբերների գլխավոր հրամանատար Զաքարիայի եղբայրն էր հլաթի տերը, զգալով խլաթեցիների և իբերների դավադրությունը, գիշերային հարձակում ձեռնարկեց: Իբերների սիրտը կոտրվեց, նրանք նեղ դրություն մեջ ընկան, իսկ Իվանես զորագլուխը գերի բռնվեց: Հետո իբերները հաշտություն կնքեցին և փրկագնեցին իրենց զորագլուխ Իվանեսին ութսուն հազար դինարի և երկու հազար գերիների դիմաց: Իսկ Իվանեսի դստերը կնություն տվին հլաթի տեր Մելիք ալ-Աուհադին: Մելիք ալ-Ադիլը՝ ցնծության, իսկ նրա բոլոր հակառակորդները ահուգողի մեջ էին:

510. Կիլիկիո երկրի, ինչպես նաև Լևոն իշխանի⁵¹⁰ հնարամտության մասին

220 Հունաց 1520 (1209) թվականին Խոսրովշահ սուլթանը պատրաստվեց և անհամար զորք հավաքեց՝ Կիլիկիո երկիրն ասսլատակելու նպատակով: Երբ Կիլիկիայի իշխան Լևոնը տեսավ, որ Խոսրովշահը պատրաստվում է մտնել իր երկիրը, // մի խորամանկ դավ սարքեց: Նրա մեծամեծներից մեկն ուղարկվեց սուլթանի մոտ և ձևացրեց, թե գժտվել է իր տիրոջ՝ Լևոնի հետ: Խիստ ամբաստանելով վերջինիս սուլթանի առջև, նա հավաստիացրեց, որ եթե իրեն զորք տրվի, ապա կմտնի հայոց երկիրը և նշանավոր բերդերը կհանձնի սուլթանի ձեռքը: Սուլթանը հավատաց ու նրան տվեց իր բանակի երևելի և ազնվական մարդկանց, ինչպես

նակ ահագին ոսկի: Երբ նա առաջնորդեց նրանց դեպի դարանակալման վայրը, թուրքերի կողմից շնկատված դարանակալները հարձակվեցին նրանց վրա և կոտորեցին այդ զորաբանակը: Հրամանատարները գերի ընկան և շղթաների մատնվեցին: Լսելով այդ, Խոսրովշահը զայրացավ ու զորահավաք կատարեց՝ հայերից վրեժ լուծելու և հաշիվ պահանջելու նպատակով: Նա կազմ ու պատրաստ մտավ հայոց երկիրը և սկսեց ասպատակել ու ավարի մատնել այն: Գրավելով Բերդուս⁵¹¹ կոչվող բերդը, նա ուզեց մտնել երկրի խորքերը, բայց Մելիք ալ-Ադիլի միջնորդությամբ նրանց միջև հաշտություն կայացավ, և սուլթանը վերադարձավ իր երկիրը:

511. Սուլթան Խոսրովշահի սպանության մասին

1522 (1211) թվականին Խոսրովշահը պատրաստվեց մտնել դեռևս հույների ձեռքում մնացած երկրները: Հույներն ունեին մի առաջնորդ, որի անունն էր Լասկարիս⁵¹²: Երբ սուլթանը զորք հավաքած ներխուժեց հունաց երկրները և սկսեց ավերել ու կոտորել, հույները նրա մոտ դեսպաններ ուղարկեցին՝ նվերներով, հաշտության խնդրանքով և տուրք վճարելու պատրաստակամությամբ: Սակայն վերջինս շհամաձայնեց, և այդ պատճառով նրանք օգնություն խնդրեցին մայրաքաղաքի ֆրանկներից: Օգնության փութալով հույներին՝ ֆրանկները հսկողության տակ առան երկրի մուտքը և ամբարտակներ կառուցեցին այդ կողմերով հոսող գետի վրա: Զրեբը ողողեցին ողջ դաշտը և ցեխ առաջացրին: Ֆրանկները հարձակվեցին թուրքերի վրա և ջախջախեցին նրանց:

221 Սուլթան Խոսրովշահը սպանվեց կովում, իսկ // թուրք զինվորները սրի մատնվեցին: Փախուստի դիմողներն ընկան ցեխի մեջ և թաղվեցին: Նույնիսկ մեկ հոգի չփրկվեց նրանցից: Ֆրանկները, անհամար ձիեր, զենք ու ոսկի ձեռք բերելով, ցնծությամբ ետ դարձան:

512. Խլաթի տիրակալ Մելիք ալ-Աուհադի մահվան մասին

Հունաց 1523 (1212) թվականին Խլաթ քաղաքում հիվանդացավ Մելիք ալ-Ադիլի որդի Մելիք ալ-Աուհադը: Երկար ժամանակ հիվանդ մնալով և տեսնելով, որ հիվանդությունը սաստկանում է, նա Ուռհայից կանչել տվեց իր եղբայր Մելիք ալ-Աշրաֆին և նրան հանձնեց թագավորությունը: Երբ արդեն Մելիք ալ-Աշրաֆը

գտնվում էր հլաթում, նրա եղբայր Մելիք ալ-Աուհադը մեռավ: Մելիք ալ-Աշրաֆը տիրեց հլաթին, ինչպես նաև նրան ենթակա երկրներին ու նփրկերտին՝ ժառանգելով եղբոր բոլոր գանձերը:

Այդ տարի թուրքմենները գերեցին ծովափնյա Բիսինուս⁵¹³ քաղաքում մնացած հունաց թագավորին և բերին Իկոնիայի սուլթանի մոտ: Նա ետ գնեց իր անձը երկու հարյուր հազար կարմիր դինարով, քաղաքը հանձնեց սուլթանին և հնազանդություն հայտնեց նրան:

513. Մելիք ալ-Ադիլի ժամանումն Ուոհա

1526 (1215) թվականին Մելիք ալ-Ադիլը եկավ Ուոհա իր փոքրահասակ որդու՝ Շիհաբեդդին Ղազի Մելիք ալ-Մուղաֆֆարի⁵¹⁴ հետ, որը տիրեց Ուոհայի և Խառանի գահին: Այդ ժամանակ Ուոհան շենանում էր, իսկ ուոհայեցիները բարգավաճում էին՝ առևտրով և շինարարական ձեռնարկումներով: Ուոհայում քիչ տեղեր էին մնացել չվերականգնված: Շիհաբեդդինը, ավելի քան իր մյուս եղբայրները, հետևում էր մահմեդական օրենքներին: Միաժամանակ նա խիզախ հեծյալ ու պատերազմող էր:

Այդ ժամանակ մեռավ նրա հորեղբորորդի Մելիք ազ-Ջահիրը՝ Հալեպի տերը: 1526 (1215)* թվականին մեռավ նաև Մելիք ալ-Ադիլը⁵¹⁵: //

Երեք տարի Ուոհայում մնալուց հետո, Շիհաբեդդինը Ուոհան հանձնեց իր Մելիք ալ-Աշրաֆ եղբորը և ստացավ հլաթն ու նփրկերտը: Հազիվ երկու տարի էր անցել հլաթում Շիհաբեդդինի տիրակալումից հետո, երբ Մելիք ալ-Աշրաֆը որոշեց ետ վերցնել նրանից հլաթը: Զգալով այդ, Շիհաբեդդինը շահանդուրժեց և, ապստամբելով Մելիք ալ-Աշրաֆի դեմ, պատրաստվեց պատերազմել նրա հետ: Մելիք ալ-Աշրաֆը զորք հավաքեց և մեկնեց հլաթ: Շիհաբեդդինը փակեց հլաթ քաղաքի դարպասները և ճակատամարտ տվեց իր եղբայր Մելիք ալ-Աշրաֆին: Սակայն հլաթեցիները և Շիհաբեդդինի զորքերը ակնհայտորեն ի վիճակի չէին պատերազմելու Մելիք ալ-Աշրաֆի դեմ: Այդ պատճառով հարձակման անցնելով՝ Մելիք ալ-Աշրաֆի զորքերը ճնշում գործադրեցին նրանց վրա և ներխուժեցին քաղաք: Շիհաբեդդինին բռնեցին ու նստեցրին նփրկերտում: Իշխանության գլուխ անցնելով՝ նա նփրկերտում վերացրեց բոլոր մաքսային հարկերը և

* Լուսանցագրություն. «Մելիք ալ-Ադիլը մեռավ 1529 (1218) թվականին»:

արգելեց քրիստոնյաներին իրենց տներից դուրս գինի խմել կամ ցերեկը մեռել թաղել: Երկու տարի հետո նա գնաց Մեքքա՝ աղոթելու: Վերադառնալով Մեքքայից նա խախտեց իր խոստումը և նորից հաստատեց մաքսային հարկերը: Սակայն ոչ ոքի նա չզրկեց՝ ո՛չ քրիստոնյաներին, ո՛չ հրեաներին, թեև մահմեդականներից բացի բոլորին ատում էր:

514. Երաշտի և նեղ տարիների, ինչպես նաև դժնդակ մորեխի հարձակման մասին, որ խժոնց անխղհար

223 Հունաց 1534 (1223) թվականին հացահատիկի պակասություն և թանկություն սկսվեց Բաբելոնից մինչև Եփրատ գետն ու Հալեպի սահմանները: Թեև մարդիկ ցանք էին կատարում, բայց անձրև չկար. Սերմերից շատերը ծլարձակեցին, սակայն քանի որ անձրև չեկավ, չորացան: Իսկ այն սերմերը, որ ցանվում էին անձրևից հետո, թռչունների բաժին էին դառնում: Որոշ տեղերում անձրևներ եկան և ցանքսերը պտղաբերեցին, // սակայն երբ հասավ հնձի ժամանակը, մորեխները հարձակվեցին և, կարծես եփածպատրաստ գտնելով, խժոնցին հացահատիկը: Այդ պատճառով ցորենի մեկ քաշի⁵¹⁶ գինը աստիճանաբար բարձրացավ նախ՝ մինչև 15 արծաթ⁵¹⁷, ապա՝ մինչև 25: Նույնը նաև գարին, բակլան, ոսպը, սիսեռը և մյուս բաները, որոնք եթե առաջ վաճառվում էին մեկ արծաթով, դարձան չորս արծաթ⁵¹⁸: Արևելացիները, առանց հարցնելու թանկն ու էժանը, կրում էին ուղտերով: Երբ Ուռհայի քրիստոնյաները տեսան, որ ողջ ժողովուրդը դառնացած հուսահատվել է կյանքից, և ոչ ոք օգնության ձեռք չի մեկնում, քանի որ աստված զայրացել է աշխարհի վրա, որոշեցին պաղատել և ողորմություն բաշխել, որպեսզի աստված զթա իր արարածներին և անձրև ուղարկի:

515. Ուռհայեցիների պաղատանքը և ողորմությունները

Այդ ժամանակ Ուռհայի լեռան վանականների մեջ հռչակ էր վայելում Օտարների վանքում բնակվող Ռաբբան Բարսուման՝ մի պատվարժան ծերունի և օրինակելի միայնակյաց: Քահանաները և քաղաքի բնակիչները որոշեցին վեր կենալ և պաղատանք մատուցել աստծուն: Տղամարդիկ, կանայք և երեխաները շքախմբով դուրս եկան քաղաքից և Բորոտների շրճորից այն կողմ

սկսեցին պաղատել, աղոթել և երկրպագել: Բոլոր հակօրինները, հույները և հայերը միաբերան ծնրադրութեամբ երեսները հպում էին հողին և բաց սրտով ու մերկ գլխով դառնաղի արտասուք թափում: Այսպես վարվեցին շորս օր, բայց անձրև չեկավ:

516. Հավատացյալների գանգատը քահանաներից
Ռարբան // Բարսումայի առջև

224

Երբ ժողովուրդը տեսավ, որ անձրև չի գալիս, հակօրինների, հույների և հայերի բազմությունը մոտեցավ Ռարբան Բարսումային, որը փայլում էր այդ օրերին: Նրանք ասացին. «Մենք արժանի չենք աստծու ողորմածությանը, որովհետև քահանաները, որոնք լույս և աղ պետք է լինեին, դարձել են խավար և անհամություն: Նրանք զրկում են միմյանց, իրար վերաբերվում ատելությամբ ու շարամտությամբ: Նրանք չեն խորշում երաժիշտների ընկերակցությունից և գինի են խմում, նույնիսկ հարբում ու փսխում են: Ո՛չ աստծուց են ամաշում, ո՛չ մարդկանցից: Նրանց տեսնելով՝ սովորական հավատացյալները, որոնք տկարամիտ ու անգիտակից են, մի՞թե ավելին չեն անի, քան նրանք: Ամենավատն այն է, որ նրանք իրար զրպարտում են տիրակալների առջև, և եթե շիներ վերջիններիս բարությունը, միմյանց կզրկեին ունեցվածքից ու կյանքից»:

Երբ Ռարբան Բարսումա ճգնավորը հավատացյալներից լսեց այս բաները, կանչեց քահանաներին ու կղերականներին և ասաց նրանց. «Ձեր պատճառով է աստված գայրացել մեզ վրա»: Նա հանդիմանեց նրանց բազում կշտամբանքներով և պարտավորեցրեց աստծու խոսքով, որ այլևս գայթակղության պատճառ չդառնան ո՛չ հավատացյալների, ո՛չ էլ իրենց անձանց համար: Նա ասաց. «Ահա ձեր աչքով իսկ տեսնում եք ձեր և ձեր որդիների կենաց վախճանը: Ողջ ժողովուրդը համոզվեց, որ մեր շար մեղքերի պատճառով դադարեցին անձրևները»: Հետո նա հորդորեց նրանց, որ ողորմություն բաշխեն, մոռանան միմյանց նկատմամբ իրենց սրտերում պահած քեներ և հետևեն Սուրբ Գրքի պատվիրաններին:

516. Ուսուցիչների բաշխած ողորմությունները, Սուրբ
Կիրակիի մեծարումը և վարսերի ու
խոպուպների խուզումը⁵¹⁹

Այնուհետև ուսուցիչներից յուրաքանչյուրն իր ուժերի ներածի շափով ողորմություն բաժանեց: Ով պատճառ էր դարձել

որևէ մեկի բանտարկության, հանել տվեց հանցագործին բանտից: Ով քեն ուներ մի ուրիշի նկատմամբ, այդ օրերին մոռացավ քենը: Նրանք խոստացան // չբացել իրենց խանութները կիրակի օրը և շծածկել իրենց գլուխները ավետարանի ընթերցման ժամանակ: Ողջ ժողովուրդը դադարեցրեց առևտուրը, խանութները փակվեցին, իսկ արհեստավորները ձեռք քաշեցին իրենց արհեստներից, որովհետև սուգը համընդհանուր էր: Այսպես յոթ օր նրանք անցկացրին ծոմով, աղոթքներով, ողորմություններով, աղերսանքներով ու տխրությամբ: Ինչպիսի՞ ողբալի տեսարան էր, երբ նրանք աղերսում ու պաղատում էին աստծուն: Երբ Ռաբբան Բարսուման հորդորում էր ժողովրդին, նրան լսում էին ինչպես մի մարգարեի: Ավետարաններ և խաչեր բռնած՝ նրանք վանքերից և քաղաքից բերին ու մեծարեցին սրբերի մասունքները: Ժողովուրդն այսպես աղաղակ էր բարձրացրել առ աստված, բայց անձրև չէր գալիս:

Պաղատանքի ութերորդ օրը Ռաբբան Բարսուման տեսավ, որ ամպերը խտանում են և կարծես անձրև պիտի տեղա, սակայն թեև երկինքն ամպամած էր, ոչինչ չիջավ մի քանի կաթիլից բացի: Այնժամ Ռաբբան Բարսուման սկսեց օրինակներով քաջալերել և մխիթարել ժողովրդին, ասելով. «Երբ որևէ մեկը հիվանդանում է, անմիջապես կարիք է զգում բժշկի: Իսկ բժիշկը ջանում է դեղերով կամաց-կամաց վանել հիվանդի ցավերն ու տառապանքները: Նույնպես և աստված, փառք իր անվանը, երկարամտությամբ ուղում է կամաց-կամաց, օրեցօր բուժել նախ և առաջ մեր հոգու ախտերը: Եթե նա անձրև ուղարկեր շորրորդ, հինգերորդ կամ ութերորդ օրը, մեր մեղքերը չէին մաքրվի, և մեր հոգու հիվանդությունները չէին բուժվի: Արդ, մեր աչքերի արտասուքները երկրորդ մկրտություն դարձան մեզ համար: Ես ձեզ խնդրում եմ, սիրելիներս, տեսեք և զգուշացեք մեղքի մեջ ընկնելուց, որպեսզի անցնի այն փորձությունը, որին մենք դատապարտված ենք»: Ինձ թվում է, թե Ռաբբան Բարսուման այդ բանն ասաց մարգարեաբար, քանի որ եկան վատ տարիներ, ուղեկցված երաշտով, մորեխով և տերերի բռնություններով, որոնք գլուղացիների համար // սերմացու ցորեն էին պահանջում: Հետո նա աղոթեց ժողովրդի վրա, և ամեն մարդ գնաց իր տունն ու այլևս դուրս չեկավ:

Մյուս օրը, փետրվարի 9-ին, աստված անձրև ուղարկեց և ցուցաբերեց իր ողորմածությունը: Ողջ աշխարհը ցնծաց: Բայց այդ տարվա բերքը քիչ եղավ: Հաջորդ տարի երկիրը կարծես հրի

մատնվեց հացահատիկի պակասից ու տերերի բռնություններից: Նրանք քաղաքաբնակ երևելիներից և հացահատիկ ունեցող գյուղացիներից խլում էին ցորենն ու գարին և բաշխում էին աղքատ ու չքավոր մշակներին՝ ցանելու համար: Ստանալով սերմացուն՝ վերջիներս շնչին մասը ցանում էին, մնացածն ուտում, քանի որ տասնմեկ տարի անընդհատ բերք չեղավ: Անձրևի պակասի պատճառով ոմանք թեև շնչին բերք էին ստանում, բայց երբ հասնում էր հնձի ժամանակը, այն էլ մորեխն էր խժուում:

Այսպես վատ էին վարվում Ուռհայի, Խառանի, Սրուճի, Ռեշայնայի, ինչպես նաև երկրամասի բոլոր կողմերի տերերը՝ հարստահարելով ու զրկելով շատերին: Գյուղացիներին սերմացուով օգնելու օրենքը պարտադրեց Մարդինի տերը, սակայն դա անիմաստ կորուստ էր և՛ գյուղացիների, և՛ սերմացուի տերերի համար: Թեև հինգ տարի շարունակ յուրաքանչյուր տարվա համար ունևորներից սերմացու էին ստանում, բայց այդ հինգ տարում կալերում մեկ տարվա բարիք չկուտակվեց, որովհետև սերմացուն առնում էին ոչ թե բարի կամեցողությամբ, այլ բռնությամբ: Լեզուն անզոր է պատմել այն տանջանքները, շարշարանքները և հարկադրանքները, որ պատճառում էին վերակացուները: Բարեհամբույր և ողորմած սուլթան Մելիք ալ-Աշրաֆը, տեղյակ ըլինելով Ուռհայի, Խառանի, Սրուճի և Ռեշայնայի բնակչության վիճակին, հրամայում էր շափով սերմացու բաժանել գյուղացիներին: //

227

517. Ֆրանկների և հունգարական թագավորի⁵²⁰ արշավանքը դեպի Աֆֆա և Կահիրեի մոտակայքում գտնվող Դամիատ⁵²¹ ֆաղափի պաշարումը նրանց կողմից

Հունաց 1531 (1220) թվականին* հունգարական թագավորը և Հոռմի պապի⁵²² կողմից ուղարկված լեգատը⁵²³ անհամար զորքերով և ծովափի ռազմական ուժերի ու Աքքայի թագավորի⁵²⁴ ուղեկցությամբ արշավանքի ելան: Նավեր ու մակույկներ նստելով՝ նրանք ուղղություն վերցրին դեպի Եգիպտոսի ծովափին գտնվող Դամիատ քաղաքը և հենց ծովում էլ նավերի վրայից սկսեցին

* Լուսանցագրութուն. «Այդ ժամանակ, 1530 (1219) թվականին, դուրս չորդաց հոների ժողովուրդը, որոնք այսօր թաթար են կոչվում: Նրանք սրի մատնեցին ողջ պարսից տերության սահմանները և քարուքանդ արին պարսիկների բարեշեն քաղաքներն ու գավառները: Պարսից Ջալալեղդին մեծ սուլթանը փախավ և ապաստան գտավ իբերների երկրի և Խլաթի մոտ գտնվող մի բերդում»:

մարտնչել նրա դեմ: Կատաղի հարձակումներ գործելով նրա վրա՝ ֆրանկները մի զարմանահրաշ բուրգ շինեցին, որտեղ տեղավորեցին քաջասիրտ մարտիկներ, մանգղիոններ և զանազան պատերազմական մեքենաներ: Քաղաքն առնելով օղակի մեջ և խափանելով նրա ելումուտը՝ շուրջ երկու տարի նրանք հարձակվում էին և՛ ծովից, և՛ ցամաքից՝ ճնշում գործադրելով դամիատցիների վրա: Դամիատում այնպիսի սաստիկ սով առաջացավ, որ կերան նույնիսկ սատկած կենդանիներին: Նրանք թուլացան կրովից ու սովից, իսկ ֆրանկները սրտապնդված՝ սրի ուժով գրավեցին Դամիատն ու կոտորեցին նրա անհամար բնակիչներին:

Գրավումից հետո գժտուիթյուն ծագեց հունգարական թագավորի⁵²⁰ և լեգատի, այսինքն՝ Հռոմի պապի փոխանորդի միջև Վերջինս ասաց թագավորին. «Դամիատ քաղաքը քեզ շենք տա, իսկ մահմեդականներից խլված երկրներից էլ քեզ կհատկացնենք միայն մի մասը»: Եվ ֆրանկների վատ սովորության համաձայն, հունգարական թագավորը խոովեց ու, վերցնելով իր զորքերը, մեկնեց // իր երկիրը: Ինչ վերաբերում է լեգատին, Աբբայի թագավորին, Ֆրեբ եղբայրներին, Հոսպիտալիներներին և ծովափի զինվորներին, ապա նրանք ցրվեցին մահմեդականների երկրներում և սկսեցին ավերածություններ գործել: Երբ Մելիք ալ-Ադիլի թագավոր որդիները՝ Եգիպտոսի մեծ սուլթան Մելիք ալ-Քամիլը և նրա եղբայր Մելիք ալ-Մուազզամը՝ Դամասկոսի տերը, տեսան, որ ֆրանկներն այդքան ուժեղացել են, մտահոգվեցին իրենց երկրների ճակատագրով:

518. Երուսաղեմի ավերումը

Հունաց 1536 (1225) թվականին Երուսաղեմի տեր Մելիք ալ-Մուազզամը հրամայեց քանդել Երուսաղեմի պարիսպն ու տները: Երբ հրամանն ստացվեց, մահմեդականները քարը քարի վրա շթողին, բացի Հարության մեծ եկեղեցուց և Սողոմոնի տաճառից, որը մահմեդական մզկիթ էին դարձրել: Քաղաքը վերածվեց ավերակակույտի, որպեսզի ֆրանկները չգան և չպաշարեն այն Մելիք ալ-Քամիլն իր եղբորը՝ Դամասկոսի և Երուսաղեմի տիրոջն ուղարկեց իրենց մյուս եղբոր՝ Միշագետքի տիրակալ Մելիք ալ-Աշրաֆի մոտ՝ զորահավաք կատարելու և օգնության հասնելու խնդրով: Մելիք ալ-Աշրաֆը պատրաստություն տեսավ և, հավաքելով արևելքի զորքերն ու մի մեծ բազմություն արաբներից, ուղղվեց դեպի Եգիպտոս: Եգիպտոսի և Մելիք ալ-Աշրաֆի զորքերը միացան իրար և ճակատամարտի պատրաստություն տեսան:

Երբ կողմերը դասավորվեցին դեմ-դիմաց, ֆրանկ գինվորներն իրենց վատ սովորության համաձայն, շտապեցին և նետվեցին մահմեդականների վրա: Մահմեդական զորքերը, նկատելով ֆրանկների անզգույշ վարմունքը, նրանց հնարավորութուն տվին, որպեսզի հեռանան Դամիատից. Երբ ֆրանկները հեռացան, մահմեդական զորքերը փութով գրավեցին նրանց ճամբարը և ճանապարհը, որպեսզի նրանք Դամիատ չմտնեն: Հետո մահմեդականներն սկսեցին կոտորել ֆրանկներին. սուրը գործեց մինչև ժամը ինը: Մահմեդականներն ու ֆրանկները հոգնեցին ամբողջ օրվա ճակատամարտից: Ֆրանկներն իրենց կյանքից ձեռք բաշեցին, որովհետև մահմեդականները գրավել էին Դամիատի ճանապարհն ու նրանց ճամբարը: || Նրանք չգիտեին, թե ինչ անեն: Հայացք գցելով՝ նրանք մի բարձրագիր վայր նկատեցին և, թիկունք դարձնելով, փախան դեպի այդ բարձունքը: Մահմեդականները մեծապես ուրախացան և, ողջ գիշեր աշխատելով, ահռելի նեղոս գետը շրջեցին դեպի այդ վայրն ու շրջապատեցին այնտեղ ապաստանած ֆրանկներին: Երեք օր նրանք այնտեղ տառապեցին քաղցից՝ իրենց ձիերի հետ միասին: Մահմեդականները մտադիր էին սրի անցկացնել դրսում գտնվող ֆրանկներին, բայց խորհրդակցելով իրար հետ, հասկացան, որ եթե կոտորեն դրսի ֆրանկներին, կգժվարանա քաղաքի գրավումը ներսում գտնվող ֆրանկների ձեռքից, որովհետև վերջիններս մեծ ուժեր, զինամթերք և պարեն ունեին, որ ստանում էին ծովով: Այդ պատճառով համաձայնության գալով և դեսպաններ ուղարկելով ֆրանկների մոտ, նրանց հաղորդեցին. «Մենք ձեզ պես շենք վարվի, հանձնեցե՛ք մեզ Դամիատը, և երզվում ենք, որ ձեզ վնաս չենք պատճառի»: Ֆրանկները գոհ էին դրանից, որովհետև քաղցից մեռնում էին: Ֆրանկներն իրենց որոշ մարդկանց ուղարկեցին ներսում գտնվողների մոտ, որից հետո և՛ ներսի, և՛ դրսի ֆրանկները երզում տվին մահմեդականներին, վերջիններս էլ իրենց հերթին երզվեցին նրանց, և ֆրանկները Դամիատը տվին նրա տերերին:

Սա երրորդ հաղթանակն էր Մելիք ալ-Աշրաֆի, որն արժանի է բարի հիշատակի՝ իր բարի կամեցողության և բոլորի նկատմամբ ցուցաբերած լավ վերաբերմունքի համար: Ֆրանկներից ամեն մեկը վերագարձավ իր երկիրը առանց որևէ արդյունքի, մինչ Մելիք ալ-Աշրաֆը, նստած Եզիպոսում, զվարճանում էր կերուխումով և որսախաղով: Մելիք ալ-Մուազզամը, որը վերագարձավ Դամասկոս, տեսնելով Մելիք ալ-Քամիլի և Մելիք ալ-

Աշրաֆի միաբանութիւնն ու փոխադարձ սերը, նախանձեց նրանց ու սկսեց վախենալ իր եղբայրներից.

519. Զալալեղդին²⁶ մեծ սուլթանի՝ Գարսից թագաւորի արշավանքը դեպի Խլաթ և Հայաստան. Մելիք ալ-Քամիլի և Մելիք ալ-Աշրաֆի եղբայր Մելիք ալ-Մուազզամի՝ Դամասկոսի տիրոջ մահը
1539 (1228) թվականին

230

|| Այս Զալալեղդինը մի արկածախնդիր և կործանարար միտք հղացավ Դամասկոսի տեր Մելիք ալ-Մուազզամի նենգ խորհրդով: Վերջինս իր եղբայրներից թաքուն դեսպաններ ուղարկեց պարսից թագաւորի մոտ՝ գրգելով նրան ասպատակելու Խլաթի երկիրը և առաջարկելով դաշինք կնքել իր հետ ու իրար միջև խնամհիմնական կապեր հաստատել: Պարսիկներին նա հոյակապ նվերներ ուղարկեց: Պարսից թագաւորն իր հերթին նվերներ ուղարկեց Մուազզամին: Պարսիկն իրականացրեց այդ շար ծրագիրը և, զորքեր ուղարկելով, ասպատակեց Խլաթի երկիրը: Այդ ժամանակ Խլաթի տերն էր Մելիք ալ-Աշրաֆի մեծամեծներից մեկը՝ Հաջիբ Ալի ա-նունով: Սա, որ կառավարում էր Խլաթը, երկու տարի կարողացավ դիմադրել պարսից զորքերին, և աստժու կողմից նրան հաղթանակ բաժին ընկավ: Նա գնաց գրավեց պարսիկներին պատկանող մի բերդ և նույնիսկ գերեց պարսից թագաւորի կնոջը. Ավարի մատնելով նաև նրա ունեցվածքը՝ նա մեծ ցնծութեամբ վերադարձավ Խլաթ. Մելիք ալ-Աշրաֆը Եգիպտոսում իմացավ Հաջիբ Ալիի սխրագործութիւնը պարսիկների հանդեպ: Իսկ Մելիք ալ-Քամիլը սկսեց տխրել Հաջիբ Ալիի հաղթանակի առթիւ, այսինքն՝ սկսեց նախանձել նրան:

Երբ պարսից թագաւորը լուր ստացավ, որ իր կինն ու օսնձերը ավարի են մատնվել, անհամար զորք հավաքեց՝ Հաջիբ Ալիից վրեժ լուծելու նպատակով: Նա եկավ պաշարեց Խլաթը և ամբողջ ամառ կատաղի հարձակումներ գործեց նրա վրա: Բայց նա չկարողացավ գրավել Խլաթը և ողջ շրջակայքն ավերելուց ու բնակիչներին կոտորելուց հետո թողեց գնաց իր երկիրը: Հաջորդ տարի նա նորից հավաքեց իր զորքերը և եկավ պաշարեց Խլաթը և իր զախարար մարտնչելով՝ պարսից զինվորները գրավեցին քաղաքը և թափանցեցին մինչև նրա կեսը: Պարսիկներն ու Խլաթեցիներն սկսեցին կոտորել իրար: Այդ տեսնելով՝ թագաւորի սիրելի զորավարներից մեկը խորհուրդ տվեց պարսից թագաւորին

և ասաց, // «Դեռ շհասած քաղաքի կենտրոնին մեր գինվորներն արդեն սկսել են կոտորվել խլաթեցիների սրից: Ավելի լավ է վերադառնանք մեր դրսի ճամբարը և, սովով նեղելով խլաթեցիներին, ընկճենք նրանց»: Նրանք շրջվեցին ու դուրս եկան և շարունակեցին կռիվը:

Երբ վրա հասավ խստաշունչ ձմեռը, կռիվը շղաղարեց: Հաջիբ Ալին հերոսաբար դիմադրում էր և խելացիորեն կազմակերպում ու ղեկավարում զորքերը: Ամեն օր նա սուրհանդակներ էր ուղարկում իր տիրոջ՝ Մելիք ալ-Աշրաֆի մոտ, խնդրելով, որ օգնության հասնի, քանի որ իր զորքերն ի վիճակի չէին վանելու պարսիկներին: Իսկ Մելիք ալ-Աշրաֆը ուժեր էր խնդրում իր եղբայր Մելիք ալ-Քամիլից: Սակայն Մելիք ալ-Քամիլը սուտ պատճառաբանություններ ներկայացրեց իր եղբայր Մելիք ալ-Աշրաֆին, թե իբր ձմեռ է, և եգիպտական զորքերը չեն կարող հաղթահարել խլաթի ձյունները:

Այսպես երկու տարի անցավ, բայց Մելիք ալ-Աշրաֆը խլաթ չգնաց: Խլաթեցիները երկու տարի տառապեցին քաղցից, մարտերից ու շրջափակումից: Նրանք այդ վիճակի մեջ էին, երբ մեռավ Դամասկոսի և Երուսաղեմի տեր Մելիք ալ-Մուազզամը՝ Մելիք ալ-Քամիլի և Մելիք ալ-Աշրաֆի եղբայրը: Երկու եղբայրները, պատրաստություն տեսնելով, եկան պաշարեցին Դամասկոսը՝ այն գրավելու նպատակով: Այնտեղից Մելիք ալ-Աշրաֆը պարսիկների դեմ ուղարկեց իր ծառաներից մեկին՝ փոքրաթիվ ուժերի հետ, միաժամանակ Հաջիբ Ալիին սպանելու կարգադրությամբ: Այդ բանին Մելիք ալ-Աշրաֆը հարկադրվել էր իր եղբայր Մելիք ալ-Քամիլի դրդմամբ, որն ասում էր. «Չեմ թողնի, որ զորքերը գնան խլաթ, մինչև քո ուղարկած մարդուն շհրամայես սպանել Հաջիբ Ալիին»: Մելիք ալ-Քամիլը ոխ ուներ Հաջիբ Ալիի նկատմամբ, որովհետև վերջինս իր տիրոջը գրել էր, որ հավատ չբնծայի իր եղբայր Մելիք ալ-Քամիլին, քանի որ նա նենգ և խորամանկ մարդ է: Սակայն աստծու կամքով այդ նամակն ընկել էր Մելիք ալ-Քամիլի

ձեռքը, // այդ պատճառով էլ նա ստիպեց իր եղբորը սպանել Հաջիբ Ալիին: Եվ երբ Մելիք ալ-Աշրաֆի ծառան իր զորքերով գնաց մտավ խլաթ, հնար գտնելով՝ սպանեց Հաջիբ Ալիին:

Պատմում են, թե խլաթում այնպիսի սով է եղել, որ Մելիք ալ-Աշրաֆի եղբայրակիցները կերել են նույնիսկ իրենց ոտանմանների կաշին: Լեզուն անզոր է վերարտադրել խլաթի բնակչության կրած դառն շարշարանքներն ու սարսափելի տառապանքները: Ո՛չ կաշի, ո՛չ էլ պիղծ կենդանիներ էին մնացել ուտելու

համար: Երբ ժողովրդի մեծ մասը մեռավ սովից, մյուսներն լստիպված էին հանձնվել և սրի մատնվել, քանի որ պարսից թագավորը երգմամբ վճռել էր՝ խլաթեցիներին շրջափակման մեջ պահելով սպառել սովից, մինչև Մելիք ալ-Աշրաֆը ելներ և դիմակայեր իրեն: Երբ խլաթեցիներն իմացան, որ Մելիք ալ-Աշրաֆը պաշարել է Դամասկոսը՝ այն նվաճելու մտադրությամբ, դադարեցին դիմադրել պարսիկներին: Վերջիններս, հարձակման անցնելով, մտան խլաթ և սրի անցկացրին այնտեղ մնացած բոլոր մարդկանց: Արյունն այնտեղ հոսում էր ջրի նման Մելիք ալ-Աշրաֆի եղբայրն ու կինը, որը վերոհիշյալ իբերացի Իվանևսի դուստրն էր, գերի ընկան: Այնպես կողոպտեցին ու ավարի մատնեցին խլաթը, որ մի շուն անգամ շթողին հաշելու համար

520. Դամասկոսի առումը Մելիք ալ-Քամիլի և Մելիք ալ-Աշրաֆի եղբորդու ձեռքից

Հունաց 1540 (1229) թվականին Մելիք ալ-Քամիլը և Մելիք ալ-Աշրաֆը Մուազզամի որդու ձեռքից խլեցին Դամասկոսը, և այն անցավ Մելիք ալ-Աշրաֆին. Իրենց պատանի եղբորորդուն նրանք արտորեցին Եգիպտոսի Ճանապարհին գտնվող Կրակ և Շուբաք բերդերը: Մելիք ալ-Աշրաֆը իր եղբայր Մելիք ալ-Քամիլին տվեց Ուոհան, Խառանը, Սրուճը, Ռեշայնան ու Ռակկան և դրանց փոխարեն ստացավ միայն Դամասկոսը:

233

Այդ տարին, երբ խլաթը գրավվեց // Մելիք ալ-Աշրաֆի ձեռքից, իսկ Դամասկոսը՝ Մուազզամի որդուց, և երբ Դամասկոսն անցավ Մելիք ալ-Աշրաֆին, իսկ Միջագետքը՝ Մելիք ալ-Քամիլին, հունաց 1540 (1229) թվականն էր:

521. Ամփարորի⁵²⁷, այսինքն՝ ֆրանկ թագավորների հոր արշավանքը և Երուսաղեմի առումը Մելիք ալ-Քամիլից այդ ամփարոր արքայի ձեռքով

Հունաց 1538 (1227) թվականին ֆրանկների մեծ արքան, որը գժտվել էր Հոռմի պապի հետ, ուժեղ զորաբանակով արշավեց դեպի Աքքա քաղաքը. նա գերի վերցրեց Աքքայի թագավորին⁵²⁸ և ուղարկեց [երկրի] խորքերը: Մովափի ֆրանկներն ահուդողի մեջ ընկան: Իսկ մահմեդականները ծովով լուր ուղարկեցին Եգիպտոսի թագավոր Մելիք ալ-Քամիլին՝ զգուշացնելով նրան մեծ ու հնարագետ ամփարոր արքայից: Մելիք ալ-Քամիլը, սակայն, սկսեց սիրալիրովյուն ցուցաբերել ամփարոր թագավորի

նկատմամբ և նրան թանկարժեք նվերներ ուղարկեց՝ նրանց միջև կայուն բարեկամութիւն հաստատվեց՝ Երուսաղեմը հանձնվեց ֆրանկների ամփարոր արքային, և նրանց միջև որոշ ժամանակ խաղաղութիւն տիրեց: Ֆրանկները տեր դարձան Երուսաղեմին, և թագավորը վերադարձավ իր երկիրը:

523. Հեթանոս թուրքերի արշավանքը հյուսիսից և պարսից⁵²⁹

մեծ թագավոր Ջալալեդդինի ջախջախումը թուրքերից,
որոնք թուրքերեն լեզվով կոչվում են քաթարներ,
իսկ սաուրերեն՝ հոներ⁵³⁰

Հունաց 1542 (1231) թվականին Ջալալեդդինը, նստած Խլաթում, նեղութիւն էր պատճառում նփրկերտի երկրին ու նրա տիրոջը, որը Մելիք ալ-Քամիլի և Մելիք ալ-Աշրաֆի եղբայրն էր: Այդ պատճառով նփրկերտի տերը, որի անունն էր Շիհաբեդդին Ղազի, փութով եկավ իր հիշյալ եղբայրների մոտ և, կշտամբելով նրանց, ասաց. «Ո՛վ պատվարժան եղբայրներ, մի՞թե մենք ունեցել ենք ավելի մեծ խայտառակութիւն, քան սա: Ահա մեր եղբայրը գերված է թագուհու՝ Մելիք ալ-Աշրաֆի կնոջ հետ միասին: Ավելին, մեզնից խլել են մեր նշանավոր և մեծ աթոռանիստը՝
234 // Խլաթը: Դուք արքայավայել ձևով շեք վարվում և շեք մտահոգվում մնացած երկրների ճակատագրով: Շուտով [Ջալալեդդինը] կտիրի իր ուզած վայրերին և կբռնի ձեր կոկորդից»:

Այնժամ նրանք խիստ զրգովեցին և հսկայական զորահավաք կատարեցին: Հետո համաձայնութեան եկան Իզզեդդին Քեյկոբադ⁵³¹ կապաղովկացու հետ, իսկ Մելիք ալ-Աշրաֆն իր զորքերով այցելելով Ռումի սուլթանին, պատրաստութեան մեջ դրեց նաև ուումաց բանակը Երզնկայի գավառում: Այնուհետև Մելիք ալ-Աշրաֆի զորքերը շարժվեցին Սեբաստիա քաղաքի կողմը, որտեղ բանակել էր պարսից զորքը: Մարտակարգերը հանդիպեցին իրար և դասավորվեցին դեմ-դիմաց: Կողմերը նախապատրաստվում էին թե՛ և վճռական ճակատամարտի: Ահռելի բազմութիւնները զինված կանգնել էին դեմ-դիմաց և ծարավի էին միմյանց արյան: Պարսիկներն սկսեցին գրոհել ուումաց զորքերի վրա Երզնկայի կողմերում, որտեղ բանակել էին վերջիններս: Մելիք ալ-Աշրաֆի զորքերը, տեսնելով, որ ուումաց [զորքերը] կոտորվում են, կատաղեցին, գրգովեցին ու բոցավառվեցին և, ձեռք քաշած իրենց ժամանակավոր կյանքից, հարձակվեցին պարսիկների վրա: Պարսիկները, նկատելով Մելիք ալ-Աշրաֆի զորաբանակները, ահուդողի մեջ ընկան: Մահմեդականներն իրենց հերթին սար-

սափեցին պարսիկներից: Բայց Տերը զայրացավ պարսիկների վրա և հաղթանակը պարգևեց մահմեդականներին: Նա մի սաստիկ և անտանելի մրրիկ ուղղեց պարսիկների դեմ, և մահմեդական զորքերի փոշուց լիակատար խավարում տեղի ունեցավ՝ մոլթ ամպի նման նստելով պարսիկների վրա: Վերջիններս, թիկունք դարձնելով, փախուստի դիմեցին Մելիք ալ-Աշրաֆի զորքերի առջևից, թեև մահմեդականների նիզակներն ու նետերը նրանց չէին հասել, բացի, թերևս, շեփորների ու թմբուկների ձայնից և ձիերի խրխնջյունից:

Պարսիկները խուճապի մատնվեցին և պարտություն կրեցին մահմեդականներից: Օ՛, ինչ սարսափելի տեսարան էր դա. պարսիկները ճզմում // և կոտորում էին իրար՝ մահմեդականների փոշու ամպից պատած խավարի պատճառով: Նրանց աչքերը լցվել էին փոշով, իսկ սրտերը՝ ահուդողով: Պարսիկները, հալածելով միմյանց, երկրի խորքում դեմ առան մի բարձր լեռան: Եվ քանի որ նրանք ոչինչ չէին տեսնում և վազում էին մեծ արագությամբ, լեռան ստորոտում բախվեցին իրար և սկսեցին ընկնել ինչպես պարսպից: Պարսիկներից մոտ երկու հազար հոգի, գուցե և ավելի, զոհվեց այնտեղ: Այդ եղերական օրվանից հետո Մելիք ալ-Աշրաֆի մահմեդական զորքերը եկան, հանեցին նրանց շորերը և խլեցին կենդանի մնացած պարսիկների ձիերը:

Ինչ վերաբերում է Ջալալեդդին թագավորին, ապա նա քչերի հետ ճողոպրեց իր երկրի կողմերը: Այդ բանն իմացան թաթար կոչվող թուրքերը, որոնք՝ հակառակության մեջ էին Ջալալեդդինի հետ, քանի որ նրանց միջև արյան խնդիր գոյություն ունեւր Պարսից թագավորն սպանել էր թուրքերի թագավորի հորը, իսկ թուրքերի թագավորը՝ պարսից թագավորի եղբորը, ինչպես հայտնեցինք վերևում: Եվ թաթարները, որոնք գտնվում էին պարսկական սահմանների մոտ, փութով առաջ շարժվեցին՝ պարսիկներից արյան հատուցում պահանջելու նպատակով. Վերջիններիս նրանք քշեցին ներքին սահմաններից մինչև Խլաթ քաղաքը, իսկ Խլաթից՝ մինչև Ամիդ: Ջալալեդդինը դադար առավ Ամիդ քաղաքում՝ մտածելով, որ թաթարները կվախենան և չեն համարձակվի մտնել հեռավոր երկրները, որոնք իրենց չեն պատկանում: Սակայն թաթարները համարձակորեն թափանցեցին պարսիկների ետևից և անխնա կերպով կոտորեցին նրանց: Երբ պարսից թագավորը տեսավ, որ թուրքերը հասան իրեն ու ետ չեն դառնում, փախավ Ամիդ քաղաքից, և այլևս նրա մասին որևէ լուր չլսվեց: Ոչ ոք

չգիտե, թե ինչ պատահեց նրան: Պատմում են, սակայն, որ նա սպանվել է Նփրկերտի մոտ: Ոմանք էլ ասում են, որ հասել է Բաբելոն: || Միայն Տերը գիտե, թե ինչ է պատահել:

Հեթանոս և արյունարբու թաթարները, որոնք կործանեցին պարսից տերությունը, տեսան, որ Խառանի, Սրուճի, Ամիդի, Մարդինի, Մծբինի, Նփրկերտի և Մոսուլի տերերը ի վիճակի չեն դիմադրելու իրենց: Այդ պատճառով նույն տարին, երբ այդ թուրքերը հալածեցին պարսիկներին, նրանք ճամբար խփեցին Նփրկերտի շուրջը՝ Ամիդի կողմերից եկող ու Տիգրիսին խառնվող մի մեծ գետի վրա, և սկսեցին թափանցել վերոհիշյալ քաղաքների գավառները: Ինչպիսի՜ ոճիրներ գործեցին այդ շարագործ թուրքերը: Ողջ աշխարհը անխնա կերպով սրի անցկացնելով և ահռելի ավար ձեռք բերելով՝ նրանք վերադարձան ներքին սահմանները:

524. Թաթարների վերադարձն այդ երկրները հունաց 1543 (1232) թվականին

Պարսիկներին հալածելուց մեկ տարի հետո թուրքերը նորից արշավանքի ելան: Նրանք նույնիսկ աստծու գոյությունը չգիտեին և ո՛չ ծոմ էին պահում, ո՛չ էլ աղոթում: Նրանք եկան առանց առաջնորդի, թագավորի կամ հրամանատարի: Դա դառնագույն կատաղությամբ լցված մի բազմություն էր: Սակայն այդ փորձանքը աստծուց եկավ այդ երկրների վրա, որոնց բնակիչները արժանի էին դրան: Նրանք ձեռնամուխ եղան կոտորածի և այդ երկրներում քրիստոնյաներից ավելի թուրքեր և հրեաներից ավելի արաբներ ոչնչացրին: Նրանք ամենևին չէին խնայում որևէ մեկին՝ ո՛չ տղամարդկանց, ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին, ո՛չ էլ ծծկերներին: Բոլոր պատահողներին նրանք ոչնչացնում էին իրենց ձեռքում բռնած բարկության սրով:

Ո՛հ, ինչպիսի կարծր սիրտ ունեին այդ անիծյալները, որոնք մարդկանց թրատում էին հարդի պարկերի նման: Մտնելով Մարդինից ներքև գտնվող Դունայսիր ամրոցը՝ նրանք կողոպտեցին նրա շուկան և խորտակեցին մահամեղականների մեծ մզկիթի դռները: Հետո մահամեղականների մեծ կոտորած սարքեցին Մծբինի երկրում: Գրավելով || Սղերդ³² քաղաքը՝ նրանք ավերեցին այն և կոտորեցին ողջ բնակչությանը, որից միայն հատուկենտ մարդիկ փրկվեցին: Այնտեղից նրանք անասելի քանակությամբ ավար տարան: Հետո սրի մատնեցին նաև հայոց Մծբինը և կողոպտեցին նրա ողջ հարստությունը Այսպես նրանք կողոպուտի մատնեցին բոլոր երկրները և անհամար մարդկանց կոտորեցին,

որոնց թվում նաև Տուր-Աբդինի⁵³³ երկրի վանականներին: Այսպիսով նրանք ասպատակեցին բոլոր երկրները: Զարմանալի բան էր, թե ինչպես էին խուճապի մատնվել ծովից ծով բնակվող բոլոր ժողովուրդները: Թագավորներն ընկել էին ահուդողի մեջ, և չկար մեկը, որ դիմադրեր նրանց: Նրանք այնպիսի ուժ չունեին, որ գերազանցեր իրենց գրաված երկրների տերերին: Աստված էր, որ նրանց սարսափը տարածեց ողջ աշխարհում: Այսպես նրանք գերեցին, կողոպտեցին ու ավար ձեռք բերին, որի նմանը վաղընչական դարերից չէր եղել:

525. Մելիք ալ-Քամիլի արշավանքը և Ամիդի պաշարումն
ու ապշեցուցիչ նվաճումը այդ հնարագետ
[թագավորի] կողմից

238 Զունաց 1543 (1232) թվականին, երբ Եգիպտոսի թագավոր Մելիք ալ-Քամիլը լսեց արևելքի երկրներում թուրքերի, այսինքն՝ թաթարների գործած ոճիրները, պատրաստութուն տեսավ և Եգիպտոսից մինչև Նփրկերտի, Սինջարի և տաճկաց Մծբինի բոլոր մահմեդականներից զորք հավաքեց: Անհամար զորքերն ըսկըսեցին նախապատրաստվել: Այնուհետև նա շարժվեց դեպի Խառան քաղաքը և մեկ ամիս մնաց այնտեղ՝ սպասելով անիծյալ և բարբարոս թաթար ժողովրդին: Երբ թաթարներն իմացան, որ Մելիք ալ-Քամիլը անցել է Եփրատից արևելք և հասել Խառան, թողին փախան: Նրանք ո՛չ բանակատեղ ունեին, || ո՛չ էլ մի որոշակի բնակավայր, այլ գիշերային գայլերի նման հողատում, պատառոտում ու ոչնչացնում էին բոլոր պատահած մարդկանց: Եվ այսպես, ահռելի ավարով նրանք վերադարձան արևելքի ներքին սահմանները:

Երբ թուրքերը թողին հեռացան, Մելիք ալ-Քամիլն ու Մելիք ալ-Աշրաֆը տեսան, որ իրենք այլևս հակառակորդ չունեն, բացի Ամիդի տիրոջից⁵³⁴, որը մի թուլամորթ, անառակ և անբարոյական մարդ էր: Երբ նա լսում էր իր երկրում ապրող որևէ մահմեդականի կամ քրիստոնյայի կնոջ համբավը, ձեռք էր գցում նրան: Նա պահում էր մի գարշելի պառավի, որը շրջում էր քաղաքների ու գյուղերի բաղնիքներում և, որտեղ մի գեղեցիկ կին էր տեսնում, հայտնում էր այդ թշվառականին: Այսպես նա տիրում էր երևելի մարդկանց դուստրերին և անառակաբար շնանում նրանց հետ՝ առանց վախենալու աստծուց և առանց ամաչելու իր եղբայրակից թագավորներից: Երբ հատուցող աստված տեսավ, որ հույս

չկա, թե նա դարձի կգա, դրդեց Մելիք ալ-Քամիլին վրեժ լուծել Ամիդի տիրոջից:

239 Եվ Մելիք ալ-Քամիլը⁵³⁵ Մելիք ալ-Աշրաֆի ու բոլոր ամիրաների ուղեկցությամբ հսկայական զորքով եկավ պաշարեց Ամիդ քաղաքը: Տասնհինգ օր նա մնաց այնտեղ, բայց գրոհ չձեռնարկեց, հուսալով, որ կարող է այն գրավել համոզելով: Երբ նրա տերը շհամոզվեց, Մելիք ալ-Քամիլն ու նրա հետ եղած ամիրաները գոտեպնդվեցին, բոլոր զինվորները ղեկք առան, և նա հարձակում գործեց քաղաքի վրա: Նրանք միանգամից գրավեցին նրշանավոր և անառիկ Ամիդ քաղաքը, որը շատ թագավորներ էին պաշարել, բայց կարողացել էին գրավել մեծ ջանքերի զնով⁵³⁶ Իսկ Մելիք ալ-Քամիլը Ամիդին տիրեց մեկ ժամ տևած գրոհով, շտալով ոչ մի սպանված: // Հետո Մելիք ալ-Քամիլը իր ծառաներից մեկին՝ մի ներքինու փոքրաթիվ զորքով ուղարկեց քաղաք: Սա մի չվան նետեց Ամիդի տիրոջ վիղը և, շան նման քարշ տալով արքունի պալատից, բերեց մինչև Մելիք ալ-Քամիլի վրանը, որը գտնվում էր քաղաքից դուրս, ճամբարի կենտրոնում: Վերջինս մեծ նեղություններ պատճառեց նրան, մինչև որ ստացավ Ամիդի երկրի անառիկ բերդերն ու մնացած շրջանները: Ամիդի տիրոջը՝ նրա ընտանեկիցների հետ, Մելիք ալ-Քամիլը աքսորեց Եգիպտոսի հեռավոր գավառները: Այսպես իսպառ վերացավ Ամիդի տիրոջ թագավորությունը, որն արժանի հատուցում ստացավ աստծուց:

[526]. Արբելա ֆաղաֆի տիրոջ՝ Մուզաֆֆարեդդինի մահը և արբելացիներին բաժին ընկած դառն շարշարանները³⁷

Հունաց 1545 (1234) թվականին մեռավ Արբելայի և Շահըր-զորի տիրակալ Մուզաֆֆարեդդինը, որը մոտավորապես հարյուր տարեկան ծերունի էր: Քանի որ նա ժառանգներ չունեց, կենդանության օրոք իր երկրները խոստացել էր Մելիք ալ-Ադիլի որդիներին: Սակայն երբեմն էլ խոսք էր տվել Բաղդադի խալիֆին³⁸, որովհետև նրանց երկրները մոտ էին իրար, և խալիֆի գահը մեծ համարում ունեցր: Մուզաֆֆարեդդինին այդ պատճառով ծաղրում էին իր կենդանության օրոք:

Երբ Մուզաֆֆարեդդինի վախճանը հասավ, և նա հրաժեշտ տվեց կյանքին, նրա զորահրամանատարների մեջ երկպառակություն ծագեց: Ոմանք ցանկանում էին Մելիք ալ-Ադիլի որդիներ-

րին, ոմանք էլ խալիֆին: Խալիֆը շտապ ահազին զորքեր ուղարկեց՝ Արբելա քաղաքը գրավելու նպատակով: Քաղաքի բնակչությունը թշնամական դիրք բռնեց. ոմանք միաբանեցին այս զորագլուխների
240 հետ, // որոնք ցանկանում էին Մելիք ալ-Աշրաֆին ու Մելիք ալ-Ադիլի որդիներին: Նրանք փակեցին քաղաքի դարպասները և, բարձրանալով պարսպի վրա, սկսեցին կռիվ մղել խալիֆի զորքերի դեմ: Նրանք գոռում էին. «Մենք ուրիշ թագավոր չունենք Մելիք ալ-Աշրաֆից բացի»:

Խալիֆի զորքերը, տեսնելով արբելացիների թշնամական վերաբերմունքը, ուժեղացրին հարձակումը քաղաքի վրա և գրավեցին այն: Մտնելով քաղաք՝ նրանք սկսեցին սրի անցկացնել քաղաքացիներին և դառն մահով ոչնչացրին բնակչության մեծ մասը: Հետո նրանք քաղաքը կրակի մատնեցին և արեցին իրենց ուղածը: Եվ քանի որ Ադիլի որդիները հեռու էին, արբելացիներն օգնություն չստացան, նրանց տները քարուքանդ եղան, իսկ իրենք էլ մեծ մասամբ կոտորվեցին:

[527]. Մելիք ալ-Քամիլի արշավանքը դեպի Ասորիք՝ Կապադովկիայի դեմ պատերազմելու նպատակով. գինու նվազումը այդ տարում⁵³⁹

1545 (1234) թվականին Մելիք ալ-Քամիլը մտավ Ասորիք: Նրա հետ էին Եգիպտոսի, Պաղեստինի ու Դամասկոսի զորքերը, նրա եղբայր Մելիք ալ-Աշրաֆը և Համայի ու Հոմսի թագավորը՝ իրենց զորքերով: Ողջ արևելքը՝ Մոսուլը, Սինջարը, Մծբինը, Մարդինը, Ամիդը և նրա եղբայր Մելիք ալ-Ղազին՝ նփրկերտի տերը, հավաքվեցին նրա զենքի տակ, բացի խալիֆից, որը զորք չուղարկեց: Նրանք կազմեցին մի հսկայական բազմություն, բաղկացած մոտ հիսուն հազար հոգուց: [Մելիք ալ-Քամիլը] շատ հպարտ էր, և նրա հոգին հրճվանքի ու ցնծության մեջ էր: Նրանք գնացին և բանակ դրին Հիդտ⁴⁰ գետի ափին՝ պատրաստվելով մտնել Խոսրովշահի որդի [Քեյկոբադի] երկրները, այսինքն՝ Կապադովկիա, որն այժմ // կոչվում է Ռումի երկիր: Երբ ուռմաց զորքերն ու թագավորը լսեցին այդ, վրա հասան և զբաղեցրին ելումուտի ճանապարհները, որպեսզի Մելիք ալ-Քամիլի բանակները չկարողանան ներխուժել: Եվ քանի որ լեռները դժվարանցանելի էին, Մելիք ալ-Քամիլը և նրա հետ եղող ամիրաները չկարողացան ներս թափանցել, բայց և չուղեցին անմիջապես ետ դառնալ:

241

Մոտ մեկ ամիս նրանք մնացին այնտեղ, սակայն չկարողացան ոչինչ անել: Ավելին, Մելիք ալ-Քամիլի զորքերը խիստ նեղության մեջ ընկան: Ասում են, որ հալեպյան մեկ քաղ⁵⁴¹ գարին վաճառվել է իննսուն նասիրի⁵⁴² արծաթով⁵⁴³: Նրանց ձիերը, ուղտերն ու ջորիները հարդի փոխարեն ծառի տերևներ էին ուտում: Ասում են նաև, որ երբեմն դամասկյան մեկ լիտր հացը վաճառվել է երեք արծաթով⁵⁴⁴:

Այնուհետև թագավորը փոքրոգություն ցուցաբերեց և ուղարկեց ութ հազար հոգուց բաղկացած մի զորագունդ, որը սոսկալի գերեվարության մատնեց Հիսն-Մանսուրի և նրա գավառի բնակիչներին՝ երեխաներին, կանանց ու տղամարդկանց: Տները կրակի մատնվեցին և երկու [.....] հինգ՝ ոչ ևս, սպանվեց⁵⁴⁵: Հետո նա հրաման արձակեց գերի չվերցնել [.....]⁵⁴⁶ բոլորին: Որոշ ժամանակ անց թագավորը մեկնեց այնտեղից և եկավ Սևերակ ամրոցը, որը գտնվում է [.....]⁵⁴⁷ կոչվող գետի վրա:

Այդ տարի գինու նվազություն եղավ, և այն վաճառվեց [.....]⁵⁴⁸:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ա

[ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ. Chabot-II,
էջ 242—350]

- 258 Այդ ժամանակ Սարգիս հայր և նրա ևղբայր Հովհաննեսը ըսկըսեցին պառակտում սերմանել⁵⁴⁹. Իբրև թե Պետրոսի⁵⁵⁰ գրության մեջ պարսավելի խոսքեր կային, որոնք չէին կարող ընդունվել ուղղափառների⁵⁵¹ կողմից: Սակայն նրանք չէին հասկանում բառերի իմաստը, ոչ էլ նպատակը, որի համար նրանք ասված էին: Շատերը հետևեցին նրանց, և հայերի մեջ հերձված առաջացավ: Պետրոսի աշակերտ Հուլիանոսը⁵⁵², որը և հաջորդեց նրան գահի վրա, || նրանց պատասխանեց իր ուսուցչի՝ Պետրոսի փոխարեն, բացատրելով նրանց հուզող խոսքերի իմաստը: Նրանք դժվարությամբ հրաժարվեցին իրենց գործունեությունից, բայց մնացին որպես հերձված:

* * *

- 261 Սկզբնական դարերից մի կարգ էր հաստատվել, որ փոխանցվում էր եկեղեցում. ստեղծվել էր չորս աթոռ՝ Հոռմինը, Աղեքսանդրիայինը, Եփեսոսինը (որը Եփեսոսի ավերումից հետո կոչվեց Կոստանդնուպոլսի) և Անտիոքինը: Վերջինիս տարածությունը նույնքան մեծ էր, որքան մյուս երեք աթոռների տարածությունը, քանի որ այն ձգվում էր Ասիայի ծովից ու Հոռոսից մինչև արևելքի սահմանը, որ աշխարհի ծայրն է: Ուստի ոչ միայն Անտիոքը, այլ նաև ողջ Պարսկաստանն ու Հայաստանը տնօրինվում էին Անտիոքի պատրիարքի կողմից:

* * *

- 291 Կոստանդիանոս⁵⁵³ կայսրը, որը կոչվեց Դուկաս, կարգադրեց վերսկսել հալածանքները ուղղափառների⁵⁵⁴ նկատմամբ, ընդ ո-

րում ոչ միայն հակօրինակներ, այլ նաև հայերի: Բռնվեցին բազմաթիվ եպիսկոպոսներ, այդ թվում նաև Աթանասիոս⁵⁵⁰ պատրիարքը, որը բանտարկվեց Մելիտանեի քաղկեդոնական մետրապոլիտի վանքում:

* * *

- 306 ... նրա վրա ոսկի ծախսեց⁵⁵⁶: Նա փախավ եկավ Հռոմկլա: Իսկ երկրի տիրակալը, որ կոչվում էր Շահարմեն⁵⁵⁷, դեսպաններ ուղարկեց կաթողիկոսի մոտ՝ պահանջելով այդ վանականին. Սակայն կաթողիկոսը շահանձնեց նրան: Տիրակալը զայրացավ և հրամայեց իր տերության մեջ շահանաչել ու շքնդունել կաթողիկոսին: Սասունի բերդի տերը, որը մի հայ էր՝ կաթողիկոսի ցեղից⁵⁵⁸, կաշառեց Շահարմենին և հայտնեց նրան, թե ինքն ունի մի որդի, որին և օրենքով պատկանում է կաթողիկոսությունը: Օգնության դիմաց նա շատ ոսկի խոստացավ: Տիրակալը հավանություն տվեց և, հավաքելով մոտ քառասուն եպիսկոպոսի, ներանցից մի ծերունու⁵⁵⁹ կաթողիկոս ընտրեց: Հետո այդ ծերր
- 307 օծեց // բերդապետի պատանի որդուն: Պատանին տիրեց Հայոց երկրներին, եպիսկոպոսներ ձևոնադրեց և մյուսոն օրհնեց. Երբ Գրիգորիոսը⁵⁶⁰, որն այնժամ կաթողիկոս էր Հռոմկլայում, իմացավ այդ բանը, մի դեսպան ուղարկեց Բաղդադ և օգնություն խնդրեց մահմեդականների խալիֆից⁵⁶¹: Մեծ ծախսերի գնով նա մի նամակ ստացավ՝ ուղղված Բեգթեմուրին, որն այդ ժամանակ տիրում էր Հայաստանին ու Խլաթին: Երբ խալիֆի գրությունը հասավ Բեգթեմուրին, նա ընդունեց այն և հրամայեց պաշտոնազրկել այդ պատանուն ու նրա ձեռնադրած եպիսկոպոսներին: Եվ այսպես Գրիգորիոսը նորից ստացավ Հայոց երկիրը:

* * *

- 310 Պատրիարքի⁵⁶² ժամանումը Մար-Բարսումա՝ վանքը և հունաց կայսեր կողմից ուղարկված նամակներն ու դեսպանը

- 311 Որոշ ժամանակ Մարդինում մնալուց հետո // պատրիարքը նորից վերադարձավ Մար-Բարսումա վանքը: Այդ ժամանակ՝ հունաց 1484 (1173) թվականին, պատրիարքի և հայոց կաթողիկոսի⁵⁶³ մոտ մի դեսպան եկավ հունաց կայսր Մանուելի կողմից, որի մականունն էր Ծիրանածին⁵⁶⁴: Դեսպանը, որ կոչվում էր Բրիտափոր⁵⁶⁵, բերել էր նամակներ իաղաղության կոչով: Նա

պահանջեց պատրիարքից միութիւն հաստատել իրենց հետ: Քաղկեդոնականների թշնամանքը չափից անցավ: Սակայն ուղղափառութեան ճշմարտութիւնը ցույց տալու համար [պատրիարքը] մի ընդարձակ նամակով շարադրեց մեր՝ ուղղափառներիս դավանանքի ճշմարիտ բովանդակութիւնը, միաժամանակ գրելով նաև կայսեր նամակների պատասխանը: Նա ուզեց նաև մեզանից մեկին՝ Թեոդորոս⁶⁶ վանականին, որ իր աշակերտն էր, դեսպան ուղարկել մայրաքաղաք, բայց Թեոդորոսի ճամփորդութիւնն ընդհատվեց Մելիտենէ հասնելուց հետո: Նամակները Քրիստափորի միջոցով տեղ հասան, սակայն որևէ արդյունք չտվին, քանի որ ինչպե՞ս կարող էին քաղկեդոնականներն ընդունել ուղղափառների հավատո հանգանակը:

* * *

326

Հայոց կաթողիկոսի և նրա հաջորդի, ինչպես նաև
Եկեղեցու խոովարար Բար-Վահրունի մանր

1504 (1193) թվականի հունիս ամսին, Պենտեկոստեի երկուշաբթի օրը, մեռավ Հայոց Գրիգորիոս⁵⁶⁷ կաթողիկոսը: Ենթարկվելով հրեշտակի հարվածին՝ նա հանկարծակի վախճանվեց Կիլիկիո երկրում: Գահը ժառանգեց նրա պատանի եղբորորդին⁵⁶⁸: Գահակալումից մեկ տարի անց որոշ քինախնդիր մարդկանց դրդամամբ Կիլիկիայի իշխան Լևոնը ձերբակալել տվեց նրան և բանտարկեց մի անմատչելի բերդում: Հետո նա զավթեց Հոռմկլան և հափշտակեց նրա բոլոր սպասքներն ու տարիների ընթացքում այնտեղ կուտակված հարստութիւնը: Այդ նախանձ մարդիկ, որոնք հեռու էին աստուծուց, հնար գտան վերացնելու վերոհիշյալ պատանի⁵⁶⁹ կաթողիկոսին: Համոզելով նրան, թե իբրև ուզում են փախցնել բերդից, գիշերով նրան իջեցրին բերդապարսպից: Բայց քանի որ նա հաղթանդամ ու մեծամարմին մի երիտասարդ էր, պարանը, որով նրան իջեցնում էին, կտրվեց, գուցե և, ինչպես ասում են, կտրեցին. Տերը գիտե: Դժբախտն ընկավ այդ հսկայական բարձրութիւնից, // և նրա անդամները ջախջախվեցին: Այդ փառահեղ պատանին ողբալի վախճան ունեցավ, փշրվեց բազմաթիվ մասերի: Գահն անցավ նրա ազգականներից մեկին՝ Ապիրատ⁵⁷⁰ եպիսկոպոսին: Նա կաթողիկոս հռչակվեց և նստեց Հոռմկլայում. Որոշ ժամանակ անց նա նույնպես դուրս եկավ բերդից և կորըստյան մատնվեց, ինչպես ցույց կտանք ստորև.

327

327

Մար-Բարսումա վանքում գումարված ժողովի և Բար-
Վահրունի մանվան մասին

Այդ տարի, Սուրբ [Բարսումայի] տոնի հինգշաբթի օրը, վանքում ժողով գումարվեց, որտեղ երկրորդ անգամ նշովվեց Բար-Վահրունը և դատապարտվեց խիստ ու ծանր բանադրանքի, որովհետև նա գնացել ապաստան էր գտել հայերի վերոհիշյալ կաթողիկոսի⁵¹ մոտ և ստացել նրա օժանդակությունը իր անհնազանդության խնդրում: Նա խռովել էր Կիլիկիո երկիրը, բռնությունք իրեն ենթարկել հավատացյալներին, վռնդել այդ թեմի եպիսկոպոսին⁵² և ինքն իրեն պատրիարք հայտարարել: Ինչպես ասացինք, նրա և իրեն օժանդակողների դեմ ուղղված բանադրանքն ընդունվեց սրբի տոնի օրը: Պենտեկոստեի երկուշաբթի օրը Տիրոջ հարվածից մեռավ կաթողիկոսը, իսկ քառասուն օր անց այդ թըշվառականը նույնպես հրաժեշտ տվեց կյանքին՝ ի զարմանս ողջ աշխարհի:

* * *

330

Հայերի պառակտումը մի այլ կաթողիկոսի խնդրով⁵³

1511 (1200) թվականին Պոնտոսի կողմերում հայտնվեց մի մարդ կաթողիկոսի սզգականներից, ինչպես ասում են, իրենց Գրիգորիոսի⁵⁴ ցեղից: Դա մի եպիսկոպոս էր, որի անունն էր Անանա, այսինքն՝ Անանիա⁵⁵: Շատ եպիսկոպոսներ անցան նրա կողմը և նրան կաթողիկոս հռչակեցին: Այդ հյուսիսային երկրները նա անջատեց Հռոմկլայում նստող Ապիշատից: Ասում են, որ նա արժանի էր գահին և հարուստ գիտելիքներ ու լեզու ուներ:

* * *

341

Հայոց կաթողիկոսի մասին

Այդ տարի՝ 1514 (1203) թվականին Կիլիկիո երկրում մեռավ Հայոց կաթողիկոսը, որի անունն էր Ապիրատ և որին հիշատակեցինք վերևում: Նրանից հետո գահին տիրեց Հովհաննես⁵⁶ անունով մեկը, որը ոչ թե նրանց, այլ Կիլիկիայի իշխանների ցեղից էր, որոնք այժմ էլ կանգնած են իշխանության գլուխ: Նա ստացավ Հռոմկլան և ամրապնդեց իր աթոռը: Որոշ ժամանակ

անց Հովհաննես կաթողիկոսի խնդրանքով Ռումի երկրի սուլթանը պաշտոնազրկեց Անանիային: Եվ այդ երկրները կցվեցին նրան:

* * *

345

Հայոց կաթողիկոսի մասին

1516 (1205) թվականին Կիլիկիայի իշխան Հևոն հայը դիմեց Խոսրովշահին, որը տիրում էր Կապադովկիայի երկրում, և պահանջեց Անանիային⁵⁷⁷: Սա, ինչպես վերը նշեցինք, կաթողիկոս էր դարձել այն կողմերում և անջատվել այս կողմերի կաթողիկոսից՝ նշովելով վերջինիս և շեղյալ հայտարարելով նրա կաթողիկոսությունը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ց Բ

[ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲԻ ՄԱՍԵՐԻՑ]*

I.44 Աշխարհում գիր ու գրականություն ունեցող տասնհինգ լեզու կա. Սեմից [ծագում են] հինգը՝ եբրայեցիները, ասորիները, բաբելացիները, պարսիկները, էլամացիները⁵⁷⁸, Հաբեթից վեցը՝ հույները, իբերները, ֆրանկները, հայերը, մարերը, ալանները, իսկ Քամից չորսը՝ եգիպտացիները, քուշերը, փյունիկեցիները և հնդիկները⁵⁷⁹:

* * *

I.109 [Ռոմուլոսի]⁸⁰ ժամանակ Հռոմն ընդգրկում էր⁵⁸¹ արևելքում՝ ողջ Թրակիան, Ասիան, Ասորիքը, Լիբիան, ամբողջ Եգիպտոսը, Փյունիկիան, Պաղեստինը, Միջագետքը՝ մինչև Ասորեստանի կենտրոն Նինվեն, հյուսիսում՝ ողջ Հայաստանը, Ալանքը, Ռուսաստանը, Խաղարաստանը, Գաղատիան, ամբողջ Հունաստանն ու կղզիները, արևմուտքում՝ մի շարք այլալեզու երկրներ՝

I.110 // այս ծովից մինչև մեծ օվկիանոս⁵⁸²:

* * *

I.119 Ուոհայի թագավոր Արգարի մասին⁵⁸³

Այդ ժամանակ ընդհատվեց Ուոհայի թագավորների սերունդը: Նրանք ծագում էին Սելևկիոսից, որը, ինչպես վերը նշեցինք,
I.120 Նեմրովթից⁵⁸⁴ հետո վերակառուցել էր Ուոհան: // Չգտնվեց որևէ հույն, որ անցներ իշխանության գլուխ: Եվ քանի որ Ուոհայում

* Լուսանցքում հռոմեական I նշանով սկսվող թվերը ցույց են տալիս «ժամանակագրության» առաջին հատորի էջերը (Chabot—I), իսկ II նշանով սկսվողները՝ երկրորդ հատորի (Chabot—II):

բնակութիւնն հաստատած և հզորացած հայերը հաժատարիմ էին մնացել հունաց թագավորութեանը, նրանց ազգից մեկին, որի անունն էր Աբգար, թագավոր հռչակեցին: Սա և իր սերունդները երեք հարյուր ութսուն տարի տիրեցին Ուռհային ու Միջագետքին: Նրանցից շատերը կոչվեցին Աբգար⁵⁸⁵, առաջին թագավորի անունով: Մեր Տիրոջ տնօրինութեան այդ ժամանակներում եկավ և աշխարհում հայտնվեց Քրիստոսը, երբ Հռոմում տիրում էր Օգոստոս⁵⁸⁶ կայսրը: Իսկ Ուռհայում թագավորում էր այս Աբգարը՝ Մանուի⁵⁸⁷ որդին, որն իր գույնի թխութեան պատճառով կոչվում էր Ուքամա⁵⁸⁸:

* * *

I.187 Կավատ արքան⁵⁸⁹, բազմաքանակ զորք հավաքած, շարժվեց դեպի Հայոց երկիրը և, Թշրին⁵⁹⁰ ամսին հասնելով Ամիդ քաղաք, պաշարեց այն:

[Լուսանցքում ավելացված է. «Հայաստանն այժմ կոչվում է Խլաթ»]:

* * *

I.190 Նրա (Անաստաս⁵⁹¹ կայսեր— Է. Տ.-Պ.) թագավորութեան քսաներեքերորդ տարում ապստամբեց հայ ժողովուրդը: Զորք ուղարկելով՝ նա ընկճեց նրանց, և վերջիններս հնազանդվեցին հռոմեացիներին:

* * *

I.199 861 (550) թվականին խցանվեց Եփրատ գետը Կղոզիայից վեր, Կապադովկիայի դիմաց, Պրոսիդին⁵⁹² կոչվող գյուղի մոտ... Եվ գետը ետ շրջվեց դեպի Հայաստան:

* * *

I.201 Հուստինիանոսի⁵⁹³ թագավորութեան շորրորդ տարում հայերն ապստամբեցին Խոսրովի⁵⁹⁴ դեմ և օգնութիւն խնդրեցին հռոմեաներից: Վերջիններս օգնեցին նրանց, և պարսիկները պարտութիւն կրեցին: Հայերին իր կողմը դարձնելու և գրավված երկրները ետ ստանալու նպատակով Խոսրովը Հուստինիանոսին գրեց հետևյալը. «Քեզ վայել չէ օգնութեան ձեռք մեկնել մի ժողովրդի, որն ապստամբել է իր թագավորի դեմ»: Խոսրովը ևս մի անգամ դիմեց Հուստինիանոսին, բայց վերջինս տեղի չտվեց: Սակայն

I.202 երբ երրորդ անգամ մի դեսպան ուղարկվեց, // Հուստինիանոսը

զայրացած պատասխանեց. «Ոչ միայն քեզ չեմ տա քո պահանջած ժողովուրդն ու երկրները, այլ կվերցնեմ նաև Մծբինը, որը պատկանում է հոռոմներին...»:

* * *

I.216 [Մավրիկիոսը⁵⁹ Խոսրովին⁵⁹⁶ օգնության] ուղարկեց Թրակիայի զորահրամանատար Հովհաննեսին⁵⁹⁷ քսանհազարանոց բանակով, և Անաստասիոս զորավարին, որին ուղեկցում էին քսան հազար հոգի՝ արմենիականներից և բուկելլարներից⁵⁹⁸:

* * *

I.233 Թուզբեհանը դիմեց դեպի Ասորեստան՝ Հերակլիոսին⁵⁹⁹ ճակատամարտ տալու նպատակով: Հերակլիոսին Հայաստանից ուղեկցում էին բազմաթիվ հայ զինվորներ, ինչպես նաև պարսիկներ ու խաքանի կողմից ուղարկված խազարներ⁶⁰⁰:

* * *

I.234 Խոսրովին պարտության մատնելուց և նրա թագավորությունը կողոպտելուց հետո Հերակլիոս կայսրը եկավ ձմեռելու Ասորեստանի և Հայաստանի սահմանում:

* * *

I.249 Արարների դեմ Անտիոքից Հերակլիոսի ուղարկած զորքերի մասին, որոնք ջախջախվեցին Յարմուկ⁶⁰¹ գետի ափին

Հերակլիոս կայսրը, ստանալով այդ լուրերը, Հայաստանից, Ասորիքից ու Միջագետքից ավելի քան երեքհարյուրհազարանոց բանակ հավաքեց, դրանք ղեկավարելու համար զորահրամանատարների՝ Գրիգոր հայի, Կնտրիսի և Արզիզոնի⁶⁰² տրամադրության տակ⁶⁰³:

* * *

I.251 [Յարմուկի ճակատամարտից հետո Հերակլիոսը] գրություններ ուղարկեց Միջագետք, Հայաստան, Եգիպտոս և հոռոմների տիրապետության տակ մնացած մյուս երկրները, որպեսզի շպատերազմեն արաբների դեմ և շղիմադրեն Տիրոջ հրամանին, այլ պահպանեն իրենց քաղաքներն ու երկրները, մինչև որ փորձանքն անցնի:

1.252 Երբ Կյուրոսը լսեց Օմար իբն-Ասիի գալուստը, ելավ գնաց նրա մոտ և համաձայնեց նրան վճարել տարեկան երկու հարյուր հազար դինար, այն պայմանով, որ արաբները Եգիպտոս չմտնեն՝ Սակայն ոմանք, գնալով Հերակլիոս կայսեր մոտ, ամբաստանեցին Կյուրոսին, թե իբր Եգիպտոսի ոսկին վերցնում տալիս է արաբներին: Նա Կյուրոսին գրեց, որ հրաժարվի իր պաշտոնից, և Եգիպտոս ուղարկեց Մանուել⁶⁰⁴ անունով մի զորահրամանատարի, որն ազգությամբ հայ էր: Տարին լրանալուց հետո արաբ դեսպանները եկան Եգիպտոս՝ ստանալու սովորական հարկը Մանուելին նրանք գտան Բաբելոնում, որն այժմ կոչվում է Ֆուստատ⁶⁰⁵: Մտնելով նրա մոտ՝ դեսպանները պահանջեցին ոսկին: Սակայն նա պատասխանեց. «Ես Կյուրոսը չեմ, որը ձեզ ոսկի էր տալիս, քանի որ նա ոչ թե զենք, այլ բրդյա բաճկոն էր կրում Իսկ ես, ինչպես տեսնում եք, զենք եմ կրում: Արդ, ելեք հեռացե՛ք և այլևս չհամարձակվե՛ք գալ այստեղ»:

1.257 122. Դավիթ⁶⁰⁶ հայի և նրա կողմնակիցների արշավանքը դեպի Միջագետք⁶⁰⁷

Այդ ժամանակ հոռոմոց զորավար Դավիթ հայը արշավանքի ելավ իր երկրից, իսկ Վալենտին անունով մեկն էլ՝ արևմուտքից. նրանք իրար սուրհանդակներ ուղարկեցին, որպեսզի մեկը շարժվի արևելքից, մյուսն՝ արևմուտքից, և այսպիսով ռազմի դաշտում ջախջախեն Ասորիքում հաստատված բոլոր արաբներին: Իմանալով այդ՝ արաբները նախապատրաստվեցին և, դուրս գալով Վալենտինի դեմ, ճակատամարտ տվին նրան: Նա պարտութուն կրեց, իսկ նրա զորքն ամբողջովյամբ սրի մատնվեց: Ինչ վերաբերում է Դավթին, ապա նա, հասնելով Միջագետք, իմացավ, որ երկրում արաբներ չկան, քանի որ նրանք գնացել էին դիմակայելու Վալենտինի գլխավորած հոռոմներին. Դավիթ հայը եկավ և ճամբար խփեց Բեթ-Մաադա⁶⁰⁸ կոչվող գյուղում:

Ի լրումն բազում շարագործությունների՝ Դավթի զինվորներն սկսեցին ելնել ու կողոպտել ժողովրդին: Նրանք ոչինչ չէին թողնում և դառն տանջանքների էին ենթարկում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց՝ ստիպելով դուրս բերել հողում թաղված [գանձերը]: Բոլորը ողբում, հառաչում, արտասվում ու կոծում էին, հատկապես իշխանազուն կանայք ու օրիորդները, ո-

բոնց հետ նրանք զվարճանում էին անառակությամբ ու շնությամբ: Եվ դա կատարվում էր բացահայտորեն ու անամոթաբար՝ նրանց ամուսինների ու բոլոր մարդկանց աչքի առջև:

Զինվորների մեջ կար Տիտոս անունով մեկը՝ ազգությամբ ասորի, որը, որպես մի քաղաքի զորագլուխ, եկել էր նրանց հետ: Տեսնելով Դավիթ հայի ընկերակիցների շարագոր-
I.258 ծությունները, նա մոտեցավ նրան ու ասաց. // «Քեզ, որպես քրիստոնյայի ու քրիստոնյա կայսեր զորականի, վայել չէ սուր բարձրացնել քրիստոնյաների վրա և թույլ տալ զինվորներին, որ կոտորեն նրանց, ովքեր մեղք չեն գործել Հռոմեական պետության դեմ: Կայսրն էլ քեզ չի խրախուսի, եթե լսի այդ բաները»: Այնժամ Դավիթ հայը հրամայեց շվնասել երկրի բնակիչներին:

* * *

I.258 123. Արաբների հարձակման և Դավիթ հայի պարտությանն ու ջախջախման մասին

Երբ Իյադը լսեց Դավիթ հայի ու նրա զորքերի արշավանքի մասին, մեկնեց Դամասկոսի գավառից: Ինչպես պատմում են ականջալուր մարդիկ, նրանց զորքերի գրաստները դադար չառան մինչև Ուոհա հասնելը: Տեսնելով արաբների առաջխաղացումը, թշվառ հայերը ահուդողի մեջ ընկան: Նույն գիշեր, երբ նրանք ստացան այդ լուրը, թողին Միջագետքից ձեռք բերված ավարը. կողոպուտն ու ունեցվածքը և փախուստի դիմեցին: Հասնելով ու հայտնաբերելով հայերի ճամբարը, արաբներն սկսեցին կողոպուտով զբաղվել: Բայց ամիրան գոռաց նրանց վրա և ասաց. «Ալլահը ձեր վրա նզովք կթափի, եթե հապաղեք կողոպուտի պատճառով: Արդ, հետապնդենք թշնամիներին և, երբ Տերը մեր ձեռքը մատնի նրանց, մենք կտիրենք և՛ նրանց ոսկուն, և՛ արծաթին, և՛ թանկագին զգեստներին, և՛ ձիերին ու գրաստներին, հետո արդեն շուռ կգանք սրանց վրա»: Այնժամ նրանք արագորեն հետապնդեցին նրանց և, վրա հասնելով, ոչխարների նման ցիրուցան արեցին հիսունական ու հարյուրական խմբերով, ապա անխնայորեն նրանց խոցոտեցին սրերով ու նիզակներով: Տիտոսը, անջատելով իր հետ եղած ողջ Ասորիքի զորքը, քաշվել էր մի կողմ: Արաբներն ուղեցին ձեռք գցել նրան, բայց տեսնելով նրա խիզախ զորքերը, թողին նրան և հարձակվեցին Դավթի վրա: Դավիթն ըն-
I.259 կըճված գոչեց // Տիտոսին ու ասաց. «Ահա ժամանակն է, որ փառավորվես կովում և ցույց տաս քո սերը Հռոմեական պետու-

թյան նկատմամբ»։ Իսկ Տիտոսը պատասխանեց նրան «Եթե քեզ օգնեմ, աստված ինձ չի օգնի» Եվ Տիտոսը լքեց Դավթին ու փրկվեց։ Իսկ Դավթին իր ողջ զորքի հետ սրի մատնվեց, այն գետ սր նրանցից ոչ ոք չմնաց

* * *

I 267 [Կոստանդ⁶⁰⁹ կայսրը Մալսիմոս⁶¹⁰ հերետիկոսին] արսորեց Հայոց Կովկաս։

* * *

I 287 139 Կոստանդ կայսեր մանվան և Մժեժ՝
նայի ձևական գահակալական մասին ²

Հունաց 280 (669) թվականին, սրը Կոստանդի քսանյոթե րորդ, իսկ Մուավիայի⁶¹³ իններորդ տարին էր, Սիցիլիայի Սիրո կուղա քաղաքում, որ մայրաքաղաք էր դարձել, սպանվեց Կոստանդ կայսրը⁶¹⁴ Անդրեաս անունով մէկը Տրալուսի որդին⁶¹⁵ կայսեր հետ բաղնիք մտնելով, սկսեց լողացնել նրան ու նրա գլուխը ծածկել օձառի փրփուրով, այնպես որ վերջինս ի վիճակի չէր բացելու աչքերը Անդրեասը վերցրեց կայսեր առջև գրված արձաթյա գույլը և, իջեցնելով նրա գլխին ջնջվեց այն Հետո փուժով դուրս եկավ բաղնիքից և ոչ ոք նրան չբռնեց։ Կատարին վերցրին բերին արքունական պալատ բայց երկու օրից նա հրաժեշտ տվեց կյանքին։ Հոռմեացիները իրենց կայսր Շուակեցին Մժեժ անունով մի հայ պատրիկի Սակայն ելք Կոստանդինը⁶¹⁶ լսեց իր հոր մահը, բազում զորքով շարժվեց դեպի Սիցիլիա բռնեց ու սպանեց Մժեժին և հոր սպանության բռնոր մեղսակիցներին, ապա վերադարձավ Կոստանդնուպոլիս

* * *

I 233 Երբ Աբդիմելիքը⁶¹⁷ տեսավ որ իբն-Զուբայրը հլորացել է արևելքում, առաջ քաշեց երկու զորահրամանատարներին՝ իր և դրայր Մուհամմեդին⁶¹⁸ և Հաջաջ իբն-Յուսուֆին, որոնք քաջամարտիկ, արյունարրու և անզուժ մարդիկ էին։ Եղբորը՝ Մուհամմեդին նա կարդեց Միջազետքի, Մոսուլի ու ողջ Արմինիայի⁶¹⁹ վրա իսկ Հաջաջին՝ համայն պարսից երկրի։

* * *

I 294 [Մուհամմեդ իբն-Մովանը] Հայոց իշխաններին հավաքեց մի եկեղեցում և, հրի մատնելով, այրեց նրանց⁶²⁰։

1 295 Այդ ժամանակ⁶²¹ Հայոց պատրիկներից մեկը, որի անունն էր Սմբատ⁶²², Հայաստանը հանձնեց Մուհամմեդ իբն-Մրվանի ձեռքը⁶²³,

[կուսանցքում ավելացված է «Այստեղ Հայաստան են կոչված հլաթի երկիրն ու Նփրկերտը, Սասունի լեռն ու Արզնը, ինչպես նաև այդ կողմերի բոլոր քաղաքները»]

* * *

1 297 [Հուստինիանոսին⁶²⁴ տապալելուց հետո հոռոմ իշխանները] հունաց 1007 (606) թվականին և Արզմելիքի տասներկուերորդ տարում իրենց կայսր հռչակեցին Լևոնտիոս⁶²⁵ պատրիկին, որը գտնվում էր Հայաստանում և ծերացած ու պետական գործում ծուլ մարդ էր:

* * *

1 297 Հաջորդ տարի⁶²⁶, հայոց իշխանները ապստամբեցին արարների դեմ: Մուհամմեդ իբն-Մրվանը նորից ոտքի հլավ, շահախեց Հայաստան եկած հոռոմներին ու կոտորեց բազմաթիվ հայերի: Եվ Հայաստանը նորից անցավ արարներին⁶²⁷:

* * *

1 299 [Փիլիպպիկոս⁶²⁸ կայսրը] հրամայեց վտարել իր տիրապետության տակ գտնվող բոլոր հայերին Վերջիններս ելան և ազատան գտան արարների մոտ, որոնք նրանց բնակեցրին Մելիտենեում ու նրա շրջակայքում⁶²⁹:

* * *

1 309 Հաջորդ տարի⁶³, խաղարների թագավոր հաքանի որդին⁶³
1 310 եկավ մտավ || Ատրպատականի ու Առանի երկիրը Բազմաքանակ արարական դորքերով նրան դիմակայեց ու կատաղի ճակատամարտ տվեց Արմինիա երկրի Զարրահ³² ամիրան Բայց Զարրահն սպանվեց, խաղարները ավարի մատնեցին նրա ճամբարը և հաղթանակով ետ դարձան⁶³³:

* * *

1 316 Ասում են, որ Մրվան իբն-Մուհամմեդը՝ Միջագետքի ամիրան⁶³⁴, որն այդ ժամանակ Արմինիայի կուսակալ էր դարձել նույնպես մասնակից էր Վալիդի⁶³⁵ սպանությանը, քանի որ սպանության օրը նրա որդի Արզմելիքը մտել էր հառան:

* * *

I.316 Պարսից երկրում տիրում էր Վասիտը՝ Օմար⁶³⁶ թաղավորի որդի Աբդուլլահը, Հայաստանում՝ Մրվան իբն-Մուհամմեդը, հորասանում՝ իբն-Սարդին ։

* * *

I.317 [Վալիդի սպանությունից հետո] վերոհիշյալ Մրվանը մեկնեց Հայաստանից և ձևացնելով, թե շահագրգռված է թաղավորությունը Վալիդի որդիներին վերադարձնելու խնդրում եկամ հասավ հառան, քաղաք

* * *

I.337 [752 թվականին Կոստանդին⁶³⁷ կայսրը] ասպատակեց Կղոզիայի երկիրն ու Հայաստանը։ Կղոզիան նա հրի մատնեց Սակայն մինչ հոռոմները դառնում էին Հայաստանում, արաբական զորքերով վրա հասավ Ուտհայի կառավարիչ հալիդ իբն-Ախին։ Նրանք ճակատամարտ տվին, և արաբները սլարտոթյուն կրեցին հալիդը փախավ իսկ նրա զորքերի մեծ մասը կոտորվեց Հոռոմներն այրեցին Հայաստանը և նրա բնակիչներին քշեցին հոռոմոց երկիրը։ Աբու Զաֆարն⁶³⁸ այդ ժամանակ դառնում էր Արսինիայում՝ թուրքական սահմանի դիմաց

* * *

I 338 1065 (754) թվականին Աբդուլլահ Սբուլբասը⁶³⁹ հառանից բերել տվեց պետական դանձարանում եղած ամեն ինչ, որոնք Մրվանի⁶⁴⁰ ժամանակից պահվում էին բազմաթիվ սլահեստներում, և դրանք դրեց իր շինած քաղաքում Հետո նա Սալահ լըն-Ալիին կառավարիչ նշանակեց Եգիպտոսի ու Լիբիայի վրա, Սալահի եղբորը՝ Աբդուլլահ իբն-Ալիին՝ Ասորիքի, Գամասուկոսի, Պաղեստինի ու Փյունիկիայի վրա, իսկ Աբու-Զաֆարին՝ Միջագետքի ու Արմինիայի վրա

* * *

II 25 214 Սահդիի մասին, որը դարձավ Բրեյի առաջնուղը⁶⁴¹

Այդ ժամանակ կային մարդիկ, որոնք կրոնով հեթանոս էին և սլատկանում էին այսօրվա քրդերի⁶⁴² ցեղին Սկզբնապես նրանք տիրում էին որոշ բերդերի և, ինչպես զրված է այստեղ⁶⁴³, իրենց առաջնորդի մահվանից հետո մահմեդական զավանանք էին բն-

դունել: Կազմված լինելով հեթանոս պարսիկներից ու հայերից՝ նրանք մի առանձնահատուկ ժողովուրդ էին հանդիսանում: Մինչև օրս էլ նրանք կոչվում են իրենց դրաված բերդերի անունով նրանց մոտ պապենական ավանդություններով հիշողություն էր պահպանվում մի դուշակության մասին, թե իբր իրենց միջից հայտընվելու էր Մահդի անունով մի թաղավոր, որը, իր անվան իսկ վկայությունը⁶⁴⁴, ժողովրդին պիտի առաջնորդեր դեպի իր հավատը, աստված պիտի համարվեր, ապա թաղավորությունը կսակեր մի ուրիշի և այլն, և այլն:

Այդ ժամանակ, արդ, հայտնվեց մի առաջնորդ, որը կոչվում էր Մահդի՝ ներկայանալով որպես այն անձը, որին նրանք սպասում էին: Նա թույլ չէր տալիս դիպչել իրեն և դեմքին էլ քող էր կրում: Նա իրեն հայտարարել էր աստծու մարդարե, և օրեցօր նրա կողմնակիցներն ու հարստությունը շատանում էին: Կողմնակիցների ու ավարի նպատակով բոլոր ժողովուրդներին՝ պարսիկներից, արաբներից ու հեթանոսներից նրա շուրջը հավաքվեցին բազմաքանակ զորքեր նա բնակություն հաստատեց Կորդլայց⁶⁴⁵ II 26 անմատչելի լեռներում, || և նրա սարսափը տիրեց Ջեզիրեում ու Հայաստանում: Նա այլերեց Բեթ Զարդեն⁶⁴⁶ և Տուր-Աբդինը նրանց սրերը արյուն էին խմում, իսկ իրենք չէին խնայում ոչ ոքի՝ հավասարապես կոտորելով բոլոր ժողովուրդներին: Գավանանքով լինելով մողեր՝ նրանք օտար էին համարում բոլոր նրանց, ովքեր չէին ընդունում, որ Մահդին աստծու մարդարեն է: Նույնիսկ Մամուն⁶⁴⁷ թաղավորը դողում էր նրանից: Սակայն, երբ նրանք մտան Տուր Աբդին՝ կողոպտելու Կարտամինի⁶⁴⁸ վանքը և շրջակա դյուղերը, նրանց դեմ համարձակվեց ելնել այդ Երկրի կառավարիչ Հասանը, մանավանդ այն պատճառով, որ տեսավ վանականների կրած տանջանքները քանի որ նա լավ էր տրամադրված քրիստոնյաների նկատմամբ նա հանկարծակիորեն հարձակվեց նրանց վրա Եվ երբ կողմերը բախվեցին իրար, աստծու ներգործությունը քուրդանիները թիկունք դարձրին: Այսպիսով, Մահդին որն աստվածացվել էր նրանց կողմից, հարկադրված դեն նետեց իր դեմքի քողը և փախուստի դիմեց Հասանի առջևից

Քչերի հետ նա փրկություն դտավ Աշոտի⁶⁴⁹ որդի Իսահակի⁶⁵⁰ երկրում և այցելեց նրան մի ամբողջում Քուրդանիները հավաքվեցին ամբողջի շուրջը Սակայն Իսահակը բռնեց Մահդիին և անմիջապես դիտատեց նրան Գիշերը, վերցնելով դուխը և ինչ որ հնարավոր էր տանել իր ունեցվածքից ու ընտանեկիցներից, նա փախավ և ապաստանեց իր բերդում: Երեխաներին թողնելով այդ

բերդում՝ նա դնաց Ջեզիրեի կուսակալի մոտ: Լուսաբացին քուր-
դանինները մտան ամրոցը, բայց Մահդիի դիակից բացի ուրիշ
ոչինչ չգտան նրանք հրի մատնեցին Իսահակի տները և, մեկ-
նելով այնտեղից, եկան դարանակալեցին այն բերդի մոտ, որտեղ
գտնվում էին Իսահակի երեխաներն ու կիներ: Մի հեթանոս կին
տեսնելով այդ, ահազանգեց գլուղում, և նրա բնակիչները մտան

II.27 բերդ: Իսահակի կիներ, որը || քրիստոնյա էր, ուներ մի վանա-
կան եղբայր, որը նույնպես բերդ մտավ: Քուրդանինները վրա
հասնելով կոտորեցին նրանց, ովքեր չուրս էին մնացել բերդից
Հետո հարձակվեցին բերդի վրա և սկսեցին քարկոծել այն՝ ավե-
րելով նույնիսկ ներսի շինությունները: Եվ երբ արդեն պատրաստ
վում էին հանձնվել քուրդանիների ձեռքը, քանի որ բերդի դար-
պասը կրակի էր մատնվել, վերոհիշյալ վանականը ձեռքը դեց
նիզակին ու ցատկեց պարսպից Հասնելով քուրդանիների զոր-
քին և ուղղվելով դեպի նրանց առաջնորդը, որ հաջորդել էր Մահ-
դիին, նա նիզակահարեց ու սպանեց նրան: Եվ քանի որ արդեն
երեկոյանում էր վանականը կարողացավ փրկվել: Աստու կամ
քով զորքերի հետ տեղ հասավ Իսահակը նա անակնկալ կերպով
հարձակվեց քուրդանիների վրա և կոտորեց նրանցից շատերին
Մյուսները փախան ու ցրվեցին Այս եղավ Մահդիի տիրահաղթանակ
վախճանը Հետո նրանք իրենց առաջնորդ կարգեցին ոմն Հարու-
նի, որին հաջորդեց Բաբեկը⁶⁵¹ և այսպես մինչև մեր օրերը: Նրանք
տարածվել ու անառիկ բերդեր են դրադեցրել պարսից երկրներում:

* * *

II.42 Թոմանոս⁶⁵² կայսրից հետո թագավորեցին նրա որդիներ
Վասիլն⁶⁵³ ու Կոստանդինը⁶⁵⁴: Վասիլը հռչակվեց պատերազմնե-
րում և տարավ ապշեցուցիչ հաղթանակներ: Նա հնազանդեցրեց
հայերին ու բուլղարներին:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ծանոթագրությունները կազմել ենք իմնականում հանրապետ տեղեկատու գրականության հիման վրա

Մահմեդական տիրակալների ժամանակագրությանը վերայերոզ տվյալները քա
կել ենք հետևյալ գրքերից

E. de Zambaur Manuel de genealogie et de chronologie pour l'histoire de
Islam, Hannover, 1927

Стэнли Лэн-Пуль Мусульманские династии. Хронологические и генеалогиче
ские таблицы с историческими введениями перевел с английского с примеча
ниями и дополнениями В. Бартольд СПб., 1899

К. Э. Босворт Мусульманские династии. Справочник по хронологии и ге
неалогии, перевод с английского и примечания П. А. Грязневича, М 1971

А. Н. Тер-Гевондян Армения и Арабский халифат Ереван, 1977

Խաչակիրաց պատմական անձնավորություններին վերաբերող ծանոթագրություն
ները կազմելու համար օգտագործել ենք Դ Գրուսեի սովորածավալ հետազոտու
թյունը

R. Grousset, Histoire des Croisades et du royaume franc de Jérusalem t
III, Paris, 1934—1936

Տեղանունները ծանոթագրված են մեծ մասամբ հետևյալ աշխատության տվյալ
ներով

K. M. Setton (general editor) A history of the Crusades, v I II Mad
ison Milwaukee—London 1969

Բյուզանդական կայսրերի և Անտիոքի պատրիարքների զահակաման տարիները
նշել ենք ըստ Վ Գրումելի գրքի

V. Grumel Traité d'Études Byzantines I La chronologie Paris, 1958

Տարբեր աղիթներով հաճախակի դիմել ենք նաև ներքոհիշյալ աղբյուրներին ու
հետազոտություններին.

Սառքենու Ուռնայեցի Ժամանակագրություն Վաղարշապատ 1888 (Այսուհետև
Մաթ. Ուռն)

Մնրատ Սպարապետ Տարեգիրք աշխատառնություններ Ս Աղբյուրների Վեկետիկ
1906:

Chronique de Michel le Syrien patriarche jacobite d'Antioche (1166 —
1199), éd et trad. franç par J—B Chabot Paris, t I 1899 II 1901 III 1905
IV, 1910 (texte). Introduction 1924 (reimp 1963).

Ս Տ Երեմյան Հայաստանը ըստ «Աշխարհացոյց» ի Երևան 1963

E. Honigmann Le couvent de Baršaumā et le Patriarcat Jacobite d Antioche et de Syrie „Corpus Scriptorum Christianorum Orientalium“ 146 Subs 7, Louvain, 1954.

P Kawerau Die Jilobitische Kirche im Zeitalter der syrischen Renaissance Berlin, 1960.

A Lüders, Die Krenzzüge im Urteil syrischer und armenischer Quellen Berlin 1964

Մանոթագրություններում «հայկական միջնադարյան աղբյուրներ» ասելով նկատի ունենք Մատթևոս Ուոհայեցու և Սմբատ Սպարապետի ժամանակագրոթյունները

* * *

1 Հմմտ Սար Ուոհ., էջ 128—129 Միլիտենի առանձին ղեկավարել է հայոց ՇԾ (1056) թվականով

2 Դատելով պատմական ղեկավարի շարադրանքից ժամանակագիրը Սուլեյման անվան սուլթանի նույնացրել է երկու անձնավորություն՝ սելջուկյան սուլթաններ Տուրիլ-բեգին (Ռուբենդիին Աբուտալիբ Մուհամմեդ Տուրիլ բեգ իբն Միքայել 1038—1063 թթ.) և Ալփարսլանին (Աղուղաղաուլա Աբուշուբա Մուհամմեդ Ալփարսլան իբն Դաուդ 1063—1072 թթ.): Շփոթության տեղիք է տվել ըստ երևույթին, Տուրիլ-բեգի եղբոր և Ալփարսլանի հոր Չաղրի բեգ Դաուդի Աբու Սուլեյման մականունը:

3 Սելջուկ իբն Դուլակ իբն Չաղրի բեգը ոչ թե հայրը այլ պապն է սելջուկյան առաջին սուլթան Տուրիլ-բեգի որը սուլթան ժամանակագրության մեջ կոչված է Սուլեյման (տես նախորդ ժանոթագրությունը) Ընդհանրապես այս ժամանակագրության տվյալները սելջուկյան առաջին սուլթանների և ամիրանների ծագումնաբանության վերաբերյալ բավականին խառնաշփոթ են

4 Ասորական միջնադարյան աղբյուրներում արարները հայտնի են Կայրայե (Տաճիկ) անունով նույն անունը հետագայում ընդգրկում է նաև ընդհանրապես մանմեղական հասկացությունը Այդ պատճառով հաճախ զժգարություններ են առաջանում դրանք իրարից տարբերակելու գործում Առաջնորդվելով բնագրի որոշակի զրվագների բովանդակությամբ սուլթան աշխատության մեջ Կայրայե բառը մենք թարգմանել ենք մերթ առաք, մերթ մանմեղական

5 Չիսն-Մանսուր — Քաղաք պատմական Կոմադենիում Սամոսատից հյուսիս արևմտք Միջնադարյան հայկական աղբյուրներում հայտնի է Հարսնմսու անունով:

6 Քեսուն — Բերդաբազար լատմական Կոմադենիում Մարաշի և Սամոսատի միջև

7 Ուոհ — Քաղաք Հյուսիսային Միջագետքում: Հելլենիստական շրջանում էղիլ է Օսրոյենեի ասորական թագավորության իսկ խաչակիրների օրոք Եղեսիայի կամ սուրբյան մայրաքաղաքը: Հայտնի է նաև Եղեսիա անունով որը սակայն ասորական աղբյուրներում չի գործածվում:

8 Ասորերեն mārā (տեր) բառը որպես պատմանուն ստորաբար միշտ կցվում է հոգևոր կոչում ունեցող անձնավորությունների կամ սրբերի անվանը: Եսլած բնագրի որոշակի զրվագների բովանդակությանը այսուհետև այդ բառը վերաբարել ենք մերթ մար, մերթ սուր ևնով:

9 Բարսումա Սամոսատի (Մեյիտինեցի) — Ասորի միայնակյաց (մահ. 438 թ) որը կարևոր դեր է խաղացել անապատական շարժման մեջ. տես 2 Անապյան, Հայկական ժամանագրություն հ 2 Երևան 1976 էջ 1437—1441 Ենչ վերաբերում է

